ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԻՄԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ (IX-XIV ԴԴ.)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԻՄԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

(IX-XIV ԴԴ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 93/94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 287

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
գիտ. վաստակավոր գործիչ՝
Գ. Մ. Գրիգորյան

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ա. Գ.
Մ 287 ՎԻՄԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ (IX-XIV ԴԴ.)/ Ա. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ.-եր.: ԵՊՀ հրատ., 2015.- 240 էջ:

Գրքում IX-XIV դարերի հայոց քաղաքական պատմությունը ներկայացվում է վիմական սկզբնաղբյուրների հիման վրա: Հեղինակի կողմից կատարվել են բազմաթիվ պատմագիտական ճշգրտումներ, բացահայտվել իրողություններ, երևան հանվել իրադարձություններ, որոնք ինչ-ինչ պատճառներով տեղ չեն գտել մատենագրության մեջ:

Նախատեսվում է միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների, հումանիտար կրթաճյուղերի ուսանողների և ընթերցողների լայն շրջանների համար:

ՀՏԴ 93/94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-1949-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2015 թ.
© Ա. Գ. Մանուչարյան, 2015 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ պատմագիտական գրականության մեջ առաջին անգամ փորձ է արվում IX-XIV դարերի հայկական վիմագրերի հիման վրա լուսաբանել միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմությունը: Զարգացած ավատատիրության դարաշրջանը հայ ժողովրդի պատմության լավագույնս ուսումնասիրված բաժիններից է՝ հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային առումներով: Դա առաջին հերթին պայմանավորված է միջնադարյան հարուստ մատենագրությամբ, հայագիտության դասականների անգնահատելի ժառանգությամբ, ժամանակակից հետազոտողների լուրջ ուսումնասիրություններով, որոնք հաճախ չեն խուսափել իրենց աշխատանքները համեմելու վիմագրական անհրաժեշտ ատաղձով: Սակայն, եթե նրանց հետազոտությունների հենքն առավելապես հանդիսացել է պատմագրական նյութը, իսկ օժանդակը՝ վիմագրականը, ապա ներկա աշխատության մեջ փորձ է կատարվել անել հակառակը, այսինքն՝ թվացյալ երկրորդականը դարձնել գլխավոր: Այս ըմբռնումն է մեր մեկնակետը:

Գոյություն ունեցած բազմաթիվ դեպքեր, իրադարձություններ, երևույթներ, այս կամ այն պատճառով մոռացության մատնվելով ու անտեսվելով, չեն արտացոլվել մատենագրության մեջ, այն դեպքում, երբ վիմագրությունն անմիջապես արձանագրել է դրանք՝ հնարավոր կռվան դառնալով բազմապիսի մոտեցումների համար: Հետագա աղճատումներից ու աղավաղումներից զերծ, փոքրածավալ ու բովանդակությամբ սեղմ հայկական վիմագրերը ժամանակի դրոշմված արձագանքներն են: Հատկապես այս պարագայով է բնորոշվում դրանց պատմագիտական արժեքը, անփոխարինելիությունը, արժանահավատությունը:

Պատմական կտրուկ շրջադարձերի հորձանուտում վիմագրագիտական տեսանկյունով IX-XIV դարերի հայ ժողովրդի պատմությանն անդրադառնալը հնարավորություն է ընձեռում հայտնաբերելու անցյալի ու ներկայի համանման իրավիճակներ: Զուգահեռների բաղդատմամբ հետևությունների հանգելը՝ պատմագիտության առաջնահերթ պահանջներից է: Խորագրից տեսանելի է, որ աշխատանքն առնչվում է հայ ժողովրդի պատմության մի երկարատև ժամանակաշրջանի: Վերջինս տարանջատվում է իրարից

խորապես տարբերվող, սակայն ընդհանրությունների առկայությամբ ամբողջացող հատվածների: Յուրաքանչյուր ժամանակահատված՝ զարգացման օրինաչափություններով ու առանձնահատկություններով, որոնք արտացոլվում են վիմագրերում, առաջադրում է իր խնդիրները: Մոտեցման այս եղանակը մեծապես օժանդակում է խնդիր դնելու՝ ամենուրեք սփռված, բազմաքանակ արձանագրությունների միջից գտել այն կարևորները, որոնք արժեքավոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում ուսումնասիրությունների համար: Ժամանակի պահանջներին համապատասխան՝ վիմագրերն իրենք են թելադրում արծարծվող խնդիրները, հստակում նպատակները:

Առավել, քան երբևէ, արդիական հնչեղություն է ստանում ուսումնասիրությունը՝ կապված այսօրվա արտաքին ու ներքին բազմապիսի հարաբերությունների կտրուկ փոփոխությունների հետ և թարմանում զուգահեռների անցկացման միջոցով պատմական հայտնի անցուդարձերից դասեր քաղելու միտումով: Հասարակական-պատմական բեկումնային շրջադարձերի հորձանուտում վիմագրական տեսանկյունով IX-XIV դդ. հայոց քաղաքական պատմությանն անդրադառնալը հնարավորություն է ընձեռել անցյալի ու ներկայի միջև համանման իրավիճակների հայտնաբերման: Դրանց համեմատությունների շնորհիվ հետևություններին հանգելը թերևս ուշադրության չէր արժանանա խորհրդային վերջին տասնամյակների արտաքուստ միապաղաղ առօրյայում: Թերթելով անգին մատյանների հնաշունչ էջերը, ընթերցելով հնադարյան վեմերի փորագիր տողերը, առանձնացնելով հարկավորը փաստագրական նյութերից, վերլուծելով և համադրելով դրանում առկա երևույթները, կարելի է մի պահ դուրս գալ ուսումնասիրության շրջանակներից ու դարերի հեռավորությունից հիանալ մեր քաղաքական այրերի այն վարպետ հնարքներով, որ բանեցրել են նույնօրինակ իրավիճակներում: IX-X դդ. Բագրատունյաց Հայաստանի փայլուն քաղաքական մարտավարությունը՝ իր անընդհատ մանևրող, պատմականորեն արդարացված, ամենաճշգրիտ, խոհուն քայլերով, որի հետևանքը եղավ անկախության նվաճումը, պետականության վերականգնումը, արտադրողական ուժերի արագ զարգացումն ու հզոր տնտեսական վերելքը՝ օրվա պահանջների լավագույն դասերից է: Նաև՝XIII դարի հայ դիվանագիտությունը, որը շրջահայաց էր և մեծապես նպաստեց անհասանելիորեն բարձրանալու հայ միջնադարյան դպրությանը, գիտությանը, մշակույթին, որոնք իրենց կատա-

ելությամբ ու ինքնատիպությամբ ամենաառաջնակարգ տեղերն են զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության անսպառ դանձարանում: Հայ միջնադարյան քաղաքական, դիվանագիտական ավանդույթները դարձան մեր ժողովրդի գոյության ու առաջընթացի գրավականը:

Աշխատանքն արդիական է նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշակի նմանությունների առկայությամբ: Վիմական աղբյուրները բավականաչափ տեղեկություններ են պարունակում հասարակական կյանքի այդ կարևորագույն կողմի վերաբերյալ: Արձանագրություններից հետևում է, որ հատկապես զարգացած ավատատիրության շրջանում տնտեսությունը լիովին սերտաճել էր քաղաքականությանը: Այսպես, տեղերում կենտրոնի տիրապետությունն իրականացնող իշխանավորներն ամենախոշոր հողատերերն էին, իրենց կալվածքների լիիրավ տերերը: Այդ դիրքին, եթե նախկինում հասնում էին միայն հասարակության ազնվականական ընտրյալ դասի ներկայացուցիչները, ապա միջնադարի զարգացած փուլերում իշխանության էին գալիս նաև ֆինանսական անհամար միջոցներ ունեցող, երբեմն նույնիսկ աննշան ծագումով մարդիկ, որոնք ներկայացնում էին առևտրավաշխառուական խավը: Դա նաև ներքին քաղաքականության արդյունք էր, որն անց էր կացվում պետության դիրքերի ամրապնդման նպատակով: Տիգրան Հոնենցի հսկայական միջոցները Զաքարյան եղբայրներին ամենից առաջ անհրաժեշտ էին բանակի ֆինանսավորման, պահպանման, սելջուկյան երկարատև տիրապետության պատճառով երկրի քայքայված տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, կարգավորելու համար:

Հարուստ ավանդույթներ ունեցող յուրաքանչյուր ազգի, ժողովրդի, պետության պատմության ուսումնասիրման ու լուսաբանման համար կարևորվում է վիմագրերի օգտագործումն իբրև արժանահավատ սկզբնաղբյուրների: Այս առումով մեծ է արձանագրությունների դերն ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ: Շատ դեպքերում հանդես գալով որպես միակ աղբյուրներ՝ դրանք հատկապես անփոխարինելի են հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրության համար, որոնք հնագիտական հետազոտությունների շնորհիվ նպաստեցին համամարդկային աշխարհաճանաչության խորացմանը:

Հնագիտության զարգացմամբ նախանցյալ դարի գիտական միտքը կարողացավ թափանցել դարերի խորքերը: Դա, նախ և առաջ,

առեղծվածային թվացող վաղնջական արձանագրությունների վեր-ծանությունների շնորհիվ: Գ.Գրոտեֆենդի, Հ. Ռաուլինսոնի համառ ջանքերի գնով ընթերցվեց Ք.ա. 521 թ. Բեհեսթունի ժայռին փո-րագրված Դարեհ Ա-ի եռալեզու սեպագիր արձանագրությունը, որը հնարավորություն տվեց ոչ միայն բացելու Պարսկաստանի, Բաբե-լոնի, Ասորեստանի քաղաքակրթությունների դարպասները, այլև թափանցելու հայոց պատմության հեռուները, երևան հանելու օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարի դրվագները:

Միջագետքում Հ. Լեյարդի հնագիտական պեղումներով հայտնա-բերված բաբելերեն գրագրությամբ սալիկները, որոնք տիտանական ջանադրությամբ վերծանեց Ջ. Սմիթը, մարդկությանը ծանոթացրեց շումերների՝ աշխարհում ամենահին դյուցազնավեպին: Գտածոների շնորհիվ հայտնի դարձավ Միջագետքի քաղաքակրթությունների ողջ շարքը՝ շումերա-աքքադա-ասորա-բաբելա-քաղդեական անտիկ մշակույթով:

Պոլիգլոտ Ժ. Շամպոլյոնը, վերծանելով հիերոգլիֆները, ամբող-ջացրեց հին Եգիպտոսի պատմությունը:

Եվ վերջապես, ո՞վ կիմանար մեր մայրաքաղաք Երևանի տարիքը, եթե չհայտնաբերվեր նրա հիմնադրման ժամանակը հիշատակող Ք. ա. 782 թ. սեպագիր արձանագրությունը:

Մեր նախնիները քաջ գիտակցել են արձանագրությունների հար-գը և չեն զլացել հիշատակագրություններ թողնել՝ ապագայի հետ քարեղեն լեզվով հաղորդակցվելու համար:

Այս ամենով հանդերձ վիմագրերը պահանջում են իրենց նկատ-մամբ զգույշ մոտեցում, լեզվի լավ տիրապետում և պատմության խոր իմացություն:

Խոսելով հայկական միջնադարյան վիմագրերի մասին, անշուշտ, չպետք է գերագնահատել արձանագրությունների աղբյուրագի-տական արժեքը: Հայտնի է, որ Զաքարյանները ոչ մի ազգակցական անմիջական կապ Բագրատունիների հետ չեն ունեցել: Սակայն Իվանեն, քաջ գիտակցելով եղբոր՝ մեծատաղանդ զորավար Զաքա-րեի ու իր պատմական դերը Հայաստանը թուրք-սելջուկներից ազա-տագրելու գործում և ունենալով հեռուն գնացող վսեմ նպատակներ, ընդհուպ մինչև հայոց պետականության վերականգնումը, մի իրո-

ղություն, որ հաստատվում է բազմաթիվ վիմագիր վկայություններով, իրենց իրավամբ արձանագրում է «յազգէ Բագրատունեան»[1]:

Եվ առավել ևս, չպետք է թերագնահատել վիմական աղբյուրների դերը, արձանագրությունների մեջ երբեմն տեսնելով հայտնի անուններ, որոնք ոչ թե պատմության էջերում, այլ միմիայն գերեզմանաքարերի ու վիմագրերի վրա են թողնվել[2]: Լեոյի արտահայտած այս կարծիքը խստագույնս քննադատել է Բ. Ուլուբաբյանը[3]:

Հայկական վիմագրերը ունեն բացառիկ աղբյուրագիտական արժեք հայոց քաղաքական, եկեղեցու, իրավունքի, ռազմարվեստի պատմության, աշխարհագրության, տնտեսագիտության, դրամագիտության, ճարտարապետության, արվեստի, լեզվի, մշակույթի և այլ ուսումնասիրությունների համար:

Վիմագրերի դերն ու նշանակությունը չի սահմանափակվում միայն հայագիտության բնագավառներում: Դրանք կարևորագույն սկզբնաղբյուրներ են ոչ միայն մեր, այլև հարևան, մոտիկ ու հեռու ժողովուրդների, պետությունների պատմությունների ուսումնասիրության համար: Մեծ է այն երկրների աշխարհագրական քարտեզը, որտեղ մեր ազգակիցները գաղթօջախներ են հիմնել, հարմարվել տեղական սովորույթներին, բարգավաճել՝ իրենց անմիջական ազդեցությունը թողնելով տեղացիների կյանքի բոլոր ոլորտներում: Իսկ որտեղ գաղթավայրեր, այնտեղ էլ եկեղեցիներ ու վիմագրություններ: Դրանց նշանակությունը երկակի է, մի կողմից որպես տվյալ երկրի, իսկ մյուս մասով՝ իբրև հայ գաղթօջախի պատմություն:

Միայն իր պատմական սահմաններով Հայաստանի տարածքում գտնվող արձանագրությունները վիթխարի թիվ են կազմում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են որևէ ժողովրդի պատմությանը:

Արաբագիտության, բյուզանդագիտության, թյուրքագիտության, վրացագիտության, մոնղոլագիտության, իրանագիտության համար հայկական արձանագրություններն արժեքավոր աղբյուրներ են: Օգտվելով դրանց ընձեռած հարուստ նյութից՝ կարելի է կազմել վրաց թագավորների տարեգրությունը, ուսումնասիրելով հայ-արաբական միջնադարյան կապերը, հայ-բյուզանդական քաղաքական առնչությունները, հայ-իրանական անմիջական հարաբերություն-

---

[1] *«Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 22-24, այսուհետև՝ Դիվան, պր. VI:*

[2] *Տե՛ս* ***Լեո****, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 613:*

[3] *Տե՛ս* ***Բ. Ուլուբաբյան,*** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 98:*

ները, երևան հանել սելջուկ-թուրքական ասպատակությունների արհավիրքները, նրանց դեմ հերոսական պայքարը, հայերի հանդեպ մոնղոլների վարած երկդիմի քաղաքականությունը և այլն:

Վերը նշված գիտությունների համար երբեմն որպես միակ աղբյուր կարող է հանդես գալ հայերեն արձանագրությունը: Վիմագրերում տեղ են գտել նաև այնպիսի դեպքերի հիշատակություններ, որոնք ժամանակին եղել են ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում, ցնցել Արևմուտքը: Ահավասիկ. «Ի ՈԽ (1191), զկնի Դ (4) ամաց առնլո զԵրուսաղէմ Սալահադնին, սկսեալ եկեղեցիս սբ ի Նորո Գետիկ և կատարի յամս Ե (5), ի խանգար զտակին Յունաց, ձեռամբ վարդապետին Մխիթարա..»[4]: *Այստեղ Մխիթար Գոշը Նոր Գետիկ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու շինարարության սկսման ժամանակի և տևողության հարցում չափանիշ է ընդունել ծագումով հայաստանցի քուրդ, Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դին Դվինեցու կողմից խաչակիրներից երեք կրոնների սրբավայր քաղաքի գրավման տարեթիվը՝ 1187: Ինչպես տեսնում ենք, այդ ողբերգական իրադարձությունն իր վիմագիր արձագանքն է գտել նաև քրիստոնյա Հայաստանում:*

Հայկական վիմագրերը մեր պատմության պաշտպանունակության ամենահուսալի պատվարներն են:

Ոչ հեռավոր անցյալում հարևան հանրապետության պատմագիտության «վերակառուցման հայր» Զիյա Բունիյաթովը, քաղաքական որոշակի նպատակներ հետապնդելով, Արցախը հայտարարեց ոչ հայկական տարածք, հայերին՝ եկվորներ, իսկ մշակույթը՝ աղվանական: Գոտեպնդված հակահարված չստանալուց՝ Ֆ. Մամեդովան, Դ. Ախունդովը և ուրիշներ կնքահոր գեղծարարությունները հասցրեցին մինչև Սյունիք, Գեղամա երկրի արևելք, Նախիջևան: Միայն այդ տարածքներում պահպանվող հայկական միջնադարյան բազմաթիվ հուշարձանների փորագիր հիշատակությունները հակագիտական, հակապատմական, հակահայկական անհեթեթությունների ամենախոսուն հերքողներն են:

Աշխատանքը խարսխված է երկձև՝ փորագիր և գրչագիր հիմքերի վրա: Գերակշիռը գլխավորապես վիմագրական պատվարն է: Սակայն դա չի նշանակում, թե բացարձականացվել է վիմագրի դերն ընդհանրապես: Անհնար է բևեռացնել վիմագրությունն ու մատե-

---

[4] *Դիվան, պր. VI, էջ 64:*

նագրությունը: Դրանք մի կուռ, միասնական ամբողջություն են աշխատանքի կառուցվածքի հիմքում:

Որպես վիմագրական աղբյուրներ ծառայել են հայ վիմագրագիտության երախտավոր տեղագիրների ուրույն վերծանությունները, «Վիմական տարեգրում», «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի ցայժմ հրատարակված պրակներում, միջնադարյան Հայաստանի հոգևոր կենտրոններին, մի շարք վանքերին նվիրված մենագրություններում ամփոփված ու քննության ենթակա ժամանակաշրջանն արտացոլող արձանագրությունները, հնագիտական բազմամյա պեղումների շնորհիվ հարյուրամյակների խոր շերտերից հառած բազմաթիվ վկայագրեր, ի նորո հայտնաբերված վիմագրեր, ինչպես նաև մեր կողմից ընդօրինակված նյութեր: Օգտագործվել են նաև Հայաստանի հրատարակված վրացերեն ու արաբերեն վիմագրերը:

IX-XIV դդ. Հայաստանի քաղաքական պատմության վիմագրական հիմքերը քննելիս՝ մատենագրական նյութեր քաղել ենք Շապուհ Բագրատունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Մովսես Դասխուրանցու, Արիստակես Լաստիվերտցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւններից»: Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Մխիթար Անեցու, Մխիթար Այրիվանեցու կազմած ժամանակագրությունները, բացի այն, որ կարևորագույն աղբյուր են քաղաքական դեպքերի վերաբերյալ, այլև, երբեմն պարունակում են այնպիսի եզակի տեղեկություններ, որոնք այլուստ հայտնի չեն: Քաղաքական առանձին վիճահարույց հարցերի ժամանակ անփոխարինելի սկզբնաղբյուրներ են հանդիսացել ժողովածուներում ամփոփված ձեռագիր հիշատակարանները և երկհատորով հրատարակված փոքրածավալ, սակայն արժեքավոր մանր ժամանակագրությունները:

Զարգացած ավատատիրության դարաշրջանի քաղաքական-հասարակական երևույթների ճիշտ ընկալման, պատմական օրինաչափությունների գնահատման նպատակով ուսումնասիրել ենք հայ դասական և ժամանակակից պատմագիտական գրեթե բոլոր հետազոտությունները: Միջնադարին առնչվող ճարտարապետական և հնագիտական բնույթի աշխատությունները՝ իրենց առարկայական նյութերով ու եզրահանգումներով, կարևորվում են թեմայի կատարման համար:

Աշխատանքում մեծ տեղ հատկացված անձնանունների ստուգաբանության, բառարմատների ծագումնաբանության շուրջ ավելորդ որոնումներից խուսափել են տվել հայ բանասիրության երախտավորների հեղինակած բազմահատորյակները և բառարանները: Հայաստանի և հայերի մասին վրաց աղբյուրների թարգմանության երկհատորյակը դարձել է դրանց դիմելու հենակետը: Բնագրով օգտագործվել է նաև միջնադարյան արաբական աղբյուրների հիման վրա կատարված և հայագիտության համար անչափ արժեքավոր սիրիական ժամանակակից մի հետազոտություն:

Գրքում առանձնապես կարևորվել են այն պատմագիտական հետազոտական վերլուծությունները, որոնք կատարվել են վիմական հիշատակությունների ակնարկներն ստուգելու, փաստերը պարզաբանելու և առաջ քաշված տեսակետները հիմնավորելու նպատակով:

Արձանագրություններն ամբողջությամբ կամ հատվածաբար ներկայացնելիս, ինչպես կարգն է, հավատարիմ ենք մնացել բնագրերը և դրանց վերծանությունները նույնությամբ հղելու սկզբունքին՝ առանց ուղղագրական ու կետադրական միջամտության:

Ցավոք, վիմագրական նյութի խիստ սղության պատճառով Կիլիկյան հայոց պետականության պատմությունը դուրս է մնացել ուսումնասիրության շրջանակներից:

ԳԼՈՒԽ Ա

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԵԹՎԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄ

Քանակով սակավ, բայց որակապես անգնահատելի IX դարի վիմական աղբյուրները երևան են հանում մեր ուսումնասիրության ժամանակաշրջանի էական երևույթները, բացահայտում զարգացած ավատատիրության բնորոշ հատկանիշները, արտացոլում այն արմատական տեղաշարժերն ու պարզաբանում հիմնական նախադրյալները, որոնք պատճառ հանդիսացան երկար ժամանակ պետականազուրկ երկրում նոր հարստության հաստատմանը:

Եթե Հայաստանի ծայրամասերում, ինչպես հետագայում կտեսնենք, նախկին նախարարական տները վերականգնում, պահպանում, ընդարձակում ու ամրապնդում էին իրենց տիրույթների նկատմամբ ժառանգական իրավունքները, ապա այլ էր վիճակը երկրի կենտրոնական մասում՝ Այրարատում, առավելապես՝ Շիրակ-Արագածոտնում, ուր կատարվում են զուտ որակական փոփոխություններ:

Արուճի[5], *Թալինի*[6], *Նախճավանի*[7] *VII-VIII դդ. վիմագրում* «Հայոց իշխան» «ապուհիւպատ պատրիկ[8] և իշխան Հայոց» *բարձրագույն պաշտոններով հանդես եկող Մամիկոնյաններին ու Կամսարականներին (վերջիններս հիշատակվում են նաև* «պատրիկ Շիրակայ», «Արշարունեաց տեառն» *կոչումներով) արդեն Արուճի 867 թ. արձա-*

---

[5] *Տե՛ս* ***Կ. Մաթևոսյան,*** *Արուճ, Երևան, 1987, էջ 54:*

[6] *Տե՛ս* ***И. Орбели,*** *Избранные труды, Ереван, 1963, էջ 434:*

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ 412:*

[8] *«... զՆերսեհ Կամսարական տէր Շիրակայ և Արշարունեաց, զոր Յուստինիանոս Բ կայսր՝ եկեալ ի Հայս՝ կարգեաց իշխանապետ՝ Կուրապալատ պատուանուամբ (688-91), որոյ հրամանաւ Փիլոն թարգմանեաց զեկեղեցական Պատմութիւն Սոկրատայ ի հայ բան, ասելով յաւարտն. «... Ո՛վ Տէր Ներսէհ Կամսարական, Ապիհիւպատ Պատրիկ, որ եկեղեցեաց ես չինող»: «Մի յայն եկեղեցեաց է Ս. Աստուածածնի եկեղեցին Թալնայ, ուր յիշեն և կին նորա Շուշան և որդին Հրահատ»,- պարզաբանում է* ***Ղ. Ալիշանը****, (տե՛ս Շիրակ, Վենետիկ, 1887, էջ 5):*

նագրությունում[9] որպես երկրամասի տերեր փոխարինում են Բագ-ռատունի իշխանները:

Խոսելով արաբական ցեղերի Հայաստան տեղափոխվելու մասին՝ Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է. «...774-775 թթ. ապստամբությունից հետո որոշ նախարարական տներ, որոնք դարեր շարունակ երկրի քաղաքական կյանքում վճռական դեր էին խաղացել, ինչպես օրի-նակ Մամիկոնյանները կամ Կամսարականները, հեռացան»[10]:

Լեոն այս տոհմերի անհետացումը համարում է կատարված VIII դ. վերջին քառորդին. «783 թ. Կամսարականները ծախեցին իրենց Արշարունիքը, ինչպես երևում է՝ Շիրակն էլ հետը: Այս ժամանակ-ներից հետո անհայտանում են պատմության ասպարեզից»[11]:

«Մամիկոնյան, ինչպես և Կամսարական հզոր տոհմերի թուլա-ցումը և անհետացումը պատմության թատերաբեմից նպաստեցին Բագրատունիների զորեղացմանը: Արաբական գերությունից փա-խած Գրիգոր Մամիկոնյանի վախճանվելուց հետո, որը հնարավոր ախոյանն էր Աշոտի, Բագրատունիները ձեռք են բերում Մամիկոն-յանների վերջին տիրույթը՝ Բագրևանդ գավառը»[12]:

Տիրելով Հայաստանի կենտրոնական շրջաններին՝ Բագրատունի-ները դարձան քաղաքական, տնտեսական, ռազմական այն գլխավոր ուժը, որն իր շուրջը համախմբելով երկրի մյուս իշխաններին՝ կարո-ղացավ հաղթական ավարտին հասցնել պետականության վերա-կանգնման համար մղվող հայ ժողովրդի դարավոր պայքարը՝ սկզբնավորելով հայոց պատմության նոր՝ զարգացած ավատատի-րության դարաշրջանը:

Աշոտ Ա Բագրատունու թագավոր հռչակվելու, հետևաբար հայոց պետականության վերականգնման տարեթիվը պատմագիտության մեջ տեղադրվում է 885-887 թվականների միջև: Հայոց պատմու-թյան այս կարևորագույն իրադարձության հարցում որպես մատե-նագրական սկզբնաղբյուրներ ընդունվում են ժամանակով ինչպես մոտ, այնպես էլ հեռու, հայ և օտար պատմիչների վկայություն-ները, որոնց մեծ մասում, թվական աննշան տարբերություններով, ուրվագծվում է Աշոտ Բագրատունու ռազմաքաղաքական գործու-նեության ամբողջական ժամանակագրությունը. 855/56-861/62 թթ.՝

---

[9] *Տե՛ս* ***Կ. Մաթևոսյան,*** *նշվ. աշխ., էջ 60:*
[10] ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *Արաբական ամիրայությունները Հայաստանում, Երևան, 1965, էջ 65:*
[11] ***Լեո****, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 439:*
[12] *«Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. III, Երևան, 1976, էջ 17: Այսու-հետև՝ ՀԺՊ, III:*

հայոց սպարապետ, 861/62-885/87 թթ.՝ Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի) իշխանաց իշխան, 885/87-890/91 թթ.՝ հայոց թագավոր:

Սակայն այս խնդրում, բացառությամբ ժամանակակից մի քանի պատմագիտական հետազոտությունների, գրեթե անտեսվում կամ թերագնահատվում են հայկական վիմագրերի հայտնի հիշատակությունները: Սևանի 874 թ. վիմագրում[13] Աշոտ Ա Բագրատունին արդեն հիշատակվում է իբրև թագավոր, իսկ Գառնիի 879 թ. արձանագրությունում[14] նրա կին Կատրանիդեն՝ հայոց թագուհի: Վիմական այս տեղեկությունները Բ. Առաքելյանին հիմք են տվել նկատելու, որ Աշոտ իշխանաց իշխանը հայ նախարարների կողմից թագավոր է ճանաչվել նախքան 886 թվականը, ենթադրելով, որ այն կատարվել է 869 թ. Կոստանդնուպոլսի Փոտ (Փոտիոս) պատրիարքի նամակը քննարկելու ու պատասխանելու առիթով հատուկ հրավիրված Շիրակավանի եկեղեցական ժողովում, ըստ այդմ էլ եզրակացնելու, որ 886 թ. հարևան տերությունների կողմից հայոց թագավորության ճանաչումն է տեղի ունեցել[15]:

Վ. Հակոբյանը, համաձայնելով Աշոտ Ա Բագրատունուն երկրի ներսում ավելի վաղ թագավոր ճանաչված լինելու տեսակետին, մերժում է դրա կապը Շիրակավանի ժողովի հետ այն հիմնավորմամբ, որ վերջինս գումարվել է 862 թ.[16] և քննարկել զուտ դավանաբանական հարցեր: Գիտնականը թեև թերահավատությամբ է մոտենում վերը նշված վիմագրերի հավաստիությանը, այնուհանդերձ ընդունում է Աշոտի ավելի վաղ թագավոր հռչակվելու փաստը, այն համարելով կատարված 864 թ.՝ հենվելով 997 թ. կազմված հայոց կաթողիկոսների մի ցանկի վրա[17], որի թվականը, ինչպես տեսնում ենք, ժամանակով հեռու է, ուստի արժանահավատությունը՝ կասկածելի:

Հայոց մեծամեծների կողմից Աշոտ իշխանաց իշխանին թագավոր ճանաչելու փաստը սոսկ ազգային ինքնանպատակ ցանկություն

---

[13] *Տե՛ս* ***Կ. Ղաֆադարյան,*** *Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 68:*

[14] *Տե՛ս* ***Б. Аракелян,*** *Гарни, том I, Результаты работы археологической экспедиции института истории АН Арм. ССР, Ереван, 1951, էջ 84:*

[15] *Տե՛ս նույն տեղում, էջ 85-87:*

[16] *Վարդան Արևելցին, որը ժամանակամերձ պատմիչ չէ, Շիրակավանի ժողովը թվագրում է 318 =869 թվականով, տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 82:*

[17] *Տե՛ս «Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, 1956, էջ 160-162:*

չէր, այլ ուներ ներքին և արտաքին հանգամանքներով պայմանավորված, քաղաքական ու տնտեսական իրական պատճառներ: Զնայած 851-852 թթ. հակաարաբական ապստամբության ճախողմանը, Բուղայի պատժիչ արշավանքի արհավիրքներին, հայ գլխավոր իշխանների Արաբիա աքսորվելուն, այնուամենայնիվ, 860-ական թթ. Հայաստանի ներքաղաքական կյանքում ստեղծվել էր մի այնպիսի բարենպաստ կացություն, երբ Մերձավոր Արևելքի երկրների ընդհանուր տնտեսական վերելքի ազդեցությամբ համաշխարհային առևտրափոխանակման ճանապարհներին գտնվող Հայաստանի առավել հզորացած շրջանները Վասպուրականի ու Սյունիքի նահանգատերերի եռանդագին նախաձեռնությամբ և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության գործուն աջակցությամբ ինքնին ձգտում էին համախմբվել ուժեղ կենտրոնի՝ Շիրակ-Այրարատի շուրջ, որտեղ հանձին իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու, տեսնում էին այն գլխավոր ուժը, որն ընդունակ էր առաջնորդելու հայկական պետականության վերականգնման համար մղվող պայքարը: Դրա հաջողության համար ստեղծվել էին միջազգային բարենպաստ պայմաններ. արաբական երբեմնի լայնածավալ խալիֆայությունը կայսրությունների կործանման պատմական օրինաչափությունների համաձայն հոգեվարքի մեջ էր, նրա մոտալուտ վախճանը քաղաքական հորիզոնում առկա էր. Պարսկաստանից մինչև Եգիպտոս ու Մաղրեբ բռնկված էին հակաարաբական շարժումներով, աշխարհակալության ներսում տարբեր ռազմաքաղաքական խմբավորումների միջև ծայր էր առել գահակալական սուր պայքար. կարճատև ժամանակաընթացքում, երբեմն ֆիզիկական հաշվեհարդարի ճանապարհով, միմյանց հաջորդում են հինգ խալիֆներ՝ ալ-Մութաուաքիլ (մահ. 861), ալ-Մունթասիր (861-862), ալ-Մուսթային (862 -866), 866 -869՝ անիշխանություն, ալ-Մուհթադի (869 -870) և ալ-Մութթամիդ (870 -892):

Ահա, իրերի այս հարմար ընթացքն էր, երբ, ինչպես Ս.Պողոսյանն է նշում. «Հայաստանում հարց են բարձրացնում Աշոտ իշխանաց իշխանին թագավոր հռչակելու մասին, որի վերաբերյալ եղած մատենագրական վկայությունները ենթադրել են տալիս, որ երկրի քաղաքական կյանքում դեր խաղացող մարդկանց խորհրդակցություն է տեղի ունեցել, բայց ե՞րբ և ո՞րտեղ, այդ ճշտելու համար առայժմ տվյալներ չկան: Թե՛ ժամանակակից և թե՛ հետագա մատե-

նագիրները միաբերան նշում են այն միակամությունը, որ հանդես են բերել իշխաններն ու մյուս տիրող տարրերը այդ հարցում»[18]:

Թ. Հակոբյանը վստահեցնում է, թե 875 թվականին Զաքարիա Զագեցի կաթողիկոսի հրավիրած գավառատեր ու նահանգատեր իշխանների հատուկ համաժողովը որոշում է հռչակել երկրի անկախությունը և դիմել խալիֆին՝ Աշոտ Բագրատունուն ճանաչելու Հայաստանի թագավոր[19]:

Մեզ հայտնի մատենագրական աղբյուրներում, ինչպես վերը նշվեց, նման ուղղակի հիշատակություն չկա: Այստեղ, նախ, ճիշտ չէ համաժողով կոչվածի տարեթիվը և վիճելի հարց է, թե ո՞վ է այն հրավիրել, վերոհիշյալ Զաքարիա հայրապե՞տը, նրան հաջորդած Գևորգ Բ Գառնեցի կաթողիկո՞սը, թե՞ Վասպուրականի ու Սյունիքի գահերեցներ Դերենիկ Արծրունին, Վասակ Իշխանիկը[20]:

Մինչ այդ էլ, Աշոտը երկրում արդեն հռչակվել էր թագավոր, և մեր կարծիքով, այդ իրողության անմիջական արտացոլումն է Սևանի 874 թ. շինարարական-նվիրատվական արձանագրությունը:

Ս. Կարապետ անվանվող եկեղեցու թմբուկի արևելահայաց կողմում տեղ խնայելու միտումով խիստ փակագրված այս վիմագիրը տեղեկացնում է, որ Սյունյաց Մարիամ իշխանուհին եկեղեցիներ է կառուցել սուրբ Առաքյալների անունով, ապա միաբանվելով Աշոտ թագավորին[21]՝ կատարել նվիրատվություններ, սահմանել սուրբ ուխտի ժառանգությունը՝ ընծայելով մի շարք գյուղեր, այգիներ՝ Գառնիում ու Երևանում:

---

[18] ***Ս. Պողոսյան,*** *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9-13-րդ դդ., Երևան, 1956, էջ 55-56:*

[19] *Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ Մ. Ներսիսյանի, Երևան, 1972, էջ 207:*

[20] *Պատմիչներից միայն Ստեփանոս Օրբելյանն է նշում կռահյալ գլխավոր իշխանների անունները (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 175):*

[21] *Ստեփանոս Օրբելյանը (էջ 174), նաև Լ. Մելիքսեթ-Բեկը (տե՛ս* ***Л. Меликсет-Беков****, Новооткрытая надпись на Севане от 874 г., М.–Л., 1939, էջ 409-419) անտեսում են* Թդ *-ը և վերծանում իշխանաց իշխան, որը սխալ ընթերցման արդյունք է: Արձանագրությունն առանց* Թդ *է կարդացել նաև Ա. Ղազարոսյանը (տե՛ս* ***Ա. Ղազարոսյան,*** *Սևանա կղզու եկեղեցիները, ԼՀԳ, 1990, № 1, էջ 51-52):*



Սևանի 874 թ. արձանագրության գրչագիրն ըստ Կ. Ղաֆադարյանի՝ էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 182:

Արձանագրությունում մեզ հետաքրքրող թագավոր հիշատակության հարցը կարևորվում է, երբ փորձ է արվում այն դիտարկել վիմագրի ժամանակի ու Հայաստանի ներքաղաքական կյանքում կատարված մի նշանակալի իրադարձության շղթայական կապի մեջ:

Թովմա Արծրունու «Պատմութիւն»-ից տեղեկանում ենք, որ Արմինիայի մի շարք ամիրայություններ միմյանց հետ գաղտնի համաձայնության էին եկել՝ Աշոտ իշխանաց իշխանի դեմ դավադրություն կազմակերպելու ու իրենց տիրապետությունը Հայաստանում հաստատելու շուրջ: Հայ իշխաններին հաջողվում է բացահայտել այդ դավադրությունը և երկրի սահմաններից դուրս վտարել Արմինիայի արաբ ոստիկան Ահմեդ իբն Խալիդին[22]*:*

Ընդ որում, չի բացառվում, որ եղել է նաև հայ-արաբական լոկալ բախում, ինչը մակաբերվում է Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող Սիմեոն վանականի 874 թ. ջարդոտված ու պակասող հատվածներով տապանաքարի գրությունից, ըստ որի՝ այդ կրոնավորը վախճանվել է սրախողխող[23]*:*

---

[22] *Տե՛ս «Թովմայի վրդ. Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց», Տփղիս, 1917, էջ 352-354, 357-359:*

[23] *Մեր դաշտային օրագրից: Գրչագիրը՝ գեղանկարիչ* ***Գևորգ Համբարձումյանի****: Ն. Մառը ժամանակին հրատարակել է այս արձանագրությունը (տե՛ս* ***Н. Я. Марр****, Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1899, Зап-вост. Отд. VIII, էջ 94):*



Սիմեոն վանականի 874 թ. տապանագրության գրչագիրը:

Այս փաստը ենթադրել է տալիս, որ հոգևորականին եղեռնական մահվան կարող էր, առավել հավանականությամբ, հասցնել այլազգի, այլակրոն մեկը, ով ատելությամբ լցված լիներ հայոց եկեղեցու հանդեպ, քանի որ նրա քաջալերությամբ էր տեղի ունենում պետականության վերականգնման գործընթացը:

Ինչ վերաբերում է Հայաստանից ոստիկանի վռնդմանը, ապա այդպիսի հանդգնություն խալիֆի բարձրաստիճան ներկայացուցչի, կառավարիչ-վերակացուի նկատմամբ, ինչպես Լեոն է նկատում. «առանց պատիժ կրելու վախի կարող էր ցույց տալ միայն Աշոտը, քանի որ նրա անկեղծ հավատարմությունը դեպի արաբական գահը, կասկածի առարկա դառնալ չէր կարող: Եվ, իրավ, արաբական արքունիքը պատասխանատու չհամարեց Աշոտին այս գործի համար, որ մի ուրիշի նկատմամբ գուցե պետական ամենածանր հանցանք համարվեր»[24]:

Ի դեպ, Աշոտ Ա-ի՝ իբրև խոշոր դիվանագետի մասին ամենայն դրվատանքով են խոսում նաև արաբ հեղինակները՝ առանձնահատուկ ընդգծելով, որ «Աշոտ պատրիկը խալիֆի մերձավոր մարդկանցից ամենամտերիմն էր, որի առջև մշտապես բաց էին արևելաշուք Սամառայի պալատական դարպասները»[25]:

---

[24] ***Լեո,*** *Երկեր, հ. 2, էջ 502:*

[25] أديب السيد ، أرمينية في التاريخ العربي، حلب، ١٩٧٢، ص ١٤٦

Ադիբ աս-Սեյիդ*, Հայաստանն արաբ պատմության մեջ, Հալեպ, 1972, էջ 146: Արաբերենից կատարվող այս և հետագա թարգմանությունները մերն են:*

Այս դեպքի բարեհաջող վերջաբանին հավանաբար զուգադիպել է Սևանա կղզու երկու եկեղեցիների շինարարության ավարտը: IX դարի ճարտարապետական այս կառույցների իրականացումը, մշակութային արժեքից զատ, օժտված էր նաև քաղաքական համարձակության երանգով: Հայտնի է, որ արաբներն իրենց տիրապետության սկզբնական շրջանում խալիֆայության կազմի մեջ մտնող քրիստոնյա ժողովուրդներին արգելում էին նոր եկեղեցիներ կառուցել՝ թույլատրելով միայն մասնակի վերանորոգումների անցկացումը հներում: Այն հատկապես խստորեն է կիրարկվել Մերձավոր Արևելքի կենտրոնական մասերում, իսկ Հայաստանում մինչև VIII դ. սկիզբն այդ օրենքը, ըստ էության, չի գործել, ինչի վկայությունն են բազմաթիվ եկեղեցիները, որոնք կառուցվել են VII դ. երկրորդ կեսին: Ժամանակի ընթացքում մոռացության մատնված այս արգելքը Հայաստանում սկսել է կիրառվել 705 թ. Նախիջևանյան նախճիրից հետո և խստացվել Բուղայի պատժիչ արշավանքի և ճնշումների (852-855) արդյունքում:

Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Աշոտ իշխանաց իշխանը Սևանի առաջնորդ Մաշտոցի (հետագայի Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոս՝ 897 թ. -Ա.Մ.) համբավից դրդված[26], բայց պետք է ենթադրել՝ իր դուստր Մարիամ իշխանուհու ջանքերով կերտված նորակառույց եկեղեցիների նավակատիքի առիթով այցելություն է կատարում Սևանա կղզի: Ամենայն հավանականությամբ, ինչպես նման դեպքերում ընդունված է, նրան ուղեկցում էին երկրի ազդեցիկ հոգևոր ու աշխարհիկ իշխանավորները և չի բացառվում, որ հենց Սևանում ձևավորված լինի նրան թագավոր ճանաչելու գաղափարը, որը երկու անգամ թգ համառոտագրված ձևով իր անուղղակի արտացոլումն է գտել 874 թ. վիմագրում:

Հայոց թագավորության հաստատման ճանապարհին վճռական գործոն էր հանդիսանում հայերի ճիշտ կողմնորոշվելու պարագան այն անհաշտ հակամարտությունում, որն ազդեցության ոլորտների վերանայման համար մղվում էր փլուզվող խալիֆայության և վերածաղկող Բյուզանդիայի միջև, ինչպես նաև մանևրելու ընդունակությունը՝ Հայաստանին այդ պայքարում իբրև դաշնակից տեսնելու երկու հարևան կայսրությունների ձգտումների մեջ: Առաջինը ջանում էր իր ազդեցությունը պահպանել Հայաստանում, ինչի ընդունումը ենթադրում էր, որ Արաբիայի մոտալուտ փլատակներից

[26] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 174:

երևալու էր երկրի քաղաքական անկախությունը, իսկ երկրորդի ձգտումը նշանակում էր կայացած ինքնուրույնության կորուստ ու պետականության վերականգնման անիրագործում: Ստեղծված իրավիճակն Աշոտ Ա Բագրատունուց պահանջում էր շրջահայաց քաղաքականություն ու նրբանկատ դիվանագիտություն:

Վարդան Արևելցին հայտնում է, որ Բյուզանդիայի՝ ծագումով հայ կայսր Վասիլ Ա-ը, իմանալով, որ հայոց Արշակունի թագավորները թագադրվում էին Բագրատունի իշխանների ձեռքով, 876 թ. Հայաստան է ուղարկում Նիկիտ անունով ներքինուն՝ խնդրելով, որպեսզի Աշոտը, իբրև Բագրատունի, թագ ուղարկի իրեն[27]: Այս եղելության մեջ, անշուշտ, նախնիների կապի վերահաստատման ուղղությամբ կայսրի ազգային զգացմունքներով տոգորվածությունը չէր, այլ Բյուզանդիայի ցանկությունը՝ դաշնակցելու Հայաստանի հետ:

Ակներև է, որ Աշոտն արդեն ճանաչվում էր թագավոր, այլապես կայսրը նրանից թագ չէր խնդրի: Այս հարցը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ Վասիլ Արշակունին գահ է բարձրացել 867 թ. և միայն ինը տարի անց՝ 876 -ին է թագ խնդրում Աշոտից, դրանով իսկ, կամա թե ակամա նախադեպ ստեղծելով հայոց թագավորության պաշտոնական ճանաչման համար: Սրան հետևում է Զաքարիա կաթողիկոսի ուղևորությունը (հավանաբար ուղարկվելը - Ա. Մ.) Ատրպատականի ամիրա Իսա իբն Շեյխի մոտ[28], ըստ երևույթին, տեղյակ պահելու, բանակցելու և առաջիկա գործողությունների հավանությունն ստանալու ակնկալիքով: Զաքարիա հայրապետի վախճանվելուց հետո 877 թ. հովվապետ է օծվում Գևորգ Բ Գառնեցին, որի աթոռակալության ժամանակ Աշոտին էին ենթարկվում ոչ միայն Վիրքն ու Աղվանքը, այլև՝ կովկասցիները, և ինչպես Վարդան պատմիչն է մեկնում. «և չէր ինչ պակաս բայց ի թագէ, զոր խորհէին իշխանքն Հայոց, և ի ձեռն Յիսէի ազգ առնեն ամիրապետին»[29]:

Նույն առիթով Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ հայ իշխաններն ու նախարարները. «Խորհուրդ միաբանական

---

[27] Տե՛ս **Վարդան,** էջ 85:
[28] Տե՛ս նույն տեղում:
[29] Նույն տեղում:

առեալ՝ թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքնեացն, զեկուցանեն ամիրապետին ի ձեռն ոստիկանին Յիսէի՝ որդւոյն Շեխայ»[30]:

Այս խորհրդակցությունը, հավանաբար, տեղի է ունեցել 876/877 թվականին: Պատահական չէ Կատրանիդեի՝ հայոց թագուհի հիշատակությունը Գառնիի 879 թ. խաչքարի վկայագրում, որտեղ «Յ» հարյուրավոր թվականը չափսերով անհամեմատ փոքր է իրեն հաջորդող, նույն զուգահեռությամբ դասավորված «Ի» և «Ը» տառերից, ընդ որում՝ «Ի» տասնավոր բաղադրիչի մեծ ուղղահայաց մասնիկի վերնամասում խաչաձև հատվում է պատիվ նշան – հորիզոնական գիծը, և այդ «ՅԻԸ» թվականը, առանց արձանագրությանը ծանոթանալուն, «ՅԽԸ» (899) ենթադրելը, հետևաբար Սմբատ Ա-ի ժամանակները տեղափոխելը, անհեթեթ է[31]:

Մոտ տասը տարի ձգձգելուց հետո (այն բացատրվում է խալիֆայությունում վիճակի կարճատև կայունացմամբ) և նպատակ ունենալով տարածաշրջանում հանձին Հայաստանի տեսնել այն գործոնը, որն արաբական տիրապետության ամբողջականության պահպանության համար ակամա կփոխհակազդվեր մյուս արաբահպատակ երկրների ինքնիշխանության գործընթացներին, ինչի արհավիրքների ականատեսն ենք դառնում Բագրատունի առաջին թագավորի հաջորդների՝ Սմբատ Ա-ի (890 -914) և Աշոտ Բ-ի (914 -928) գահակալության տարիներին անկախության ամրապնդման համար մղվող պայքարում, Ահմադ Աբուլ-Աբբաս ալ-Մութթամիդ ալլա-Ալլահ բեն ալ-Մութաուաքիլ խալիֆը (870 -892) ի վերջո ճանաչում է Աշոտի թագավորությունը՝ 886 թ.[32] նրան թագ, թագավորական զգեստներ ու արաբական նժույգ ուղարկելով, և Գևորգ Գառնեցի հայրապետի օրհնությամբ, «փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա (Աշոտին-Ա.Մ.) թագաւոր ի վերա Ազգանազեան ազին»[33]: Հավանական ականատես պատմիչի տարակուսանքն օծման արարողության բացակայության առթիվ հաստատում է Աշոտի ավելի վաղ թագավոր ճանաչված լինելու վարկածը՝ գուցեև օծության

---

[30] **Հովհաննես Դրասխանակերտցի,** Հայոց պատմություն, աշխ. թարգմ. և ծանոթ. Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 140:

[31] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 161, տողատակ: Տե՛ս լուսանկարը՝ զետեղված Բ. Առաքելյանի գրքում՝ Гарни, том I.

[32] Ժամանակով մոտ պատմիչներից Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 142) այդ կարևորագույն իրադարձությունը չի թվագրում, իսկ Թովմա Արծրունու «Պատմութիւն»-ից (էջ 370) հառնում է 886 թվականը: Հետագա պատմիչներից Ստեփանոս Օրբելյանը (էջ 175) թվագրում է 885 -ով:

[33] **Հովհաննես Դրասխանակերտցի,** նույն տեղում:

ծիսակարգով ոչ հրապարակավ կատարված: Դրան հաջորդում է եգերացիների թագավորի ողջույնի այցը հայոց արքային[34], ապա Բյուզանդիայի Վասիլ Ա կայսրի ուղարկած թագի ու թանկարժեք ընծաների հասնելը Հայաստան, ինչպես Վարդանի շարադրանքն է հուշում, 887 թվականին[35]:

Այսպիսով, վերն ասվածից հետևում է, որ Աշոտ Ա Բագրատունին Հայաստանում թագավոր է ճանաչվել, և հետևաբար հայոց պետականության վերականգնումը կատարվել է 870-ականների սկզբներին, մասնավորապես 874 թվականին, իսկ ավանդականորեն ընդունված 885 -887 թթ. պետք է համարել հայկական պետականության միջազգային ճանաչման տարեթիվը:

Նմանօրինակ իրողությունների վկաներն ենք մենք այսօր, երբ կան դե ֆակտո անկախ երկրներ՝ ի դեմս ԼՂՀ-ի և այլնի, բայց դե յուրե ճանաչումն ուշանում է:

Հնում, ինչպես Ռ. Մաթևոսյանն է պարզաբանում, թագավորի իրավական ճանաչումը կատարվում էր թագ ստանալու եղանակով[36]: Պատմաբանը հերքում է Կ. Յուզբաշյանի այն կասկածը, թե հայերը բյուզանդական Վասիլ կայսրից թագ չեն ստացել, որը պատճառաբանված է այդ մասին ժամանակով մոտ պատմիչների լռությամբ (պետք է ենթադրել նաև կայսրերից Բագրատունի հայոց թագավորների իշխանաց իշխան հորջորջմամբ - Ա.Մ.) և Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու ուշ շրջանի ենթադրություններով, որոնք առաջացել են արաբական թագերի հիշողությունների ազդեցությամբ[37]:

Հատկանշական է, որ Բյուզանդիայից թագ ստանալու իրողությանը հանդիպում ենք նաև արաբական աղբյուրներում, որոնք հաղորդում են, որ «Խալիֆը, ընդառաջելով հայ ժողովրդի ցանկությանն ու կամենալով թագավոր Հայաստանի կոչմանը համապատասխան ամենաընտիր նվերն ընծայել իր ուժեղ դաշնակից Աշոտին, հիջրայի 272 թ. (885 -886 թթ. - Ա.Մ.) նրան է ուղարկում թագ ու ծիրանի:

Կրոնական մեծ հանդիսությամբ Աշոտն իր գլխին է դնում թագը՝ բազմելով նախնյաց գահին:

---

[34] *Տե՛ս նույն տեղում, էջ 140:*
[35] *Տե՛ս **Վարդան**, էջ 86:*
[36] *Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 88:*
[37] *Տե՛ս նույն տեղում, էջ 97-99:*

Վասիլ Արշակունի կայսրը, ձգտելով Աշոտ Թագավորի հետ բարեկամության, նրան ուղարկում է նման ընծաներ»[38]:

Միջնադարյան արաբական աղբյուրներից սիրիացի ժամանակակից հետազոտողի քաղած այս հիշատակության մեջ ակներևաբար հառնում է այն իրողությունը, որ Աշոտին խալիֆը վերաբերում էր ոչ իբրև վասալի, այլ որպես ուժեղ դաշնակցի, և որ հատկանշական է, Աշոտին Թագավոր ճանաչելու խնդրանքով խալիֆին իշխանները դիմել են հայ ժողովրդի անունից: Ուշագրավ է նաև տեղեկությունը Թագադրության ժամանակ տեղի ունեցած եկեղեցական մեծ հանդիսության մասին, որի վերաբերյալ մեզ հայտնի ժամանակամերձ աղբյուրները միայն Թագի օրհնությունն են հիշատակում, իսկ ուշ շրջանի պատմիչները, ենթադրաբար նաև՝ «օծութիւն»-ը[39], որը, ինչպես վերևում ենք կռահել, հավանաբար, ավելի վաղ է կատարվել՝ սկզբնավորելով շուրջ չորսուկեսդարյա պետականազրկումից հետո «երրորդ նորոգումն Թագաւորութեանս Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ»[40]:

---

[38] Տե՛ս أديب السيد، نفس العمل، في نفس المكان

Ադիբ աս-Սեյիդ, նշվ. աշխ., նույն տեղում:

[39] *Ստեփանոս Օրբելյան, նույն տեղում:*

[40] *«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Պետերբուրգ, 1885, էջ 167:*

2. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ. ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բագրատունյաց թագավորության հզորության առհավատչյաները հայկական վիմական հիշատակագրություններն են: Ի տարբերություն մատենագրական հարուստ աղբյուրների, ժամանակը Բագրատունի առաջին թագավորներին հնարավորություն չտվեց հարկին գրանցվելու վիմագրություններում, քանի որ նրանք առավելապես զբաղված էին հայկական պետականության ամրապնդման ու կենտրոնացման համար երկարատև ու համառ պայքար մղելով, որի հետևանքը Հայաստանի հզորությունը հանդիսացավ:

Աշոտ Գ Ողորմածից (953-977) սկսած՝ հայոց Բագրատունի թագավորներն արձանագրություններում հորջորջվում են «շահանշահ» բարձրագույն տիտղոսով: Այդ է վկայում Մրենի X դ. վերջերի հետևյալ անթվագիր արձանագրության սկզբնահատվածը.

+ԵՒ ԵՍ ՍՈՓԻ՝ ԴՈՒՍՏՐ ՄԵԾԻՆ ԱՇՈՏՈՅ ՇԱՀԱՆ/ՇԱՀԻ,

ՀԱ⌈Յ⌉ՈՅ ԵՒ ՎՐԱՅ ԹԱԳՈՒՀԻ ...[41]

Սոփին Մրենի մի ուրիշ, մեկ տողանի, թերի վիմագրում իրեն կոչում է պարզապես.

...ԴՈՒՍՏՐ ՇԱՀԱՆ/ՇԱՀԻ, ՀԱՅՈՅ Թ ԼԱԳՈՒՀԻ...[42]

Հայտնի է, որ «Շահանշահ» անվանումն առաջին անգամ կրել է Աշոտ Բ Երկաթը (914-928): Այդ մասին տեղեկացնում է Հովհաննես Դրասխանակերտցին. «Եւ ապա նա (արաբ. Սբուկ ոստիկան - Ա.Մ.) ևս առաւել քան զՅուսուփ ըստ նմին սակի դնէր ուխտ միաբանական խաղաղութեան ընդ Աշոտի, և Շահանշահ զնա անուանէր»[43]:

Այս իրողության գնահատումն իր արժանի տեղն է գտել հայ պատմագիտության մեջ: «Շահանշահ» տիտղոսի հատկացումն արտահայտում էր Վասպուրականի, Իբերիայի, Ափխազիայի և Առանի (Աղուանից) քրիստոնեական մասնավոր իշխանությունների նկատմամբ Անիի թագավորության ձևական «սուվերենիտետը»[44]: Իրավ, Գագիկ Ա-ը (990 -1020) Անիի մայր տաճարի արձանագրությունում

---

[41] **И. Орбели,** *Надписи Мрена*, «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 37:
[42] Նույն տեղում:
[43] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 316:
[44] **Ա. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 120:

հիշատակվում է «Հայոց և Վրաց Շահանշահ»[45], քանի որ Վրաստանն ընդունել էր Բագրատունի թագավորների գերիշխանությունը: «Շահանշահ» տիտղոսը (պարսկ. «արքայից արքա»- «شاهنشاه.») Սասանյան անկումից հետո հավանաբար օգտագործվում էր իրանական նահանգներում Աբբասյան խալիֆայության թուլացմանը զուգընթաց: Շահանշահը Աշոտ Բ-ի հետնորդների ամենասիրած տիտղոսն է: Այն ընդգծում էր Հայոց Բագրատունի տիրակալի գերադասությունը մանր թագակիրների նկատմամբ, որոնցից ամեն մեկը թագավոր էր կոչվում, և պատահական չէ նրա արաբերենով օգտագործվելը Հաղբատի արձանագրության մեջ՝ " شاهنشاه أنه الملك "[46]:

Հայ պատմիչները, որոնցից հղում է կատարում Ա. Տեր-Ղևոնդյանը, հայտնում են միայն այն, թե Աշոտ Բ ստացել է «շահանշահ» տիտղոսը[47], մինչդեռ արաբական աղբյուրներից իմանում ենք, որ «այն բանից հետո, երբ Աշոտ Երկաթը, դաշնակցած խալիֆի զորքերի հետ, ջախջախում է Յուսուֆի ուժերին, որպես մատուցած ծառայության փոխհատուցում, ամիրապետի հրամանով ստանում է «շահանշահ» տիտղոսը»[48]: Այդուհետև Բագրատունի թագավորները վիմագրերում հանդես են գալիս շահանշահական բարձր տիտղոսով:

Աշոտ Գ-ին հաջորդած թագավորը՝ որդին՝ Սմբատ Բ-ը, «որ և շահանշահ կոչիւր»[49] արձանագրություններում նույնպես հիշատակվում է նույն կոչումով. «Ի թագաւորութեան Սմբատայ Բագրատունւոյ Շահնշահի..»[50], «Յանուն Այ, ինչ թուական ՆԼԶ (987). ես՝ Սմբատ Շահանշահ, որդի Աշոտո Շահանշահի, ազատէցի վասն իմ հաւրն հաւգոյն և իմ արեւշատութեան և մեղաց թաւղութեան զշալակաւոր ի բաժէ[51] շնորհիւն Այ..»[52]:

---

[45] *«Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 35: Այսուհետև՝ Դիվան, պր. I:*

[46] ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, ԼՀԳ, 1979, № 1, էջ 73-80:*

[47] *Նույն տեղում, էջ 76:*

[48] أديب السيد، نفس العمل، ص ١٦٥ (***Ադիբ աս-Սեյիդ***, *նշվ. աշխ., էջ 165):*

[49] ***Կիրակոս Գանձակեցի,*** *Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 38:*

[50] *«Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 9: Այսուհետև՝ Վիմական տարեգիր:*

[51] *«Բաժը» անցահարկ է, ինչպես և «ծուծը», «մրուրը» (արաբ. مرور - «անցում» բառից - Ա. Մ.) որը թերևս վաճառքի համար սայլով, դրաստով և շալակով ճանապարհներին, կամուրջներին, դարպասների առջև քաղաք տարվող մթերքներից գանձվող հարկ էր՝ 1/10 չափով (ՀԺՊ , III, էջ 263):*

[52] ***Կ. Մաթևոսյան,*** *Արուճ, էջ 61:*

Շահանշահ տիտղոսը, ինչպես հայտնի է, հետագայում վերցրեցին Զաքարյան իշխանապետները, որոնց մոտ այն նույնիսկ դարձավ հատուկ անուն:

Հաջորդ կոչումը, որով Բագրատունի թագավորները հանդես են գալիս արձանագրություններում, «տիեզերակալ»-ն է:

Եթե «շահանշահ» տիտղոսն արտահայտում է Բագրատունի տիրակալների գերագահությունը թագավոր հռչակված նահանգական գահերեցների նկատմամբ, ապա «տիեզերակալ» պատվանունը ցույց է տալիս նրանց հզորությունը:

Արդ, հարց է ծագում, թե ե՞րբ է այն երևան եկել, ինչի՞ հետևանքով, և ո՞ւմ պետք է իրավամբ «տիեզերակալ» կոչել:

Հայոց պատմագիտության մեջ «տիեզերակալ» պատվանունը, ինչպես նկատել են մի շարք գիտնականներ (Լեո, Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Մարգարյան) թյուրիմացաբար վերագրվում է Սմբատ Բ Բագրատունի թագավորին: Հայտնի է, որ իր համեմատաբար կարճատև գահակալության տարիներին՝ 977-990 թթ., նա առավել նշանակալից գործ չի կատարել այդպիսի բարձր կոչման արժանանալու համար: Բացառություն են կազմում թերևս Անի մայրաքաղաքի պաշտպանական համալիրի ուժեղացումը նոր պարսպաշարով. «..յամի 979՝ ՆԻԸ, զահագին և զմեծանիստ՝ զանմատոյց և զանխախտելի պարիսպ շուրջանակի զԱնի քաղաքաւ՝ լայնատարած յոյժ և բարձր, սկսեալ ի յԱխուրյան գետոյ, որոյ վրա էր քաղաքն քարակտուր բարձրացեալ. մինչև զԾաղկոցաձորն կոչեցեալ վայր, և կանգնեաց ի նմա զբարձրաբերձ բրգունս ահեղս և զարմանալիս. և փորեաց զպարսպաւ խրամ խոր և լայն, զոր պատեաց աղիւսօք և քարամբք, աշխատեալ ի նոյն ամս ութն» և «... զմեծ Կաթողիկէի» շինարարության սկսումը՝ «ձեռամբ մեծի ճարտարապետին հայոց Տրդատայ»[53]:

Լեոյի գնահատմամբ. «Սմբատը հայ թագավորների մեջ միակն է, որ կրում է **Տիեզերակալ** մեծադղորդ տիտղոսը, որ պիտի նշանակեր մեծ աշխարհներ նվաճող: Այս պարզապես թյուրիմացություն է, որ առաջ է եկել պատմական աղբյուրներին և երևույթներին ոչ բավականաչափ լուրջ քննական հայացքով վերաբերվելուց: Սմբատը մի շատ համեստ անուն ունի պատմության մեջ, ուր նա կարող է

[53] **Մ. Զամչեանց,** Պատմութիւն Հայոց, հ. Բ, Երևան, 1984, էջ 851: Նաև՝ **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, էջ 187:

պարծենալ Անիի պարիսպների շինությամբ: Եվ նվաճող անվանել այդպիսի մի խաղաղ-շինարար գործչի՝ կնշանակի ծաղրել նրան»[54]:

Մինչդեռ մատենագրական աղբյուրներից տեղեկանում ենք, որ նրա համանուն նախնի Սմբատ Ա-ը (890-914), գրավելով ու տիրելով բազում նահանգների ու գավառների, քաղաքների ու ամրոցների, որոնց հղումն ստորև ավելորդ չենք համարում, անվանվում է ***տիեզերակալ****: «Եւ նայ (Սմբատ Ա - Ա.Մ.) տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք և զՏայք, զՎիրք և զԱղվանք և զՎրաց դաշտ և զՓարիսունք և զԱղորինս և զԱրևիս և զԲաղս և զաւան Պարտաւայ: Եւ առեալ տիրեաց նմայ զՓայտակարանն, որ է Տփխիս, զՎաղարշապատ և զԴվին և զՎայոց ձոր և զՆախջվան: Եւ էառ ամրոցն զԵրնջակայ և զԱղաշկերտ և զՎաղարշաւան, որ է Բասէն, և զԱպահունիս, զՀարք, զՏարաւն: Եւ շինեաց նայ զամրոցն Խլաթայ, շինեաց և գաւարն և էառ զամենայն աշխարհն Առբերան... Եւ մեծամտեցաւ և անուանեաց զինքն Սըմպատ տիեզերակալ»[55]:*

Ապա նաև՝ «(913) Թագաւորն Սմբատ Տիեզերակալ շինեաց զԱնի քաղաք, որ Թարքմանի խնամք (արաբ. آني -խնամք արմատից - Ա.Մ.)»[56]:

«Յետ սպանելոյն Սմբատայ Թագաւորին տիեզերակալ. ի ձեռաց ամբարիշտին Յուսփայ..»[57]:

Մեր կարծիքով, Շապուհ Բագրատունի պատմիչի վերը նշված գնահատականը՝ տրված Սմբատ Ա Տիեզերակալ Թագավորի անձին նրա պատմական առաքելության մեջ, որն է Հայաստանի, հայկական հինավուրց հողերի ազատագրումն արաբական տիրապետությունից, խիստ աչառու է:

Օտար, մասնավորապես, վրացական աղբյուրները նույնպես տիեզերակալ են ճանաչում Սմբատ Ա-ին[58]:

Նույնիսկ ինքը՝ Սմբատ Բ-ը, կազմելով իր ծնողների՝ Աշոտ Գ Ողորմած Թագավորի (953-977) և Խոսրովանույշ Թագուհու հիմնարկած Սանահնի վանքին եպիսկոպոսական, թեմական վիճակ տալու

---

[54] ***Լեո,*** *Երկերի ժողովածու, հ. 2, էջ 600:*

[55] *«Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 65-66:*

[56] *«Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 56:*

[57] *«Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումն ի գրոց պատմագրաց», հրատ. Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 98:*

[58] *Տե՛ս* ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *նշվ. հոդված, նաև* ***Հ. Մարգարյան,*** *Զաքարյանների ծագումը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 159:*

արքունական հրովարտակը, իրեն համարում է «.. թոռն տիեզերակալ և մեծ թագաւորին Սմբատայ»[59]:

Այս, ինչպես գրչագիր, այնպես էլ վիմագիր հիշատակությունը[60] հուսալի կռվան է հանդիսանում եզրակացնելու.

ա) Տիեզերակալ պատվանունն առաջին անգամ կրել է Սմբատ Ա-ը, և հայագիտության մեջ Սմբատ Բ-ին այդ կոչումով առանձնանշելը, ճիշտ չէ:

բ) Նույնկերպ տիեզերակալ կարելի է անվանակոչել հզորագույն Գագիկ Ա (990-1020) և անգամ Հովհաննես-Սմբատ (1020-1042) Բագրատունի թագավորներին, որոնք «շահանշահ» տիտղոսի հետ ժառանգաբար կրել են նաև «տիեզերակալը» և այդ կոչումով են հանդես գալիս համապատասխանաբար Աշտարակի Ծիրանավորի վիմագրում[61] և Անիի մի արձանագրությունում[62]:

Աշտարակի Ծիրանավորի վիմագրում հատկանշականը Գագիկ Ա-ի՝ իրեն. «հզաւր և տիեզերակալ շահինշահ և հայոց մեծաց արքայից արքա» անվանելն է[63]:

Գագիկ Ա-ը (990-1020) ամենազորեղ Բագրատունի թագավորն է: Հարկավ, «Եւ տիրեաց նա (Գագիկ - Ա. Մ.) յոլով բերդից գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսո՝ առաւել քան զեղբայր իւր և ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայս»[64]:

«Գագիկ ... այր հզօր և յաղթող ի պատերազմի. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց...»[65]:

Նմանապես հայոց թագուհիները վիմագրերում հանդես են գալիս որպես «Հայոց և վրաց թագուհի», ինչպես Սոփէն վերը նշված Մրենի X դ. անթվակիր արձանագրությունում, նաև Գագիկ

---

[59] **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 135-136:

[60] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 190-191: Նաև՝ «Դիվան հայ վիմագրության» պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 120: Այսուհետև՝ Դիվան, պր. IX:

[61] Տե՛ս **Ս. Սաղումյան**, Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունն Աշտարակում, ԼՀԳ, 1989, № 9, էջ 91-96: Տե՛ս նաև նույնի՝ Աշտարակ, Երևան, 1998, էջ 146-147:

[62] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 48: Տե՛ս նաև **Հ. Մարգարյան,** նշվ. աշխ., նույն տեղում:

[63] **Ս. Սաղումյան**, նույն տեղում:

[64] **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ,** էջ 256:

[65] «Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 25:

Շահանշահի թոռնուհի Մարիամը Մարմաշենի անթվակիր հիշատակությունում. «Ափխազաց (վրաց - Ա. Մ.) և Հայոց թագուհի»[66]:

Վիմական աղբյուրները ցույց են տալիս, որ հայոց աշխարհի տիկնայք գործուն մասնակցություն են ունեցել երկրի կառավարման և շենացման գործերում: Հետևելով ամուսնու՝ Աշոտ Ողորմածի խաղաղ շինարարական գործունեությանը, հայոց Խոսրովանույշ թագուհին «շինեաց զՀաղբատ ՆԺԷ (968) թուին»[67]: «Եւ բարեպաշտ կողն իւր (Աշոտ Ողորմածի - Ա. Մ.) Խոսրովանույշ շինէ զփառաշարդ սուրբ ուխտն Սանահին և Հաղբատ»[68]: Արձանագրություններից երևում է, որ Խոսրովանույշ թագուհին երկրի քաղաքական-տնտեսական կյանքում ունեցել է առանձնահատուկ դիրք, այլապես 971 թ. չէր հաստատի. «...զՏեկորոյ շարյետն[69] յեղն (յեղն)[70] կայթ մի...» և իշխողներից ոչ ոք չպետք է հանդգներ «լուծանել» այն[71]: Դա վկայում է նաև Դաշտադեմի Ս. Քրիստափոր եկեղեցու «... ի Ն և Լ (981) թուականութեանս Հայոց, ի հայրապետութեան Անանէի և ի թագաւորութեան Աշոտոյ՝ որդոյ Աբասա կամ եղև յԱյ ես Խոսրովանոյշ Հայոց թագուհի, որ կարգեցի...»[72] թվականը սխալ վերծանած արձանագրությունը: Կարծում ենք, որ այն պետք է ընթերցվեր «Ն և Ը» (959), որպեսզի համընկներ Անանիա Ա Մոկացու կաթողիկոսության՝ 946 -968 և Աշոտ Գ Ողորմածի գահակալության՝ 953 -977 տարիներին: Իսկ 981 թ. աթոռակալել է Խաչիկ Ա Արշարունին՝ 973 -990 թթ. և գահակալել Սմբատ Բ Բագրատունին՝ 977-990 թթ.: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ արքայազ-

---

[66] ***И. Орбели,*** *Избранные труды, էջ 444:*

[67] ***Մխիթար Անեցի****, Պատմութիւն, Ս.Պետերբուրգ, 1879, էջ 9:*

[68] ***Վարդան,*** *էջ 90:*

[69] *«Շարիատը» տեղական ավատատիրոջը բնամթերքով վճարվող հարկն էր՝ արդյունքի 1/10 մասով (տե՛ս ՀԺՊ, III, էջ 258-259,* ***Լ. Բաբայան,*** *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դդ., Երևան, 1964, էջ 435-436,* ***Ս. Պողոսյան,*** *նշվ. աշխ., էջ 219): Ըստ Գառնիի մի վիմագրի՝ «շարիատը» գանձվել է նաև դրամով (տե՛ս* ***Ս. Հակոբյան****, Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 119):*

[70] *Բնագրի «յեղն կայթ մի» վերծանությունը Հ. Մանանդյանն ուղղել է «յեղն կայթ մի»՝ պատճառաբանելով, որ ոչ թե եղներից էին հարկ վերցնում, այլ կովերից: «Կայթի» կշիռը հավասար է 19 կգ 584 գ (տե՛ս* ***Հ. Մանանդյան,*** *Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1952, էջ 130):*

[71] *Վիմական տարեգիր, էջ 8:* ***Ա. Քալանթար,*** *Հայաստան՝ Քարե դարից միջնադար, Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 151:*

[72] ***Հ. Եղիազարյան,*** *Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմական արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1971, Ը, էջ 63:*

ները վիմագրերում հիշատակվում են «թագաւոր» տիտղոսով, ինչպես օրինակ Աշոտը Տեկորի հետևյալ արձանագրությունում. «Ի ՆԾԷ (1008) թ. Հայոց. Յանուն Աստուծոյ կամ եղեւ ինձ Կատրանիդէ. Հայոց թագուհի դուստր Վասակայ եւ ամուսին Գագկայ, թողեալ եմ զՏեկորոյ շարյատն վասն Գագկայ Շահնշահի արեւշատութեան եւ իմ որդեացն.. Եւ ես Աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ զհարկ բնովիմբ յաւիտենից եւ զթաստակ[73] վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց եւ զաւակաց, որ աւր թ. կ Հաոց ՆԿԳ (1014) վասն ս. Սարգսի շինութեան..»[74]:Հավանաբար Խոսրովանույշ թագուհու 971 թ. հաստատած հարկի իրավական կասեցումն է:

Այս արձանագրությունը շատ ուշագրավ է զուտ վիմագրական տեսանկյունից. բաղկացած երկու մասից՝ փորագրված տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից, բայց շարունակաբար միմյանց լրացնող: Վիմագրի վերջաբանն ապահարկության դասական օրինակ է՝ իր խոսուն բանաձևով. «... եւ վասն մեր հոգեացս ազատեցաք զազգ եւ հայր եւ մայր եւ որդիքս...»[75]:

Ակներևաբար, այդպես էլ «շահանշահ» չդարձած Աշոտը, որը մատենագրական աղբյուրներում հռչակվում է որպես «արի և քաջ և զօրաւոր, անպարտելի և յաղթող ի պատերազմունս»[76] և հոր՝ Գագիկ Ա-ի մահից հետո՝ 1020 թ. «թագաւոր ամենայն տանն Հայոց»[77] կարգվելու համար երկպառակություն էր սկսել ավագ եղբոր՝ Հովհաննես-Սմբատի դեմ, պետական կառավարման գործերում խաղացել է նշանակալի դեր:

Հաջորդ տիտղոսը, որ կրել են Բագրատունի, արդեն ոչ թագաւոն իշխանները՝ «տերանց տէրն» է: Այսպես է կոչվել հայոց սպարապետ Շապուհ Բագրատունին Վանեվանի 903 թ. վիմագրում[78]:

---

[73] «Թաստակը» պետական պաշտոնյաներին, գործակալներին տրվող տուրք է (տե՛ս **Լ. Բաբայան,** նշվ. աշխ., էջ436): Այն բնահարկի՝ «չարիատի» կամ «պախտի» 1/4 մասն է (տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 21-22): Թաստակը հանդիպում է հետագայի բազմաթիվ վիմագրերում ևս:

[74] Վիմական տարեգիր, էջ 13:

[75] Նույն տեղում:

[76] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի, Ն. Տեր-Միքայելյանի, աշխ. թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 12:

[77] **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 26:

[78] «Դիվան հայ վիմագրության», պր. IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 121-122: Այսուհետև՝ Դիվան, պր. IV: Նաև՝ **Լ. Սարգսյան**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դարեր), Երևան, 2007, էջ 49-50:

Ռ. Մաթևոսյանի կարծիքով, «տերանց տէրը» պաշտոն էր, որը թագավորի հրամանով կարգավորում էր Բագրատունի և մյուս գահերեցների փոխհարաբերությունները, այսինքն՝ Վասպուրականի, Սյունիքի «տերերի» փոխհարաբերությունների կարգավորումը հայոց թագավորի հետ որպես «տերի»[79]:

Վանեվանի արձանագրությունից չի կարելի եզրակացնել, թե Շապուհ Բագրատունին տիրույթներ է ունեցել Գեղարքունիքում: Օգտվելով երկարատև պատերազմական գործողությունների դադարից, որը հաստատվել էր Ատրպատականի ամիրա Յուսուֆ իբն Աբու Սաջ Դևադայի և հայոց Սմբատ Ա-ի միջև խաղաղության դաշինքի կնքմամբ՝ Շապուհը, քրոջը՝ Սյունյաց Մարիամ իշխանուհուն այցի գալով և հիանալով նրա և որդու՝ Գրիգոր Սուփան Բ-ի շինարարական բուռն գործունեությամբ, հավանաբար, ինքն էլ որոշում է կառուցել եկեղեցի՝ վերակացու և տեսուչ առնելով քրոջը: Կարծում ենք՝ Շապուհ Բագրատունին հայոց «տերանց տերի» իրավունքով է Վանեվանի արձանագրությամբ որոշում հինգ գյուղերի սահմանները: Իսկ նրա բուն տիրույթները, ինչպես հայտնի է, գտնվում էին Բագարանի, Կողբի շրջակայքում:

3. ԱՐՈՒՃԻ 867 Թ. ՎԻՄԱԳԻՐԸ ԵՎ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Հայերեն վիմագրերի ժամանակագրական կարգը հնարավորություն է ընձեռում հետևելու ինչպես Բագրատունյաց թագավորության շրջանում, այնպես էլ հետագայում, այս կամ այն տիտղոսի զարգացման, մի ազնվականական տնից մյուսին փոխանցվելու ընթացքին: Արդեն X դարի երկրորդ կեսից սկսած Բագրատունյաց պետության պատվագույն տիտղոսները՝ իշխանաց իշխանը, տիկնանց տիկինը, կրում և ամենաբարձր պաշտոնները՝ սպարապետությունը, մարզպանությունը, հետո էլ նաև կաթողիկոսությունը վարում էին Պահլավունի տոհմի ներկայացուցիչները: Ի դեպ, տակավին քննության կարոտ է այն կարևոր հարցը, թե ովքե՞ր էին Պահլավունիները և ինչպե՞ս կարողացան հասնել այդ բարձր դիրքերին:

Բագրատունյաց Հայաստանի թերևս առաջնակարգ իշխանների՝ Պահլավունիների ազգաբանական հարցերը ուսումնասիրել կամ

---

[79] **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչաքաղաքական կարգը, էջ 103:

դրանց անդրադարձել են մի շարք հետազոտողներ՝ առաջ բերելով երկու հակադիր տեսակետներ:

Ն. Ակինյանը, որն այդպես հստակորեն գատում է հետագայում Պահլավունիների լքած տիրույթներն ու տոհմանունը ժառանգած, նրանց վասալ, Ծաղկունյաց գավառի տեր Ապիրատյանների ճյուղն ու կազմում երկուսի ազգաբանությունը, համաճայն տոհմի ազդեցիկ ներկայացուցիչ, հայ միջնադարյան ականավոր գիտնական, իմաստասեր, քերականագետ, ռազմական և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի վկայությունների, Պահլավունիների սերումը բխեցնում է Կամսարական նախարարական տնից[80], իսկ ազգատոհմի վերածնունդը, այնպիսի դասական, ինչպիսին Ղ. Ալիշանն է, վերագրում է Ժ դարին[81]: Ն. Ադոնցն էլ հայ վաղագույն մատենագրական աղբյուրների հիման վրա Կամսարականներին համարում է Արշակունիներին համազն[82]:

Հարկավ, այդ են հաստատում նաև վիմական աղբյուրները: Սանահնի արձանագրություններից մեկում XI դարի առաջին կեսի գործիչ, հայոց մարզպան Աբլղարիբը վկայակոչվում է որպես «... յազգէ Պահլաւունի, ի տանէ Արշակունեաց ...»[83]: Նշանավոր սպարապետ, իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին Մարմաշենի 1029 թ. վիմագրում իրեն հիշատակում է «... որդի Գրիգոր իշխանի Հայոց Մեծաց, ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց

---

[80] Տե՛ս **Ն. Ակինեան,** Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթմեաց ազգաբանութիւնը, ՀԱ, Վիեննա, 1954, թիւ 1-5, էջ 3: Վերջին տարիներին Գ.Գ. Սարգսյանը կարևոր բացահայտումներ ու տարանջատումներ է կատարել Պահլավունիների և Ապիրատյանների ազգաբանական հարցերում [տե՛ս **Գ.Գ Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան, հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը», ժողովածու 12, Երևան., 2002, էջ 107-112]: Իսկ Կ. Մաթևոսյանը նորահայտ աղբյուրներով հարստացրել է Ապիրատյան կամ Հասանյան իշխանատոհմի ծագումնաբանական ակունքները (տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91: Տե՛ս նույնի Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, ԲՄ, 17, Երևան, 2006, էջ 148-167):

[81] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 22-23:

[82] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 334:

[83] **Կ.Ղաֆադարյան,** Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 97, Դիվան, պր. IX, էջ 28:

Լուսաւորչի ...»[84]: Կեչառիսի 1051 թ. վիմագրությունում Գրիգոր Մագիստրոսն իրեն համարում է Արշակունի[85]:

Կ. Կոստանյանը թեև Պահլավունիներին համարում է Կամսարականների շառավիղ, սակայն կատարում է մի շարք արժեքավոր դիտողություններ առ այն, որ նրանց մասին չեն հիշատակում հին պատմիչները, հետևաբար տեղեկություններ ունենք միմիայն այդ տոհմին պատկանող հեղինակներից, որոնք իրենց սերումը կապում են Գրիգոր Լուսավորչի տան հետ, ցեղակից են Արշակունիներին, սակայն ինչպե՞ս, ի՞նչ հաջորդականությամբ, մնում է մութ, և որ հին նախարարական ցանկերի մեջ Պահլավունի տոհմանունը պահպանվել է միայն 967 թ. խմբագրված Ներսիսյան կամ կեղծ գահնամակի մեջ՝ Պալունիների փոխարեն գրառված[86]:

Քննության առարկա տոհմի ծագման նորագույն ուսումնասիրողներից Վ. Վարդանյանը Պահլավունիներին համարում է Կամսարականներից վերընձյուղված ճյուղ, որը VIII դ. վերջերին ավագ տոհմակիցների կողմից Աշոտ Մսակեր Հայոց իշխանին (804-826) սեփական կալվածները վաճառելուց ու Հայաստանից հեռանալուց հետո մնաց հայրենիքում՝ ընդունելով Բագրատունիների գերակայությունը և նրանց հովանու ներքո պահպանեց Շիրակում ունեցած իր տիրույթների մի մասը, այդ թվում նաև Անին[87]: Իսկ իր գրքում պատմաբանը հավելում է, որ «գուցե նրանք գերադասեցին չկրել արաբների ախոյան Բյուզանդիայի կողմն անցած Կամսարականների տոհմանունը (անշուշտ արաբների թշնամանքը չհարուցելու մտադրությամբ) և պահպանեցին Պահլավունի անունը»[88]: Հեղինակը միաժամանակ երկու մատենագրական վկայություն է մեջբերում, որոնք կարծես փաստում են VI և VII դարերում Պահլավունի տոհմանվան գործածությունը[89]: Բայց պետք է նկատել, որ այդ երկու վկայություններից առաջինը ուշ շրջանի՝ XVI դ. հիշատակություն է, իսկ երկրորդը՝ VII դ. ձեռագրի հետագա ընդօրինակում, երբ արդեն

---

[84] **Հ. Եղիազարյան**, Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1957, Ե, էջ 41-42: Հմմտ. **И. Орбели**, Избранные труды, էջ 441-442:

[85] Տե՛ս **Գարեգին կաթողիկոս Ցովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 312:

[86] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, Առաջաբան, էջ Ա, Ժ, ԺԴ:

[87] Տե՛ս **Վ. Վարդանյան**. Պահլավունի տոհմի ծագման շուրջ, «Հայոց պատմության հարցեր», 6, Երևան, 2005, էջ 111-121:

[88] **Վ. Վարդանյան**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008, էջ 17:

[89] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

հայտնի էին Պահլավունիները: Դա Անաստաս վրդ. Հերապոլսեցու տեղեկությունն է՝ «ի խնդրոյ իշխանին Համազասպայ Կամսարակա-նին Պահլավունեաց»[90], որի ներքո հասկացվում են Կամսարական տոհմի պարթևա-պահլավական արմատները:[91] Հետազոտողների մյուս խումբն էլ, որը գլխավորում է Լեոն, կասկած է հայտնում Կամսարականներից Պահլավունիների սերվելու մասին՝ նրանց ան-նշանից բաձրացած նոր տոհմ համարելով[92]: Այս վարկածի կողմնա-կից է նաև Լ. Խաչերյանը: Սակայն մեզ համար անընդունելի է բա-նասեր գիտնականի՝ Աբլղարիբ անվան մեջ «օտարական» կամ «պանդուխտ» արաբերեն բառը տեսնելով Պահլավունիներին եկվոր-ներ կարծելու տեսակետը[93]: Պահլավունիների ծագման, հիրավի մութ հարցի վրա, լույս են սփռում Արուճի 867 թ. հետևյալ վիմա-գիրը և Աբուղամր անվան ստուգաբանությունը:



Արուճի 867 թ. արձանագրության գրչագիրը:

---

[90] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Ե, Անթիլիաս, 2005, էջ 1278:*

[91] *Ն. Ակինյանը, խոսելով Երուսաղեմի Աղվանից վանքերի անունների մասին, գրում է. «Անաստաս վարդապետի թուղթը հասած է մեզի անխորագիր: Այդ թուղ-թին վերջը երկրորդ գրչէ ավելացուած է վերջաբան մը, ուր կըսուի. «Երանելւոյն Անաստասայ Հայոց վարդապետի գրեալ զԱնուանս վանորէիցն Երուսաղէմի ի խնդրոյ իշխանին Համազասպա Կամսարականի պահլաւունւոյ, որ կամէ գնալ յԵրուսաղէմ ուր և գնաց իսկ եւ արժանացաւ աստուածակոխ սուրբ տեղեացն: Իշխանն Համազասպ տոհմով Մամիկոնեան էր. ուստի պետք է ենթադրել, որ Կամսարական սխալագրութիւնն է կուրապաղատ տիտղոսին, զոր ընդունած էր Համազասպ 657/658 տարւոյն Կոստանդ կայսրէն, իսկ Կամսարական պահլաւունի տոհմանունը Հայոց պատմութեան մէջ երեւան եկած է 1000 թուականէն ետքը, պետք է հետեւեցնել, թէ ձեռագիրը ԺԱ/ԺԲ դարէն պէտք է եղած ըլլայ»: Տե՛ս **Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմու-թիւնն Աղուանից, ՀԱ, 1957, թիւ 8-10, էջ 404:*

[92] *Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 643:*

[93] *Տե՛ս **Լ. Խաչերեան**, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, Լոս Անճելըս, 1987, էջ 20:*

Առաջինը տեղեկացնում է, որ «ՅԺԶ (867) թուականին Հայոց, յիշխանութեան Աշոտոյ և ի տերութ֊իւ֊ն Սմբատայ՝ Հա֊յ֊ոց ասպարապետի Բագրատունոյ, ի կաթողիկոսութ֊իւ֊ն Զաքարիա֊յի...» *վեճ է ծագում Արուճ, Կոշ և Գավառ գյուղերի միջև, և այն կարգավորում է.* «Գրիգոր՝ որդի Վառամա, ծառա Սմբատա Բագրատունո, եկի հրամանաւ Սմբատա, և ես հաւասարեցի զՁուրն ընդ Կոշ և ընդ յԱրուճ, զինչ իւրեանց...»[94]*:*

Ըստ այսմ, Վառամի կամ Վահրամի որդի Գրիգորը Սմբատի ծառան է, որպիսին, ասենք, Վաչեն է Սանահնի 1211 թ. վիմագիր հիշատակությունում. «...Ես Վաչէ ծառա Զաքարիի[95]... (ամիրսպասալարի՝ Ա. Մ.)», նույն ինքը՝ Այրարատ նահանգի կողմնապետ, հռչակավոր Վաչե Ամբերդեցին:

Ադոնցը պարզաբանում է, որ հնում «իշխանները, նախարարները կամ տանուտերերը «ծառայք թագաւորի էին»: Նրանց և թագավորի հարաբերությունը համարվում էր «ծառայութիւն»[96]:

Հետևաբար, ինչպես ենթադրվում է Արուճի վիմագիրից, Գրիգորը Սմբատի իշխանն է, ազատը, որը կառավարել, կարգավորել է իր «տիրոջ» բնիկ կամ սեփ(պհ)ական, տերունական գործերը, կամ այլ կերպ, Սմբատին ենթակա մարզ(եր)ի կառավարիչը, (պահա)պանը, պետն է եղել, ավելի ստույգ, չենք վախենում բառը գործածելուց, սակայն մի փոքր վերապահումով, որպեսզի խնդիրը պարզ լինի, մարզպանը կամ մարզպետն է հանդիսացել՝ նեղ առումով:

X դարի սկզբին Ատրպատականի ամիրա Յուսուֆ Աբու Սաջ Դևդադի արշավանքի նախաշեմին հակապետական դավադրություն կազմակերպելու համար՝ հայոց մարզպան Հասան Գնթունու, որ էր «հրամանատար ի վերայ ամենայն տանն արքայի», «իշխան և հրա֊

---

[94] *Տե՛ս* ***Կ. Մաթևոսյան****, Արուճ, էջ 60 և լուսանկարը: Հմմտ.* ***Ղ. Ալիշան,*** *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 144, թվականը՝ ՅԺԶ (867), Վիմական տարեգիր, թվականը՝ ՅԺԸ (869) էջ 3: Թվականի ճիշտ կամ սխալ վերծանությունը վիճարկման առարկա դառնալ չի կարող, քանի որ այն համընկնում է Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսի աթոռակալության տարիներին՝ 855-876 թթ.: Գավառը, ըստ Կ. Մաթևոսյանի, ներկայիս Շամիրամ գյուղն է (տե՛ս* ***Կ. Մաթևոսյան****, Արուճ, նույն տեղում): «Վառամայ» Վիմական տարեգրում վերծանված է «Վահրամայ», որը նույնն է (տե՛ս* ***Հ. Աճառյան****, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 201, 126): Սմբատը ոչ թե Աշոտ Ա-ի հայրն է, որը 855 թ. հայ իշխանների հետ տարվել էր Սամառա և նահատակվել, այլ՝ որդին, հետագայի Սմբատ Ա թագավորը՝ 890-914 թթ. (տե՛ս* ***Ռ. Մաթևոսյան****, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 78, տողատակ):*

[95] ***Կ. Ղաֆադարյան,*** *Սանահնի վանքը ..., էջ 135: Դիվան, պր. IX, էջ 62:*

[96] ***Ն. Ադոնց****, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 511:*

մանատար բոլոր տէրութեան արքայի»[97]*, շնորհազրկումից ու խստագույնս պատժվելուց և փոխարենն այդ պաշտոնում գլխավոր կարգված Արծրունիների՝ Վասպուրականում ինքնուրույն թագավորություն հռչակելուց հետո*[98] *Սմբատ Ա-ը (890-914), հուսախաբված հայ իշխանների խռովություններից ու դավաճանություններից, մարզպանի պաշտոնավարությունը պետք է վստահեր իրեն հավատարիմ և այդ բնագավառում փորձ ունեցող մարդու: Իսկ այդպիսին կարող էր լինել միայն իր իշխանական տիրույթների վերակացու Վահրամի որդի Գրիգորը*[99]*:*

Վ. Պետրոսյանցը գտնում է, որ «Ամենայն հավանականությամբ այդ ժամանակ Գնթունիներից վերցվել է նաև նրանց Նիգ գավառը, որն այնուհետև անցել է նրանց իշխանության տարածքում գտնվող Բջնիի բերդի տերերին՝ Պահլավունիներին»[100]*: Նկատենք, որ վերջիններս այդ գավառում, կամ, ինչպես Ղ. Ալիշանն է կարծում, նրա արևմտյան հատվածում*[101]*, մինչ այդ տիրույթներ չեն ունեցել: Հնարավոր է՝ Պահլավունիներն իշխում էին հարևան Արագածոտն գավառի արևմտյան մասում, որտեղ նրանք որոշ կալվածներ են ստացել VIII դ. երկրորդ կեսին պատմական ասպարեզից Մամիկոնյան, Կամսարական, Ամատունի, Գնունի նախարարական տների անհետացումից հետո:*

Գրիգոր Վահրամյանից հետո, ըստ ժամանակի միջնադարյան տերություններում ընդունված կարգի, մարզպանության պաշտոնը պետք է նրա ժառանգն ստանձներ: Ըստ այդմ, նրա որդին պետք է համարել այն հայրենասեր, անձնվեր իշխանին, որի մասին կաթողիկոս պատմիչը տեղեկացնում է. «վասն զի ոմն ի պատուաւորաց անտի Շահանն կոչեցեալ շահայ (Աշոտ Բ Երկաթի՝ 914 -928 - Ա. Մ.)

---

[97] ***Հովհաննես Դրասխանակերտցի***, *էջ 182-183, 194-197:*

[98] *Վասպուրականում թեև այդ պաշտոնն այնուհետև կոչվել է «մարզպան հայոց», սակայն նրա իրավասությունը տարածվել է միայն այդ թագավորությունում, որտեղ այն հետագայում շնորհվել է Անձևաց իշխանական տան ներկայացուցիչներին: Ահավասիկ.* «Այս հանգիստ է Սոփեա աղախնի Քրիստոսի, կնոջ Վահրամ Պահլաւունոյ՝ իշխանաց իշխանի, դստեր Տիգրանայ՝ հայոց մարզպանի, տեառն Անձեւացեաց մեծին Վասպուրականի...ի թ. ՆԿԴ (1015) *(տե՛ս* ***Հ. Եղիազարյան,*** *Մարմաշենի վանքը..., էջ 43,* ***И. Орбели,*** *Избранные труды, էջ 445):*

[99] *Նրան ժամանակակից է ոմն «զմեծ և զիսոհեմ և զհանճարեղ իշխանն Հայոց, Գրիգոր», որին Սմբատ արքան, նեղվելով Յուսուֆ ամիրայի ուժերի գերազանցությունից, ուղարկում է խալիֆի մոտ՝ «զխաղաղութիւն» և «յօգնականութիւն» խնդրելու (տե՛ս* ***Հովհաննես Դրասխանակերտցի***, *էջ 234-235):*

[100] ***Վ. Պետրոսյանց,*** *Գնթունիների նախարարական տունը, «Երիտասարդ գիտաշխատող», ԵՊՀ, 1980, № 1 (31), էջ 58-64:*

[101] ***Ղ. Ալիշան***, *Այրարատ, էջ 248:*

Գէորգ անուն, ելեալ շրջէր զգաւառօքն սակաւամասնեայ շինութիւն աշխարհին ամրացուցանել ի հինից թշնամեաց»[102]: Հովհաննես Դրասխանակերտցու այս հիշատակությունից ակներև է, որ Գևորգն ուներ այն պաշտոնը, որը ժամանակին կատարում էր Հասան Գնթունին, այն է՝ շինությունների, բերդերի ամրացումը, նաև հսկողությունն ու պաշտպանությունը[103]: Գեղայո (Քեղի) պաշարված ամրոցի տակ Գևորգը, ըստ պատմիչի, պարտության է մատնում արաբ զորապետ Բաշիրին, որին մինչ այդ հաղթել էր քսան քաջերով[104]:

Ինչպես հայտնի է, վերը նշված տեղեկություններն սկզբնաղբյուր են հանդիսացել Մուրացանի համար՝ շարադրելու հանրածանոթ ու սիրելի «Գևորգ Մարզպետունի» հայրենաշունչ պատմավեպը:

Մեզ հայտնի պատմական բոլոր աղբյուրները Գևորգի մասին համառորեն լռում են: Սակայն Մ. Զամչյանը նշում է, որ Աշոտ Երկաթի մահից հետո արքաեղբայր Աբասը (928-953), ժառանգելով հայոց գահը և ստանձնելով Հայաստանն արաբներից վերջնականապես ազատագրելու հայրենանվեր գործը, ժողովում է հայկական զորքերը՝ օգնական ունենալով իր քաջ իշխան «**Գէորգին յազգէ Մարզպետունեաց**»[105]: Մի ուրիշ տեղ, նկարագրելով Աբխազաց Բեր թագավո-

---

[102] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 354-355:
[103] Նույն տեղում, էջ 182-183:
[104] Նույն տեղում, էջ 354-357:
Կ. Մաթևոսյանի նորահայտ վկայությունը Քեղի ամրոցի տեր, իշխանաց իշխան Գևորգի (X դ. վ.-XI դ. սկ.) ծագման մասին (տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Հավուց թառի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, էջ 147-167), գալիս է փարատելու մեր այն կասկածը, որ Հասանի որդի և Գրիգոր Ապիրատի այս եղբայրը չէր կարող մերձավոր ազգականը կամ անմիջական շառավիղը հանդիսանալ Աշոտ Երկաթի օգնականի՝ անվանակից Գևորգի: Այդ դեպքում առաջինի եղբորորդիները՝ Աբլջահաբն ու Վասակը, չէին կարող կնության առնել տվյալ պարագայում անմիջական այրունակից Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրերին: Բացի այդ էլ, արքունական ծառայողը Գեղայոյի պաշարման ժամանակ գտնվել է այդտեղ ոչ թե իբրև այդ ամրոցի տեր, ինչը չի մատնանշում պատմիչը [ամրոցը նախապես հիշատակվում է որպես Բագրատունի տոհմի տիրույթ (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, ծանոթագրություն № 132, էջ 379)], այլ ի պաշտոնե կազմակերպել է բերդի պաշտպանությունը, որի մասին խոսել ենք վերևում:
[105] **Մ. Զամչյան,** Բ., էջ 822: Լեոն, բարձր գնահատելով Մ. Զամչյանի գործը, վրդովվում է, թե ի՞նչ հիման վրա է նա Գևորգին Մարզպետունի համարում, երբ Հովհաննես կաթողիկոսը, որը միակ աղբյուրն է, չի հիշատակում թե որ տոհմից էր այս Գևորգը (տե՛ս **Լեո,** Երկերի ժողովածու, հ. 2, էջ 568, տողատակ): Գևորգին Մարզպետունի են կոչում նաև Ղ. Ալիշանը (տե՛ս Այրարատ, էջ 359) և Գ. Հովսեփյանը (տե՛ս Խաղբակեանք..., էջ 34): Կարծում ենք, որ նա Մարզպետունի է անվանվել ըստ իր վարած պաշտոնի:

րի դեմ հաղթական արշավանքը, գրում է, որ ***«էառ Աբաս զզօրս իւր հանդերձ Գէորգաւ*** *(≈ 943 թ. - Ա. Մ.)»*[106]*:*

«Գևորգ Մարզպետունի» վեպում գլխավոր հերոսի որդին Գոռն է: Պատմական աղբյուրները Գոռի մասին ոչինչ չեն հայտնում: Բայց Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է մի ուշագրավ տեղեկություն, ըստ որի. ***«Ցայսմ ամի*** *(961)* ***ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քաջ, զատ ի յարքունական գնդէն»***[107]*: Նորից Մ. Զամչյանից ենք իմանում, որ Աշոտ Գ Ողորմածի (953-977) վերակազմած ութսուն հազարանոց բանակի (քառասունհինգ հազար մարզպետական և երեսունհինգ հազար՝ արքունական - Ա. Մ.) սպարապետ է կարգվում* ***«զորդի Գէորգայ զ Գոռ յազգէ Մարզպետունեաց»***[108]*:*

Ինչպես նշել ենք Գրիգոր Մագիստրոսի կապակցությամբ, հետազոտողները Պահլավունիների նախահայր են համարում Աբուղամրին, որի պատվին նրա սերունդներն Անիում եկեղեցի են կառուցել ու մի շարք արձանագրություններում անունը հավերժացրել:

Գոռ և Աբուղամր անձնավորությունները, ինչպես նրանց անունների ստուգաբանությունն է պարզում, նույնն են:

«Գոռ» անձնանունը, որը տակավին հնուց հայտնի է (Տիգրան Մեծի եղբայր Գոռ[ակ]ը, [փաղաքշական ձևով – Ա. Մ.]) ստուգաբանվում է որպես «խրոխտ», «հպարտ», «խիզախ», «հանդուգն»[109]*:*

Այն ծագում է «գոռ» արմատից, որից կազմված են «գոռոզ», «գոռոզանալ», «գոռոզաբար» և այլ ձևերը: «Գոռ» արմատն արտահայտում է «խիզախ», «խրոխտ», «ահավոր», նաև «կռիվ», «պատերազմ»[110]*, «բուռն», «ահընկեց» իմաստները, օրինակ՝ «Այր գոռ պատերազմաւ էր», «Նա էր այր ժանդ և գոռ պատերազմաւ»*[111]*: Մի խոսքով՝ մարդ, որը «խրոխտ», «հպարտ», «խիզախ», «գոռոզ», «ահարկու» և պատերազմասեր է՝ հակում ունի դեպի սխրանքները, կռիվները, պատերազմները:*

«Աբուղամր», ինչպես մեծավաստակ Հ. Աճառյանն է խոստովանում, որպես «հայր Ղամրի» արաբերեն այսպիսի մի ձև ծանոթ չէ

---

[106] ***Մ. Զամչյան****, Բ, էջ 829:*
[107] ***Մատթեոս Ուռհայեցի****, էջ 8-9:*
[108] ***Մ. Զամչյան****, Բ, էջ 837: Պետք է նկատել, որ Աբասի թագավորության շրջանի վերաբերյալ պատմական աղբյուրները սուղ են:*
[109] ***Տե՛ս Հ. Աճառյան,*** *Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 488:*
[110] ***Հ. Աճառյան,*** *Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 580-581:*
[111] *Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Երևան, 1979, էջ 572:*

ինձ, բայց կա Ղամր իբրև անձնանուն, որի բուն նշանակությունն է «ազնվաբարո», «առատաձեռն» և «շատ համբերատար մարդ»[112]:

«Աբուղամր» անձնանունը բաղկացած է երկու արմատից՝ «աբու» և «ղամր»: Աբուն(أبو) ունի երկու իմաստ: Այն բառացի նշանակում է «հայր», օրինակ՝ «Աբու Սումբատ» (أبو سومباط)՝ «Սմբատի հայր» և այլն: Երկրորդ, «աբուն» բառակապակցությամբ արտահայտում է հատկանշական իմաստ, այսինքն՝ մատնանշում, երևան է հանում անձի ներքին կամ արտաքին այնպիսի հատկանիշ, որով նա ուշադրություն է գրավում, աչքի ընկնում, այսպես՝ «աբու աշ-շաուարիբ» (أبو الشوارب)՝ «բեղավոր», «աբու ալ-մուխտան» (أبو المخطان) ՝ «փսլնքոտ», «աբու ալ-իզան» (أبو الإذان)՝ «երկարականջ», «աբու ալ-քալաուաթ» (أبو الكلوات)՝ «խաբեբա» և այլն:

«Աբուղամրի» երկրորդ ածանցյալի՝ «ղամր»-ի (غمر) արմատական-բայական ձևը նշանակում է «բուռն» (գործողություն), «հորդել», «հեղեղել», «թափվել» (առատորեն) և այլն: «Ղամր» արմատը մասդարային-դերբայական 3-րդ ձևում՝ (غامر) «ղա՛միր», նշանակում է «խիզախել», «ռիսկի դիմել», «վտանգի ենթարկել» (կյանքը), «բուռն գործողությունների դիմել», «արկածախնդրել»[113] (չհասկանալ «բախտախնդրել» բացասական ձևով- Ա. Մ.):

Ըստ այսմ, «Աբու ալ-Ղա՛միր» (أبو الغامر) նշանակում է «խիզախ», «խրոխտ», «կյանքը վտանգի ենթարկող» մարդ, որը հակում ունի դեպի զանազան արկածները, սխրանքները, պատահարները, բուռն դեպքերը, կռիվները, պատերազմները և զանազան այլ կարգի դժվարությունները հաղթահարելուն:

Կարծում ենք, որ Հայաստանում Արշակունյաց թագավորությունը վերացնող, պարսկական սատրապությունը, մարզպանությունն կամ կամսարությունն ստեղծող, Սահակ Պարթև կաթողիկոսից (387-439) հայ նախարարների բարձրակարգը՝ գահնամակը խնդրող, Ֆիրդուսիի սիրելի հերոս պարսից Բահրամ-Վահրամ-Վռամ Ե արկածասեր արքան (421-439) Հնդկաստանում և այլուր ցուցաբերած գերբնական սխրագործությունների[114] համար է արժանացել Գոռ մականվանը:

---

[112] ***Հ. Աճառյան,*** *Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., էջ 24:*
[113] *Տե՛ս* ***Х. Баранов****, Арабско-русский словарь, М., 1977, էջ 571:*
[114] *Տե՛ս* ***Լեո****, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 35:*

Ահա, Աբուղամր-Գոռ անունն էլ արտահայտում է նույնապիսի իմաստ:

Գոռի և Աբուղամրի նույնության հաստատումն է նաև այն պարագան, որ երկու անձնավորությունները գործել են բացառապես միևնույն ժամանակի մեջ: Այսպես, Մ. Զամչյանը, որին պարտական ենք Գոռի մասին արժեքավոր հիշատակության համար, ինքն էլ չնկատելով, որ ակնհայտորեն խախտվում է Մարզպետունի-Պահլավունի հաջորդական կապը, շարունակում է նշել, որ այդ օրերին Հայաստանում երևելի էր Նիգ գավառի մեծ իշխան Գրիգոր Պահլավունին, որն ապրելով Աբաս արքայի և Աշոտ Ողորմածի ժամանակ, վախճանվել է 982 թ.՝ Սմբատ Բ-ի օրոք (977-990)[115]:

Գրիգոր Պահլավունին, որը հայտնի է Համզե անունով ու որպես սպարապետ արձանագրվել է Կոշի 981 թ. վիմագրում[116], վախճանվել է 982 թ. 40 տարեկան հասակում[117], հետևաբար ծնվել է 942 թ.՝ Աբաս Բագրատունու թագավորության (928-953) և Գեորգի մարզպանության ժամանակ: Գևորգը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու և Միքայել Զամչյանի, երկար է գործել: Նա իր ռազմաքաղաքական գործունեությունն սկսել է Աշոտ Բ Երկաթի (914-928) թագավորության շրջանից, մոտավորապես 920-ականների սկզբներին, եղել Աբասի (925-953) օգնականը և վախճանվել Աշոտ Ողորմածի (953-972) գահակալության առաջին տասնամյակում: Գոռը, երբ ստանձնել է սպարապետության պաշտոնը, արդեն հասուն տղամարդ է եղել, մոտ 40 տարեկան և կարող էր ունենալ 942 թ. ծնված որդի:

Բացի այդ էլ, ծագում է հետևյալ տեղին հարցը, թե դժվարությունների, անձնվիրածության, ռազմական անվիճելի տաղանդի շնորհիվ մինչև սպարապետություն բարձրացած ո՞ր իշխանական տունը, այն էլ երկարատև խաղաղ-շինարարական ժամանակներում, երբ պետք է վայելեր արյամբ վաստակած փառքի ու իշխանության դափնիները, իր տեղը կզիջեր մեկ ուրիշ տոհմի: Այստեղ խոսք չի կարող լինել արական ժառանգորդի բացակայության մասին, քանի որ Պահլավունյաց հետագա սերունդների մեջ կրկնվում են նախաբուղամրյան Վահրամ, Գրիգոր, Գևորգ անունները: Վերջինիս վկա-

---

[115] Տե՛ս **Մ. Զամչյան,** Բ, էջ 837:
[116] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 9:
[117] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 12:

յութիւնն է Վահանավանքի տապանաքարը. «Թ: ՇԾ (1101) զԳիորգ Պահլաւունի՝ որդի Աբլժամի յիշեցէք»[118] գրութեամբ:

Գոռը, գուցեեւ իրական անվամբ Վահրամ, ինչպես ենթադրել է տալիս Վարդան վարդապետի մի հիշատակութիւնը Բագնայրում 1013 թ. արձանագրված Սմբատ Մագիստրոսի մասին[119], մեզ ավանդ-վել է Աբուղամր ձեւով: Միջնադարում, ինչպես հայտնի է, հայ բարձրատոհմիկ ազնվականության ներկայացուցիչները միաժամա-նակ կրում էին նաեւ արաբական անուններ, որոնցով էլ հաճախ գրանցում են գտել պատմության էջերում՝ որոշ դեպքերում նույն-իսկ հայկականը մոռացության մատնելով: Այդ ո՞ր մատենագիրն է հայտնում Աբաս թագավորի՝ մկրտության ավազանով կնքված ա-նունը, որը մեզ է հասել միայն մի հիշատակագրության շնորհիվ[120]:

Գոռ-Աբուղամրի սպարապետ կարգվելուց հետո մարզպանության պաշտոնը շարունակում է մնալ այդ նոր վեր բարձրացած տոհմի ժառանգական իրավունքը՝ փոխանցվելով նրա մեկ այլ ճյուղի ներ-կայացուցիչ Աշոտ իշխանաց իշխանին, որի հոր անունը նույնպես Գեւորգ էր: Նա Արգինայում վերանորոգել է ժամանակին Հասան Գնթունու կառուցած եկեղեցին՝ հազվագյուտ վիմաթվագրությամբ («ՆԾ եւ Փրկչի 1001 թուին», ինչպես հայտնի է, մեր նախնիները նոր հազարամյակի սկզբին նախապատրաստվել են Հիսուս Քրիստո-սի Երկրորդ Գալուստին) արձանագրելով. «Ես Աշոտ իշխանաց իշ-խան, որդի Գէորգ (գայ)... առն քաջի եւ պատերազմողի, հաւատարիմ եղեալ տանս Հայոց, առի բարձ եւ պատիւ ի Աշոտոյ Շահնշահ եւ յորդւոց իւրոց Սմբատայ եւ Գագկայ եւ ամենայն թագաւորաց...»[121]:

Պետք է նկատել, որ մարզպանի տիրույթ-նստավայրը, ինչպես մեր վիմագրագիտական դիտարկումներն են պարզում, անկախ նրա տոհմական, բնիկ ժառանգական հողերից, մշտապես գտնվելիս է ե-ղել արքունիքի հարեւանությամբ: Բագրատունյաց թագավորության

---

[118] **Գ. Գրիգորյան,** *Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, ԼՀԳ, 1970, № 10, էջ 81-94: Նաեւ նույնի՝ Վահանավանք, Երեւան, 2007, էջ 41:*

[119] *Կ. Կոստանյանը, չխորանալով Վարդանի հիշատակության մեջ, Սմբատին հռչակում է Վահրամ Մարմաշենցու որդի (տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ԻԱ, ԻԵ): Այնինչ, 967 թ. ծնված 31 տարեկան հայոց սպարապետը չափահաս որդի ունենալ չէր կարող, որին որպես հրամանատար իր հետ 998 թ արշավանքին տաներ: Վրիպակը նկատել է նաեւ Կ. Մաթեւոսյանը (տե՛ս* ***Կ. Մաթեւոսյան,*** *Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 64):*

[120] *Տե՛ս* ***Աշ.Մանուչարյան****, Հայոց Աբաս թագավորի մկրտական անունը, ԵՊՀ «Հայ աստվածաբան», Բ, Երեւան, 2008, էջ 212-216:*

[121] ***Մ. Գէորգեան,*** *Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ և մայ-րաքաղաքին Անւոյ, Աղէքսանդրոպոլ, 1903, էջ 113-114: Հմմտ.* ***Ղ. Ալիշան****, Շի-րակ, էջ 15:*

առաջին շրջանում, երբ արքայանիստը Շիրակավան-Երազգավորն էր, այն հանդիսացել է Արիգինան, ապա Բագնայրը՝ 961 թ. Անին մայրաքաղաք հռչակվելուց հետո: Աշոտը եղել է զորավար, ըստ Ա-ճառյանի՝ «մարզպան» զորավար[122]: Համաձայն Ալիշանի, նա վախ-ճանվել է 1002 թ. «Նոյն Արտակեան Պահլաւունի արմատէն Գէորգ իշխան մը, որոյ որդին Աշոտ իշխանաց իշխան»[123]:

Աշոտի որդին է Բագնայրում արձանագրված իշխանաց իշխան Վահրամը[124], որի կինը՝ տիկնաց տիկին Սեդան, քույրն էր Գրիգոր Մագիստրոսի: Ազգակցությունը մի քանի սերունդ հեռացել էր և հայ եկեղեցով թույլատրելիության սահմաններում էր[125]:

Վահրամ Բագնայրեցու որդին պետք է կարծել Բյուրականի եկե-ղեցում 1044 թ. արձանագրված իշխանաց իշխան Զաքարեին. «...որ-դի Վահրամայ, որ ազգաւ Պախղ(ա)ւ...»[126], որն իր պատրոն Շահան-շահի (Հովհաննես-Սմբատ թագավորի՝ 1020-1042) հոգու հանգըս-տության համար տվել է Բյուրականի հարկը:

Եվ այսպես, Աշոտ Գ Ողորմած թագավորը պետության երկու ա-մենաբարձր պաշտոնները՝ սպարապետությունն ու մարզպանու-թյունը, վստահել է հայրենասիրությամբ ու հավատարմությամբ վեր բարձրացած նոր տոհմի ներկայացուցիչներ Գոռ-Աբուղամրին ու Աշոտին: Այդ պաշտոնները վարողները, աղբյուրների համաձայն, կրել են իշխանաց իշխան բարձրագույն տիտղոսը[127]:

---

[122] Տե՛ս **Հ. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 189-190: Տե՛ս **Ալ. Մանուչարյան,** Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 151: Վիմական տարեգիր, էջ 12:

[123] **Ղ. Ալիշան,** Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 13:

[124] Տե՛ս **Կ. Բասմաջեան**, Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշի-նու, Պարիս, 1931, էջ 136:

[125] Շահապիվանի 444 թ. եկեղեցական ժողովի ԺԴ կանոնով արգելվել է ամուսնու-թյունը մինչև չորս զարմ (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 447): Նույն արգելքը մինչև չորս զարմ կրկնվել է 768 թ. Պարտավի Բ ժողովի ԺԶ կանոնով (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Բ, Երևան, 1971, էջ 12): Այդ օրենքը, ըստ էության, ուժի մեջ է եղել մինչև Սսի Բ ժողովը (1243 թ.), որի Ը կանոնով արգելվել է ամուսնությունը մինչև վեց զարմ (տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապա-տում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 1904): Կ. Մաթևոսյանը Բագնայրի իշխանական այդ տունը զատում է Պահլավունիներից՝ այն առանձին իշխանատոհմ համա-րելով (տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 66-67):

[126] **Ե. Տեր-Մինասյան**, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե, էջ 48: Հմմտ. **Ս. Ավագյան**, «Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դ. արձանագրության մեջ, ՊԲՀ, 1971, № 2, էջ 189:

[127] Մատթէոս Ուռհայեցին Վասակ Հոլումին նաև հայոց սպարապետ է հիշատա-կում (տե՛ս Ժամանակագրություն, էջ 16), չնայած ըստ մյուս աղբյուրների՝ գլխավոր զորապետի պաշտոնին նրա եղբայր Վահրամն է եղել: Վասակ Հոլումը իշխանաց իշխան տիտղոսը կրել է որպես հայոց սպասար: Սյունյաց թագավորու-

Այժմ՝ Պահլավունիների նախապապ Արտակ Կամսարյանի հարցի մասին: Թվում է՝ նա կարող է լինել տոհմի հեռավոր նախնին, ինչպես, ասենք, Խաղբակյանների Բակ նահապետը, կամ էլ IX-X դարերում Պահլավունի նոր տոհմանունով հանդես եկած Կամսարական իշխան, ինչպես Մագիստրոսի ազդեցությամբ ենթադրել են հետազոտողները[128]:

Մեր պրպտումներն այս խնդրի ուսումնասիրության ուղղությամբ երևան հանեցին մի շարք զարմանալի նմանություններ, համընկնումներ Արտակ Կամսարյանի և Գևորգ Մարզպետունու միջև: Վերջինս, ինչպես նշել ենք, կաթողիկոս պատմիչի մոտ հիշատակվում է որպես անանուն տոհմիկ, սոսկ «...ոմն ի պատուաւորաց Գէորգ անուն»[129]: «Պատուաւոր» նշանակում է «ազնվատոհմիկ», «իշխան»[130], «ազատ»: Հնում «ազատները» հեծյալներն էին[131], այսինքն՝ ձիավոր ազնվականները: Հայերենում «ձի» բառի «նժույգ», «երիվար» և այլ հոմանիշների մագիստրոսյան շարքում հանդիպում ենք «փահլ»[132] ձևին: Հետևապես, հեծյալ՝ «ձի-ա (ձիով)-որ (է)», դառնում է «պ(Փ)ահլ-աւ(ձիով)-ունի(է)»՝ Պահլավունի, պարսկերեն՝ Փեհլևի:

Իբր թե Աշոտ Գ Բագրատունու թագավորության և Վահան Ա Սյունու հայրապետության օրոք Մեսրոպ երեց Վայոցձորեցի մատենագիրը, զարմանալի զուգադիպությամբ Վահրամ Պահլավունու ծննդյան տարեթվին, այսինքն՝ 967-ին, գրել է իսկական գահնամակի հեղինակ Սահակ Պարթևից (387-439) առաջ գործած Ներսես Մեծի (353-373) պատմությունը և իր ձեռքի տակ եղած նյութերից քաղել ու ներկայացրել հայոց պատվաստիճանների հրովարտակը[133], որտեղ Պալունի նախահայկյան նախարարական տան փոխարեն, որից

թյունում իշխանաց իշխանը վարել է զորաց գլխավոր հրամանատարի պաշտոնը (տե՛ս Դիվան, պր. III, էջ 119):

[128] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 12: «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», առաջաբան, **Ն. Ակինեան**, Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթմեաց ազգաբանութիւնը, էջ 8, **Վ. Վարդանյան**, Պահլավունի տոհմի ծագման շուրջ, էջ 111-121:

[129] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 354-355: Հնում արքունի գործակալը կոչվել է «պատուական» (Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն»,ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984, էջ 140): Այսուհետև՝ ՀԺՊ, II:

[130] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 305:

[131] ՀԺՊ, III, էջ 136:

[132] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի «Մեկնութիւն քերականի»՝ զետեղված Լ. Խաչերյանի «Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս» գրքում, էջ 413:

[133] Տե՛ս **Մեսրոբ երէց**, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի, հայոց հայրապետի, Վենետիկ, 1853, էջ 33:

առավել հայտնի է Ավարայրի քաջ նահատակ Արտակը, մտցրել է Պահլավունի տոհմանունը:

Կարծում ենք, որ ըստ Գր. Մագիստրոսի ու Հ. Աճառյանի ստուգաբանությունների, հունարեն «Γεωργιος» («Գէորգիոս»)[134] և վերջինիս կողմից չմեկնաբանված պահլավերեն «Art» («երկիր», «հող»)[135] ու հայերեն «ականել» («փորել փոս, խոռոչ», որտեղից էլ առաջանում է անվանումն այժմյան «ական» (мина) պայթուցիկ լիցքով սարքի, որը հիմնականում տեղադրվում է հողի մեջ նախապես փորված անցքում) բառերից բաղկացած «Արտակ» անուններն արտահայտում են նույն իմաստը՝ «մշակ», «հողագործ», «երկրագործ»:

Գևորգը մարզպան է, այսինքն՝ կամսար: Ի տարբերություն այս բառի Խորենացու ժողովրդական մեկնությունը՝ «պակասավոր գլուխ», այն գիտականորեն ստուգաբանում է գերմանացի արևելագետ-իրանագետ, լեզվաբան Յուստին (Justi), որի համաձայն, «կամսարը» ծագում է kāmasara՝ «ըստ կամի իշխող» բառից, հմմտ. Camisares՝ կուսակալ[136]: Ի դեպ, համաձայն Անանիա Շիրակացու մի վկայության, որը մեջբերում է Ղ. Ալիշանը, V-VII դդ. Հայաստանի կառավարիչները՝ սատրապները, մարզպանները, կոչվել են նաև կամսարականներ[137]: Մեր հետագա պրպտումները հանգեցրին այն հետևության, որ III դ. կեսերին Հայաստան տեղափոխված պարթև Պահլավունիները[138] Կամսարական են կոչվել ըստ իրենց պաշտոնավարության, այնպես ինչպես Ասպետունիները (Բագրատունիները), Հավնունիները, Գնունիները և այլք: Եվ դա կատարվել է այն բանից հետո, երբ Հայոց Տրդատ Մեծ արքան (287-330) նրանց մեծարել ու բարձրացրել է մինչև՝ «երկրորդ յետ արքայի», «գլխաւորք և յոյժ պատուական յետ արքայի»[139]:

---

[134] Տե՛ս **Հ.Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 454-455:
[135] Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 375 և 21:
[136] Տե՛ս **Աճառյան Հ.,** Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 577:
[137] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 5:
[138] Պարթև Պահլավունիների նախահայրենիքը՝ բնօրրանը, եղել է Մեծ Հայքի Տայք նահանգում գտնվող Բահլի և Պալխարի հովիտը: Այդտեղից այդ երկայնաբազուկ տիտանները, բարձրահասակ հսկաները, քաջ ռազմիկները տարածվել և հաստատվել են հեռավոր Բակտրիայում, ապա հինգ հարյուր տարի թագավորել են Պարսկաստանում (մ.թ.ա. 330 - մ.թ. 226): Տե՛ս **Ատրպետ,** Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 124, 137, 141:
[139] Տե՛ս **Ս. Կոզեան**, Կամսարականք, Տեարք Շիրակայ և Արշարունեաց, Վիեննա, 1926, էջ 9, 45:

Այսպիսով, Կամսարական կնքվելը կրտսեր իշխանական անանուն տոհմի ներկայացուցիչներին, որոնք ժամանակ առ ժամանակ կոչվել են ըստ իրենց վարած պաշտոնների՝ Մարզպետունյաց, Աբուղամրենց (անհարիր կլիներ Սպարապետենց հորջորջվելը), բայց ինչպես հռչակավոր Վահրամ իշխանաց իշխանը Մարմաշենում կարձանագրեր. «...որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց և նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ և աբեամբ մեր ...»[140] բարձրացած Պահլավունիներին մի կողմից կապում է Գրիգոր Լուսավորչի զարմին՝ հնարավորություն ընձեռելով հավակնելու հայրապետական աթոռին, ինչը շատ չանցած, իրականանում է, մյուս կողմից էլ այդ հին ու նոր տոհմանվամբ աղերսվելով Արշակունյաց արքայական ընտանիքին՝ էլ ավելի է ամրապնդում նրանց քաղաքական դիրքերը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Առաջավոր Ասիայում[141]:

---

[140] **Հ. Եղիազարյան,** *Մարմաշենի վանքը..., էջ 41-42,* **И. Орбели,** *Избранные труды, էջ 441-442:*

[141] *Կարծես թե իրականանում էր ս. Սահակ Պարթևի հայտնի տեսիլն ի դեմս Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչների:*

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ



4. 966 թ. ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱԲԱՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԿՐՏԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ

Հայկական մի շարք վիմագրեր իրենց բացահայտչական նշանակությամբ ունեն աղբյուրագիտական բացառիկ արժեք. պարունակում են տեղեկություններ, որոնք այլուստ հայտնի չեն: Այդպիսի եզակի արձանագրությունների թվին է պատկանում X դարի թագավորական խաչ-դրոշակի պատվանդանի հիշատակագրությունը:

Խաչը մինչև XIX դ. երկրորդ կեսը պահվել է Արաքսի աջ ափին վեր հառնող Մաղտյաց կամ Մաղարդի բարձրաբերձ լեռան հյուսիսային դժվարանցանելի ստորոտին հրաշագեղորեն կառուցված Ս. Ստեփանոս Նախավկայի մեծահռչակ վանքում, որը դեմ հանդիման է Գողթան գավառին և հեռու չէ պատմական Հին Ջուղայից: Առաջինը խաչը նկարագրել, արձանագրությունը վերծանել ու ընթերցել է Հովհ. Շահխաթունյանցը[142]: Խաչի ձողերը երկաթյա են: Դրանց վրա ագուցված են բյուրեղապակյա 18 անկյունավոր հատվածներ, որոնցից 10-ը ուղղահայաց (բարձրությամբ), իսկ 8-ը՝ հորիզոնական (լայնությամբ՝ թևերի երկայնքով): Պատվանդանի բունն օղակված է արծաթով, որի բոլորակ շրջանով ելնդագիր դրոշմված է արձանագրությունը:

Ամենայն հայոց Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի հայրապետության տարիներին (1866-1882) խաչը բերվել է Էջմիածին և տեղադրվել Մայր աթոռի թանգարանում: Այդտեղ այն տեսել, ճշտորեն ընդօրինակել և հրատարակել է Կ. Բասմաջյանը[143]: Ստորև ներկայացնում ենք նրա վերծանությունը՝ մեր կողմից կատարված համապատասխան նշանների տեղադրմամբ.

*Յ ԼԻՇ ԼԱՏԼԱԿ Է Ս ԼՈՒՐՅԲ ԽԼԱՋՍ ՅՈՎԱՆԷՍ ԹԼԱԳԼԱՒՈՐԼԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԿԼՈՂԼԱԿՑԼԻՆ ՇՈՒՇԼԱՆ ՏԼԻԿՆԼՈՋՆ ԵՒ ՈՐԴԼՈՅՆ Ա[Ր]ՇՈՏ ԹԼԱԳԼԱՒՈՐԼԻՆ: ԲԼԱՋՈՒՄ ՋՕՐՕՔ ԵԿԻ Ս ԼՈՒՐՅԲ ՈՒԽԴՍ, ԵԴՈՒ ՇԱՄԲԱՅ ՋԼԱՂԼԱՅՆԵՐՆ, ԵՐԱՍԽԻ ՆԱԻՆ, ԱԼՍՏԼԱ_*

---

[142] *Տե՛ս «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», աշխ. Յովհ. եպս. Շահխաթունեանցի, հ. Բ, Ս. Էջմիածին, 1842, էջ 308:*

[143] ***Կ. Բասմաջեան**, Մեր հնութիւնները, «Բանասէր», հատոր Դ, ապրիլ, թիւ 4, Պարիս, 1902, էջ 97-101:*

ՊԼԱՅՏ ՈՒ ՀՈՂՆ ՍԼՈՒՐՅԲ ՆԱԽԼԱՎԿԼԱՅԻՆ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ ՄԵԶ ԵՒ ԾՆԼՈՂԼԱՅՅ ՄԵՐՈՅ, ԹՎ ԼԻՅՆ ՆԺԵ (966)[144]:

Այս հիշատակագիրը միակ պատմական աղբյուրն է, որը հայտնում է հայոց Աբաս Բագրատունի թագավորի (928-953)՝ մկրտության ավազանով կնքված Հովհաննես ավետարանական անունը: Սակայն այս հիշատակարանը, ի տարբերություն Հովհ. Շահխաթունյանցի և Ղ. Ալիշանի, ոչ վավերական, անհավաստի են համարում Կ. Բասմաջյանը և Գ. Հովսեփյանը:

Առաջինի համար որպես արժանահավատության բացասման կռվաններ հանդես են գալիս արձանագրությունում օգտագործված տառաձևերը, որոնք նորագույն երկաթագիր են: Նաև այն, որ 966 թ. կլոր «օ» տառը գործածական չէր, և որ «զօրօք» բառը պետք է լիներ «զաւրաւք» ձևով, ինչը ճիշտ է գրել Ղ. Ալիշանը[145]: Որպես հերքման փաստարկ բերվում է նաև պատմական այն հայտնի իրողությունը, որ եթե խոսքն Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977) մասին է, ապա նրա հոր անունը ոչ թե Հովհաննես է, այլ՝ Աբաս: Հարկավ, դա այդպես է, իսկ ինչ վերաբերում է «օ» տառին, ապա այն հայոց այբուբեն է ներմուծվել XII դ. վերջին - XIII դ. սկզբին ձեռամբ Արիստակես Հռետորի[146]:

Խնդրո առարկա հիշատակագրին անմիջականորեն ժամանակամերձ են երեք պատմական փաստաթղթեր, որոնք ստորև հղվում են հատվածաբար: Դրանք տառացիորեն կրկնում են արքայի՝ Մաղարդա մենաստան զորքով այցելելու վիմագիր խոսքերը:

Առաջինը Աշոտ Ողորմած թագավորի պարգևագիրը և Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (973-990) կոնդակն է՝ 976 թվականին: Այդտեղ նշվում է. «...ես Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն

---

144 Մի շարք հրատարակիչներ (**Ցովհ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն,..., հ. Բ, էջ 308: **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 518: **Կ. Կոստանեանց**, Վիմական տարեգիր, էջ 8: **Հ. Ոսկեան**, Նախճաւանի վանքերը, ՀԱ, Վիեննա, 1941, № 7-12, էջ 196, տողատակ) «ԵՒ ՈՐԴ ԱՐՇՈՏ ԹԳՐՆ» բառակապակցությունը վերծանել են ուղղ. հոլովով՝ «Եւ որդի Աշոտ թագաւորս»՝ միտքն ավարտելով դրանից առաջ: Մինչդեռ ճիշտ ընթերցումը, ինչպես բնագրի այդ հատվածի ԹԳՐՆ համառոտագրված բառի վերջին «ն» տառն է պահանջում, պետք է լինի տրական հոլովով, և վերջակետը տեղադրվի բառակապակցությունից հետո, ինչը ճիշտ են կատարել **Կ. Բասմաջյանը** (նույն տեղում) և **Գ. Հովսեփյանը** (Յիշատակարանք ձեռագրաց, էջ 121-122):

145 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 518:

146 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Երևան, 1986, էջ 507:

տիեզերաց՝ եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկայիս հանդերձ զաւրաւք թագաւորականաւքս և իշխանաւք տեառն Խաչ-կայ Հայոց կաթուղիկոսի՝ երկրպագեալ սուրբ տաճարիս հին Մա-ղարդայ վանից...»[147]:

Երկրորդը Աշոտ Գ-ի թագավորական նվիրագիրն է՝ նույնպես 976 թ., որտեղ հայոց արքան հայտնում է մենաստանին իր կողմից նվի-րաբերվող Աստապատ և Դարաշամբ գյուղերի մասին, նաև՝ «Եւ եղեւ դարձեալ հանդերձ զաւրաւք երթեալ ի յաւանն անուանեալ Ճվաշ»[148], գնում շրջակա հողերը, ընծայում վանքին:

Եվ վերջապես երրորդը՝ Հռիփսիմե արքայադստեր կտակարանն է (981 թ.): Օրիորդը տեղեկացնում է. «...Զի որպէս հայրն իմ թագա-ւորն Աշոտ՝ կոչեցեալ Շահանշահ եկեալ էր ի սուրբ ուխտն Նախա-վկային հանդերձ մեծամեծ իշխանաւք և ազատագունդ զաւրաւք, և տեսեալ զսուրբ ուխտին երեք տաճարն խախտեալ, որ էր յանուն սուրբ Նախավկային, սուրբ Աստուածածնին և սրբոյն Գէորգայ, շի-նեալ և հիմնեալ ձեռամբ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղի-մէոսի»[149]:

Այսպիսով, երեք վկայություններն էլ, որոնցից Կ. Բասմաջյանը օգտագործել է միայն վերջինը, Աշոտ Ողորմածի՝ մեծաթիվ զորքով Մաղարդա մենաստան ժամանելու մասին է, հետևապես 966 թ. հի-շատակագրի վավերականությունը կասկածի տեղիք չպետք է տա: Կարելի է ենթադրել, որ խաչն ու պատվանդանը, կամ միայն վերջի-

---

[147] **Գ.Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 129-134, 138-142: Հմմտ. **Յովհ. եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն..., հ. Բ, էջ 305-307: **Ղ. Ալիշան,** Սիսական, էջ 516-518: **Մեսրովբ արքեպս. Սմբատեանց**, Նկարագիր սուրբ Կարա-պետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 410-412, 418-420, 422-424: **Հ. Ոսկեան**, Նախճաւանի վանքերը, էջ 198-199: Նույնի՝ Մաղարդայ Նա-խավկայի վանքին կոնդակները, ՀԱ, Վիեննա, 1941, թիւ 7-12, էջ 231-234, 218:

[148] Տե՛ս նույն տեղերում: Դարաշամբ և Աստապատ գյուղերի տեղադրությունը նշում է նաև Կ. Բասմաջյանը. «Շամբ, որ եւ Դարաշամբ, յիշեալ ս.Նախավկայի վանքին շատ մօտիկ գիւղ, դեպի արեւմուտք, Երասխ գետի աջ ափին վրայ: Իսկ Աստապատ՝ Շամբ գիւղէն դեպի հիւսիսային-արեւմուտք վեց մղոնի չափ (≈11կմ - Ա. Մ.) հեռի գիւղաքաղաք մ՚ է, Երասխի մյուս ափին վրայ»(տե՛ս **Կ.Բասմաջեան**, Մեր հնութիւնները, էջ 100): Ճվաշ ավանը գտնվել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի համանուն գավառում: Տեղն ստույգ հայտնի չէ: Խորենացին այն հիշա-տակում է Նախճաւան գաւառի հետ: Եղել է Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի (908-943.) զվարճավայրը (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ.Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 619): Նվիրագրից մակաբերվում է այն, որ Ճվաշ ավանը պետք է որ եղած լինի Մաղարդա վանքի մոտ և, գտնվելով Արաքսի ափին, որսորդության, ձկնորսության համար վայր կարող էր հանդիսանալ արքունիքի համար:

[149] Տե՛ս ծանոթ. № 147:

նրս ուշ միջնադարում ենթարկվել է նորոգման, որի ընթացքում, ինչպես հուշում են արձանագրության ու վերը նշված հիշատակաբանների նույնական փաստերը, հավատարիմ են մնացել բնագրի պահպանմանը: Աբաս թագավորը («աբբաս» عباس. արաբերենից թարգմանվում է «ահեղ»), որի ժամանակ հայ իրականության մեջ, հատկապես բարձրատոհմիկ շրջաններում տարածված են եղել երկանունները, որոնց բաղադրիչներից մեկը հաճախ հնչել է արաբական ձևով, վավերագրում արձանագրվել է իր մկրտական անունով, որն է Հովհաննես:

Տեկորի անթվակիր արձանագրությունում հիշատակվում է նրա կինը.

«ՎԱՅԵԼՈՒՉ ԾՆԸՆԴՈՎՔ...ՄԵԾԱՆՈՒՆ ՇՈՒՇԱՆ... ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳՈՒՀԻ»[150]:

Խաչի ընդհանուր պատկերը պատվանդանով(61,5x31 սմ, որից բուն խաչինը՝ 41x31 սմ):

Պատվանդանի բնիկի արձանագրության դիմահայաց հատվածը:

[150] **Ա. Քալանթար,** նշվ. աշխ., էջ 156:

5. ՍՅՈՒՆԻՔ - ԱՐՑԱԽ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

IX դարի սկզբներից ամբողջ Սյունյաց աշխարհը, ներառյալ Գեղարքունիքը, բացառությամբ Սոդք գավառի, բաժանված էր Վասակ մեծ նահապետի սերունդների և նրան ազգակից իշխանների միջև, որոնք քաղաքական, տնտեսական, մշակութային լայն գործունեություն էին ծավալել այդ շրջաններում: Հ. Ութմաղյանը մակաբերել է, որ «9-րդ դարի առաջին կեսին Սյունիքում գոյություն ունեին ինքնուրույն գահակալ իշխանների հինգ ճյուղեր», որոնք վասալական հպատակությամբ ենթարկվում էին երկրամասի գահերեցին[151]: «Սիւնեաց տեառն» Փիլիպե Բ-ի 932 թ. արձանագրությունից տեղեկանում ենք, որ Տաթևի եպիսկոպոսանիստ վանքի դերի բարձրացմանը 839 թ., անշուշտ, նաև քաղաքական նկատառումներով, ձեռնամուխ է եղել նրա պապ, գահերեց իշխան Փիլիպե Ա-ը, որի բուն տիրույթներն էին համարվում Վայոց ձորը՝ Եղեգիս ավան-նստոցով, Հաբանդ գավառը: Վայոցձորեցիներին ազգական Զագիկյան տոհմի անդամներին էր պատկանում Բաղաց գավառը՝ Կապան քաղաքով: Նրանց հոգևոր կենտրոն Վահանավանքում հայտնաբերված արձանագրությունները վկայում են Զագիկյանների ոչ միայն Սյունիքում, այլև ողջ Հայաստանում կատարած վիթխարի դերի մասին: Բավական է հիշատակել Վահանավանքի հոգևոր առաջնորդ Վահան Զևանշիրյանին, որը հետագայում, թեև շատ կարճ ժամկետով, բայց և օծվեց որպես հայոց կաթողիկոս (Վահան Ա Սյունի՝ 968-969): Կովսական և Քաշունիք գավառների գահակալ (գավառատեր) իշխանն էր Հրահատը, որի նվիրատվական արձանագրությունը մեզ է ավանդել Սիսական պատմիչը[152]:

Սյունիքի արձանագրությունների լրացուցիչ ժողովածուի կազմման շրջանակներում (աշխ. Գրիգոր Գրիգորյանի) 2013 թ. ամռանը շրջագայելով Մեղրու տարածաշրջանում՝ գրանցեցինք մի խաչաքանդակ քար, որը թվագրությամբ ավելի հին է, քան IX դ. թվագիր, ցարդ հայտնի հետևյալ վեց խաչքարերը. 853 թ. Արցախի՝ Մեծարանց Սողոմոն եպիսկոպոսի[153], 866 թ. Վաղուհաս գյուղի մոտի՝

---

[151] **Հ. Ութմաղյան**, Սյունիքը IX-X դարերում, Երևան, 1958, էջ 26-27:

[152] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 206-207:

[153] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ V, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 12 (այսուհետև՝ Դիվան, պր. V): Խաչքարը չկա, դրա մասին արձանագրությունը փորագրված է պատվանդանին:

Սարգսի[154], 879 թ. Գառնիի՝ Կատրանիդե թագուհու[155], 881 թ. Մեծ Մասրիկի՝ Սյունյաց և Աղվանից իշխան Գրիգոր Ատներսեհյանի[156], 882 թ. Դաշտադեմի՝ Սուսեի[157] և 886 թ. Կեչուտի՝ Դավթի կոթողները[158]:

Նորահայտ խաչաքանդակ քարը գտնվում է Ափկես[159] գյուղատեղիում՝ XVII դ. եկեղեցուց մոտ 500 մ հյուսիս: Քարը գրանիտ է: Նրա արևմտյան մակերեսին կերտված է հինգ խաչապատկեր՝ երկուսը մեծ, կողք-կողքի և երեքը՝ փոքր: Դրանցից երեքը՝ մեկ մեծը և երկու փոքրերը, հողմահարված են:

Այն հավակնում է դասվելու խաչքարերի նախօրինակների շարքը, քանի որ բնութագրելով Հայաստանի վաղ խաչքարային կոթողային հուշարձանները՝ Ստ. Մնացականյանը գրում է. «Խաչքարի ընդհանուր կոմպոզիցիոն մշակումը հնագույն խաչքարերում պարզ, առանց որևէ պաճուճանքի խաչեր են, քանդակված հարթ, կիսաշրջանաձև ավարտվող սալերի վրա»[160], նաև՝ «Հայտնի է, որ հնագույն խաչքարերն աչքի են ընկնում իրենց պարզ ու հստակ ձևերով, ընդ որում հիմնականը՝ որոշիչը, այստեղ բուն խաչի կոմպոզիցիան է, իսկ օժանդակ մոտիվները և զարդաձևերն ունեն անհամեմատ ավելի աննշան ու երկրորդական նշանակություն»[161]:

Մեր կողմից հավելենք, որ գրանիտը կարծր, դժվար մշակվող քար է, ուստի պատվիրատուն և վարպետը բավարարվել են՝ խաչեր ու

---

[154] Տե՛ս նույն տեղում, էջ 113:

[155] Տե՛ս **Б. Аракелян,** *Гарни, том I, էջ 84:*

[156] Տե՛ս Դիվան, պր. IV, էջ 334:

[157] Տե՛ս «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դդ. խաչքարերը», Երևան, 1984, էջ 14:

[158] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. III, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 21 (այսուհետև՝ Դիվան, պր. III): Ըստ Ա. Շահինյանի՝ IX դարից են նաև այն երկու որմնախաչերը, որոնցից մեկը զետեղված է Տաթևի վանքի Ս.Պողոս-Պետրոս կաթողիկեի արևմտյան մուտքից վերև այդ տաճարը կառուցող Հովհաննես եպիսկոպոսի հիշատակությամբ, որը թեև թվական չունի, բայց թվագրվում է սրբարանի շինարարության ժամանակով՝ 895-906, իսկ մյուսը ներկայիս Գեղարքունիքի մարզի Հացառատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատին ագուցված անարձանագիր խաչքարն է, որի թվագրությունը որոշվում է աղոթարանի կառուցմամբ՝ 898-899 թթ. (տե՛ս «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դդ. խաչքարերը», էջ 15):

[159] Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակում հիշատակվում է Աբգավանք՝ 8 միավոր հարկաչափով (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 521):

[160] ***Ստ.Մնացականյան***, *Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 177:*

[161] Նույն տեղում, էջ 174:

հակիրճ հիշատակություն թողնելով: Ափկեսի նորահայտ հուշաքարի խաչապատկերների շուրջ Π-աձև փորագրված է հետևյալ արձանագրությունը.





Լուսանկար **Գրչագիր**

⌊Ի⌋ Թ⌊ՈՒԻՆ⌋ $\overline{\text{ՄՀԶ}}$ (827)... / $\overline{\text{ՍԲ}}$ ԽԱՉՍ / ⌜Հ⌝ՐԱՀԱՏԱ[162]:

Հ. Պետրոսյանը նկատել է, որ առաջին խաչքարեր կանգնեցնողների շարքում են պետության և եկեղեցու մի շարք աչքի ընկնող դեմքեր՝ թագուհի, Արևելից կողմանց իշխանը, եպիսկոպոսներ, քահանաներ և այլք[163]: Նշանակում է՝ Հրահատը պետք է որ իշխան եղած լինի:

Հիշյալ ժամանակաշրջանում պատմական աղբյուրներից Սյունիքում Հրահատ անունով հայտնի է չորս իշխան.

---

[162] Քարի վրայի անունը փորձել ենք կարդալ ԱԲՐԱՀԱՄԱ, բայց այդ դեպքում չեն նշմարվում ԱԲ տառերի կամ կցագրի հետքեր, այլ դրանց փոխարեն երևում է Հ-ի տառահետք: Այն նման է ՀՐԱՀԱՏ անվան երկրորդ Հ-ին: Ինչ վերաբերում է բառի նախավերջին տառին, որը նման է Մ-ի, ապա այն Տ-ենք կարծում, գտնելով, որ վերևից իջնող նրա փոքր մասնիկը ընկված է, ինչպես ՀՐԱՀԱՏ անվան վերջին Ա տառի աջ սյունագծի վերնամասը:

[163] Տե՛ս Հ. **Պետրոսյան**, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 95:

1. Տաթևի 839 թ. վավերագրում, որով Սյունյաց տեր Դավիթ եպիսկոպոսը (836 -853) 10.000 դրամով նահանգի գահերեց իշխան Փիլիպե Ա-ից (821-844) գնում է Արծիվ և Բերդկաներեչի գյուղերը, որպես գործարքի վկա հիշատակվում է նաև տեր «Հրահատ՝ տեառն Սահակայ որդի»[164]:

Հ. Ութմազյանն այս Հրահատին համարում է որդին Գեղարքունիքի տեր, գահակալ իշխան Սահակի, ով զոհվել էր Կավակերտի ճակատամարտում 831/832 թվականին[165]:

Հետևապես այս Հրահատը չէր կարող լինել Ափկեսի խաչքարում հիշատակվող անձը, քանի որ նրա տիրույթները գտնվել են Գեղարքունիքում:

2. Ի դեպ, Սիսական տոհմի Գեղարքունյաց ճյուղում հանդիպում ենք Հրահատ անունով մեկ ուրիշ իշխանի, ով եղբայրն էր նշանավոր Վասակ Գաբուռի (851-859) և որդին Գրիգոր Ա Սուփանի (832-851): Նա հանդես է գալիս IX դարի վերջին քառորդում՝ 874 թ. Շողագավանքի վավերագրում իր հորեղբոր՝ Գեղարքունյաց գավառի գահակալ իշխան Գագիկի հետ[166]:

3. 844 թ. ընծայագրում, որով Սյունյաց գահերեց իշխան Փիլիպեն Տաթևի վանքին է նվիրաբերում իր սեփական համանուն գյուղը, վկաների շարքում ներկա են «Տէր Հրահատ և Գագիկ՝ որդիք Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն»[167]:

Սյունյաց տեր Գրիգորը, ըստ Ութմազյանի, Գեղարքունիքի տեր Սուփան Ա-ը չէ, քանի որ նա Գագիկ անունով որդի չի ունեցել[168]: Նրա որդիները Վասակ Գաբուռն ու Հրահատն էին: Հետևապես, ըստ պատմաբանի, նա 881 թ. հիշատակվող իշխանաց իշխան Հրահատն է[169]:

Այդ թվականին Սյունյաց տեր, իշխանաց իշխան Հրահատը՝ Գրիգորի որդին, ըստ Սողոմոն եպիսկոպոսի (863-880) վավերագրի՝

---

[164] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 205:
[165] Տե՛ս **Հ. Ութմազյան**, նշվ. աշխ., էջ 309:
[166] Տե՛ս նույն տեղում, էջ 312, ըստ **Ստեփանոս Օրբելյանի**, էջ 175:
[167] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 215:
[168] Տե՛ս **Հ. Ութմազյան**, նշվ. աշխ., էջ 318:
[169] Տե՛ս նույն տեղում:

Տաթևի վանքին է հանձնել իր հայրենի Դարատափ գյուղը[170]*: Կարծում ենք, որ նա չի նույնանում Ափկեսի խաչքարի Հրահատի հետ, քանի որ ժամանակային վիհ կա 827-881 թվականների միջև՝ 54 տարի, և որ իշխանը 827 թ. շատ երիտասարդ պետք է լիներ, ուստի դժվար թե կարողանար կոթող կանգնեցվելու պատվին արժանանալ:*

4. Տաթևի նույն 844 թ. ընծայագրում վկաների մեջ են «տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք»[171]*: Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ նույն 844 թ. տեսնելով Սյունյաց գահերեց Փիլիպեի նվիրատվությունը՝ մեծ իշխան Հրահատը՝ Սահակի որդին և Գրիգոր Արումանի եղբայրը, Հայկազուն, նույն Սիսական տոհմից, որ «ունէր իր բաժին ժառանգութեան զԿովսական գաւառ և զՔաշունիք», գնում է տեր Դավիթ եպիսկոպոսի մոտ և Տաթևի վանքին ընծայում Կովսական գավառի Նորաշինիկ անունով գյուղը՝ «իւր բոլոր սահմանօք, լերամբ և դաշտաւ, ջերմաւ և ցրտով, ծառով և տնկով...»*[172]*: Այս նույն Հրահատը հիշատակվում է նաև իր տիկնոջ՝ Քուպղիդուխտի 867 թ. նվիրագրում*[173]*: Քուպղիդուխտը դուստրն էր Սյունյաց մեծ նահապետ, իշխանաց իշխեցող Վասակի (մռ. 821) և քույրը գահերեց իշխան Փիլիպեի (821-844): Իշխանու-*

---

[170] *Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում Դարատափ չի հիշատակվում (տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 509-523): Հ. Ութմազյանը գրում է, թե Դարատափի տեղադրությունը հայտնի չէ, որով հնարավոր կլիներ որոշել իշխանաց իշխան Հրահատի՝ որդի Գրիգորի՝ Սիւնեաց տեառնի բուն տիրույթները (****Հ. Ութմազյան****, նշվ. աշխ., էջ 319), չնայած մի այլ տեղ հավանական է համարում դրանց գտնվելը Սյունիքի հարավում (նույն տեղում, էջ 26): Խիստ գայթակղիչ կլիներ* ***Դարատափի*** *նույնացումը Մեղրու տարածաշրջանի նախկին ադրբեջանաբնակ Ալղարայի հետ (ներկայիս Ալվանք): Տեղանունների բառարանում Դարատափը տեղադրվում է կամ Բաղք կամ Կովսական գավառներում (տե՛ս* ***Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան****, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 55-56): Ըստ Ղ. Ալիշանի՝ Դարատափը եղել է Խոտ գյուղի մոտ (տե՛ս* ***Ղ. Ալիշան****, Սիսական, 1893, էջ 227): Իսկ Խոտ գյուղը Ութմազյանը տեղադրում է Հաբանդ գավառում (տե՛ս* ***Հ. Ութմազյան****, նշվ. աշխ., էջ 295):*

[171] ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 207:*

[172] *Նույն տեղում, էջ 208-211: Նորաշինիկը, ըստ Ա. Աբրահամյանի, Ղափանի շրջանի մեջ մտնող Նորաշենիկ գյուղն է (տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան****, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները* ***Ա. Ա. Աբրահամյանի****, Երևան, 1986, էջ 466): Քաշունիքը Սյունիքի գավառներից էր, որը որպես վարչական միավոր կազմավորվել է VIII դ. վերջերին՝ Բաղքի մասնատմամբ: Սահմանակից էր Սյունիքի Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Կովսական և Արցախի Մյուս Հաբանդ գավառներին (տե՛ս* ***Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան****, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 300):*

[173] *Տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 220:*

հին արդեն ծեր էր, ինչպես ինքն է ասում. «.. մերձեցայ ի ժամանակս ծերութեան»[174], երբ Տաթևի վանքին է նվիրաբերում իր Մաճ գյուղը՝ լեռներով, դաշտերով, մարգով և այգով, ջրով ու ցամաքով, ծառերով ու տունկերով:

Այն, որ Քուպղիդուխտի ամուսին Հրահատ իշխանը Սահակի որդի ու Գրիգոր Արումանի եղբայր Հրահատն է, ինչպես նշում է Հ. Ութմազյանը, ակնբախ է հետևյալ երեք հանգամանքներից.

1) Մաճը գտնվում էր Քաշունիքում, որի տերը Հրահատն էր:

2) Երկուսն էլ գանգատվում են անզավակությունից. Քուպղիդուխտ իշխանուհին իր 867 թ. ընծայագրում տրտնջում է, որ «զրկեալ էի ի զաւակէ մասանց»[175], իսկ Հրահատ իշխանը 844 թ. նվիրագրում նշում է. «զմտաւ ածեալ զանզաւակութիւնս իմ..»[176]:

3) Երկուսն էլ խոսում են Հրահատի գործած ինչ-որ մեղքերի ու հանցանքների մասին: Իշխանուհին, որպեսզի հաստատուն պահի Տաթևի վանքին իր կատարած նվիրատվությունը, վճիռը խախտողներին սպառնում է Աստուծուց և ս. Խաչից դատապարտմամբ, ինչպես նաև նզովքով հոգևոր տերերի, ծնողների, և «տեառն Հրահատայ, որ իմ կենաց կցորդն էր զամենայն մեղս և զյանցանս Աստուած ի նմանէ տուժեսցէ»[177]: Հրահատը 844 թ. Նորաշինիկի կտակագրում խոստովանում է. «Ես Հրահատ բազմամեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի, վասն իմ չար և անիրաւ գնացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազում և ազգ ազգի յանցանօք և լցեալ իբրև զծով անթիւ չարեօք ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւուր դատաստանին..»[178]:

Ըստ Հ. Ութմազյանի՝ այս Հրահատը 867 թ. արդեն վախճանվել էր[179]:

Մենք այս բազմամեղ իշխանին համարում ենք Ափկեսի նորահայտ խաչքարի արձանագրությունում հիշատակվող Հրահատը,

---

[174] Նույն տեղում, էջ 219: Մաճ գյուղը գտնվել է Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառում՝ 7 միավոր հարկաչափով (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 519): Այն եղել է Կապանի Առաջաձոր գյուղի մոտ, ինչպես պարզել է **Գ. Գրիգորյանը** (տե՛ս նրա՝ Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության շուրջը, ՊԲՀ, 1966, № 4, էջ 236, տե՛ս նաև՝ **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Ա. Աբրահամյանի ծանոթությունը, էջ 468):

[175] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 219:

[176] Նույն տեղում, էջ 209:

[177] Նույն տեղում, էջ 220:

[178] Նույն տեղում, էջ 209:

[179] Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 321:

նախ, ժամանակները լիովին համընկնում են, երկրորդ, նրա տիրույթներից Կովսականը հարավ-արևմուտքից սահմանակից էր Արևիք գավառին[180], որի արևելյան մասում է գտնվել Ափկես գյուղը: Չի բացառվում, որ IX դ. սկզբներին Արևիք գավառի արևելյան՝ Ափկես-Թոս-Վերին Մալև-Քուջերթ հատվածը ներառված լիներ Կովսականի և Քաշունիքի տեր Հրահատ Սահակյանի տիրույթներում, միաժամանակ ենթադրելով, որ հնարավոր է՝ իշխանը դրանց տիրացած լիներ բռնությամբ, այսինքն՝ հանցավոր ճանապարհով, մեղք գործելով, ինչը բնութագրական էր նրան:

Ուշագրավ է Հ. Պետրոսյանի այն դիտարկումը, թե «Խաչքարերը երևան եկան արաբական լծի թուլացմանը զուգահեռ, աննկատից դեպի նկատելին, համեստից դեպի ճոխը սկզբունքով, դառնալով մի տեսակ քաղաքական-դավանական տեղաշարժերի արձագանքը: Հաշիվ թե պատահականության արդյունք է այն իրողությունը, որ առաջին թվագիր խաչքարերը համապատասխանում են Արաբական խալիֆայությունից Հայաստանի քաղաքական անկախություն ձեռք բերելու ժամանակին... Ինչ որ իմաստով խաչքարը հանդես եկավ որպես վերականգնվող հայկական պետության ինքնության խորհրդանշան և նրա զարգացումն էլ սկզբնական շրջանում պիտի որ ավելի «զգայունորեն» արձագանքեր տարածաշրջանում և երկրում տեղի ունեցող քաղաքական-դավանական փոփոխություններին»[181]:

Ապա անդրադառնալով Քոլատակի Մեծարանց և Վաղուհասի թվագիր երկու հնագույն խաչքարերին (853 թ. և 866 թ.)՝ Հ. Պետրոսյանը եզրակացնում է, որ «Արցախը ոչ միայն ներառված էր խաչքարակերտման գործընթացի մեջ, այլև հնարավոր է, որ որոշ քայլեր այստեղ, կապված քաղաքական իրավիճակի հետ, ավելի վաղ կարող էին տեղի ունենալ»[182]:

Հնագետի այս որակումն ավելի հատկանշական է Սյունիքի համար, քանի որ այն ժամանակ, երբ Արցախում երկրամասի բնիկ տերեր Առանշահիկ իշխաններն ի դեմս հզորագույն Սահլ իբն Սումբատի (IX դ. I կես), զբաղված էին իրենց ավատական խլված իրավունքների վերականգնմամբ, նույն միջոցին Սիսական աշխարհում

---

[180] Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 637, նաև՝ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 223:

[181] **Հ. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 95:

[182] Նույն տեղում, էջ 97:

գործում էր կառավարման կայացած համակարգ՝ գահերեցության և գահակալության կուռ կառուցվածքով:

Բայց և այնպես, այդ ծայրամասային երկու հզորացած նահանգների, նաև Վասպուրականի, ըստ մեր վաղ ասվածի, և ինչպես հայրենասեր պատմիչն է հավելում, հայոց մյուս իշխանների՝ ուժեղ կենտրոն Շիրակ-Այրարատի շուրջ համախմբվելու շնորհիվ էր, որ վերականգնվեց Հայաստանի պետականությունը[183]:

Բուն Արևիք գավառում X դ. սկզբին իշխում էր Սմբատ գահակալը: Այդ մասին մենք իմանում ենք Մեղրու Վանք գյուղի 1554 թ. կառուցված եկեղեցու արևելյան պատի հարավային անկյունում արտաքուստ թեքությամբ ագուցված խաչքարի հետևյալ արձանագրությունից.



Գրչագիր

Թ[ՎԻՆ]: ՅԾԱ: (902) / Զ$\overline{\text{ՏՐ}}$ ՍՆ/ՊԱՏ ԻՇԵ / ՅԵՔ[184]:

Առաջին հայացքից թվում է, թե Սնպատը (Սմբատը) հոգևորական է, քանի որ նրա անունը պատվի է արժանացած **տէր** բառով: Բայց դա այդպես չէ: IX դարում Տաթևի վերոհիշյալ 839-881 թթ. բոլոր կալվածագրերում **տէր** պատվանունով հանդես են գալիս միայն Սյունյաց թեմական առաջնորդ եպիսկոպոսները (Տէր Դավիթ, Տէր Սողոմոն) և մի շարք իշխաններ[185]: Ինչ վերաբերում է առուծախի ու նվիրատվությունների վկա հոգևորականներին, ապա նրանք բոլորն անխտիր վերոհիշյալ կալվածագրերում հիշատակվում են միայն իրենց հոգևոր կոչումներով՝ երէց, աւագերէց, քահանայ, վանական, հայր (վանահայր), քորեպիսկոպոս՝ առանց «տէր» անվանապատվի:

---

[183] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 175:

[184] Մեր դաշտային օրագրից:

[185] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 205-210, 216:

Հ. Ութմազյանը նկատել է, որ սկզբնաղբյուրներում «տէր» են անվանված բոլոր գահակալ իշխանները[186]: Հետևապես, տէր Անպատը Արևիք գավառի գահակալ իշխանն է:

Խոսելով Սյունիքում Վասակ մեծ նահապետի, նրա ժառանգների և մյուս գլխավոր իշխանների մասին՝ պատմիչը կարծես Սմբատ Արևիքեցուն է ակնարկում հետևյալ հիշատակությամբ. «և զի ի ցեղէ հայկական յոլովք էին զարմք և ազինք»[187]:

Հ. Ութմազյանի կազմած Սյունիքի ինքնուրույն գահակալ իշխանների հինգ ճյուղերին[188] որպես վեցերորդի պետք է հավելենք Արևիքի տիրակալ Սմբատի տոհմը:

Վանք գյուղից 3 կմ արևմուտք գտնվում է Թաղամայրի գյուղատեղին, որը հիշատակվում է նաև Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում՝ 6 միավոր հարկաչափով[189]: Թաղամայրին մեղրեցիները կոչում են նաև Թաղամիր, որը ստուգաբանվում է «թաղ»+«ամիր»՝ արաբ. «իշխան» (أمير), հետևապես նշանակում է «Իշխանաթաղ»:

Ուստի պետք է ենթադրել, որ X դ. սկզբին Արևիք գավառի իշխանական նստավայրը կամ գոնե ամառանոցը եղել է Թաղամայրի կամ Թաղամիր գյուղը մինչև իշխանանիստի Մեղրի տեղափոխվելը, երբ վերականգնված պետք է լիներ շրջանի վարչական ամբողջականությունը՝ Ափկես-Թոս-Վերին Մալև-Քուլերթ տարածքով: Այս դեպքում Մեղրին գավառում ստանում է իշխող, կենտրոնական դիրք: Իշխանանիստի տեղափոխությունը պետք է որ եղած լինի Մեղրու բերդի կառուցումից հետո, որի առաջին հիշատակությունը 1083 թվականից է, երբ Տաթևի վանքին «ետուն և այգի մի մեծ ի Մեղրոյ ձորի զբերդ Աւագեանց այգին Աբուսահլ ոմն՝ տէր Մեղրոյ բերդին ի թուականին 532»[190]: Մինչդեռ Սմբատ գահակալի ժամանակներում (X դ. սկիզբ) Արևիք գավառում են գտնվել Սյունյաց մոտ երկուսուկես տասնյակ անմատչելի ամրոցներից երկուսը՝ Կքեբերդը կամ Կա-

---

186 Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 152:
187 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 296:
188 Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 26:
189 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 521:
190 Նույն տեղում, էջ 331:

քավաբերդը և Մայրին[191]*(հնարավոր է՝ վերջինս նույն Թաղամայրին է կամ գտնվել է դրա մոտերքում և ծառայել որպես իշխանանիստ մինչև XI դ., իսկ Վանքը հանդիսացել է քորեպիսկոպոսանիստ): Պատմիչն այս շրջանում Մեղրու բերդ չի հիշատակում: Ինչ վերաբերում է վերջինիս կառուցմանը, ապա Մ. Հասրաթյանի ասելով՝ ժամանակը «ճշգրիտ հայտնի չէ, սակայն մեր կարծիքով, ամենահավանականը Սյունիքի թագավորության ստեղծման և հզորացման տարիներն են՝ 10-րդ դարի վերջը և 11-րդ դարի սկիզբը»*[192]*:*

Գեղարքունիքում, ինչպես նշել ենք վերևում, իշխում էին մեծ Վասակի կրտսեր որդու՝ Սահակի շառավիղները: X դ. սկզբներին Գեղարքունյաց տեր Գրիգոր Սուփան Բ-ը, հետևելով իր համանուն պապի շինարարական բարի ավանդույթներին, որը դեռևս IX դ. վերջերին կառուցել էր Մաքենյաց վանքի եկեղեցին և «անխնայաբար» զարդարել այն «պատուական սպասուք եւ աստուածային կտակարանաւք», նվիրաբերել տաճարին 1250 դրամ, կրպակներ Անիում, այգիներ Երևանում, Գառնիում, Եղեգիսում[193]*, ինքն էլ վիմատաշ, կոփածո քարերով հիմնարկում է Կոթի Ս. Աստվածածին եկեղեցին, հոգևոր սպասավորներին ազատում «յարքունական ծանրութենէ»՝ պետական հարկերից և բեկարից՝ կոռից*[194]*, հատկացնում հողեր, ոռոգման ջրեր, յուրաքանչյուր քահանայի համար սահմանում տարեկան 50 դրամ, որը սովորականից հնգապատիկ ավելին էր*[195]*: Հիշատակություններից հետևում է, որ միջնադարյան Հայաստանում իշխանավորները կատարում էին ոչ միայն ռազմական և վար-*

---

[191] *Մայրի ամրոցի տեղադրությունը մի շարք հետազոտողների համար կամ անհայտ է եղել (տե՛ս* ***Մ. Հովհաննիսյան,*** *Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 433), կամ էլ թյուրիմացության տեղիք է տվել(տե՛ս* ***Ա. Աբրահամյանի*** *ծանոթությունը,* ***Ստեփանոս Օրբելյան,*** *Սյունիքի պատմություն, էջ 414-415): Այն ճիշտ է նշված տեղանունների բառարանում, ըստ որի գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Արևիք գավառում (տե՛ս* ***Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,*** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 677): Մայրի անունով գյուղ ներառված է Տաթևի վանքի հարկացուցակում, Արևիք գավառում՝ 8 միավոր հարկաչափով (տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 521):*

[192] ***Մ. Հասրաթյան,*** *Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, 1987, էջ 5:*

[193] *Դիվան, պր. IV, էջ 290:*

[194] *«Բեկարը» եկեղեցական կոռն է (տե՛ս* ***Հ. Ութմազյան,*** *նշվ. աշխ., էջ 218): Այն արքունի օգտին կատարվող պարհակ է (տե՛ս* ***Ս. Հակոբյան,*** *նշվ. աշխ., էջ 60): Պետությանը տրվող եկամտահարկ է (տե՛ս* ***Լ. Բաբայան,*** *նշվ. աշխ., էջ 436): Բեկարը բերքի 1/10-ն է, ուրեմն հավասար «չարիատին» (տե՛ս* ***Ս. Պողոսյան,*** *նշվ. աշխ., էջ 219):*

[195] *Դիվան, պր. IV, էջ 265:*

չաքաղաքական գործունեություն, այլև լինելով խոշոր հողատերեր՝ զբաղվում էին ֆինանսատնտեսական գործունեությամբ: Նրանք իրենց բնիկ տիրույթներից բացի, կալվածքներ ունեին տարբեր քաղաքներում, վայրերում, որոնք վարձակալությամբ տալով՝ ապահովում էին վիթխարի շահույթ: Կարող էին իրենց տիրապետության տակ գտնվող եկեղեցիներն ազատել նույնիսկ արքունական հարկերից, հավանաբար, նախապես համաձայնեցնելով արքայի հետ:

Գրիգոր Սուփան Բ-ը հայրենանվեր մեծ գործ է կատարել: Նա Արամոսի վանքը «չատածախ գանձիւք.. ի Հադարացեաց...» գնել է և վերանորոգել[196]: Այս վկայությունը հիմք է տալիս կարծելու, որ իշխանները հայրենի հողերն ազատագրում էին ոչ միայն զենքի, այլև դրամի միջոցով:

Նույն ժամանակներում Նորատուսում իշխում էր նրա եղբայր Սահակը, որը հայտնի է տեղում եկեղեցու կառուցմամբ[197]:

Աշոտ Երկաթի (914-928) օրոք Գեղարքունիքն անջատվել է Սյունիքից և միացվել Բագրատունիների տերությանը: Շատ չանցած՝ Աբասի (928-953) կամ Աշոտ Ողորմածի (953-977) ժամանակներում Գեղարքունիքում տիրույթներ են շնորհվում Հավնունիների իշխանական տանը: Այդ եղելությունը մակաբերվում է Նորատուսի Ս. Գրիգոր (Դափուց վանք) եկեղեցու Հերակլ Հավնունու IX դ. վերջի և X դարի սկզբի հետևյալ արձանագրության առկայությունից.

ՇՆՈՐՀԻՎ ԱՅ. ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՁ ՀԵՐԱԿՂԻ ՀԱՎՆՈՒՆՈ ԵՒ ԵՏՈՒ ԶՋՈՐՈՂԱՆԱ :Բ: (2) ԱՐՏ Ի ՍՈՒՐԲ ԳԻՐԳՈՐ ՀՐԱՄԱ-ՆԱՒ ԳԱԳԿԱ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ ԳՆԵՑԻ ՋՐ⌈ԱՂԱՅ⌉...[198]

Այս անավարտ նվիրագրում Հերակլ Հավնունին հայտնում է, որ ինքը Գագիկ Շահանշահի (990-1020) հրամանով երկու արտ է նվիրել եկեղեցուն և գնել, երևի, ջրաղաց, ինչն ակնբախ է այդ բառի առաջին երկու՝ «ջր» տառերի փորագրությունից, հնարավոր է վանքի օգտագործման համար:

---

[196] *Վիմական տարեգիր, էջ 6:*
[197] *Տե՛ս Դիվան, պր. IV, էջ 11:*
[198] *Նույն տեղում, էջ 18:*

Նույն Հերակլը 1000 թ. Գավառում խաչքար է կանգնեցրել «յաւգնականութիւն» իրեն, կնոջն ու զավակներին[199]:

Այս երկու վիմագրերն ունեն բացառիկ գիտական արժեք, քանի որ լրացնում են Հավնունիների մասին մատենագրական տեղեկությունները, հնարավորություն ընձեռում հետևելու հնամենի այդ նախարարական տան տեղաշարժին, նաև նպաստում Գեղարքունիքի իշխանական պատկանելության հարցի լուծմանը X դ. առաջին կեսից հետո: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Արշակունի թագավորների օրոք բազեակիրների արքունական պաշտոնը վարող Հավնունի նախարարական տունը, որը պատվի է արժանացել 55-րդ բարձով ըստ Սահակյան Գահնամակի և սպառազինվել 300 այրով համաձայն «Զորանամակի, իշխում էր Այրարատ նահանգի չորրորդ գավառ Հավնունիքում՝ իշխանանիստ ունենալով Ավնիկ կամ Հավնիկ հզոր բերդամրոցը Երասխ գետի արևելյան ափին, Մուրց վտակի միախառնման տեղից ոչ հեռու»[200]:

Հավնունիների մասին մատենագրական սակավ ու կցկտուր տեղեկություններից իմանում ենք, որ «554-ի Դվինի ժողովի մասնակիցների թվում Հավնունիներից հիշվում է Աստվածատուրը, Թովմա Արծրունին IX դ. հիշատակում է իշխան Վահան Հավնունուն, որը Բագրատունյաց և Արծրունյաց կազմում կռվել է արաբ նվաճողների դեմ: X դ. ոմն Հավնունի իշխան դավակցել է իր փեսա Հասան Գնթունուն՝ Սմբատ Ա Բագրատունի թագավորի դեմ: Նույն դարում հոգևորական Գևորգ Հավնունուն Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը պատգամախոս է ուղարկել արաբ ոստիկանի մոտ: Հետագայում Հավնունիները չեն հիշատակվում աղբյուրներում»[201]: Վասպուրականի թագավորությունում մի առ ժամանակ նրանց է վստահվել սպարապետության պաշտոնը: Բագրատունի թագավորների ողորմածությանը Հավնունիների ապավինելը և Գեղարքունիքում որոշ տիրույթներ ստանալը պետք է ենթադրել այն բանից հետո, երբ Բյուզանդիան 949 թ. գրավել ու Կարին, Բասեն շրջանների հետ Հայաստանից անջատել է նրանց հայրենի Հավնունիքը:

Մասնակիորեն մեջբերված վիմագրերը խոսում են ոչ միայն իրենց ժառանգական տիրույթներում ավատատերերի ամրապնդվելու, ըն-

---

199 Նույն տեղում, էջ 50:

200 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Երևան, 1980, էջ 270:

201 Նույն տեղում:

դարձակվելու, հարևաններից տարածքներ բռնազավթելու, նոր վայրեր տեղափոխվելու ու հաստատվելու, այլև ներավատական վեճերի մասին, ինչպես Արուճի 867 թ. արձանագրությունում:

Միջավատական հակասությունների ու տիրույթների ընդլայնման արտացոլում է նաև Սոդքի 881 թ. խաչքարի վիմագիրը:

Այժմյան Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարածքում՝ պատմական Սոդք գավառում, «Գրիգոր Ատրներսեհեանը» (Գրիգոր՝ որդի Ատներսեհի), հայոց «:ՅԼ:» (881) թվականին խաչքար է կանգնեցնում՝ իրեն «Սիւնեաց և Աղվանից...[202] իշխան» հիշատակագրելով: Սա ցայժմ հայտնի միակ սկզբնաղբյուրն է, որտեղ արցախցին իրեն համարում է նաև Սյունյաց իշխան: Հայտնի է, որ Սոդքն ըստ «Աշխարհացույցի»՝ Հայաստանի Սյունիք նահանգի 12 գավառներից 6-րդ է[203], նրա բաղկացուցիչ մասը, և բնականաբար սյունեցիներն արցախցիներին թույլ չէին տա՝ ինքնաբերաբար տնօրինելու իրենց հայրենական տիրույթներում: Դա նաև արական գծով ժառանգորդի բացակայության պատճառով հաստատված խնամիական կապի հետևանք չէ: Դրա արմատները, որոնց հիմքում ընկած են միջնադարյան մեզ հայտնի քաղաքական կազմավորումներին յուրահատուկ միջավատական հակասությունները, ձգվում են մինչև V դարի կեսը, երբ պարսիկները Կուր գետի ձախափնյակ, բուն Աղվանքի թագավորությանն են հանձնում Արցախ նահանգը, որի հետևանքով հետագայում մի շարք վիճելի գավառների՝ Ծար-Վայկունքի (Քարվաճառ-Քելբաջար), Աղահեճքի (Լաչին), Բերդաձորի (Շուշի), նաև Սոդք-Վարդենիսի պատկանելության հարցի շուրջ տարաձայնություններ են առաջանում Սյունյաց և Աղվանից (Արցախ) աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև[204]: Այդ խնդրի անարդյունք կարգավորմամբ փորձել են զբաղվել հայոց շատ մեծամեծներ մինչև Սարգիս հայրապետը, որին հաջողվել է 1006 թ. կոնդակով լուծել հարցը՝ ճշտելով Սյունիք-Արցախ նահանգների հոգևոր սահմանները[205]:

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» շարունակող Մովսես Դասխուրանցին հայտնում է, որ վերը հիշատակված Գրիգորի հայր

---

[202] Դիվան, պր. IV, էջ 334: Հմմտ. «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դդ խաչքարերը», էջ 14:

[203] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 117:

[204] Տե՛ս **Մ. եպս. Բարխուդարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 1-2:

[205] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 308-311:

Ատրներսեհը որդին է Սահլի «...որ էր ի տոհմէն Հայկայ՝ տէր Սիւ-նեաց, որոյ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամա...»[206]:

Սյունյաց մեծ նահապետ Վասակի ժառանգները՝ Փիլիպեն Վայոց ձորում և Գրիգոր Սուփան Ա-ը Գեղարքունիքում, չէին կարող դիմադրել իրենց ավատական տիրույթների նկատմամբ Սահլ իբն Սումբատի (Սահլ՝ որդի Սմբատի) հավակնություններին, քանի որ վերջինս արկածախնդիր Բաբեկին գերեվարելուց հետո վայելում էր արաբ տիրակալների համակրանքն ու վստահությունը: Եվ պատա-հական չէ, որ «... ընդ վաստակացն առնու... իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից՝ տիրեալ ամենեցուն արքայաբար»[207]: Այս հիշատակությունից ակներև է, որ Սահլ Սմբատյանը հայոց տան մեջ գերագահության համար մրցակցել է Բագրատունի հզոր իշխանների հետ: Նրա Ատրներսեհ որդին ժառանգորդի իրավունքով ամրապնդում է իր ավատական դիրքերը բռնակցված վայրերում՝ կառուցելով. «զբերդն Հանդու, և զապրանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր և բաղանիք արքունական են: Նրա տիկին Սպ-րամը յառաւել բարեգործութիւնս յաճախէր և մեծածախ տենչմամբ չինէ զնորավանս ի գաւառին Սոդէից ամենապայծառ զարդա-բաւք...»[208]:

Ահա այս տիրույթները ժառանգելով է, որ Գրիգոր Ատրներսեհ-յանը արձանագրության մեջ իրավունք է վերապահում իրեն կոչել նաև Սյունիքի իշխան:

Ի դեպ, այս արձանագրությունը բունիյաթովական դպրոցի ներ-կայացուցիչ Դ. Ախունդովին առիթ է տվել՝ Գրիգոր Ատրներսեհ-յանին հռչակելու պատմության մեջ գոյություն չունեցած «Ներին՝ աղվանական իշխան» հորջորջմամբ, առանց հաշվի առնելու այն կարևորագույն հանգամանքը, որ նրա պապ Սահլը սերում էր «ի տոհմէն Հայկայ», այսինքն՝ հայ է եղել[209]:

Պատմագիտության մեջ Գրիգոր Ատրներսեհյանը նույնացվում է Աղվանից Համամ Բարեպաշտ թագավորի հետ[210], որի 1241 թ. վերստին դրված տապանաքարը ժամանակին գտնվել է ԼՂՀ Ասկե-

---

[206] **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնա-գիրը և ներած. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 340:

[207] Նույն տեղում, էջ 330:

[208] Նույն տեղում, էջ 340:

[209] Տե՛ս **Г. Григорян**, Историографическое значение армянских лапидарных над-писей Арцаха и Сюника, ԼՀԳ, 1990, № 1, էջ 4:

[210] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 76:

բանի շրջանի Ավետարանոց գյուղում. «...ննճեց Հա⌈մամ⌉ թա-գաւոր... Աղվանից...»[211]:

Բ. Ուլուբաբյանը մեջբերում է արևելագետ Ա. Կրիմսկու այն կարծիքը, թե «Գրիգոր» (որ նշանակում է «արթուն», «զգոն», «հոգատար») մկրտչական անունը թարգմանվել է արաբերեն «Համամի» հետ, որն ունի նույն արմատը՝ լինել զգոն, հոգատար»[212]:

Իսկապես արաբերենում ունենք همام («Համմամ») ձև, որը նշանակում է «զգոն», «անխոնջ», «անդուլ»: Կա նաև هُمام («Հոմամ»)՝ «մեծահոգի», «բարեհոգի», «բարեպաշտ», որի առաջին վանկի ձայնավորն արտաբերման պահին արտասանվում է «ա», «ը»:

Բայց կա նաև կոշտ բաղաձայնով սկսվող حمام («Համամ»), որը թարգմանվում է «աղավնի»:

Աղավնին՝ Սուրբ Հոգու զգալի նշանը, շատ ժողովուրդների մոտ անմեղության, խաղաղասիրության, բարեպաշտության խորհրդանիշն է: Հենց Համամ թագավորն է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին ազատել արաբական գերությունից 894 թվականին: Արդյո՞ք այստեղից չի կնքվել Համամ արաբական անունը: Պատմիչը հաղորդում է, որ «... Գրիգոր չինէ զՀաւախաղացին բերդն և այն կողմ ձգէ զձեռն իւր իշխանութեանն»[213]: Արդյոք Գրիգորն իր մականունո՞վ չի անվանել իր իսկ կառուցած ամրոցը: Զէ՞ որ «հաւ» կամ «հաւք» նշանակում է «թռչուն» ընդհանրապես[214]:

Թռչունի հետ կապված անձնանունների նրա հետնորդների մոտ հանդիպում ենք XIII դարի սկզբների Արցախ-Խաչենի արձանագրություններում, որտեղ արդեն օգտագործվում է «սակռ» (صقر) արաբերեն ձևը, որը հայերեն թարգմանությամբ նշանակում է «բազե»[215]:

---

[211] Դիվան, պր. V, էջ 151:

[212] **Բ. Ուլուբաբյան,** նույն տեղում:

[213] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 340:

[214] Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ԳԱ հրատ., հ. 3-րդ, Երևան, 1974, էջ 308, 314:

[215] Թռչունի հետ առնչվող նաև հատուկ անունների ու տեղանունների ենք հանդիպում Արցախում՝ Կաչաղակաբերդ, Աղավնո գետ, Կատարո վանք: Ի դեպ, «Лачын»-ը (Լաչին) թուրքերեն նույնպես «բազե» է նշանակում: «Հաւ» նաև նշանակում է «նախնի», օրինակ՝ «Հաւուց թառ», «Հաւապտուկ», ինչպես ընդունված է կարծել: Սակայն վիճահարույց հարց է, թե այս տեղանունները «նախնիի» հետ կապ ունեն, թե՞ «թռչունի»:

Իսկ նրա տոհմն էլ այդ ժամանակաշրջանում ընդունված է կոչել Վախտանգյան-Սակոյան:

Գրիգոր-Համամի նույնության հաստատումն է նաև Տաթևի 906 թ. վավերագիրը: Այստեղ Աղվանքի իշխանների շարքում առաջինը հիշատակվում է Գրիգորը[216]: Նախ, Գրիգորը պաշտոնական փաստաթղթում, անշուշտ, պետք է հանդես գար իր մկրտության անունով և երկրորդ՝ ո՞վ կհանդգներ ամենայն հայոց արքա Սմբատ Ա Բագրատունու մոտ իր անձը թագավոր կոչելու: Նրանք թագավորներ էին իրենց տիրույթներում ու արաբների համար, իսկ հայոց արքայի մոտ՝ սոսկ իշխաններ: Ի դեպ, այդ անորոշությանը վերջ տալու նպատակով, հետագայում, ինչպես վերևում նշել ենք, Աշոտ Բ Երկաթից սկսած, հենց իրենք արաբները Բագրատունի թագավորներին ճանաչում էին որպես «շահանշահեր»՝ արքայից արքաներ:

Արցախի Մեծիրանից գավառի տիրույթների տերն էր Առանշահիկյան տոհմի մեկ այլ ներկայացուցիչ, Սահլի մյուս որդի Հովհաննեսը, որի հիշատակությունը թեմակալ եպիսկոպոս Սողոմոնը վավերացրել է այժմյան Մարտակերտի շրջանի Ս. Հակոբ վանքի՝ մեզ արդեն հայտնի խաչքարի պատվանդանին. «:ՅԲ: (853) թուականուն թեանս Հայոց, ի ժամանակս Յովանիսի, Աղվանից իշխանի...»[217]:

Որոշ հայագետներ այս Հովհաննեսին են նույնացնում Աղվանից Համամ թագավորի հետ՝ համարելով նրան Բագրատունի, հենվելով ոչ ժամանակամերձ պատմիչ Մխիթար Այրիվանեցու հետևյալ կասկածելի հիշատակության վրա. «Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի»[218], որը փաստացիորեն հերքում է արցախագետ-պատմաբան Բ. Ուլուբաբյանը[219]:

---

[216] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան,** էջ 234:
[217] Դիվան, պր. V, էջ 12:
[218] **Մխիթար Այրիվանեցի,** էջ 55:
[219] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** նշվ. աշխ., էջ 78-80:

6. ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ: ՍՅՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՍՄԲԱՏԸ ՍԱՀԱԿԻ՞ ՈՐԴԻՆ Է, ԹԵ՞ ՎԱՍԱԿԻ

Տաթևի մեծ տաճարի նավակատիքի առիթով հավաքված երկրի մեծամեծների ժողովը մեր ժողովրդի միաբանության վկայությունն է, որտեղ հայոց թագավորի շուրջ համախմբվել էին բոլոր գլխավոր իշխանները: Դա, բնականաբար, չէր կարող վրիպել արաբների ուշադրությունից: Ինչպես ամեն մի կործանվող կայսրություն, այնպես էլ արաբական խալիֆայությունը, ձգտելով իր մեծապետական ազդեցությունը պահպանել նորանկախ պետություններում, թշնամանք էր սերմանում հարևան ազգերի միջև կամ նույն ժողովրդի մեջ՝ թագ ուղարկելով ամեն մի նահանգի գահերեց իշխանի: Եվ պատահական չէ, որ Տաթևի ժողովից ընդամենը երկու տարի հետո՝ 908 թ. արաբների հրահրմամբ թագադիր է լինում նաև վավերագրի արքայական հաստատման վկա, Վասպուրականի գահերեց իշխան Գագիկ Արծրունին: «...նախ՝ Արծրունիքն, և թագ կապեցին ընդդէմ Սմբատայ՝ Հայոց թագաւորի, թագ կապեաց և Ատր.Ներսեհ՝ Վրաց բդեաշխն, թագ կապեաց և Աղվանին Համամ[220]: Մեծարէ Ափշինն զՎասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել: Ապա ի նուազել տէրութեանն Բագրատունեաց, և ի զօրանալ ձեռինն իսմայէլականի՝ հատեալ, բարժանեալ եղեն ամենայն գահք գլխաւոր նախարարացն Վասպուրականին և Վրացին և Աղվանին և Զորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն և Վանանդայն որ Բասեանք կոչի»[221]: Սակայն դատելով Կեչուտի խաչքարի արձանագրությունից, որն ըստ Ե. Լալայանի հրատարակության զետեղվել է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի III պրակում և ունի հետևյալ բովանդակությունը. «Ի թագաւորութեան Վասակա. տր. Բաբգէն որդի Սիւնեաց իշխանին, հայոց թուականութեան որ :ՅԼԵ: (866) էր, ես Դաւիթ կանգնեցի

---

[220] *Համամը թագադրվել է ավելի վաղ՝ Աշոտ Ա Բագրատունու օրոք (885-890): Տե՛ս* ***Մովսես Կաղանկատվացի****, էջ 335: Օրբելյանը նույնպես նշում է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի (877-897)՝ գերությունից Համամի միջնորդությամբ ազատվելու փաստը (Տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 281):*

[221] ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 299:*

գխաչս վասն հոգւոյ...յաղաւթս յիշեցէք»[222], ինչից պետք է ենթադրել, որ Վասակը, հակառակ հայրենասեր պատմիչի դրվատանքին, նույնպես թագակապ իշխանավոր է եղել:

Համոզված ենք, որ արձանագրությունը ծանոթ չի եղել Ստեփանոս Օրբելյանին, այլապես նա ուրիշ կարծիք կունենար Վասակ Իշխանիկի մասին:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ Աշոտ Ա Բագրատունու գահ բարձրանալու գործում առանցքային դերակատարություն ունեցած Վասակ Սյունյաց իշխանը հանկարծ կենտրոնախույս նկրտում է դրսևորում՝ հռչակվելով թագավոր: Կարծում ենք՝ խնդիրը ծագել է այն բանից հետո, երբ Աշոտ Ա Բագրատունին Սյունյաց իշխանների մեջ առաջնայնության նախապատվությունը տվել է ոչ թե Վասակ Իշխանիկին, այլ Գրիգորի որդի Հրահատին, ով 881 թ. հիշատակվում է որպես Սյունյաց տեր, իշխանաց իշխան[223], ինչից ակնբախ է, որ նա էր երկրամասի գահերեցը:

Հ. Ութմազյանը պատմական աղբյուրների տեղեկություններից պարզել է, որ Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարիներին Վասակ Իշխանիկը փորձել է լքել հայոց արքային և անցել Ատրպատականի ամիր Ափշինի կողմը[224]:

Հարկ է նշել, որ իշխանաց իշխան Հրահատից հետո գահերեցությունը վերստին անցել է վայոցձորեցիներին՝ Վասակ Իշխանիկի տոհմին, որի ներկայացուցիչներն աստիճանաբար իրենց թե՛ իշխանական, թե՛ տարածքային ազդեցություններն են տարածում ողջ Սյունիքի վրա, ընդհուպ մինչև թագավորության հռչակում:

Ինչ վերաբերում է Կեչուտի խաչքարին, ապա անհրաժեշտ է ավելացնել, որ այն Ս. Բարխուդարյանի գործունեության շրջանում տեղում չի եղել, այլ հետագայում Գ.Գրիգորյանի ջանքերով հայտնաբերվել է, Արփա գետի հատակից հանվել ու տեղադրվել Ջերմուկի առողջարանի բակում: Դժբախտաբար, խաչքարի վերնամասը, որի վրա փորագրված է եղել արձանագրության սկզբնահատվածը, ջարդված է, իսկ կատարված լուսանկարում պարզորոշ ընթերցվում են մնացած տողերը:

---

[222] Դիվան, պր. III, էջ 21: Հմմտ. «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դդ. խաչքարերը», էջ 16:

[223] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 207:

[224] Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 294:

Թեև արտաքին ուժերի միջամտության հետևանքով նահանգներում ստեղծվում են ավատական քաղաքական կազմավորումներ, որոնք մատենավիմագրական աղբյուրներում կոչվում են թագավորություններ, իսկ գահերեցները՝ թագավորներ, սակայն հիմնականում ենթարկվում էին Բագրատունի արքայից արքաներին, վերջիններիս՝ հայոց անկախ պետության միասնականության պահպանությանն ուղղված ճկուն դիվանագիտության ու կոշտ քաղաքականության շնորհիվ:

Դեռևս X դարի սկզբներին հայոց Սմբատ Ա թագավորը ռազմական օժանդակության դիմաց Վասպուրականին էր շնորհել առևտրական կարևորագույն կենտրոն հանդիսացող Նախիջևանը, պատճառ դառնալով նրա տերերի՝ սյունեցիների ընդվզմանը կենտրոնի դեմ: Որոշ ժամանակ անց այն նորից վերադարձվել է Սյունիքին՝ այս անգամ էլ առաջացնելով վասպուրականցիների դժգոհությունը և առիթ տվել կենտրոնից նրանց անջատվելուն:

Ագուլիսի ձորում վիմագիր քարերից մեկի վրա ժամանակին Ար. Այվազյանը կարդացել է. «ՅՁԱ (932) թվականիս շինեցի եկեղեցիս Աշոտ Սինեաց իշխան»[225]: *Աշոտի ավագ որդու՝ Սմբատի կինը, կառուցելով Գնդեվանքի եկեղեցին, արձանագրում է.* «Ես Սոփիա տիկին, կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց եւ դուստր Գրիգոր Դերենիկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և արեւշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ...»[226]:

Գեղատեսիլ Վայոց ձոր անակ մատանու վրա Գնդեվանքը որպես թանկագին քար տեղադրող Սոփիա տիկնաց տիկինը, ինչպես ինքն է պատկերավոր ակնարկում, նույն տեղում մեկ այլ արձանագրությամբ հայտնում է. «Ես Սոփի, Սինեաց տիկին, Դերանկին դուստր, կին Սմբատա, որդի Աշոտի Սինեց իշխանի, շինեցի զեկեղեցիս...»[227]:

Գնդեվանքի այս երկու արձանագրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Նախիջևանի պատկանելության շուրջ ծագած հակասությունը փորձ է արվել հարթել նաև Սյունիքի և Վասպուրականի իշխանական տների միջև ամուսնախնամիական կապի հաստատմամբ: Խնամիության հաստատման միջոցով Հայաստանի առաջնակարգ իշխանական տները միմյանց կապելն ու կենտրոնին միացնելը՝ Աշոտ Ա դիվանագետի քաղաքական դասերից էր, որը

---

[225] ***Ար. Այվազյան,*** *Ագուլիս, Երևան, 1984, էջ 87:*
[226] *Վիմական տարեգիր, էջ 7-8, հմմտ. Դիվան, պր. III, էջ 13.:*
[227] *Դիվան, պր. III, նույն տեղում:*

ջանասիրությամբ կիրառեցին հետագա Բագրատունի թագավորները, և հայ իրականության մեջ լավագույնս յուրացրեց ամիրսպասալար Սարգիս Զաքարյանը:

Գագիկ Ա հզոր Բագրատունի թագավորը (990-1020) շարունակում էր ազգակցական կապերով ծայրամասերը կենտրոնին միացնելու ներքին ավանդական քաղաքականությունը: Այսպես՝ «ՆԼ (981) թուին. ես՝ Խուշուշ խաթունս, դուստր Գագկա, յազգեն Բագրատունեաց, կենակից Սենեքերիմ արքայի, շինեցի զսուրբ տաճարս...»[228]: *Գագիկ Ա-ը դեռևս թագավոր չէր, այդ իսկ պատճառով արձանագրած է պարզապես* «դուստր Գագկա, յազգեն Բագրատունեաց»: *Մյուս գործող անձը Սենեքերիմ Արծրունին է, որն անխոհեմաբար 1021 թ. Բյուզանդիային հանձնեց Վասպուրականը՝ այն փոխանակելով Սեբաստիայի հետ: Փոքր Հայքում մահկանացուն կնքելուց հետո նրա աճյունը տեղափոխվել է հայրենիք և ամփոփվել Վարագա Ս. Նշան վանքում.* «Այս է հանգիստ Սինեքերիմ թագաւորին»[229]: *Մատթեոս Ուռհայեցին նրա վախճանը դնում է 1029 թվականին*[230]:

Ինքը՝ Գագիկը, ամուսնացել է Սյունյաց Վասակ թագավորի դստեր հետ, որը հայտնի է իր բարձրաճաշակ կոթողների կերտմամբ: Անիի Մայր տաճարի արձանագրությունից իմանում ենք, որ «Ի ՆԾ (450) թ ը ու է՝ն հայոց, ՄԺԹ (219) թ ը ու ի ն՝ հոռոմոց ը ՅՂ՝ (380) ը ամին՝ դէբը, ի ժամանակս ածապատիւ... տն Սարգսի՝ Հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա՝ Հայոց եւ Վրաց Շահնշահի, ես՝ Կատրանիդէ, Հայոց թագուհի, դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի... հրամանաւ առն իմոյ Գագկա Շահանշահի շինեցի զսբ կաթողիկէս, զոր հիմնադրեալ մեծին Սմպատ, ... զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք նուէրք ինձ ի Քս եւ զարմից իմ եւ որդւոց Սմպատա, Աբասա եւ Աշոտո...»[231]:

---

[228] ***Ալ. Մանուչարյան,*** *Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, էջ 233:*

[229] *Վիմական տարեգիր, էջ 16:*

[230] *Տե՛ս* ***Մատթեոս Ուռհայեցի,*** *էջ 55:*

[231] *Դիվան, պր. I, էջ 35,* ***Ռ. Վարդանյան,*** *Անիի Մայր տաճարի արձանագրության համաժամանակյա տարեթվերը, ԼՀԳ, 2000, № 1, էջ 54-69: Ռ. Վարդանյանը ճիշտ է բացել վիմագրի առաջին տողի վերջնամասի երեք փակագրերը՝ միաժամանակ կռահելով հիջրայի (բնագրում ը դէբը՝ = անհավատ, հեթանոս – Ռ. Վ.) թվականի*

Գագիկ Ա-ը, հանուն Հայաստանի ամբողջականության ու միասնականության պահպանության, երկրի ներքաղաքական կյանքում որդեգրել էր ծայրամասերի՝ Սյունիքի, Արցախի, Գուգարքի չափազանց հզորացած թագավորությունների վրա ամենակոշտ, ընդհուպ մինչև ռազմական միջոցներով ազդելու, տիրույթներից զրկելու ու կենտրոնին վերաենթարկեցնելու գործելակերպ:

Սյունյաց թագավորությունը, որը հիմնադրել է Սմբատ Ա-ը (970-998), գոյատևել է ավելի քան երկու հարյուր տարի: Ստեփանոս Օրբելյանը փորձում է արդարացնել իր հայրենակցին՝ պատճառաբանելով Սյունիքի կտրվածությունը Անի-Այրարատից. «Եւ զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Զորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ...»[232]: Պակաս դեր չի խաղացել քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքով Վահան Ա Սյունի կաթողիկոսի (968-969) պաշտոնանկությունը: Սմբատ Սյունյաց իշխանի ինքնակամ թագավորելն ու Խորասանի սուլթանից թագ ստանալն առիթ տվեց ամենայն հայոց Գագիկ արքային՝ արշավանք կատարելու դեպի Սյունիք, գրավելու ու կենտրոնին միացնելու Վայոց ձորը, Ծղուկ գավառի մի մասը, Նախիջևանի Ճահուկը: Սյունիքի քաղաքական կենտրոնը Վայոց ձորից տեղափոխվում է դեպի հարավ՝ Բաղք, իր ազդեցությունը պահպանելով շրջակա գավառների վրա:

Այստեղ հարկ է կանգ առնել մի խնդրի քննարկման վրա. ո՞վ է իրականում Սմբատը, որդին Սահակի՞, թե՞ Վասակի[233]: Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատ Ա-ի (970-998)[234] ծագումնաբանության վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ վայոցձորեցի գահերեց Վասակ իշխանի մահից հետո «տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ,

---

շրջագրված լինելը, որը նա վերծանում է ՅՂԳ (393), տե՛ս **Ռ. Վարդանյան,** *նույն տեղում, էջ 54: Այդ արձանագրությունում ընդհանուր առմամբ օգտագործված է վեց զանազան թվագրություն (հայոց, փոքր հռոմեական, հիջրայի, արարչագործական, փրկչական, հայոց դարձի), որը մի խումբ գիտնականների մոտ տարակարծությունների տեղիք է տվել, տե՛ս* **Ռ. Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 54-69:*

[232] **Ստեփանոս Օրբելյան**, *էջ 299-300:*

[233] *Տե՛ս* **Աշ. Մանուչարյան,** *Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի, ԲԵՀ, 2014, № 1, էջ 22-30:*

[234] *Մի խումբ գիտնականներ Սյունիքի թագավորության հիմնադրումը դնում են 970 թ., ոմանք՝ 973 թ., իսկ Բ. Հարությունյանը՝ 987 թ. (տե՛ս* **Բ. Հարությունյան,** *Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, ԲԵՀ, 1969, № 1, էջ 22-30):*

գահերէց իշխանութեամբ»[235]: Ընդ որում, պատմիչը չի հայտնում, թե ինչպես է գահերեցությունը Վայոց ձորից անցել բուն Սյունիք, այն դեպքում, երբ Սյունյաց գահերեց իշխան Վասակն ուներ երկու որդի՝ Սմբատ և Գագիկ[236], որոնցից մեկն ու մեկը, ավելի հաճախ՝ ավագը, ըստ այն ժամանակվա ընդունված կարգի, պետք է հաջորդեր հորը: Պատմիչի վերը բերված հիշատակության կապակցությամբ Թ. Հակոբյանը գրում է, թե նա «որոշակի պատասխան չի տալիս այս հարցին, թե Վայոց ձորն ու Ճահուկը, որ բաժին էին ընկել Սմբատին, իսկ նրանցից հետո էլ՝ նրա որդի Վասակին, նույնպես անցան Սահակի որդի Սմբատին, թե վերջինս Վասակի մահից հետո, ձեռք բերելով գահերեց իշխանի պատիվը, շարունակեց իշխել միայն Ծղուկք, Բաղք և սրանց շուրջը գտնվող գավառների վրա, որոնք կազմում էին հոր՝ Սահակի սեփականությունը, իսկ նրա մահից հետո անցան իրեն»[237]:

Պատասխանը կշարունակի մնալ անորոշ, եթե չնշվի, որ չկա ոչ մի վիմագիր կամ այլ վավերագիր ուղղակի վկայություն, որտեղ հիշատակվի Սահակի որդի Սմբատ թագավոր:

Այսպես, Որոտնավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատուհանի պսակի վրա արձանագրված է.

ՇԻՆԵՑԱԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՆՊԱՏԱ Ի ՁԵՌՆ ՇԱՀԱՆԴԽՏՈ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅ[238]:

Ստեփանոս Օրբելյանն այդ եկեղեցու կառուցման ժամանակը համարում է հայոց 449 (+551=1000) թվականը[239]:

Հաբանդ գավառի Տեղ գյուղը «իւր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք» Տաթևի վանքին նվիրաբերելու 998 թ. վճռագրում, որը մոր՝ Շահանդուխտ թագուհու (Արցախ-Փառիսոսի տիրակալ Սահակ Սևադայի դստեր) հրամանով գրել է որդին՝ Վասակը, ինչպես նաև այդ նվիրատվությանը վերաբերող Սյունյաց եպիսկոպոսներ տեր Հակոբի պարտավորագրում և տեր Գրիգորի վա-

---

[235] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 299:
[236] Նույն տեղում, էջ 329:
[237] **Թ. Հակոբյան,** Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 62:
[238] «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 100: Այսուհետև՝ Դիվան, պր. II:
[239] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 302:

վերագրում Սմբատ թագավորը չի հիշատակվում իր հայրանունով՝ «որդի Սահակայ»[240]:

Ահա սրանք են Ստեփանոս Օրբելյանի՝ ուրիշի ուղղակի խոսքով հղած վկայությունները, որոնցում չի հիշատակվում Սմբատ թագավորի հոր անունը:

Ցավոք, այդ հարցը բաց է մնում նաև ժամանակի գործիչներից, դեպքերից, իրադարձություններից իրազեկ Ստեփանոս Տարոնեցու մոտ: Պատմիչը, խոսելով 989 թ. աբխազների թագավորի դեմ Սմբատ Բ Բագրատունու (977-990) գլխավորությամբ հայոց զորքերի՝ վրացիներին օգնության շտապելու մասին, նշում է, որ «միահաւաք լինէին» նաև «Սիւնեաց և Աղուանից իշխանքն»՝ առանց վերջիններիս անունները տալու ու նրանց արքաներ կոչելու, այն դեպքում, երբ այդ արշավանքին իր կարմրագեստ գնդով մասնակից մանուկ Աբասին (Կարս-Վանանդի՝ Կարուց Աբաս Բագրատունի արքա՝ 984-1029) թագավոր է կոչում[241]: Հայրենասեր պատմիչի դիրքորոշումը միանգամայն հասկանալի է: Նա «կողմնակից է Բագրատունյաց կենտրոնական իշխանության, հակառակորդ երկպառակություններին»[242]: Իսկ Աբասը, ով «գահ բարձրացավ Բագրատունյաց «ազգապետի»՝ շահանշահ Սմբատ Բ-ի հրամանով, իր 45-ամյա գահակալության ընթացքում խաղաղ և լոյալ փոխհարաբերությունների մեջ էր Անիի» տիրակալների հետ[243]: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն անգամ հայոց թագուհի Կատրանիդեի հորը՝ Սյունյաց Վասակ թագավորին (998-1040) կոչում է «Սիւնեաց իշխան»[244]:

Ինչ վերաբերում է Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկություններին, որոնցում Սյունիքի թագավորության հիմնադիր Սմբատը հիշատակվում է որպես որդի «Սահակայ», ապա դրանք բոլորն անուղղակի վկայություններ են[245]՝ գրված ազատ, պատմողական ոճով, առանց վիմագիր կամ մատենագիր աղբյուրների հղման, հակառակ նախորդ բնագրերի պարագայի: Մեկ դեպքում էլ նույն խնդրին վերաբերող երկու խումբ վկայությունների մեջ նկատվում է հակասություն: Այսպես, պատմիչը, խոսելով Տաթևի վանք Սյունյաց Սենե-

---

240 Տե՛ս նույն տեղում, էջ 291-293:
241 Տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի**, էջ 252-253:
242 ՀԺՊ, III, էջ 327:
243 Նույն տեղում, էջ 96-97:
244 **Ստեփանոս Տարոնեցի**, էջ 256:
245 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան,** էջ 299-300, 317, 328:

քերիմ թագավորի (1072/84-1094/96)[246] այցելության մասին, գրում է, որ Գրիգոր եպիսկոպոսը եկեղեցուց խլված Հարժիք[247], Բերդկանե-րեչի[248] և Ցուրա գետ[249] գյուղերը, որոնք գտնվում էին արքայի ազատներ, մեծ իշխան Մահևանի և Գևորգի տնօրինության ներքո, փորձում է վերադարձնել իրենց նախկին կարգավիճակին: Այդ նպա-տակով «ծանուցանէ եպիսկոպոսն թագաւորին զգրկանքն եկեղեցւոյն. և առաջի արկանէ զհին նամականին, որ տուեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ, զոր ընթերցեալ նորին՝ զարհուրեցաւ ի սոսկալի նզովիցն. զի երեք անգամ հաստատած էին այս գիւղօրայքս ի սուրբ աթոռն. առաջին՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Հայոց. և յԱշոտոյ՝ մեծ իշխանէն Սիւնեաց. և Բերդկաներեչի գան-ձագին էր Տէր Դաւթի, երկրորդ՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Սիւնեաց՝ որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Բա-ղացւոյ, և ի Վասակայ՝ որդւոյ նորին. երրորդ Հասան ոմն իշխան՝ որդի Կորայ քրդին, յազատաց մեծ իշխանաց իշխանին Վասակայ, որ էր իշխեցող և Վրաց, որդւոյ մեծին Սմբատայ՝ Սիւնեաց գահերեց իշխանի, գնոյ առեալ էր զգիւղն Հարժիս և ի հայրենեաց փոխան տուեալ: Սա հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց Սմբատայ և Գագկայ տայ զայս գիւղ ազատ յամենայն հարկաց ի վանսն Տա-թևոյ»[250]:

Այս ընդարձակ մեջբերման մեջ մեր խնդրի համար կարևոր է հատկապես երկրորդ անգամվա նվիրատվությունը՝ կատարված «ի Սմբատայ՝ թագաւորէ Սիւնեաց՝ որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Բաղացւոյ, և ի Վասակայ՝ որդւոյ նորին»[251] հատվածը, որը, փաստորեն, չի համապատասխանում նվիրատվու-թյան՝ պատմիչի արտագրածին.

---

[246] Սենեքերիմի թագավոր դառնալու տարեթվի հարցում հակառակ պատմագիտո-րեն ընդունված 1084 թ.՝ Գ.Գրիգորյանը վիմագիր սկզբնաղբյուրի հիմամբ կար-ծում է, որ նա Սյունյաց գահին է բազմել 1072 թ. և բանակցությունների ժամա-նակ դավադրաբար սպանվել 1094 կամ 1096 թվականին (տե՛ս **Գ.Գրիգորյան**, Վա-հանավանք, էջ 59, 63):

[247] Հարժիքը ներկայիս Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Հարժիս գյուղն է:

[248] Ըստ հարկացուցակի՝ Բերդկաներեչին գտնվել է Ծղուկ (այժմյան Սիսիան) գա-վառում:

[249] Ցուրա գետը, որը հայտնի է նաև Ցուրաբերդ անունով այժմյան Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Սվարանց գյուղն է (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան,** Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, էջ 475, ծանոթ. № 725):

[250] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 328-329:

[251] Նույն տեղում:

«Յանուն Աստուծոյ վասն արարեալ հաստատութեան առաւել առաջին գրոյն որ մեր հարցն տուեալ էին աստուածապատիւ և հոգևոր եպիսկոպոսաց Սիւնեաց, ես Սմբատ՝ որդի տեառն Սահակայ, ետու զՀաժիս և զԾածարդ[252] որ սակաւ մի յափշտակեալ էին ի տանէս, յաստուածապատիւ և հոգևոր Տէրս Վահան և յաստուածաբնակ, ի լուսաճեմ եկեղեցիս Տաթևոյ յայս պայմանիս զոր զառաջնոցն յիշատակն նորոգեն. և զիս ևս յիշեն ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս իւրեանց և մեր մեղացն թողութիւն խնդրեն: Եւ յետ մեր մի ոք այլ յանդ գնեսցէ յափշտակել զսոսա ի տանէն, մի ի մերոց և մի յօտարաց. և եթէ յանդգնին՝ յԱստուծոյ ամենակալ բերանէն ընդ սատանայի և ընդ օձին նզովեալ եղիցին. և մասն և բաժին ընդ Յուդայի և Կայենի և Արիոսի եղիցի: Գրեցաք և կնքեցաք մերով մատանեաւս ի թուականիս 412»[253]:

Երկու՝ անուղղակի և ուղղակի վկայությունների միջև անհամապատասխանությունը, նախ և առաջ, Սմբատի կարգավիճակի հարցում է. առաջինում նա թագավոր է, իսկ երկրորդում՝ բնագրում, սոսկ իշխան (հասկանալի է, որ դեռևս թագավոր չէր հռչակվել):

Ուշադրության է արժանի այն փաստը, որ կտակագրում չի հիշատակվում որդին՝ Վասակը, ինչպես առաջինում է:

Մեզ համար առանձնակի կարևորություն ունի նաև Հարժիս գյուղի երրորդ նվիրատվությունը, որը կատարվել է «հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց Սմբատայ և Գագկայ»[254]: Ընդ որում, ընծայագրի այդ հատվածում Վասակը հիշատակվում է որպես «մեծ իշխանաց իշխան, որ էր իշխեցող և Վրաց»[255] տիտղոսներով:

Հ. Ութմազյանը Վասակ իշխանի մահը դնում է 960-ական թվականներին[256]:

Իսկ ըստ Բ. Հարությունյանի՝ Վասակը վախճանվել է 976-980 թթ.[257], որին էլ Սյունյաց գահերեցության պաշտոնում հաջորդել է ավագ որդին՝ Սմբատը, այլ ոչ նրա հորեղբայր Սահակի որդի Սմբատը, ինչպես հաղորդում է պատմիչը: Այդ մասին մեզ հուշում է

---

[252] Ըստ հարկացուցակի՝ Ծածարդը գտնվել է Ծղուկ գավառում (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան,** էջ 509):
[253] Նույն տեղում, էջ 288:
[254] Նույն տեղում, էջ 329:
[255] Նույն տեղում, էջ 328:
[256] Տե՛ս **Հ. Ութմազյան,** Սյունիքը IX-X դարերում, էջ 304:
[257] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, էջ 150:

Վայոց ձորի Կարմրաշեն գյուղից արևելք՝ ավերակ ջրաղացի մոտ գտնվող խաչքարի ճակատային մասի հետևյալ արձանագրությունը.

Թ լՎ ՝ ՆԼԹ՝ (990) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՆՊԱՏԱ/ ՈՐԴՈ ՎԱՍԱԿԱ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՆՇԱՆՍ Ի ՁԵՌՆ ԳՐԳՈՐԿԱ / ՅԻՇԵԱՅ ՔՍ[258]՝



Գրչագիր[259]

Լուսանկար[260]

---

[258] *Դիվան, պր. III, էջ 41:*
[259] *Նույն տեղում, էջ 42:*
[260] *Նույն տեղում, լուսանկար 29:*

Խաչքարի թիկունքին վերոհիշյալ Գրիգորիկի կողմից կատարված է մեկ ուրիշ արձանագրություն, որտեղ նա ասում է, որ ինքը բազում աշխատությամբ գտել է այդ արձանը և մեծ հույսով բերել ու կանգնեցրել է եկեղեցու դռան մոտ[261]:

Այս կոթողի մասին Ս. Բարխուդարյանը գրում է. «Խաչքարն իր տեսակի հնագույն օրինակների ոճով է, պարզ և արտահայտիչ քանդակներով:

Երկարությունը 3.66 մետր է, լայնությունը՝ 90 սմ, ներքևում ավելի նեղանում է: Այժմ այն ընկած է և թիկունքի արձանագրությունը ծածկված: Մենք այն կանգուն ենք տեսել 1932 թ. և նկարել»[262]:

Հարկ է նշել, որ մինչև Ս. Բարխուդարյանը խաչքարի արձանագրությունները գրեթե նույնությամբ հրատարակել են Ս. Ջալալյանցը[263], Քաջբերունին[264] և Ղ. Ալիշանը[265]:

Խաչքարի ճակատային արձանագրության կապակցությամբ Ղ. Ալիշանը գրում է, որ ՆՀԹ (990) «Թուականն պատշաճի Ա Սմբատայ թագաւորի Սիւնեաց, Վասակայ որդի լինելն՝ Թոռին նորա Բ Սմբատայ, ըստ պատմչին բանից, եթէ ոչ վրիպիմ»[266]:

Այդ արձանագրությունը, ինչպես նկատել է Բ. Հարությունյանը, գրվել է Գագիկ Ա Շահանշահի (990-1020) դեպի Սյունիք 990-992 թթ. արշավանքի նախօրեին[267]: Այդ պատժիչ արշավանքի պատճառով Սյունյաց թագավորությունը կորցրեց Վայոց ձոր, Ճահուկ գավառները և այլ տարածքներ: Իսկ «արդյունքն այն եղավ, որ Վայոց ձորը, Ծղուկքի մի մասը, Աղահեճքը, Ճահուկը քաղաքական և տնտեսական սերտ կապերով կապվեցին Այրարատի և Բագրատունյաց թագավորության այլ մարզերի հետ: Դրա հետևանքով խիստ մեծացավ Դվին-Պարտավ ճանապարհի նշանակությունը: Այս ճանապարհը, որն անցնում էր Վայոց ձորով, վերածվեց տարանցիկ

---

[261] Տե՛ս նույն տեղում, էջ 41: Ս. Բարխուդարյանը գրում է. «Այդտեղ մի փոքր և ժայռոտ բլրի վրա պահպանվել են մի փոքրիկ եկեղեցու ավերակները...» (նույն տեղում):

[262] Նույն տեղում, էջ 42:

[263] Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրությամբ Սարգիս Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրեթի և այլոց», մասն Բ, Տփխիս, 1858, էջ 137:

[264] Տե՛ս **Քաջբերունի** (բժ. Գաբրիել Յովհաննիսեան), ճանապարհորդական նկատողութիւնք, «Արարատ», 1889, էջ 283:

[265] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսական, Երևան, 2009, էջ 110:

[266] Նույն տեղում:

[267] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 120:

առևտրի խոշոր ուղու: Սյունյաց տերը այժմ չէր էլ մտածում հանդես գալ Հայոց թագավորի դեմ, որովհետև Գագիկ Ա-ը, տիրանալով Դվինին և Արաքսի հովտին, աքցանի մեջ էր վերցրել Սյունյաց թագավորի տիրույթները»[268]:

Ըստ Թ. Հակոբյանի՝ «Գագիկ Ա-ը Վայոց ձորը և նրան սահմանակից Ճահուկը գրավել է նախքան 1003 թվականը, որովհետև Ասողիկն իր պատմությունը վերջացնում է 1003 թ. դեպքերով, երբ Գագիկը բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Փառիսոսի և Խաչենի կողմերում: Սրանց գրավումն անհնար կլիներ, եթե Գագիկը նախօրոք իր ձեռքը չվերցներ դեպի Փառիսոս ու Խաչեն տանող ճանապարհի վրա գտնվող Վայոց ձորը, նրա սահմանակից Ճահուկը, Ծղուկքի հյուսիսային մասը և Աղահեճք գավառը»[269]:

Մեր կարծիքով, Գագիկ Ա-ի արշավանքը դեպի Արցախ տեղի է ունեցել 997-1000 թվականների միջև, քանի որ Դիզակի իշխան Գագիկը, եթե ԼՂՀ Մարտունու շրջանի Ջողտ Պռավածառի կամ Բարևածառ կոչվող վանքի 997 թ. խաչքարի վրա հիշատակվում է որպես «պետութեան տեառն... Աղուանից իշխանաց իշխան» տիտղոսով[270], ապա Հադրութի շրջանի Տումի գյուղի Կարմիր եղցի եկեղեցու 1000 թ. արձանագրության մեջ հանդես է գալիս իբրև Աղվանից «թագաւոր»[271]: Դժվար չէ նկատել, որ Գագիկ Ա Բագրատունին Փառիսոսի թագավորների կենտրոնախույս նկրտումներն ի դերև դարձնելուց հետո Արցախում նախապատվությունը տվել է Գագիկ Դիզակեցուն:

Իսկ այդ պատժիչ արշավանքը Գագիկ Ա-ը սկսել էր Վայոց ձորի գրավմամբ, որի Եղեգիս ավանում IX դարից հաստատվել էր Սյունյաց վարչական-քաղաքական կենտրոնը՝ ռազմական հենակետ դարձնելով հյուսիսում ձգվող, դեռևս V դարից էլ առաջ կառուցված անառիկ ամրոցը, որը Սմբատաբերդ է կոչվում X դարում ապրած Սյունյաց Սմբատ իշխանի անունով[272]: Անշուշտ, Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատ Ա-ը ամրացրել է հնամենի այդ բերդը:

Եղեգիս ավանից 6-7 կմ դեպի հյուսիս-արևելք, բարձրադիր սարավանդի վրա վեր է խոյանում Սյունյաց գահերեցների հոգևոր

---

[268] *Նույն տեղում:*
[269] ***Թ. Հակոբյան,*** *նշվ. աշխ., էջ 63:*
[270] *Տե՛ս Դիվան, պր. V, էջ 169:*
[271] *Նույն տեղում, էջ 173:*
[272] *Տե՛ս* ***Հ. Եղիազարյան,*** *Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 52:*

կենտրոններից մեկը՝ Ցաղաց քար վանքը: Մեր խնդրի վրա կարող էին լույս սփռել X դարի վերջին քառորդով թվագրվող այն հինգ խաչքարերը, որոնք ի թիվս ութ տասնյակ վիմագրերի, հայտնաբերվել են Ցաղաց քարում հնագետ Հ. Մելքոնյանի իրականացրած պեղումների ընթացքում[273]: Ցավոք, խաչքարագործ վարպետները բավարարվել են միայն իրենց հիասքանչ գործերի կերտման թվականները փորագրելով՝ 977-988 թթ.: Մինչդեռ գրվածքով մի փոքր ավելի ընդլայնվելու դեպքում կհաստատվեր կամ կհերքվեր Կարմրաշենի 990 թ. հիշատակագրության հավաստիությունը: Այնուհանդերձ, հիմք ընդունելով Կարմրաշենի արձանագրությունը, պետք է ենթադրել, որ Գագիկ Ա Շահանշահից պարտված Սյունյաց Սմբատ Ա թագավորը նահանջել է բուն Սյունիք, դեպի Հաբանդ, որտեղ էլ մահանալով (երևի 998 թ.)՝ թաղվել է Տաթևի վանքում:

Սմբատից հետո Սյունյաց գահ բարձրացած որդին՝ Վասակը, թագավորության մայրաքաղաք է հռչակում Կապան քաղաքը[274], որը պաշտպանված էր անառիկ Բաղաբերդ ամրոցով:

Սյունիքը կենտրոնին կապելու նպատակով, ինչպես ասել ենք, Գագիկ Ա-ը կնության էր առել Վասակ Ա-ի դստերը՝ Կատրանիդեին[275], «որ և չինեաց զսխրատեսիլն և զհրաշաձև եկեղեցին ի յԱնի զմեծ կաթողիկէն»[276]: Շինարարական արձանագրությունը վավերացված է Անիի Մայր տաճարի հարավային պատի արտաքին մասի արևմտյան անկյան մոտ[277]:

Հ. Աճառյանի պրպտումների համաձայն՝ Մատթեոս Ուռհայեցին (XI-XII դդ.) Կատրանիդեին հռչակում է վրաց Գեորգի թագավորի դուստր, Վարդան Արևելցին (XIII դ.) նրան կարծում է Սյունյաց

---

[273] Տե՛ս **Ց. Մելքոնեան,** Նորայայտ արձանագրութիւններ Ցաղաց քար վանքից, ՀԱ, Վիեննա, 1996, 1-12, էջ 70-71, 81:

[274] Սյունյաց թագավորության մայրաքաղաքի հարցում, ինչպես նկատել է Թ. Հակոբյանը, Ղ. Ալիշանը հայտնում է երկու հակադիր կարծիք. ա) այն սկզբում գտնվում էր Ծղուկքի (երևի նկատի ունի Շաղատը, որը Սյունյաց նախարարության վարչական կենտրոնն էր վաղ միջնադարում) և Վայոց ձորի կողմերում, իսկ հետո հաստատվեց Զորքում, և հայտնի չէ, թե երբ է տեղի ունեցել այդ փոխադրումը (տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 290), բ) թագավորանիստը սկզբից ևեթ հաստատվել է Կապան քաղաքում, քանի որ առաջին թագավոր Սմբատն ի սկզբանե տիրում էր հայրական Ծղուկ գավառում, չնայած հետազոտողները ենթադրաբար ավելացնում են նաև Բաղք և Զորք գավառները, որտեղ իշխում էին Զաքիկյանները (նույն տեղում, էջ 17): Թ. Հակոբյանը երկրորդ կարծիքի կողմնակից է (տե՛ս **Թ. Հակոբյան,** Սյունիքի թագավորությունը, էջ 124-126), մենք՝ առաջինի:

[275] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 300-303:

[276] Նույն տեղում, էջ 300:

[277] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 35:

Սահակ արքայի աղջիկ, մինչդեռ Սյունիքում այդպիսի անունով թագակալ տիրակալ չի եղել, իսկ վրացական աղբյուրները հայոց թագուհուն կոչում են բյուզանդական արքայադուստր[278]*:*

Բոլոր դեպքերում պատմիչները ծանոթ չեն եղել Անիի Մայր տաճարի շինարարական արձանագրությանը: Իսկ ինչ վերաբերում է Կատրանիդե անվան ստուգաբանությանը, ապա այն անհայտ է մեծ լեզվաբանին[279]*:*

Մ. Օրմանյանը տեղին նկատել է, որ վկայագրում թագուհու անունը «Կատրանիդէ գրուած է եւ ոչ Կատրամիդէ, ինչպէս ունին բոլոր գրչագիրները»[280]*:*

Եթե ոչ Կատրանիդեն, ապա ո՞վ կարող էր իմանալ իր անվան իմաստը, որը, ըստ հայր Անդրանիկ Այվազյանի բանավոր կարծիքի, ստուգաբանվում է արաբերեն قطر *(կղատր՝* ***կաթիլ****)* + ندا *(նադա՝* ***ցող****)* = *Ցողի կաթիլ: Հայերենում ունենք զուգահեռ Ցողիկ անձնանունը:*

Ամփոփելով նշենք, որ բնավ նպատակ չենք ունեցել կասկածի տակ դնել մեծ հայրենասեր Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունները Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատի ծագումնաբանության վերաբերյալ, պարզապես նկատել ենք այն անհամապատասխանությունը, որ առկա է տվյալ պահի անմիջական դրոշմ հանդիսացող վիմագրի հիշատակության ու ժամանակով հեռու պատմիչի (XIII դ.) հաղորդածի միջև և փորձել ենք խորանալ այդ հակասության մեջ: Նաև հավելենք, որ ուշադրության արժանի է այն փաստը ևս, որ Սմբատ արքայի թագաժառանգ որդին կոչվում է ոչ թե Սահակ, այլ՝ Վասակ:

Հանուն պետականության միասնականության պատժվում է նաև Արշակունիների ժամանակների Գուգարքի բդեշխության օրինակով ու Հայաստանի հյուսիսարևելյան սահմանների անվտանգության նպատակով դեռևս Աշոտ Գ Ողորմածի նախաձեռնությամբ ստեղծված Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության տիրակալ Դավիթ Ա Բագրատունին (996-1046), որն ընդարձակելով ու ամ-

---

[278] *Տե՛ս* ***Հ. Աճառյան,*** *Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 582: Նաև՝* ***Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան,*** *Սյունիքի պատմություն, Երևան, 2001, էջ 71:* ***Մատթեոս Ուռհայեցի****, Ժամանակագրութիւն, էջ 14:* ***Տ. Սահակյան,*** *Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, ՊԲՀ, 1966, № 3, էջ 224:* ***Վարդան,*** *էջ 90:*

[279] *Տե՛ս* ***Հ.Աճառյան,*** *նշվ. աշխ., նույն տեղում:*

[280] ***Մ. Օրմանյան,*** *Ազգապատում, Ա, ս. Էջմիածին, 2001, էջ 1358:*

բպնդելով իր տիրույթի սահմաններն ի հաշիվ, բարեբախտաբար, Գանձակի Շադդադյան ամիրայության ու, դժբախտաբար, Փառիսոսի տերության, որի համար նա կոչվել է Աղվանից թագավոր, փորձ է կատարում անջատվել Անիի ազգակից շահանշահերի գերիշխանությունից՝ իրեն «ինքնակալ արքա» հռչակելով: Դա, բնականաբար, չէր կարող անարձագանք մնալ: Գագիկ Ա Շահանշահը, ճնշում գործադրելով Դավթի վրա, զրկում է նրան որոշ տիրույթներից: Այդ պատճառով էլ, վերջինս աղբյուրներում, օրինակ՝ Հաղբատի Ս. Նշանի վիմագրում, սկսում է «Անհողին» մականվել. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի Անհողինի Գուրգենա որդւոյ Բագրատունւոյ թագաւորին...»[281]:

Ցավոք, հայոց պետության միասնականության համար Գագիկ Ա-ի գործադրած ջանքերը ոչ միայն չամրապնդվեցին նրա հաջորդների կողմից, այլև նրանց ապաշնորհ քաղաքականության հետևանքը հանդիսացավ Բագրատունյաց թագավորության անկումն ու անկախության կորուստը:

[281] *Դիվան, պր. IX, էջ 246:*

7. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԱՍՊԵՏ. *Պատմագիտության մեջ ամրագրված է այն տեսակետը, թե «Բագրատունյաց թագավորության մեջ թագադիր ասպետի պաշտոնը (որն Արշակունյաց շրջանում հենց Բագրատունիներն էին վարում), բացակայում էր երևի այն պատճառով, որ այդ ժամանակաշրջանում հայոց կաթողիկոսն էր թագադրման ժամանակ թագը դնում նորընծա տիրակալի գլխին»*[282]*:*

Սակայն հակառակն է վկայում նորահայտ վիմագիր հիշատակությունը: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրագիտական արշավախումբը, 2004 թ. Շիրակի մարզում հավաքչական աշխատանքներ իրականացնելիս, Մարմաշեն գյուղից մոտ 1 կմ հարավ ընկած Խաչի ձոր կոչվող հնավայրում պեղումներով բացված եկեղեցու տարածքում գտավ և ընթերցեց (Գ.Գ. Սարգսյան, Աշ. Մանուչարյան) ստորև ներկայացվող ութ տողանոց արձանագրությունը[283]*: Ցավոք, այն թերի է և նախապես ընդարձակ արձանագրության մաս է կազմել:*

Լուսանկար

---

[282] *ՀԺՊ, III, էջ 272:*

[283] *Եկեղեցին և արձանագրության հատվածը հայտնաբերել է հնագետ Ս. Հարությունյանը 1970-ական թթ. այդտեղ իրականացրած պեղումների ընթացքում:*



Գրչագիր

ՐՅԱՆՈՒՆ... ՈՒԹ՝ Ե Ր Ա՝Ն ԵՒ ԻՄ Ր ՎՃ՝ ՌԵԼՈՅՆ ՇԻ Ր ՆԵՅԻ՝

... / ՎԱՆՔ. ԻՆՁ ՎԱՍԱԿԱ ՈՐ ՀԱՐԼԱԼ ՎԱՍՏԱԿԱԻ՝ ...

... / Ր ՈՎ Ի ԱԻՏ՝ ԱՐԱՅ, ՈՎ Ի ՀԱՅՐԵՆԵԱՅՍ Ր ԽԱՓԱՆԵԼ

ՀԱՆԴ՝ ԳՆԷ ԿԱՄ ԶՏՈՂ ՈՐՄԻ ՎԱՆԱՅՍ Ր ԶՆԶԵԼ

ՓՈՐՁԷ, ԴԱՏԻ ԱՄԵՆԱ՝ / ԿԱԼ ԲԱՆԻՆ ԱՅ ԵՒ ՅԺԸ (318)-

ԻՅՆ Ե Ր ՂԻՅԻ ՆԶՈՎԵԱԼ ԵՒ ԲԱԺԻՆ Զ՛ՅՈՒԴԱՅԻՆ

ԱՌՅ՝ Է, ԻՍԿ ԿԱՏԱՐԻՁՔ ԳՐՈՅՍ ԱԻՐ Ր ՀՆԻՆ ԱՅ՝.

Ր ՀՐԱՄԱՆԱԻ ՎԱՍԱԿԱ՝

ՈՐԴԻՈՅՆ ԳՐԻԳՈ՝/Ր Ա ՀԱՅՈՅ ԱՍՊԵՏԻ ԿԱՆԳ Ր ՆԵՅԻ

ԶԱՐՁԱՆՍ /. ՈՐՔ ԿԱՐԴ՝ /ԱՅՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՅ Ր ԵՔ՝...[284]

Վերծանություն

Արձանագրությունը շինարարական-նվիրատվական բնույթի է: Պահպանված տողերից իմանում ենք, որ Վասակ անունով մեկը «իր արդար վաստակաւ» խաչի ձորում հիմնադրել է վանք, հօգուտ նրա կատարել նվիրատվություններ, սահմանել եկեղեցու ունեցվածքը և դրա անձեռնմխելիությունը հավերժացրել ըստ վիմագրերում ըն-

[284] *Վերծանությունը կատարվել է հայկական վիմագրերում լայն տարածում գտած բանաձևային համընդհանրությունների հիման վրա: Արձանագրության վերջին երկու տողը վավերացված է լիազորված անձի կողմից:*

դունված կարգի՝ անեծքով ու օրհնանքով բանաձևված վճռով: Փոքագրության տառաձևերն ու լեզուն հուշում են, որ արձանագրությունը X-XI դարերի է: Այդ կողմերում տվյալ ժամանակաշրջանում իշխում էին Պահլավունիները: Նրանց իշխանատոհմում Վասակ անունով հայտնի է Գրիգոր Մագիստրոսի հայրը՝ Հոլում հորջորջվողը, որը զոհվել է 1021 թվականին: Նա, ինչպես հայտնի է, Բջնի ամրոցի տերն էր: Պատմական մի շարք աղբյուրներում Վասակ Հոլումը հանդես է գալիս «իշխանաց իշխան» տիտղոսով: Այդ բարձր պատիվը Բագրատունի թագավորների օրոք կրել են սպարապետներն ու մարզպանները, որոնք պետության ծաղկման շրջանից հանդիսանում էին Պահլավունյաց տոհմի ականավոր ներկայացուցիչները:

Նորահայտ այս վիմագիր հիշատակությունից հետևում է, որ Վասակ Բջնեցին որպես «Հայոց ասպետ» է արժանացել «իշխանաց իշխան» կոչմանը:

Ի պաշտոնե արքունիքին, նաև եղբորը՝ սպարապետ Վահրամին մոտ լինելու հանգամանքն է, անշուշտ, պատճառ հանդիսացել Վասակ Պահլավունուն՝ Շիրակի այդ կողմերում տիրույթներ ունենալուն: Նա, նաև հետևելով իր արյունակցի եկեղեցաշեն գործունեությանը Մարմաշենում, ձեռնամուխ է եղել հարևանությամբ վանքի հիմնադրմանը: Բացառված չէ, որ նրա տնօրինությանը հանձնված լիներ մերձակայքում գտնվող Տիրաշեն ամրոցը, որը «Վահրամաբերդի հետ միասին հյուսիսից պաշտպանում էր Անի մայրաքաղաքը»[285]:

Այն, որ հիշատակված «Հայոց ասպետ»-ը Վասակ Հոլումն է, հաստատվում է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից Ռ. Մաթևոսյանի հղած հետևյալ արժեքավոր տեղեկությամբ. Հովհաննես- Սմբատ թագավորի մահից հետո (1042) «ամենայն նախարարքն Հայոց» հավաքվեցին կաթողիկոս Պետրոս Գետադարձի մոտ և օծեցին Գագիկ Կրտսերին թագավոր «Հրամանաւ մեծ իշխանին... մեծն Մարցէն.. սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց»[286]:

«Մեծն Մարցէն», ըստ Ռ. Մաթևոսյանի, Գրիգոր Մագիստրոսն է[287]: Ակնհայտ է, որ վերջինս կատարել է հորից ժառանգած թագա-

---

[285] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 103:

[286] **Մատթեոս Ուռհայեցի,** էջ 96:

[287] **Ռ. Մաթևոսյան,** Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 190: Ինքը՝ պատմիչը, հաստատում է դա՝ հայտնելով, որ «...մեծն Մարցէն... էր ազգաւ հայկազնեան և հայրենեօք Պահլաւունի, որոյ ա-

դիր ասպետի պարտականությունը: Բացի այդ էլ, միջնադարի նշանավոր քաղաքական, պետական, ռազմական գործիչը, մեծ գիտնականն ու զիվանագետը միանգամայն հարմար էր վարելու «Հայոց ասպետության» գործակալությունը, քանի որ բացի թագադրությունից, թագակապ ասպետը Արշակունիների օրոք (հետևապես նաև Բագրատունիների -Ա.Մ.) «ղեկավարում էր պալատական արարողությունները, հսկում սահմանված պալատական վարվելակարգի պահպանումը և ընդունում այլ պետությունների դեսպաններին»[288]:

ՀԱՋԱՐԱՊԵՏ. Բագրատունյաց թագավորության արքունական գործակալությունների և դրանք ղեկավարող իշխանավորների մասին մատենագրական աղբյուրներից քիչ բան է հայտնի: Պակասը մասամբ լրացվում է վիմագիր հիշատակությունների շնորհիվ՝ «Հայոց մարզպան»[289], «Հայոց տանուտէր»[290], «Հայոց ասպետ»...[291]

նուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի և էր յազգէն սրբոյն Գրիգորի» (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** նույն տեղում): Ըստ Մ. Օրմանյանի՝ Մարցէն Մագիստէր կամ Մաստեր բառի աղավաղված ձև է (**Մ. Օրմանյան**, Ազգապատում, Ա, էջ 1430): Հ. Բարթիկյանի կարծիքով, «Մարցէն» հետագա շրջանի ընդմիջարկություն է, «Մսրցին» (եգիպտացին - Ա. Մ.) բառի աղավաղում և վերաբերում է Գրիգոր (Վահրամ) Բ կաթողիկոսին (1066-1105), ով Եգիպտոսում (Մսրում) հայրապետական աթոռ էր հաստատել (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** էջ 495, ծանոթ. № 150): Վ. Վարդանյանը, բացառելով այդ տեսակետը, ենթադրում է, թե մատենագիրը «Մարցէն» անվան տակ նկատի է առել Գուգարքի Մարց գյուղից Պետրոս կաթողիկոսի ծագումը (**Վ. Վարդանյան,** Պահլավունիները..., էջ 80, տողատակ): Հնարավոր է՝ «Մարցէն» ծագել է արաբ. مرزوس (մարուուս՝ «ենթակա») բառից:

[288] ՀԺՊ, II, էջ 141-142:

[289] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 44, 46, 48, 49: Հայոց մարզպանը արքունի կառավարիչն էր, ներկայիս ըմբռնմամբ՝ երկրի վարչապետը: Ժամանակի պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը հազարապետի և մարզպանի պաշտոնները նույնացնում է, երբ խոսում է Արշակունյաց թագավորության անկումից հետո երկրի կառավարիչների մասին (տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Տիեզերական պատմություն, թարգմ., առաջ. և ծանոթ. **Վ. Վարդանյանի**, Երևան, 2000, էջ 128, 131): Այո՛, հազարապետը հավասարազոր է մարզպանի-վարչապետի, երբ հանդես է գալիս «մեծ» մակդիրի հետ միասին՝ «մեծ հազարապետ» (տե՛ս **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 71):

[290] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 10-11: Նաև՝ **И. Орбели**, Надписи Мрена, էջ 35: Հայոց տանուտերը կարգավորում էր վարչական, իրավական և այլ հարաբերությունները կենտրոնի ու համայնքների միջև: «Տանուտերութեանն» անդրադարձել են **Հ. Օրբելին** (տե՛ս Դիվան, պր. I, էջ 37), **Հ. Բարթիկյանը** (տե՛ս «Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045-1064 гг.), ՊԲՀ, 1968, № 2, էջ 125-126), **Ս. Ավագյանը** (տե՛ս «Տանուտերութիւն» տերմինը Անիի XI դ. արձանագրության մեջ, էջ 175-189), **Ռ. Մաթևոսյանը** (տե՛ս Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 180-182):

[291] Տե՛ս **Աշ. Մանուչարյան,** Նորահայտ հիշատակություն «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակ., «Տարեգիրք», Բ, Երևան, 2007, էջ 157-161:

Թվարկվածների շարքն է դասվում նաև Թալին քաղաքի VII դ. Ս. Կաթողիկե եկեղեցու նորահայտ արձանագրությունը[292]:

Ավերվածությունից իր փառահեղությունը չկորցրած այդ հոյակերտ տաճարի հյուսիսային պատի արևմտյան կողմում արտաքուստ երկու տողով արձանագրված է հետևյալը.



Լուսանկար



Գրչագիր

+ ԵՍ՝ ՔՈՒՐԴ, ՀԱԶԱՐԱ/ՊԵՏ

ԱՇՈՏԻ՝ Շ[ԱՀԱՆՇԱՀԻ], Ի Ա[Ն]ԻԱՅ:

Ոչ դասական բոլորաձև երկաթագրով, բայց X դ. բնորոշ տառաձևերով փորագրված այս անթվագիր արձանագրության ժամանակը որոշվում է Աշոտ Շահանշահի գահակալության տարիներով: Հետաքրքրական է, որ շահանշահ տիտղոսը համառոտագրված է վիմագրերում գրեթե չհանդիպող ձևով, երբ փորագրվել է միայն բառի առաջին տառը, այն էլ առանց պատիվ-հորիզոնական գծիկի կամ համապատասխան վերջակետանման նշանների, թեև Շ-ից ավելի առաջ նշմարվում է տարբերակիչ կետ: Աշոտ Շահանշահը վիմագրում վկայված է «ի Անւայ», հետևապես նա Ողորմած հորջորջվող, գթասիրտ արքան է, ով գահակալել է 953-977 թվականներին:

---

[292] Արձանագրությունն առաջին անգամ տեսել ենք վիմագրագետ Գ.Գ. Սարգսյանի հնագիտական օրագրում:

Ինչ վերաբերում է Քուրդ հազարապետին, ապա այդ անունով իշխան (Քուրթ ձևով), ըստ Հ. Աճառյանի, հիշատակվում է 895 թվականին[293]: Քուրթը մեկն է Ամատունի այն հինգ քաջ և անվանի եղբայրներից, որոնք, ինչպես Շապուհ Բագրատունի պատմիչն է հայտնում, Սմբատ Ա արքայի (890-914) հրամանով դավաճանության համար պատժում են Վասպուրականի գահերեց Աբումրվան Արծրունի իշխանին և նահանգի տեղապահությունը հանձնում Դերենի որդի Գագիկին[294]:

Չի բացառվում, որ այս ծառայության դիմաց Սմբատ թագավորը Ամատունիներին շնորհել է հազարապետության պաշտոնը, ինչը հնում նրանց էր վստահված Արշակունիների վերջալույսին:

Պատմիչի տեղեկությունից տեսնում ենք, որ ոչ բոլոր Ամատունիներն են 798 թ. արաբական հալածանքներից խույս տալու նպատակով այդ տոհմի ներկայացուցիչ Համամ իշխանի և նրա հոր՝ Շապուհի գլխավորությամբ 12.000 հայ շինականների հետ հեռացել բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող առափնյա Խաղտյաց երկրամասը, ինչպես ընդունված է կարծել[295]:

Թալինի այս նորահայտ վիմագրում Քուրդը հիշատակված է «Հազարապետ Աշոտի՝ Շահանշահի», որը նույնն է ինչ «Հազարապետ արքունի»: Քանի որ Բագրատունիների օրոք ուղղակի վկայություններ չունենք հազարապետի գործառույթների վերաբերյալ[296], ապա հարկ է հիշել Արշակունյաց ժամանակներում այդ պաշտոնը վարող նախարարի պարտականությունները: Հազարապետությունը «երկրի տնտեսական-հարկային վարչությունն էր, որը միավորում

---

[293] Տե՛ս **Հ. Աճառյան,** *Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 224:*

[294] Տե՛ս **Շապուհ Բագրատունի**, *էջ 71-76: Մեկ այլ տեղ պատմիչն այդ եղբայրներին կոչում է Արծրունի (էջ 69), հավանաբար, ակնարկելով նրանց վասպուրականյան ծագումը՝ Արտազ գավառից, ուր նրանք իշխում էին Արշակունիների օրոք մինչև Այրարատ տեղափոխվելը: Ամատունիներին էր պատկանում նաև Վասպուրական աշխարհի Անձախիձոր գավառի Կոտորոց նշանավոր ամրոցը, որն աղբյուրների վկայությամբ, գտնվում էր Կոտուր գետի ափին՝ Խոյ քաղաքից արևմուտք (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 227):*

[295] *Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 277:*

[296] *Մ. Օրմանյանը, հազարապետ է կարծում Վեստ Սարգսին (տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, Ա, էջ 1428), բայց ժամանակի պատմիչ Լաստիվերտցին նրան սոսկ հոգաբարձու է (խնամակալ-Ա.Մ.) կոչում (տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 57):*

էր իր մեջ նաև հասարակական աշխատանքների, այսինքն պետական պարհակների տնօրինությունը: Հազարապետն ուներ պաշտոնյաների («համարակար»-հարկահավաքների) մի ամբողջ խումբ: Վերջիններս գյուղական համայնքների ավագների՝ դեհկանների միջոցով շինականներից գանձում էին պետական հարկերը: Հազարապետին էին ենթարկվում «շահապները»՝ քաղաքների թագավորական տնտեսները, որոնք պատասխանատու էին քաղաքային բնակիչներից ու արհեստավորներից հարկեր գանձելու համար: Պետական պարհակների կատարման հսկողությունը հանձնարարված էր հազարապետին ենթակա հատուկ պաշտոնյային՝ «գարիկպետին», որը գյուղական համայնքներից անհրաժեշտ քանակությամբ բանվորական ուժ էր հավաքում համապատասխան նշանակություն ունեցող աշխատանքների՝ քաղաքների ամրությունների կառուցման, ջրանցքների անցկացման, անտառտնկումների և ճանապարհների, կամուրջների կառուցման համար և այլն: Հազարապետի գործակալությունը Ամատունի նախարարական տոհմի ժառանգական արտոնությունն էր»[297]:

Պետք է նկատել, որ մինչև Ամատունիներին անցնելը, հազարապետի պաշտոնը, ինչպես Փավստոս Բուզանդին է վկայակոչում Հ. Մանանդյանը, եղել է Գնունիների մենաշնորհը[298]:

«Հազարապետն էր սահմանում պետական հարկերն ու հսկում նրանց գանձմանը, նա էր իրականացնում նաև հասարակական հարկադիր աշխատանքները»[299]:

Հ. Մանանդյանի պարզաբանմամբ, Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունում «հազարապետ» բառը հաճախ համապատասխանում է oikonomos «տնօրեն, տնտես» ձևին (տե՛ս Ա. Պետ. Դ, 10, Ա. Կորնթ. Դ, 1-2)[300]:

Հովհաննավանքի պարսպին ժամանակին արձանագրված Նանա Զաքարյան-Բագրատունու XII դ. վերջի շինարարական վկայագրում

---

[297] ՀԺՊ, II, էջ 140:

[298] **Հ. Մանանդյան,** Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 69: Գնունիները հայոց հազարապետ են հիշատակվում Արշակ Բ-ի օրոք (350-368): Այն բանից հետո, երբ Գնունիները Մեծ Հայքի 387 թ. բաժանումից շատ չանցած հեռացել են բյուզանդական մաս (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Երևան, 1977, էջ 141), հազարապետության գործակալությունը վստահվել է Ամատունիներին:

[299] **Կ.Ղաֆադարյան,** էջեր հայոց միջնադարյան մշակույթի ու պատմության, էջ 111:

[300] **Հ. Մանանդյան,** Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 70:

և Հրազդանի տարածաշրջանի Արտավազա վանքի վիմագրում մեծ հազարապետ[301] հիշատակությունն արտահայտում է մեծ սպարապետ, մեծ զորապետ իմաստ, քանի որ վերաբերում է հայոց և վրաց ամիրսպասալար Սարգիս Զաքարյանին:

Թալինի նորահայտ արձանագրության պարագայում առավել մոտ են «հազարապետ» բառի Ստ. Մալխասյանցի և Հ. Աճառյանի մեկնությունները: Առաջինի դիտարկմամբ. «Հազարապետը արքունական տան ելևմուտքը կառավարողն է, տնտեսը»[302], իսկ մեծանուն լեզվաբանի ստուգաբանությամբ՝ «Հազարապետը տնտեսն է, թագավորական տան մատակարարը, հարկային և շինարարական գործերի վերակացուն կամ գլխավորը»[303]:

Նկատելի է, որ հազարապետի պաշտոնը եղել է ոչ միայն Բագրատունյաց կենտրոնական, այլև Հայաստանի նահանգային մանր թագավորությունների արքունիքներում: Դրա վկայությունը Սիսիանի Սյունի վանքի (VI-VII դդ.) «...Վարազո Սիւնեաց հազարապետ»[304] հիշատակությունն է: Անշուշտ, արձանագրությունը Սյունյաց թագավորության շրջանի է (970-1170). նույն վանքում 997 թվին հիշատակվում է. «Սմբատ որդի տն Աշոտո Սիւնեաց իշխանաց իշխանի»[305]:

Հարկ է նշել, որ Հայաստանում հազարապետ եզրույթի գործածությանը աղբյուրներում հանդիպում ենք մինչև XIX դ. կեսը, բայց ուշ միջնադարից սկսած՝ արդեն երկակի իմաստով: Առաջինը, որն ավելի կենսունակ գտնվեց, կիրառվել է իր նախնական՝ կառավարիչ, տնտես նշանակությամբ, ինչպես, օրինակ Բռնակոթի Ս.Գրիգոր եկեղեցու մուտքի բարավորի 1848 թ. շինարարական արձանագրությունում. «Ես Սիւնեաց հազարապետ Մելիք Թանկի Մելիք-Կարապե-

---

[301] Տե՛ս **Կ.Ղաֆադարյան,** Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 112-113: **Գ.Գ. Սարգսյան,** Թեղենյաց վանքի պեղումները և վիմագրական նոր-ույթներ, զեկուցումների հիմնադրույթներ, ԳԱ ՀԱԻ, 1987, էջ 70: Մեծ հազարապետը վաղ միջնադարում ունեցել է «անհամեմատ ավելի բարձր դիրք և ավելի ընդարձակ իշխանություն: Մեծ հազարապետը Սասանյան Պարսկաստանի մեծ վեզիրն էր և ամենաբարձր պաշտոնյան. նա վարում էր պետական բոլոր գործերը, թե՛ ներքին, թե՛ արտաքին» (**Հ.Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 70-71): Մեծ հազարապետը, ինչպես սկզբում ասել ենք, համապատասխանել է այսօրվա վարչապետին:

[302] «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երևան, 1944, էջ 9:

[303] **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 6:

[304] Դիվան, պր. II, էջ 88:

[305] Նույն տեղում, էջ 89:

տեան, չինեցի գավիթս և կաթուղիկէս»[306] և Մայր աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս, Հայրենյաց պաշտպան Ներսես Ե Աշտարակեցու գահակալության օրոք (1843-1857) հազարապետի պաշտոնով ծառայողի առկայության փաստմամբ[307]:

Երկրորդ իմաստով **հազարապետն** ուշ միջնադարում գործածվել է զինվորական համապատասխան կոչման պարագայում, ինչը տրամաբանորեն մակաբերվել է **տասնապետ, հիսունապետ, հարյուրապետ, գնդապետ** աստիճանաշարքի ազդեցությամբ:

Դոնի Ռոստովի (Նոր Նախիջևանի) Ս.Նիկողայոս եկեղեցում ամփոփված ռուսական կայսերական բանակի սպա Հովհաննես Աբրահամյանի (Իվան Աբրամով) տապանաքարի[308] և Մոլդովայի Գրիգորիոպոլ քաղաքի Իզմայիլյան հայկական գերեզմանոցի 1800 թ. շիրմաքարի[309] արձանագրություններից պարզվում է, որ հազարապետը համապատասխանել է **փոխգնդապետ** (подполковник) զինվորական աստիճանին:

Հազարապետը որպես սպայական բարձր աստիճանի անվանում, կարճ կյանք է ունեցել, լիովին դուրս է եկել գործածությունից՝ իր տեղը զիջելով փոխգնդապետ բառի կիրառությանը: Ինչպես տեսնում ենք, հազարապետն առավել կենսունակ ու գործածական մնացել է իր նախնական՝ տնտես, կառավարիչ, վերակացու իմաստով: Վերադառնալով Քուրդ հազարապետի նորահայտ վիմագրին՝ ամփոփենք, որ արքունական գործակալի այցելությունը Թալին և հիշատակություն թողնելը, մեր կարծիքով, կապված է եղել 970/3 թ. կործանիչ երկրաշարժից[310] տուժած, հնարավոր է հյուսիսային մասը վնասված, տեղի Ս. Կաթողիկե եկեղեցու վերականգնմանը արքայից

---

[306] Նույն տեղում, էջ 126: Պետք է ենթադրել, որ Սյունյաց հազարապետ Մելիք Թանգի Մելիք-Կարապետյանը զբաղվել է Զանգեզուրի մահալի, ապա օկրուգի պետական տուրքերի գանձման և չինարարական գործերի վերակացությամբ:

[307] Տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4442:

[308] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի դաշնություն, աշխատասիրությամբ՝ Գ. Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 145:

[309] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց Գ. Գրիգորյան, Երևան, 1996, էջ 312:

[310] Տե՛ս **С. Пирузян, А. Матевосян, Л. Шахсуварян,** Храм Звартноц: Причины и время разрушения, ՊԲՀ, 1984, № 3, էջ 189-194: Հեղինակները, խոսելով Զվարթնոցի տաճարի կործանման մասին, եզրակացնում են, որ դա տեղի է ունեցել «970-973 թթ. ժամանակահատվածում Արագածի հարավային փեշերում՝ Թալին-Արուճ բնակավայրերի շրջանում (ավելի մոտ առաջինին)... 8 բալ ուժգնությամբ երկրաշարժից» (նույն տեղում, էջ 193-194):

արքա Աշոտ Գ Ողորմածի հանձնարարականով սատարելու հետ: Ըստ այդմ, Քուրդ հազարապետի անթվակիր արձանագրության ժամանակն ավելի է որոշակիանում՝ սահմանափակվելով 970-977 թվականների հատվածում:

Հազարապետ հիշատակվում է նաև Փարպիի Ծիրանավորի հյուսիսային պատի եղծված արձանագրությունում[311]:

8. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Այստեղ մենք նպատակ չունենք կրկնելու պետականության անկման և կորստի ներքին ու արտաքին պատճառները. այն ամենայն մանրամասնությամբ պարզաբանված է պատմագիտության մեջ: Նշենք միայն, որ Գագիկ Ա-ից հետո գահը ժառանգած հետնորդն օժտված չէր Բագրատունի թագավորներին հատուկ ռազմաքաղաքական պատրաստվածությամբ՝ ըստ պատշաճի կազմակերպելու սահմանների անվտանգությունը սելջուկ-թուրքական ցեղախմբերի մերթընդմերթ կրկնվող հարձակումներից ու հնարամտորեն շրջանցելու բյուզանդական կայսերական նենգ ու անհեռատես քաղաքական նկրտումները:

Այդպիսի հարձակումներից մեկի ժամանակ թուրքերն Ատրպատականից անարգել ասպատակեցին մինչև Կենտրոնական Հայաստան ու հասան Սաղմոսավանքի կիրճի Սերկևիլի ձորը: Ճակատամարտում հեծելազորի հրամանատար Վասակ Պահլավունու գլխավորությամբ հայերը կարողացան ջախջախել թշնամուն՝ ոչընչացնելով երեք հարյուր հոգու: Ցավոք, հայկական կողմից նույնպես եղան զոհեր, այդ թվում նաև՝ հրամանատարը: 1021 թ. Սերկևիլի մարտում նահատակված հայորդիների (որոնց թվում պետք է ենթադրել նաև Վասակ Պահլավունուն) ու Հասան անունով զորականի հիշատակին 1033 թ. կերտվել է փոքրիկ խաչքար, որը հետա-

[311] Տե՛ս **Աշ. Մանուչարյան**, Փարպիի Ծիրանավորի արձանագրությունները, «Էջմիածին», 2014, Գ, էջ 142:

գայում տարվել է Հովհաննավանք և դրվել գավթում: Խաչքարի ստորին մասում արձանագրված է.



գրչագիր

ԱՐՔ ՍՈՔԱ, ՈՐ / ԱՆԱՒՐԻՆԱՑ / ՄԵՌԱՆ Ի/ՆԻԳ / ԵՒ

ՀԱՍԱՆԱՑ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ , ՈՐ Է Ի Ն(400) ԵՒ
ՁԲ (82)+(551)=1033[312]:

Երերույքի տաճարի ստորև ներկայացվող վիմագրում մտորելու տեղիք տվող մի հիշատակություն կա: Դա վերաբերում է չորրորդ տողում արձանագրված արքայորդի Աշոտին:



գրչագիր

[312] **Աշ. Մանուչարյան**, *Նոր վիմագրեր Հովհաննավանքից, ՀՀ ԳԱԱ, ՇՀՀԿ, գիտ. աշխ., Գյումրի, 2013, էջ 90:*

ՅԱՆՈՒՆ ԱՅ Ի ԹՎԱԿԱՆԻՍ /:Ն:Հ:Է: (1038) ԵՍ ԲԱՐԷՊԱՇՏ ԹԱԳՈՒԻՍ/, ԴՈՒՍՏՐ ԱԲԱՍԱ, ՍՄԲԱՏ ՇԱ/ՀԱՆՇԱՀԻ ԿԻՆՍ ԵԻ ԱՇՈՏՈՅ Մ/Ա ԼՅ ՐՍ, ՈՐ ԱԶԱՏԷՅԻ ԶԵՐԷՐՎԱՅ ԹԱՍՏ/ԱԿՍ ՅՈՐԴԷՅ Յ ԼՈ ՐԴԻ ՍՄԲԱՏ ՇԱՀԱՆ/ՇԱՀԱՆԻ ՀԶՈՒՐԻ ԵԻ ԱՐՔԱԻ ԱՐԵԻՇԱՏՈՒ/ԹԵԱՆ ԵԻ ԱՇՈՏՈՅ, ՐՈՐ ԱՅՍ ԳՐ ՈՅՍ/ ՀԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ Ի ՄԵԾԱՅ ԿԱՄ Ի ՓՈՔՐՈՒՆՅ: Յ : Ժ : Ը : (318) ՀԱՐԱՊԵՏԱՅ/ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ,Բ ԱԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱ/Ի ԱՍՏՈՒԱԾԱՎԱՃԱՌԻՆ, ՍԻՄՈՆ ԿԱՀԱՐԴԻՆ, ԳԵՀԵՆԻՆ ԵԻ...[313]:

Արձանագրությունից պարզվում է, որ Աշոտը մեկն է Հովհաննես-Սմբատի այն երկու որդիներից, որոնց հիշատակում է Արիստակես Լաստիվերտցին՝ Տրապիզոնի 1022 թ. ազգակործան հայ-բյուզանդական համաձայնագրի առիթով. «...Յոհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին (Պետրոս Ա Գետադարձին՝ 1019-1058 - Ա. Մ.), եթե գրէ գիր և տուր կտակ թագաւորին (Վասիլ Բ կայսրին՝ 976-1025 - Ա. Մ.) զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տայ ի ժառանգութիւն, քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն, վասն զի որդի նորա վախճանեցաւ (մի այլ օրինակում՝ որդի նորա Երկաթ [ուրեմն, նաև՝ Աշոտ - Ա. Մ.]) վախճանեցաւ, միւսն որդին նորա վաղ վախճանեցաւ»[314]:

Պատմիչն այնպես հստակ է հաղորդում, որ պարզից էլ պարզ է, երկրորդ որդին վաղուց էր մահացել, իսկ ահա սա, նոր էր վախճանվել, այսինքն՝ 1022 թ. նախօրյակին: Ուրեմն, մի կողմից արքայազն որդու վաղաժամ մահվան խորը հոգեկան ցնցումները, իսկ դա պետք է հոր մոտ ունենար շատ ծանր հետևանքներ, նախ, որ հաջորդ որդին էլ երիտասարդ մահացավ, ապա նաև՝ նա գահի ժառանգորդն էր հորեղբոր՝ Աշոտից հետո և, դատելով Երերույքի վիմագրից, նրա հիշատակը երկար է պահպանվել վշտին չհամակերպված մոր հիշողությունում, մյուս կողմից էլ՝ կրտսեր եղբոր՝

---

[313] ***Աշ. Մանուչարյան,*** *Երերույքի տաճարի վիմագրերը, «Հին Հայաստանի մշակույթը», XIV, Երևան, 2008, էջ 280:*

[314] ***Արիստակես Լաստիվերտցի,*** *էջ 32:*

Աշոտի հետ ունեցած գահակալական տհաճ գժտությունները, արքայական տիրույթների երկմասնատումը, հավանաբար, այնպես էին ցնցել Հովհաննես-Սմբատին, որ նա, ինքնաբերաբար, ենթարկվելով բյուզանդամոլ բարձրաստիճան պալատականների սադրանքներին՝ գնաց այդ կործանարար գործարքին: Նպատակադրված չլինելով արդարացնել այդ դավաճանական արարքը՝ մենք փորձեցինք վերլուծել այն բարդ բարոյահոգեբանական կացությունը, որի մեջ հայտնվել էր հետագայում զղջացած Հովհաննես-Սմբատը, ում պատմիչներից մեկն անվանում է. «իմաստուն և հանճարեղ յոյժ»[315] անձնավորություն:

Գագիկ Բ (1042-1045) հայոց վերջին արքայի օրոք բյուզանդամետների խմբավորման կենտրոնում արդեն Վեստ Սարգիսն էր, «ոմն ի գլխավոր ազատացն Հայոց Սարգիս անուն»[316], որ ցանկանում էր գրավել գահը: Նա դեռևս Հովհաննես-Սմբատ թագավորի օրոք կատարում էր հայոց գահի հոգաբարձու-խնամակալի պարտականությունները: Վիմական աղբյուրներից տեղեկանում ենք, որ նրա ավատական տիրույթները գտնվում էին Խծկոնքում և Սուրմառուի շրջակայքում: Նրա բյուզանդամոլությունը ցայտուն պատկերվում է Խծկոնից վանքում իր իսկ ձեռքով կառուցած Ս. Սարգիս եկեղեցու ՆՁԲ (1033) թվի վիմագրում, որտեղ ինքը. «...որդիացեաղ և սիրեղի ճորտ Սարգիս Գ-ից (3) թագաւորաց Հոռոմոց, առեալ Գ-ից (3) պատիւ՝ անթիպատ պատրիկ, վեստ եւ դուկ արեւելից»[317]: Բյուզանդական այդ երեք կայսրերն են՝ Վասիլ Բ (976-1025), Կոստանդին Ը (1025-1028), Ռոմանոս Գ (1028-1034): Տեկորի ՆՁԵ (1036) թվի արձանագրությունը. «... եւ ի տէրութեան Սարգսի, արեւելից դուկից...»[318], հաստատում է բյուզանդացիների կողմից այդ անձնավորության, որպես Հայաստանի դուկ՝ կառավարիչ, դուքս ճանաչված լինելու փաստը: Կարծում ենք, որ այդ նշանակումը կատարվել է Տրապիզոնի 1022 թ. պայմանագրով: Իր քաղաքական վերելքն ապահովելու նպատակով՝ նա փեսայացել էր Պահլավունյաց տոհմին (Տեկոր. «ՆԴԱ (1042) թվ... ես տիկնաց

---

[315] *ՀԺՊ, III, էջ 144, ըստ* ***Մատթեոս Ուռհայեցու****, էջ 17:*

[316] ***Արիստակես Լաստիվերտցի****, էջ 57-58:*

[317] *Վիմական տարեգիր, էջ 17-18: Հմմտ.* ***Մ. Գևորգյան****, էջ 200-201:*

[318] *Վիմական տարեգիր, էջ 20: Հմմտ.* ***Ն. Սարգիսեան****, Տեղագրութիւնք ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 207:*

տիկին, դուստր Քրգորոյ Մագիստռոսին եւ ամուսին Սարգսի, արեւելից վէստիս...»[319]):

Զնայած Հովհաննես Թագավորի մահից հետո հայոց գահին տիրելու Վեստ Սարգսի փորձերի ձախողմանը, ծերունազարդ սպարապետ Վահրամ Պահլավունու աջակցությամբ Գագիկ Բ-ի օրինական թագադրմանը և հայրենասեր անեցիների վճռականությանը, այնուամենայնիվ, հայկական կենտրոնական պետականությունը կործանումից փրկել չհաջողվեց[320]:

[319] Վիմական տարեգիր, էջ 22: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով (Ն. Ակինյան, Կ. Մաթևոսյան, Գ. Գ. Սարգսյան) Տեկորի 1042 թ. վիմագրում հիշատակվող Քրգոր Մագիստրոսը Գրիգոր-Ապիրատ Հասանյանն է:

[320] Անկախությունը պահպանած նահանգային թագավորություններին կանդրադառնանք երրորդ գլխում:

ԳԼՈՒԽ Բ

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ ԻՋՆԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԱՎԱՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Բագրատունյաց թագավորության կործանմամբ հայկական երբեմնի հզոր իշխանական տները ցաք ու ցրիվ եղան: Բացառություն էին կազմում թերևս Արցախի, Սյունիքի, Հայաստանի կենտրոնական և հյուսիսային շրջանների որոշ ազնվականական տոհմեր, որոնց ներկայացուցիչները, սակայն ոչ մի էական դեր երկրի հասարակական-քաղաքական կյանքում չէին խաղում: Համենայն դեպս, այդպես էր կենտրոնական Հայաստանում սելջուկ-թուրքական տիրապետության վաղ շրջանում:

Զաքարյանների պատմական ասպարեզ իջնելով առաջացավ այն առանցքը, որի շուրջ հայ իշխանները համախմբվելով՝ ավելի քան քառորդ դարյա համառ պայքարից հետո հայրենի հողում կարողացան վերականգնել իրենց ավատական իրավունքները, վերագտնել քաղաքական դիրքերը:

Հայ ժողովրդի պատմության այս ժամանակաշրջանում ազատագրված Հայաստանի հասարակական կյանքում սկսում են հանդես գալ քաղաքական նոր ուժեր, որոնք ստանձնելով երկրի կառավարման գործը՝ կարճ ժամանակամիջոցում կարողանում են ստեղծել մի կուռ իշխանապետություն՝ վճռորոշ տեղ ունենալով Առաջավոր Ասիայում: Այս նոր իշխանական տները պատմական ասպարեզ իջան երկու ճանապարհով, նախ, սելջուկյան Հայաստանի ազատագրման գործում ունեցած իրենց ռազմական ծառայություններով: Դրանք հիմնականում հին իշխանական, նախարարական տների շառավիղներ էին, որոնք որպես զորապետներ, պատերազմում էին Զաքարյանների բանակում, և ի հատուցումն աչքի ընկնող ծառայությունների, որպես կանոն, տեր էին վերանշանակվում իրենց հայրենական կալվածքներում, ամրապնդում դրանց նկատմամբ ժառանգական իրավունքները (Հյուսիսային Հայաստան, Արցախ), կամ Զաքար-

յաններից որպես պարգև ստանում տիրույթներ, որոնց ազատագրումը մասնակցել և քիչ ջանքեր չէին ներդրել՝ դառնալով դրանց տնօրինողը (Հայաստանի կենտրոնական շրջաններ՝ Այրարատ՝ Շիրակ, Արագածոտն), կամ էլ գլխավոր էին նշանակվում իրենց իսկ գրված տարածքներում (Վայոց ձոր, Սյունիք): Երկրորդ ճանապարհը ձևավորվում է առևտրավաշխառուական դրամագլխի շնորհիվ: Զաքարյան բանակների ֆինանսավորումն ու սելջուկյան տիրապետությունից Հայաստանի քայքայված տնտեսության վերականգնումը կարիք ունեին մեծ գումարների: Ավելի ուշ՝ մոնղոլական շրջանի հայկական իշխանապետությունում, երկրորդ ճանապարհն ավելի ակնառու է: Հարուստ վաճառականները, խոշոր դրամատերերը, գնելով տիրույթներ, դառնում են դրանց ավատական տերերը, ձեռք բերում իշխանական տիտղոսներ:

Հայաստանում ամենախոշոր հողատերերը Զաքարյաններն էին: Նրանց իրավունք էր վերապահվում բոլոր ազատագրված վայրերը համարելու իրենց «սեփական ժառանգութիւնը»: Իսկ նրանց բուն կալվածքներն էին հանդիսանում Լոռին, Անին՝ իրենց շրջակայքով, որոնք պատկանում էին Զաքարեին: Գեղարքունիքը, Պղնձահանքը, Դվինը, Ավանը, Բջնին՝ մերձակայքով՝ Իվանեին: Թալինը, Դաշտադեմը, Կոշը, Փարպին, Աշտարակը XIII դ. երկրորդ կեսին կազմում էին Իվանե Բ Զաքարյան-Շահնշահյանի որդի Աղբուղայի տիրույթները: Նա իր եղբայրների՝ իշխանաց իշխան Շահնշահ Բ-ի և աթաբեկ Զազայի հետ իշխում էր նաև Վաղարշապատում ու Անիում, իսկ Ուշին պատկանում էր նրա մյուս եղբորը՝ Ավագ Սարգսին, Արուճը՝ հորեղբորը՝ սպասալար Մխարգրձելին[321]*:*

Զաքարեի և Իվանեի հորեղբորորդի Զաքարե Վահրամյանը տերն էր. «... Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տերունականին եւ այլոց գաւառաց...»[322]: «Այլոց գաւառաց» *վիմագիր հիշատակության տակ հասկացվում են Զորափոր և Կայեն գավառները (ներկայիս*

---

[321] *Տե՛ս արձանագրությունները՝ Վիմական տարեգիր, էջ 99, 107, 110-111, 138, 149, 151, 159, 161-162, 165,* ***Գ. Կարախանյան,*** *Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, ՊԲՀ, 1977, № 4, էջ 25:* ***Ե. Տեր-Մինասյան,*** *Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, էջ 55,* ***Ս. Սաղումյան,*** *Աշտարակ, էջ 169-170,* ***Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան,*** *Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, ՊԲՀ, 2001, № 2, էջ 186-187,* ***Կ. Մաթևոսյան,*** *Արուճ, էջ 61:*

[322] ***Կ. Ղաֆադարյան,*** *Հաղբատ, էջ 220:*

Ղազախ)[323]: Վահրամյանների տարածքների մեջ էր ընդգրկվում նաև Փառիսոսը[324]: Ըստ Ս. Պողոսյանի՝ նրանց տիրույթները ձգվում էին Սևանի հյուսիսային, հարավարևելյան մասերից մինչև Շամքոր քաղաքը[325]: Իշխանության կենտրոնը Գագ ամրոցն էր (կառուցվել է X դ. և կոչվել Գագիկ Ա Բագրատունու՝ 990-1020, անունով), որն ըստ Ա. Շահնազարյանի՝ գտնվել է Կոթիի և Ղազախի սահմանաբաժնում[326]:

Վրաց արքունիքի ամիրապետ Ամիր Քուրդ Աբուլ-Հասան Արծրունին՝ մորեղբայրը Զաքարեի և Իվանեի, Մահկանաբերդի ու Կայանի իշխանն էր: Նրա տոհմի ամենաակնառու ներկայացուցիչ Սադուն Արծրունին Հաղբատի 1273 թ. և էլի մի քանի արձանագրություններում հիշատակվում է որպես այդ կողմերի «տէր», «պատրոն»[327]:

Ամիր Քուրդ Արծրունու եղբայր Ամիր Սարգսի որդի Խորաս իշխանը Շահնշահ Ա Զաքարյանի դաստիարակն էր[328]: Նա և նրա սերունդները, ըստ վիմագիր սկզբնաղբյուրների, տիրում էին Բագնայրում, Աշնակում[329]: Արծրունիների տոհմի մի շարք ներկայացուցիչներ՝ Ամիր Քուրդ, Խորաս, Հասան, Սադուն Բ, Սասնա, թաղված են Հաղբատավանքի մեծ գավթում[330]:

Զաքարյանները, Վահրամյաններն ու Արծրունիները, իբրև ազգակից տոհմեր, XIII դ. սկզբներին Հայաստանի քաղաքական կյանքում կատարում էին ամենաառաջնակարգ դերը:

Զաքարյան բանակի հզոր սյուներից էր զորապետ Վաչե Վաչուտյանը: Նա «սիրեցաւ ի Զաքարիայէ և եղև հաւատարիմ տան նորա, զոր և կարգեաց զնա իշխանաց իշխան տանն Արագածու և Շիրակայ, Նգայ և Անբերդոյ և ամենայն եղերացն նոցա մինչև Երասխ գետը»[331]: Նույնը տառացիորեն կրկնում է Զաքարիա Սար-

---

[323] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 132:

[324] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 541:

[325] Տե՛ս **Ս. Պողոսյան**, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դդ., էջ 283:

[326] Տե՛ս **Ա. Շահնազարյան,** Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 107:

[327] Դիվան, պր. IX, էջ 180-181, 202:

[328] Տե՛ս **Գ. Ա** կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 659:

[329] Տե՛ս **Կ. Բասմաջեան,** Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշինու, էջ 174, 178, Վիմական տարեգիր, էջ 104, 110:

[330] Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 175-176:

[331] **Մխիթար Անեցի,** էջ 119-120:

կավագ Քանաքեռցին[332]: Այդ մասին հայտնում է ինքը՝ Վաչեն, Հովհաննավանքի :ՈԿԶ: (1217) արձանագրության մեջ. «...ես Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի Վաչուտանց, սիրեցեալ ի սոցանէ մեծաւ պատուով վ լայս ն հաւատարիմ ծառայութեան իմո

կոչեցա ի գործ վերակացութեա գաւառիս ...»[333]:

Հարկ է նշել, որ Վաչե Վաչուտյանի նստավայր Ամբերդ ամրոցը, նա, ի դեպ, Մակարավանքի եկեղեցու գավթի շինարարությանը 600 դահեկան գումարով օժանդակելիս, իրեն հորջորջում է «Վաչէ Անբերթեցի»[334], գրավել է անձամբ սպարապետ Զաքարեն՝ այդ մասին արձանագրելով Անտառուտի խաչքարի վրա, որին կանդրադառնանք աշխատության հաջորդ գլխում: Մեկ այլ արձանագրությունում Զաքարեն և Իվանեն Ամբերդը համարում են իրենց «սեփական դղեակը»[335]: Ըստ երևույթին, Վաչեն աչքի է ընկել այդ անառիկ ամրոցի նվաճման գործում և իբրև մարտական սխրագործությունների փոխհատուցում՝ այն ստացել որպես սեփական տիրույթ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ Սաղմոսավանքի՝ Վաչե Բ-ի անթվակիր ընդարձակ արձանագրությունում որպես «սեփհական տէր գաւառիս Ամբերդո»[336] հիշատակվում է ոչ թե Վաչուտյան տոհմի ներկայացուցիչ, այլ Իվանե Բ Զաքարյանը՝ Շահանշահ Ա-ի որդին:

Հավանաբար այդ փոփոխությունը տեղի է ունեցել Քուրդ Ա Վաչուտյանի քաղաքական ասպարեզից ճգնակեցության անցնելուց հետո՝ 1260-ական թվականների կեսերին:

Ժամանակներ անց Կարբիի զանգակատան 1338 թ. արձանագրությունում իբրև «տէր Անբերդոյ գաւառիս»[337] հանդես է գալիս իշխանաց իշխան Քուրդ Բ Ամբերդեցին: Հիշատակությունից ակնբախ է, որ Քուրդ Բ-ը վերականգնել է Ամբերդ գավառի նկատմամբ Վաչուտյանների սեփականատիրական իրավունքը[338]: Քուրդ Բ-ի որդի Թեոդորոս Զրքինը, ով Հովհաննավանքի 1350 թ. վիմագրում նույն-

---

[332] Տե՛ս «**Զաքարեայ Սարկաւագի** Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 12:
[333] **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը ..., էջ 82-83:
[334] Դիվան, պր. VI, էջ 186:
[335] Դիվան, պր. IX, էջ 153-154:
[336] **Հ. Եղիազարյան,** Սաղմոսավանք, «Էջմիածին», 1961, Զ, էջ 43:
[337] Տե՛ս **Տ. Պետրոսյանց,** Վաչուտյաններ, Երևան, 2001, էջ 268-269:
[338] Տե՛ս նույն տեղում:

պես հիշատակվում է «իշխանաց իշխան»[339] տիտղոսով, Ամբերդի եկեղեցու մուտքի բարավորի եղծված արձանագրությամբ մոր՝ Խուանդ խաթունի հետ ներկայանում են որպես այդ կողմերի պարոններ[340]:

Վայոց ձորի, Սյունիքի և այլ վայրերի ազատագրման եռանդուն մասնակիցն էր ծագումով գեռաքարեցի Վասակ Խաղբակյանը: Նա իր երեք որդիներով, ինչպես Մխիթար Այրիվանեցին է վկայում. «...եկեալ ի Խաչենոյ, բազում արիութիւն ցուցին»[341]: Իսկ Կիրակոս Գանձակեցին ավելացնում է, որ «յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց...»[342]: Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու արձանագրությունից տեղեկանում ենք, որ Եղեգյաց ձորի ամրոցներն ու բնակավայրերն ազատագրել է Իվանե Զաքարյանի բանակի զորապետ Վասակ Խաղբակյանը[343]: Եվ ի պատիվ այս հաղթանակների, Իվանե աթաբեկը նրան է պարգևում այդ տիրույթները: Իսկ նրա եղբայր Գրիգորը, ինչպես նշում է մեծավաստակ Գարեգին Հովսեփյանը, փաստարկելով Գառնիի շրջակայքի արձանագրությունները, իշխում է ամրոցին, գյուղաքաղաքին ու մերձակայքին[344]: Խաղբակյան իշխանական նստավայրը Սրկղունքը (ներկայիս Վերնաշենը) և Բոլորաբերդն էին[345]: Նրանց ավատական տիրույթների մասն էր կազմում նաև Նախիջևանի Շահապունիք-Ճահուկը: Այսպես, Շահապունիքի Նորագյուղի տարածքում 1261 թ. խաչքար է կանգնեցվել «... յիշխանութեամբ պարոն Պռոշո...»[346]: Սրան մոտակա Կոթի գյուղում 1287 թ. Պապաք Պռոշյանն իր տիկնոջ երկարակենդանության համար խաչքար է պատվիրել[347]:

1300 թ. Էաչի Պռոշյան մեծ իշխանը Քարկոփի կամ Խոտակերաց վանքի Ս. Նշանի արծաթյա պահարանի երեսին արձանագրել է, որ «... տիրեցի հայրենի երկրիս իմո Շապունեաց եւ այլ յոլով

---

339 **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը ..., էջ 92-94:
340 Մեր դաշտային օրագրից:
341 **Մխիթար Այրիվանեցի,** էջ 65:
342 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 205:
343 Տե՛ս Դիվան, պր. III, էջ 88:
344 Տե՛ս **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք..., էջ 42-44:
345 Տե՛ս ՀԺՊ, III, էջ 549:
346 **Ար. Այվազյան,** Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987, էջ 95-96:
347 Նույն տեղում, էջ 110:

գաւառաց...»[348]: Բացի վերը նշված գավառներից, Պռոշյանները տիրույթներ են ունեցել նաև Կոտայքի, Վարաժնունիքի և Գեղարքունիքի մի մասում: Վերջինս են վկայում Մարտունու տարածաշրջանի Փառականք գյուղում «... ի պարոնուԹի Պռոշոյ...»[349] ոմն Մանուչարի 1273 Թ. կանգնեցրած խաչքարը և Վարդենիկ գյուղի 1290 Թ. խաչարձանը՝ Ամիր Հասան Ա Պռոշյանի իշխանավարության տարիներին[350]:

Այստեղ ուզում ենք կանգ առնել այն պատմության վրա, Թե ինչպես մեզ հաջողվեց հայտնաբերել Պռոշյան իշխանական տանը երբևէ պատկանած տիրույթ: Դա Մուղնին է:

Աշտարակի Մուղնու Ս. Գևորգ վանքը դասվում է Հայաստանի միջնադարյան այն հուշարձանների Թվին, որը համակողմանիորեն ու հանգամանալից կերպով ուսումնասիրվել է Թե՛ ճարտարապետական[351], Թե՛ պատմագիտական[352], Թե՛ վիմագրագիտական[353] առումներով: Կառույցն իր հորինվածքային մտահղացմամբ ու կատարողական բարձր արվեստով արժանացել է ոչ միայն հայ, այլև օտարազգի հետազոտողների ուշադրությանը[354]:

Սակայն, երբ Արագածոտնի մարզում վիմագրագիտական-հավաքչական աշխատանքներ կատարելու ընԹացքում այցելեցինք Մուղնի և նախկինում հրատարակված վիմագրական նյութը տեղում համեմատում էինք բնագրերի հետ, վանքի բակում խնամքով պահպանվող բազմաԹիվ արձանագիր բեկորներից մեր ուշադրությունը գրավեցին հատկապես երկուսը, ինչպես նաև մեկ համառոտ հիշատակագրություն, որոնք իրենց մեջ նոր տեղեկություններ են պարունակում: ԹեկուզՄեկ բառից կամ մի քանի տառից կազմված փոքր, Թերի և ոչ ամբողջական այդպիսի արձանագրությունների աղբյու-

---

[348] Դիվան, պր. III, էջ 208, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 140:

[349] Դիվան, պր. IV, էջ 253:

[350] Տե՛ս նույն տեղում, էջ 150:

[351] Ավելի մանրամասն տե՛ս **Մ. ՀասրաԹյան,** Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը, «Հայկական արվեստ», Երևան, 1984, էջ 36-46:

[352] Տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Մուղնու Ս. Գևորգ վանքը, Երևան, 2000: Տե՛ս նաև նույնի՝ Մուղնու Ս. Գևորգ վանքը, Ս. Էջմիածին, 2009:

[353] Տե՛ս **Հ. Եղիազարյան,** Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1960, Է, էջ 32-37, նաև՝ **Ս. Սաղումյան,** Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը, «Էջմիածին», 1977, Ա, էջ 45-54 և նույնի՝ Աշտարակ, էջ 231-249:

[354] Տե՛ս **Մ. ՀասրաԹյան,** նույն տեղում, էջ 36, տողատակ:

բագիտական արժեքը կարևորել է դեռևս հայ վիմագրագիտության երախտավոր Հ. Օրբելին[355]*:*

Երեք արձանագիր բեկորներից առաջինը գորշավուն քարի վրա երկու տողանոց հետևյալ արձանագրությունն է.

Լուսանկար



Գրչագիր[356]

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ՝ ԱՍ⌜ԱՏՈՒ՞Ր, / ՀՐԱՄԱՆԱԻ ԻՇԽԱՆԱՅ

ԻՇ⌝ԽԱՆԻՆ ԷԱԶՈՅ, Թ⌜ՈՂԻ⌝ ...[357]

Սա ակնհայտորեն իրավական բնույթի վիմագրի հատված է, ինչը հուշում է «ԹՈՂԻ» բառի «Թ» տառի արձանագրված լինելու հան-

---

[355] *Տե՛ս Դիվան, պր. I, էջ XXIII:*

[356] *Մուղնիի գրչագրերն ըստ* ***Արսեն Հարությունյանի****:*

[357] ***Աշ. Մանուչարյան,*** *Մուղնին Պռոշյանների իշխանական տիրույթ, «ՎԷՄ», թիվ 1, Երևան, 2012, էջ 102:*

գամանքը, որին պետք է հաջորդած լիներ որևէ հարկատեսակի ապահարկության հիշատակությունը:

Էաչի անունով պատմական անձ հայտնի է միայն Պռոշյան տոհմի գործիչը[358]: Էաչի Պռոշյանին «գեղեցկածաղիկ» մակդիրով և «մեծ կողմնակալ» պաշտոնով է հիշատակում Ստեփանոս Օրբելյանը[359]: Էաչիին Պռոշյանների իշխանության ավագության իրավունքն անցել էր 1299 թվականին[360]: Նա, ինչպես նշել ենք, 1300 թ. պատրաստել է տվել Խոտակերաց կամ Քարկոփի վանքի Ս. Նշանի արծաթյա, ոսկեզօծ պահարանը՝ հայ միջնադարյան արվեստի լավագույն նմուշներից մեկը[361]: Էաչի Պռոշյանը եղել է ժամանակի նշանավոր քաղաքական գործիչներից, քաջ զորապետներից մեկը, որը զոհվել է 1317 թ. դեկտեմբերի 18-ին՝ մեծ սուգ պատճառելով «ամենայն քրիստոնէից»[362]:

Արդ, հարց է ծագում, ի՞նչ գործ ունի Էաչին Մուղնիում, այն դեպքում, երբ հայտնի է, ինչպես վերն ակնարկել ենք, որ Պռոշյան իշխանական տան ավատական «տիրույթները տարածվում էին Վայոց ձորի արևմտյան մասում, Շահապունիքի, Վարաժնունիքի, Կոտայքի շրջանում, մի մասն էլ՝ Այրարատի նահանգում»[363], նաև Գեղարքունիքի մի հատվածում[364]:

Կարելի է մտածել, որ արձանագրության բեկորը պատահական է հայտնվել Մուղնու եկեղեցու տարածքում. ինչ-որ ժամանակ ուխտավորներից կամ հավատավորներից մեկն այն ինչ-որ վայրից այդտեղ է բերել: Սակայն այս կարծիքը հերքվում է հաջորդ արձանագիր բեկորով.

---

[358] *Տե՛ս* ***Հ. Աճառյան,*** *Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 222:*

[359] *Տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան****, էջ 432:*

[360] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 644:*

[361] *Տե՛ս* ***Գ. Հովսեփյան,*** *Խաղբակյանք…, էջ 99-101:*

[362] *«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց* ***Լ. Խաչիկյան,*** *Երևան, 1950, էջ 128:*

[363] *ՀԺՊ III, էջ 549: Հիշատակությունը թերի է, չի որոշակիացվում Այրարատ նահանգի էլ ո՞ր մասերում էին դրանք տարածվում, այն դեպքում, երբ Վարաժնունիքն ու Կոտայքն այդ կենտրոնական աշխարհի գավառներն էին կազմում:*

[364] *Տե՛ս* ***Գ. Գրիգորյան****, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 89-90:*



Լուսանկար



Գրչագիր

Բոլորաձև երկաթագիր տառատեսակներով այս երկտողը փորագրված է սպիտակավուն քարի վրա: Արձանագրության երկրորդ տողում հիշատակված է Ամիր Հասան անունը, իսկ նրանից առաջ պահպանված բառի «...ԻՆ» վերջին երկու տառերը: Դրանք կարող են պատկանել օրինակ՝ «ԻՇԽԱՆԻՆ» բառին: Ամիր Հասանը Պռոշյան տոհմում հանդիպող անուններից է: Պռոշյան իշխանատոհմում Ամիր Հասան անվամբ հայտնի են երկու հոգի՝ Էաչիի հայրն ու որդին, այսինքն թոռն անվանակոչված է ի պատիվ պապի: Կարևոր է զանազանել, թե ո՞ր իշխանն է հիշատակված՝ Ամիր Հասան Ա (1284-1292), թե՞ Ամիր Հասան Բ (1318-1348/51):

Բայց առայժմ մի կողմ թողնելով այս խնդիրը՝ նախ, փորձենք բացահայտել Ամիր Հասանի դստեր ինքնությունը: Առաջին տողում «ԴՈՒՍՏՐ» բառին նախորդող անունից պահպանվել է «Ն» տառը՝ «Ս» ստացական հոդի հետ կցագիր:

Պռոշյանների իշխանատոհմում «ն» վերջավորությամբ իգական անվան հանդիպում ենք Պռոշ Խաղբակյանի դստեր՝ Գոհար Խաթունի պարագայում՝ վախճանված 1268 թ. առաջ[365]*: Հնարավոր է Գոհար Խաթունի հիշատակի հավերժացումը տոհմակցուհիների հետագա անվանակոչություններում: Բայց մեր վիմագրի վերծա-*

---

[365] *Տե՛ս* ***Գ. Հովսեփյան,*** *Խաղբակյանք..., էջ 72:*

նությունում «խաթուն» վերականգնելը բացառվում է, քանի որ բնագրում դստեր անվան պահպանված «ՆՍ» կցագրից առաջ նշմարվում է «Ա» տառի փոքր ստեղը: Հետևապես, իշխանուհու անունը վերջանում է «ԱՆՍ» տառաշարով: Դստեր անվան վերականգնման գործում օգնում է Գանձասարի վանքի գավթի հյուսիսային պատի 1309 թ. արձանագրությունը, ըստ որի՝ սուրբ ուխտին ընծայաբերություն կատարող նվիրատուն իրեն կոչում է. «Ես Էսուգանս, դուստր մեծին Ամիր Հասանա...»[366]:

Այս հիշատակությունը լուծում է մի շարք հարցեր: Նախ, հայտնի է դառնում Մուղնու արձանագիր բեկորի աղջկա անունը՝ Էսուգան, ապա այն, որ նա դուստրն է Ամիր Հասան Ա-ի, այսինքն՝ քույրն է Էաչիի, և որ այդ հատվածային վիմագիրը պետք է վերծանվի հետևյալ կերպ.

⌜ԵՍ՝ ԷՍՈՒԳԱ⌝ ՆՍ, ԴՈՒՍՏ⌜Ր/ ՄԵԾ⌝ ԻՆ

ԱՄԻՐ ՀԱՍԱՆ ⌜Ա⌝...[367]:

«Էսուգան» անունը, մեր կարծիքով, պետք է ստուգաբանվի արաբական արմատներով. «Էսու» = «Իսա» = «Հիսուս» (عيسى) և «գան» (قن) «կանոնավորել», այսինքն՝ «Հիսուսով կանոնավորված»: Իսկ Գանձասարում Էսուգանի հայտնվելը պետք է նկատել իշխանուհու՝ նախնյաց բնօրրան այցելություն կատարելու արդյունք:

Էաչիի և Էսուգանի հայր Ամիր Հասան Ա-ը ներկայիս Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի արևելյան եզրին, գետակի աջ ափին գտնվող Իշխանավանքին մերձակա պատմական գերեզմանոցում Ովասաբ կազմողի 1290 թ. կանգնեցրած վերոհիշյալ մեծ և գեղաքանդակ խաչքարի արձանագրությունում հիշատակվում է որպես «բարեպաշտ արքայ»[368]:

Այն, որ Մուղնու երկու արժեքավոր վիմագիր վկայությունները պատահական չեն հայտնվել այդտեղ կամ ուխտագնացության արդյունքում, հավաստվում է Էաչիի և Էսուգանի պապ Պռոշ Խաղբակյան (1223-1284) հզորագույն իշխանի արձանագրության առկա-

---

366 Դիվան, պր. V, էջ 52:

367 **Աշ. Մանուչարյան,** նշվ. հոդված, էջ 104:

368 Դիվան, պր. IV, էջ 150: Իսկ «բարեպաշտ արքայի» թոռ Ամիր Հասան Բ-ի օրոք ծաղկում ապրեց Գլաձորի համալսարանը: Այդ մասին տե՛ս **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք..., էջ 108:

յությամբ Հովհաննավանքում: Ըստ այդ վիմագրի՝ հայոց սպարապետ Պռոշը 1247 թ. Հովհաննավանքին նվիրատվություն է կատարել՝ «Էտու ինչս»՝ ընծայելով խոշոր ունեցվածք, ինչը մակաբերվում է սուրբ ուխտի միաբանների խոստացած :Ժ: (10)օր պատարագ տարվա մեջ մատուցելու փաստից[369]: Հայտնի է, որ միջնադարում ս. պատարագների սահմանվող քանակը կախված էր նվիրատվության արժեքից: Իսկ Հովհաննավանքը հեռու չէ Մուղնուց, և հենց այդ նշանավոր մենաստանի միաբաններն են, ինչպես հաղորդում է Զաքարիա պատմիչ Քանաքեռցին, հիմնադրել Մուղնու Ս.Գևորգ վանքը[370]: Մուղնի բառն էլ ժողովրդականորեն ստուգաբանվել է որպես Հովհաննավանքից մեկ մղոն՝ «մղոն մի» հեռու գտնվող, այստեղից էլ՝ «մղոն մի»= Մղոնի= Մուղնի[371]:

Մուղնու վանքի հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Կ. Մաթևոսյանը, հիմնվելով Մուղնիի Ս. Գևորգ Զորավարի վանքում 1278 թ. և 1280 թ. ընդօրինակված ձեռագրերի վրա, եզրակացնում է, որ «Մուղնիում Ս. Գևորգ անունով եկեղեցի կար 13-րդ դարի վերջերին և որ այն հիմնադրվել է 1278 թ. ավելի վաղ... Վանքի բակում և շրջակայքում կան նաև քառակող կոթողների բազմաթիվ բեկորներ, որոնք 4-5-րդ դարերի հուշարձաններ են»[372]:

Բացի եկեղեցուց, անշուշտ, եղել է նաև կից շինություն: Դրանց պատերին Էաչին և Էսուգանը թողել են արձանագրություններ, որոնցից այժմ միայն գորշավուն ու սպիտակավուն բեկորներ են պահպանվել:

Կ. Մաթևոսյանը, վկայակոչելով Առաքել Դավրիժեցուն, գրում է, որ վանահայր, մուղնեցի Մարտիրոս եպիսկոպոսը (1632-1655) ամբողջովին քանդել է խարխուլ, հին, փոքրիկ աղոթարանը՝ փոխարենը կառուցելով քառասյուն վայելուչ եկեղեցի և պարսպապատել տարածքը[373]: Այստեղից էլ հնարավոր է՝ անհետացել են Պռոշյանների արձանագրությունները, կամ էլ վերաշարվել են պատերի մեջ և չքացել Մարտիրոս եպիսկոպոսի եղբորորդու՝ Հովհաննես վարդապետի (1609-1669) կողմից սրբատաշ քարերով հիմնարար նորո-

---

[369] *Տե՛ս* ***Կ. Ղաֆադարյան,*** *Հովհաննավանքը..., էջ 91:*
[370] *Տե՛ս* ***Զաքարիա Սարկավագ****, հ. 3-րդ, էջ 40-41:*
[371] *Տե՛ս* ***Կ. Մաթևոսյան,*** *Մուղնու Ս.Գևորգ վանքը, Ս. Էջմիածին, 2009, էջ 9:*
[372] ***Կ. Մաթևոսյան,*** *Մուղնու Ս. Գևորգ վանքը, Երևան, 2000, էջ 11:*
[373] *Տե՛ս նույն տեղում, էջ 14-25:*

գության ժամանակ՝ ձեռամբ նշանավոր ճարտարապետ Սահակ Հիզանցու և նրա աշակերտ ու փեսա Մուրադի:

Մուղնին, երևի, Պռոշյան իշխաններին անհրաժեշտ էր որպես հանգրվան՝ անմասն չմնալու Եգիպտոսից, Կիլիկիայից դեպի հեռավոր Կարակորում ձգվող միջազգային առևտրի ճանապարհի անցուդարձից: Բայց Պռոշյանները, որոշ ժամանակ տիրանալով Մուղնի գյուղին, այն օտարել են: 1425 թ. Ազիզբեկի որդի և Գամբիկելի թոռ Զաքարիան գնել է Մուղնի գյուղը[374]:

Ազիզբեկի կամ Ազիզ բեկի հիշատակությունը՝ ամիր Ազիզ ձևով առկա է հետևյալ վիմագրում.

Լուսանկար



Գրչագիր

Ա ԼՍՏՈՒԱ ՅԾ ՈՂ ԼՈՐ ՅՄԻ/ ԱՄԻՐ ԱԶԻԶԻՆ/, ԱՄԷՆ[375]:

Ազիզ բեկի և Զաքարիայի կապակցությամբ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը գրում է. «Իսկ Զաքարիայի մասին ամենեւին բան

---

[374] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը..., էջ 102: Զաքարիան արձանագրության մեջ չի հայտնում, թե ումից է գնել Մուղնի գյուղը:

[375] **Աշ. Մանուչարյան,** նշվ. հոդված, էջ 106:

չգիտենք. թէպէտ մի Զաքարիա, որդի Ազիզբէկին յիշւում է Յովհաննայ վանքի արձանագրութիւնների մէջ, բայց նա թոռն է Գամբիկէլի, ուստի եւ դժուար է հաստատել, թէ Ազիզբէկ Բ-ի (Եղվարդի տիրոջ- Ա. Մ.) որդին է. վերջինիս դեպքում պէտք է ընդունել, թէ այստեղ յիշատակուած Գամբիկէլը Վաչուտեաններից էր եւ մօր կողմից Զաքարիայի պապը, որ յիշատակուել է իբրեւ տեղական իշխան»[376]: Բայց նոր տերը Մուղնիում երկար չի տիրել, ընդամենը վեց տարի, քանի որ «1431 թ. Էջմիածնի վանքը տնտեսապես ամրապնդելու և կաթողիկոսական աթոռանիստ դարձնելու նպատակով, Սյունյաց իշխան Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամը, որն Իսքանդար Կարա-կոյունլուի ամենամերձավոր խորհրդականներից էր ու, թերևս, նշանակվել էր Այրարատյան երկրի կողմնապետ, վաճառքի անվան տակ Էջմիածնի վանքին է նվիրում յոթ խոշոր գյուղեր...»[377], որոնց թվում էր նաև Մուղնին:

Վերադառնալով Պռոշյանների մյուս տիրույթներին՝ ամփոփենք, որ բուն Սյունիքում (Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Արևիք) Խաղբակյան իշխանները սեփականատիրական իրավունքով ոչ մի տիրույթ չեն ունեցել: Սյունիքի պատմության գիտակ Գ. Գրիգորյանը, շրջանառության մեջ դնելով հարուստ վիմագրական նյութ, ամենայն մանրամասնությամբ, գյուղ առ գյուղ, մատնանշում է Պռոշյան տոհմի սեփական կալվածքները, ընդգծում նրա հարևան Օրբելյան տան ավատական տիրույթները, տալիս դրանց ամբողջական պատկերը[378]:

Զաքարյանների իշխանապետության ամենահայտնի ու ազդեցիկ տներից էին Սյունիքի Օրբելյանները: Այս մեծ իշխանության հիմնադիրը Լիպարիտն էր՝ վրաց երբեմնի հզոր Օրբելի ամիրսպասալարների նշանավոր տոհմից: Վրաց Գեորգի Լաշա թագավորի համաձայնությամբ նա աթաբեկ Իվանեից ստանում է ընդարձակ կալվածքներ Վայոց ձորի արևելյան շրջաններում, բուն Սյունիքում, Կոտայքի և Գեղարքունիքի մի մասում «փոխան հայրենեացն»[379]: Լիպարիտն ամուսնանում է իշխանաց իշխան Բուբակի դուստր

---

[376] **Գ. Հովսեփյան,** *Խաղբակյանք..., էջ 419: Սիմեոն վարդապետ Այրիվանեցու 1444 թ. գրված Յայսմաւուրքում հիշատակվում են Եղվարդի տեր Ազիզբեկ Բ-ը ու նրա որդիները՝ Ավագն ու Զաքարիան: Տե՛ս նույն տեղում, էջ 418, տե՛ս նաև* **Ղ. Ալիշան,** *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 569:*

[377] *«Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 39 (այսուհետև՝ ՀԺՊ, IV):*

[378] *Տե՛ս* **Գ. Գրիգորյան,** *Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 89-92:*

[379] **Ստեփանոս Օրբելյան,** *էջ 397:*

Ասփայի հետ[380]*, մերվում Սյունիքի ազնվականներին, դառնում Սյունյաց հայ Օրբելյանների ավատական տան հիմնադիրը՝ նստավայր ընտրելով Եղեգիսը և Արփա ավանը: «Եւ զի նա (Լիպարիտ - Ա. Մ.) եղեւ առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն և տայ (Իվանե - Ա. Մ.) ի ձեռս նորա զՍիւնիս, զՈրոտն, զԲարկուշատ և զայլ բերդորէսն»*[381]*:*

Վայոց ձորի Նորավանից Ս. Կարապետ եկեղեցու վիմագրում արտացոլված է Օրբելի տոհմի երբեմնի փառքն ու անկումը, Սյունիքում նրա հաստատվելն ու երկրորդ վերածնունդը. «Ի թ. :ՈՀ: (1221) Կամաւն Այ. ես Լիպարիտ, որդի Ալակումին, թոռն մեծի Աւրպելանց, զի հայրն իմ Ալումին քինացաւ թագաւորին աբխազաց, գնաց ի տունն աթաբակ Էլտկուզանց եւ նա մեծ աւգատով մեծարեց զնա. ետ նմա մեծ քաղաքն Համիան. ես Լիպարիտս, որդի նորա, մանուկ գոլով դարձա վերըստին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգորի. եկի առ մեծ աթապակ Իւանէ եւ հայրենեցն փոխան երետ զՀարաշկաբերդ իւր կերովս... եւ ես չինեցի զվանքս, որ կոչի Նորավանք...»*[382]*:*

Պռոշյաններից, Օրբելյաններից բացի, Վայոց ձորում ու Գեղարքունիքում, մասնավորապես առաջինի հարավային մասում, և երկրորդի հարավ-արևմուտքում տիրույթներ ուներ վերոհիշյալ իշխանաց իշխան Բուբակը, ով տիրում էր Մազազ գավառում նույնպես: Նա սեփականատեր էր նաև Առինջում, Քանաքեռում, Սյունիքի Նորաշենիկ գյուղում: Բուբակ զորավարը Գեղարքունյաց Հայրավանքում արձանագրել է, որ. «Ի թվ հայոց :ՈԿ: (1211) նորոգեցաւ եկեղեցիս յառաջնորդութեան Յովասափի և Ներսիսի մեծն սպարապետն Բուբայն, տէր երկրիս..»*[383]*: *Նա 1223 թ. Նորավանքին է նվիրում իր արնագին և Զաքարեի ու Իվանեի մեծ սիգելով հաստատված* «զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանաւն ի սուրբ եկեղեցիս Նորավանից՝ ի սուրբ Կարապետս եւ ի սուրբ Նախավկայս տուի ազատ յամէն հարկաց...»*[384]*:

---

[380] *Տե՛ս նույն տեղում:*
[381] *Նույն տեղում:*
[382] *Դիվան, պր. III, էջ 211:*
[383] *Դիվան, պր. IV, էջ 69:*
[384] *Վիմական տարեգիր, էջ 67:*

«Բուբակը եղել է Զաքարյան արքունիքի մսախուրթ - ուխուցեսը, այլ խոսքով, վարել է այնպիսի պաշտոն, որպիսին սկզբնական շրջանում ունեցել է Իվանեն վրացական արքունիքում»[385]: Իշխանաց իշխան, սպարապետ[386] Բուբակին այդ պաշտոնում փոխարինել է Խորաս Արծրունին[387]:

Բուբակը թաղված է Հրազդանի տարածաշրջանի Թեժառույքի վանքում՝ իրենց տոհմական գերեզմանոցում[388]:

XIV դ. սկզբին Բուբակի համանուն ծոռը գրում է, որ ինքը տիկնոջ՝ Մանդրուտի հետ «բազում աշխատութեամբ բերաք զջուրս» Լոռու Մղարթ գյուղը և «կանգնեցաք զխաչս»[389]:

Զաքարյան տիրապետության ժամանակաշրջանում իրենց ռազմական ծառայություններով առանձնապես աչքի է ընկել Խաչեն-Արցախի զինվորական ուժեղ ազնվականությունը: XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին Խաչենում իշխում էին Առանշահիկների Փառիսոսի, Աղվանքի ճյուղավորված սերունդները:

Վերին Խաչենում տիրում էին Վախտանգ Սակռ նահապետի որդիները: Նրանցից ամենանշանավորը՝ Հասան Կրոնավորյալ Հաթերքեցին, համաձայն Դաղիվանքի 1182 թ. խաչքարի արձանագրության, տերն էր Արցախի ամենահայտնի ամրոցների. «... Հաթերքո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո և Հաւախաղացին...»[390]: Նա երկար տարիներ պատերազմելով և Աստուծո օգնականությամբ թշնամիներին հաղթելուց հետո՝ վերոհիշյալ ամրոցներն ու բոլոր տիրույթները հանձնում է իր զավակներին, հագնում կրոնավորի սքեմ, տիկնոջ ու կրտսեր որդու հետ հեռանում Դաղիվանք. «... Եւ եղեն ինձ:Զ:(6) որդի, զբերդերս եւ զգաւառս ետու նոցա, եւ եկի ի վանքս մաւտ իմ եղբայրս տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնաւոր...»[391], «Ես Մամայ թագուհի, ամուսին Հասանայ, դուստր Կուրիկայ թագաւորին կացաք յաւագութե յամս :Լ: (30). ես և այրն իմ թողեալ զՀայրենիքս որդւոց մերոց, եկաք ի վանքս մաւտ տէր Գրիգորիս, և

---

[385] *ՀԺՊ, III, էջ 549:*

[386] *Բուբակի ռազմական ծառայությունների մասին կխոսենք Գ գլխում:*

[387] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 551:*

[388] *Տե՛ս **Պ. Մուրադյան,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 330:*

[389] *Դիվան, պր. IX, էջ 330:*

[390] *Դիվան, պր. V, էջ 198:*

[391] *Նույն տեղում:*

որդին մեր Համանուն նորին, և զգեցաք զձև միանձանց... ՈԼԱ (1182) Թվիս»[392]: *Նրանց երեց որդի Վախտանգը ստանում է տիրույթների կենտրոն Հաթերքը, ստանձնում նաև Արցախի կողմնապետությունը: Վերը նշյալ վանքի գմբեթավոր եկեղեցու արձանագրությունում նա տերն է.* «...Հաթերքո եւ ամենայն Վերին Խաչենո...»[393]:

Արցախի իշխանապետ, որ է իշխանաց իշխան, այսինքն՝ գահերեց Վախտանգ Թագավորազնի մահվանից հետո, քանի որ նա ան-ժառանգ էր. երկու զավակները կյանքից հեռացել էին անժամանակ. «.. զի անդրանիկն .. Հասան սպանաւ ի Թուրքաց պատերազմին ... եւ կրտսեր որդին ... Գրիգոր ... փոխեցան առ Քս ... ի Թւականութեանս Հայոց :ՈԿԳ: (1214)...»[394], *ուստի, ինչպես ընդունված է կարծել, Իվանե աթաբեկը Սակոյանների տիրույթները համաձայնաբար հանձնում է ազգակից տոհմի ներկայացուցիչներին, որոնց ավագի՝ Հասանի կինն էր աստվածազարմ տիրուհի Դոփ Զաքարյանը: Վերջինս, որպես օժիտ ստացել էր Գեղամա երկրի արևելյան կողմերը՝ Ծար-Վայկունիքը: Դրանք Հաթերքցիների տիրույթների հետ միասնաբար կազմում են մի ընդարձակ տարածք, որտեղ իշխում է նորաստեղծ Դոփյան տոհմը:*

Առհասարակ, Դոփի ամուսնու հարցում հայագետների կարծիքները երկփեղկվում են: Մի մասը (Գ. Հովսեփյան[395]*, Բ. Ուլուբաբյան*[396]*, Գ. Կիրակոսյան*[397] *և ուրիշներ) կարծում են, թե նա եղել է Հասանը, ով սերում էր Հաթերքի իշխաններից, իսկ ոմանք էլ (Հ. Շահխաթունյանց*[398]*, Մ. Բարխուդարյանց*[399] *և այլք) գտնում են, որ Դոփը կնության էր գնացել Ղարա Գրիգորին: Վերջինիս գոյությունը ժխտում են Հասանի կողմնակիցները՝ պատճառաբանելով, թե* ***ղարա*** *(սև) Թուրքերեն բառն ավելի ուշ է գործածական եղել*

---

[392] *Նույն տեղում, էջ 215, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 34:*

[393] *Դիվան, պր. V, էջ 199:*

[394] *Նույն տեղում:*

[395] *Տե՛ս* ***Գ. Հովսեփյան,*** *Խաղբակյանք..., էջ 9-10 (տողատակ):*

[396] *Տե՛ս* ***Բ. Ուլուբաբյան,*** *նշվ. աշխ., էջ 157-160:*

[397] ***Գ. Կիրակոսյան,*** *Դոփյան իշխանական տան ծագման հարցի շուրջ, ԼՀԳ, 1985, № 3, էջ 78-79:*

[398] *Տե՛ս* ***Հ. Շահխաթունյանց****, Բ, էջ 358:*

[399] *Տե՛ս* ***Մ. Բարխուդարեանց,*** *Արցախ, էջ 206-207:* ***Կարապետ եպիսկոպոս*** *(Տէր-Մկրտչեանց), Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914, էջ 44-45:*

հայոց մեջ՝ անտեսելով այն փաստը, որ սելջուկների հետ շփումները XI դ. կեսերից են:

Ձնայած Գ. Հովսեփյանի ու Բ. Ուլուբաբյանի ծանրակշիռ թվացող մատենագրական կռվաններին՝ մենք մերժում ենք առաջին տեսակետը՝ հիմք ընդունելով Խաղարի կամ Խաղայի վանքի ժամանակի դրոշմ հետևյալ անթվակիր արձանագրությունը. «...տէր Յոհաննէս շինուող եկեղեցւոյս, որդի Դաւիթին, եղբայր մեծ իշխանին Հասանայ...»[400]. չէր կարող որդին կոչվել հոր անունով: Մեզ համար ընդունելին երկրորդ տեսակետն է՝ ենթադրելով, որ Դոփի ամուսինը կարող է լինել Հասան Կրոնավորյալի այն վեց որդիներից Գրիգորը, ով Դադի վանքի իրենց տապանատանը 1224 թ. նվիրաբերել է չորս տուն շինական[401]:

Դոփյան տոհմի ամենաակնառու ներկայացուցիչ Գրիգոր Բ-ը՝ Հասանի և Մամքանի որդին, Տարսային Օրբելյանի փեսան, Ծարա վանքի մի խաչքարի արձանագրությունում տալիս է իրենց տիրույթների սահմանները. «... Ես Գրիգոր որդի Հասանայ, քաջ և հաղթող զաւրավարին և մեծի իշխանի Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո և այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար, սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք և պարգև քաջութեան»[402]:

Միևնույն ժամանակ Ներքին Խաչենում իշխում էր հաթերքցիներին ազգակից, նույնպես Վախտանգյան անունով տոհմը: Այս իշխանական տան նահապետ Վախտանգ Տանգիկը Գանձասարի վանքի խաչքարերից մեկում հիշատակվում է որպես «տէր Խաչինոյ»[403]: Տոհմի հայտնի ներկայացուցիչը, ինչպես հուշում է Մարտակերտի շրջանի Վաճառ գյուղատեղիի մերձակայքում կանգնեցված «Խենչալ խաչ» կոչվող խաչքարի հիշատակությունը, Հասանն էր.

---

400 Դիվան, պր. V, էջ 128:

401 Տե՛ս նույն տեղում, էջ 201: Այս վիմագրի անմիջապես ներքևում կա կիսաեղծ մի արձանագրություն, որտեղ հիշատակվում է «...Հասան, որդի Գրիգորա» (նույն տեղում):

402 Նույն տեղում, էջ 222: Այս արձանագրության վերջաբանը, որից պարզվում է Ծար-Վայկունքը որպես պարգև քաջության ստանալը, չի կիսում այդ գավառն իբրև Դոփի օժիտ եղած լինելու տեսակետը: Դադի վանքի մի շարք վիմագրերում Հասանը մեծարվում է իբրև «արիական» (Դիվան, պր. V, էջ 206-207) «քաջ զաւրական, արքայաշնորհ իշխան» (նույն տեղում, էջ 214), «մեծ իշխան» (նույն տեղում, էջ 128) և այլ մակդիրներով:

403 Նույն տեղում, էջ 69:

«...Թվիս :ՈԿԵ: (1216) ես Սմբատ, որդի Վախտանգայ տն Խաչինոյ, եղբէր արքէին Հասանայ...»[404]:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքական գործիչ Հասան Ջալալ Դոլան այս տոհմից էր: XIII դարի 20-ական թվական-ներից սկսած՝ արձանագրություններում իբրև. «տէր Խոյախան բերդոյ, Խաչենոյ», «տէր Խաչենոյ»[405] *հանդես է գալիս ինքը: Նրա անունով հետագա տոհմակիցները կոչվում են Հասան-Ջալալյան-ներ:*

Զաքարյան իշխանապետները, հետևելով Բագրատունի թագա-վորների բարի ավանդույթներին, շարունակում են ծայրամասերն ազգակցական-խնամիական բարեկամության հաստատմամբ կենտ-րոնին կապելու քաղաքականությունը: Վերևում նշվեց, որ Զաքա-րեի և Իվանեի քույր Դոփն ամուսնացել էր Ծարա իշխանական տան հիմնադրի հետ: Մյուս քույրը՝ Խորիշահը, կինն էր բուն Խաչենի տեր Վախտանգ իշխանի, մայրը՝ Հասան Ջալալ Դոլայի. «:ՈԿԱ: (1212) Թիւ. Ես Խորիշահ, ամուսին Վախտանգայ տր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերըստին շինեցի զեկեղեցիս Մեծիրանից...»[406]:

Վերին Խաչենի թագավորազն Վախտանգը կնության էր առել Ամիր Քուրդ Արծրունու դուստր Արզույին. «Ես Արզուխաթունս նուաստ աղախին Քի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա թագաւորազնո տն Հաթերքո...»[407]:

Իսկ Գրիգոր Բ Դոփյանի մայրն էր Քուրդ Ա Մեծ Վաչուտյանի և Խորիշահ Մամիկոնյանի դուստր Մամքանը, որի տապանաքարը գտնվում է Դաղիվանքում, ունի հետևյալ մակագրությունը. «Այս է

---

[404] *Նույն տեղում, էջ 84:*

[405] *Նույն տեղում, էջ 78-79: Կարծում ենք՝ Ջալալ Դոլան Հասանի պատվանունն է. «Ջալալ ադ-դոուլա» - "جلال الدولة" արաբերենից թարգմանաբար նշանակում է «պետության վսեմություն»: Նմանապես, նրա եղբայրներից մեկի անունը Նասր Դոլա է, որը նույնպես արաբերեն բառակապակցություն է և թարգմանվում է «պետության հաղթություն»: Երկու եղբայրները, անշուշտ, այդ բարձր պատիվ-ներին արժանացել են զաքարյան ազատագրական բանակներին իրենց ռազմական ծառայությունների դիմաց (վրաց արքունիքում գործածական էին նաև իսլա-մական միապետություններից ընդօրինակված պաշտոններն ու պատվանունները):*

[406] *Նույն տեղում, էջ 12:*

[407] *Նույն տեղում, էջ 199:*

Հանգիստ Մամքանին ամուսնո Հասանա, դստեր Քրդին և Խորիշահի, մաւր Գրիգորս, թվ : Զ[Կ]Դ:(1315)»[408]:

Ահա սրանք են Զաքարյան իշխանապետության հայոց գլխավոր իշխանական տները:

Շիրակի մի մասում՝ Մարմաշենում, Բագնայրում, Լմբատում, իրենց ժառանգական տիրույթներին են վերահաստատվում Պահլավունիները: Ղարիբ Մագիստրոս Պահլավունին Մարմաշենի արձանագրություններից մեկում անվանվում է «քաջ եւ արի զաւրական»[409]: Անտարակույս, ռազմական հարուստ ավանդույթներ ունեցող Պահլավունյաց տոհմի այս շառավիղը եղել է Զաքարեի և Իվանեի զորահրամանատար ու գործուն մասնակցություն ունեցել իր նախնյաց հողերի ազատագրման ժամանակ: Ի դեպ, աղբյուրները հաղորդում են իլխանության շրջանի Պահլավունի մեկ ուրիշ զորավարի անուն՝ «քաջ եւ ընտիր պատերազմող Զաքարիա Պահլաւունի»[410], որը Շահնշահ Ա Զաքարյանի հեջուբն էր և առաջնորդը: Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչներին Զաքարյան իշխանապետերն առավելապես վստահել էին Շիրակի, Անիի հոգևոր և աշխարհիկ գործերի կառավարումը: Նրանք՝ Ապիրատի որդի Սարգիսը, Աբուղամրի որդի Գրիգորը, Ամիր Երկաթ Պահլավունին, նրա որդի Բարսեղը, եպիսկոպոսներ ու ամիրաներ էին: Ինչպես տեսնում ենք, Զաքարյան Ապիրատյանները հաջողությամբ հետամուտ էին Բագրատունյաց Պահլավունիների ռազմական-քաղաքական, հոգևոր - կրոնական և վարչական-տնտեսական հարուստ ավանդույթներին:

Կյուրիկյան Բագրատունիների սերունդները շարունակում էին իշխել Մածնաբերդում և Նոր Բերդում: Կյուրիկյան տոհմի վեր բարձրացման գործում, հավանաբար, նպաստավոր գործոն է հանդիսացել խնամիական կապի հաստատումը Զաքարյանների հետ ի դեմս Աբաս Բ Կյուրիկյան (1185-1192) թագավորի և Վանենի-Նայի՝ Զաքարեի և Իվանեի քույրերից մեկի: Դա էլ իր հերթին, ինչպես նկատվել է, Զաքարյաններին առիթ է տվել իրենց ծագումը բխեցնելու Բագրատունիներից: Վաղամեռիկ Աբասի (մռ. 1192) կին

---

[408] *Նույն տեղում, էջ 214-215:*

[409] ***И. Орбели**, Избранные труды, с. 443.*

[410] ***Գ. Հովսեփյան**, Խաղբակյանք…, էջ 8 (տողատակ), 11:*

Վանենի-Նանան հայտնի է Սանահնի կամրջի շինարարությամբ[411] *և Հովհաննավանքի պարսպապատմամբ*[412]*:*

Հռոմոսի ՈՀԸ (1229) թ. նվիրատվական արձանագրությունում Կյուրիկե Բ թագավորի (1145-1185) ծոռ Վասակը հիշատակվում է որպես «տէր Նորբերդի»[413]*: Ռ. Մաթևոսյանը նրան համարում է Նոր Բերդի իշխանության հիմնադիրը*[414]*: Վասակի անվան հետ է կապված Տավուշի Անապատ վանքի Նոր Վարագ վերանվանումը, երբ 1231 թ. Վասպուրականի Վարագավանքի վանահայր Ղուկասը, նեղվելով Խորասանի սուլթան Ջալալ ադ-Դինի, ապա մոնղոլների ասպատակիչ արշավանքներից,* «առեալ զտիեզերահամբաւ սբ Նշանն... զ:զ: (6) ամ շրջեցա թափառեալ ի տեղո ի տեղ..., հասի ի Նոր Բերդ առ Քսասէր իշխանն Վասակ և Աճաբնակ Անապատ կոչեցեալ վանքս, ...նկատեցի... գեղաղեշ եկեղեցիս... և էտու զխաչս յեկեղեցիս...»[415]*:*

Անապատի մեծ տաճարի շինարարական վկայագիրն ավետում է, որ «ես Վասակ, որդի Դաւթի, որդի Վասակա, ի տանէ Բագրատունի, ի տոհմէ Դաւթա մարգարէի ի փառս Այ կատարեցի զեկեղեցիս.. յաւուր որում Վարագա հայրն Ղուկաս զսբ Նշանն ետ յեկեղեցիս...»[416]*: Նա արձանագրություններից մեկում հիշատակվում է* «իշխանաց իշխան»[417] *տիտղոսով:*

Վասակի հայր Դավիթը՝ «որդի Վասակա, թոռն Կիւրիկէ արքաի շինեցի զԱնապատս յիմ իշխանութեանս ձեռամբ վարդապետին Մխիթարա և ի :ՈԽԷ:(1198) թվիս շինեցի զեկեղեցիս» *փոքրիկ, ինչի ակնարկը կա վերոհիշյալ վկայագրում, իսկ 1200 թ.՝ տապանատուն*[418]*:*

---

[411] *Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 20:*

[412] *Տե՛ս* ***Կ. Ղաֆադարյան*** *, Հովհաննավանքը..., էջ 113:*

[413] *Վիմական տարեգիր, էջ 72:*

[414] *Տե՛ս* ***Ռ. Մաթևոսյան,*** *Տաշիր-Ջորագետ, Երևան, 1982, էջ 109:*

[415] ***Կ. Ղաֆադարյան,*** *Էջեր հայ միջնադարյան մշակույթի և պատմության, էջ 259-260:*

[416] *Նույն տեղում, էջ 259:*

[417] ***Գ. Սարգսյան,*** *Անապատ կամ Նոր Վարագ վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1952, ԺԱ-ԺԲ, էջ 30:*

[418] ***Կ. Ղաֆադարյան,*** *Էջեր հայ միջնադարյան մշակույթի և պատմության, էջ 272, 247:*

Ինչ վերաբերում է Դավթի հորը՝ Կյուրիկեի որդի Վասակին, ապա նա Կ. Ղաֆադարյանի դիտարկմամբ. «հիշվում է միայն Դավթի և նրա որդի Վասակի արձանագրությունների մեջ»[419]:

Իսկ Մխիթար Գոշի նշանավոր աշակերտ Վանական վարդապետ Տավուշեցու (ով ուսուցիչն էր Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու) «ի խամո» հիմնարկած Խորանաշատի 1246 թ. վիմագրում հիշատակվում է Մածնաբերդի իշխան Կյուրիկյան Աղսարթան Ա-ի (1192-1232) որդի Կյուրիկե Գ (1232-1250-ական)[420]: Նրան, ըստ Ղ. Մովսիսյանի կազմած Կյուրիկյանների տոհմածառի, 1256 թ. հաջորդել է որդին՝ Թաղիադինը[421]:

Հյուսիսարևելյան Հայաստանի երևելի տներից էին Դսեղի Համազասպյանները, որոնց տիրույթներն ընդգրկում էին Մղարդ, Կարմիր քար, Կկուաշեն, Ծաղկոտ, Ագարակ և այլ գյուղեր[422], «Դեբեդի աջակողմյան վտակներ Մարց և Ալարեքս գետակների անտառապատ ձորահովիտներն ու արգավանդ դաշտերը՝ թեև կալվածքներ ունեին և այլուր (Կոտայք, Ուրծ, Խրամ)[423]: Համազասպյանների ներկայացուցիչները մի շարք վիմագրերում իրենց կոչում են «յազգէ Մամիկոնեանց»[424], ինչը համահունչ է Սանահնի վանքում 1191 թ. «Քուրդ, Հասան, Համազասպ, Սարգիս՝ որդիք Սմբատա, որդո Համազասպա մարծպանի» անուններից կատարված անշարժ գույքի նվիրատվությունում «տվաք զՄանթաշա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տայքս» հիշատակության հետ[425]: Իսկ Տայքը, ինչպես գիտենք, ի սկզբանե Մամիկոնյանների հայրենական կալվածքն էր[426]:

Բերված վկայություններից ակներև է, որ տոհմի նահապետ Համազասպը հանդիսացել է մարզպան՝ ներկայիս ըմբռնմամբ վարչապետ, անշուշտ, Կյուրիկյանների թագավորությունում: Հետագայում մարզպան բառն այդ տոհմում կիրառվել է անձնանվան

---

419 Տե՛ս նույն տեղում, էջ 250:

420 Տե՛ս նույն տեղում, էջ 283:

421 Տե՛ս **Ղ. Մովսէսեան,** Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 95:

422 Տե՛ս **Ա. Շահինյան,** Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII-XIII դդ., ԼՀԳ, 1968, № 3, էջ 91:

423 Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 355:

424 Նույն տեղում, էջ 362, 367:

425 Նույն տեղում, էջ 37:

426 Տե՛ս **Ա. Շահինյան,** նշվ. հոդված, էջ 91:

իմաստով, ինչպես Շահնշահը Զաքարյանների մոտ: Կյուրիկյանների և Մամիկոնյանների հարաբերությունները Զաքարյան շրջանում ամրապնդվել են խնամիական կապի հաստատմամբ: Այսպես, Քոբայրավանքի և Գողգոթավանքի միջև 1223 թ. կանգնեցված խաչքարի պատվանդանին հիշատակված է Մամքան թագուհի, ով դուստրն է Կյուրիկեի[427]: Մամքանը, ըստ Դիվան, պրակ IX-ի հեղինակների, կինն է Համլիկ Մամիկոնյանի[428]: Նրանք միասին հիշատակվում են Բարձրաքաշի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու 1239 թ. և գավթի անթվակիր վիմագրում, բայց առանց տիկնոջ տոհմական պատկանելության հիշատակության[429]: Այս տեսակետը չի կարելի անվերապահորեն ընդունել ի գիտություն, քանի որ Համազասպյան-Մամիկոնյան հզորագույն իշխան Մարծպանի կնոջ անունը նույնպես Մամքան է:

Ըստ Գողգոթավանքի 1223 թ. արձանագրության՝ էր «որդիացեալս Մամքանա» Նրջիս՝ «դուստր Մեծին Սարքսի»[430]: Նրջիսը Զաքարեի և Իվանեի չորս քույրերից մեկն էր: Եթե վստահենք Դիվան, պրակ IX-ի հեղինակների՝ եղծված հատվածի վերականգնման ճշտությանը, ապա Նրջիսը, ըստ վերոհիշյալ 1223 թ. խաչքարի հիշատակության, քույրերից ավագն էր: Նա Դսեղի Մանիկոնյանների հարսն էր, որն «անզաւակ գոլով» կյանքի վերջին տարիներին ճգնավորեց Սանահնի վանքում և թաղվեց այնտեղ (մոտ. 1234 թ.)[431]:

Վիմագրերը չեն նշում, թե ո՞ւմ կինն է եղել Նրջիսը: Նա մինչև ճգնակեցության անցնելը, դատելով վիմագիր հաղորդումներից, հավանաբար, եղբորորդի Շահնշահի խորհրդով ստանձնել է Համազասպյան տիրույթների կառավարչի պաշտոնը՝ որոշակի իրավասությունների շրջանակներում[432]: Վիմագիր սկզբնաղբյուրները հայտնում են նաև նրա դաստիարակների՝ («սնուցած Նրջիսին») անունները՝ Խոստրով, Գրիգոր[433]:

Դսեղի Համազասպյան-Մանիկոնյաններին խնամիացել էր Հյուսիսային Հայաստանի երևելի տոհմերից մեկը՝ Ուքանյանները, որոնք նույնպես Զաքարյանների վասալներից էին: Մղարթի 1201 թ.

---

[427] *Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 343 -344:*
[428] *Տե՛ս նույն տեղում, էջ 343:*
[429] *Տե՛ս նույն տեղում, էջ 367, 381:*
[430] *Նույն տեղում, էջ 340:*
[431] *Նույն տեղում, էջ 100, 338:*
[432] *Տե՛ս նույն տեղում, էջ 341:*
[433] *Նույն տեղում, էջ 338, 341: Վիմական տարեգիր, էջ 78:*

խաչքարի արձանագրությունում Նաջմադինի դուստր Աղուտը հայտնում է, որ իր ամուսին Սարգիս Համազասպյան-Մամիկոնյանի և դստեր՝ Մամնայի մահվան կապակցությամբ նրանց հոգու հանգստության համար Սանահնի վանքին է նվիրաբերում Աբլասա-ղենց տունն իր ամեն ինչով և 25 օրավար հող՝ Զաքարիա ամիր-սպասալարի հրամանով[434]: Աղուտի հայր Նաջմադինը՝ «որդի Սմբատա, թոռն Ուքանա», Հաղբատավանքի իրենց տոհմական եռախորան դամբարանի 1211 թ. խաչքարի հիշատակագրում հայտնում է, որ իր որդիներ Սմբատի և Վահրամի հետ միասին վրաց թագավորաց թա-գավորներ Գեորգիին և նրա դստերը՝ Թամարին, իրենց «շատ ծառա-յութեան» դիմաց հատուկ հրովարտակով՝ սիգելով ստացել են Ծոբ գյուղը (գտնվում է Վրաստանի սահմաններում), որից էլ Զաքարիա շահանշահի ու Իվանեի արևշատության և մեղաց թողության համար Հաղբատավանքին են նվիրաբերում շինական ու այգի[435]:

Այս և վերը նշված մյուս գլխավոր իշխանական տները վասալ-կան կախման մեջ էին գտնվում Զաքարյան իշխանապետներից: Բացի այդ, Հայաստանի զանազան վայրերում կային բազմաթիվ մանր իշխանական տներ, որոնց կարելի է համարել կրկնակի վասալ-ներ, քանի որ նրանք մի կողմից կախման մեջ էին գտնվում տեղի գլխավոր իշխանից և մյուս կողմից, նրա միջոցով՝ Զաքարյան իշխանապետից:

Արցախում, բացի վերը հիշատակված հիմնական տոհմերից, կա-յին նաև փոքր ազնվական տներ, որոնցից Հայաստանի քաղա-քական կյանքում նշանակալի դեր էին խաղում Դլենյանները և Դե-սումյանները: Վերջիններիս ավատական տիրույթները գտնվել են Արցախի հյուսիսային մասում՝ սահմանակից Գագի Զաքարյան-Վահրամյան ուժեղ տոհմի տարածքներին, որի հետ էլ ունեցել են խնամիական կապեր: Դրա վկայությունը Հաղբատավանքում Հա-սան Դեսումյանի դուստր, Գագի տիկին Խաթունի ընդարձակ արձա-նագրությունն է, որից տեղեկանում ենք, որ նա Գագի, Տավուշի, Գարդմանի, Տերունականի... տեր Զաքարիա Վահրամյանի կինն էր[436]: Խաթունը Հաղբատում կառուցել է եկեղեցի, որի բակում

---

[434] *Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 332-333:*

[435] *Տե՛ս* ***Կ.Ղաֆադարյան,*** *Հաղբատ, էջ 230-231:*

[436] *Տե՛ս նույն տեղում, էջ 220:*

թաղվել են նրա Սենեքերիմ և Սևադա եղբայրները՝ մահացած երի-տասարդ հասակում[437]:

Դեսումյանների երիտասարդ ներկայացուցիչ Դեսում իշխանը Հասան Ջալալի հետ բանակցությունների է գնացել մոնղոլ Մանգու տիրակալի մոտ[438]:

Սյունիքում բացի Օրբելյաններից ու Պռոշյաններից, տիրույթներ են ունեցել Շահառունենց, Մահևանյանների փոքր իշխանական տները, որոնք եղել են Օրբելյանների վասալները: Վիմական աղբ-յուրներից հետևում է, որ առաջիններն իշխել են Վայոց ձորի արևելյան կողմում: Ցաղաց քարի արձանագրություններում նրանք հորջորջվում են որպես «տէր Երերանա»[439], այսինքն՝ Հերհերի: Դա եղել է նրանց իշխանության կենտրոնը: Շահառունյաց տան ան-դամները զանազան վասալական պարտավորություններ են կատա-րել իրենց Օրբելյան տերերի մոտ, իսկ ավագ ներկայացուցիչները հանդիսացել են Օրբելյանների «ասպարապետները»[440]:

Ինչ վերաբերում է Մահևանյանների ավատական տիրույթներին, ապա դրանք գտնվել են Վայոց ձորի արևմտյան մասում՝ իշխանա-կան նստավայր ունենալով Նրբույն բերդը[441]: Մահևանյանների հարևանությամբ՝ Արփայում, Նորավանում իշխում էր Օրբելյան-ներից վասալական կախման մեջ գտնվող մեկ ուրիշ՝ Ախթամարյան-ների տոհմը:

Ներկայիս Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում՝ Մակարա-վանքի շրջակայքում, գործում էին մեծահարուստ իշխաններ Կուտ-կանենք, որոնք հանդիսանում էին Մահկանաբերդի Արծրունիների վասալները: Այս տան անդամները քանիցս հիշատակվում են Մա-կարավանքի արձանագրություններում[442]:

Պատմական Կայան կամ Սևորդյաց գավառում XII-XIV դդ. տի-րույթներ ունեին Հարբանց իշխանները, որոնց ներկայացուցիչները վիմագրեր են թողել նաև հռչակավոր Վաչուտյաններին ենթապատ-կան Նիգի Աստվածընկալ վանքում:

---

437 Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 201:
438 Տե՛ս նույն տեղում, էջ 202:
439 Դիվան, պր. III, էջ 80:
440 Նույն տեղում, էջ 50:
441 Տե՛ս **Գ. Գրիգորյան,** Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 56:
442 Տե՛ս Դիվան, պր. VI, էջ 163, 169, 170:

Հայաստանի տարբեր վայրերում, հատկապես Սանահնի ու Խծկոնքի վիմական աղբյուրներում, հիշատակվում են մի շարք իշխանական անուններ. «Թու :ՈՀԱ: (1222) Ես Դավիթ իշխան, որդի Շոթոռկաէ գնեցի զՈռնակ, Գոմոց կեսն...»[443]: Այս տոհմի մի ճյուղը հաստատվել էր Սյունիքում՝ նահանգի ազատագրումից հետո: «1236 թ. աղբյուրներից մեկում հանդես է գալիս Սմբատը, որը կոչված է որդի Գրիգորի և թոռն իշխանաց իշխան Դավթի Շոթոռկանց»[444]:

Խծկոնքում 1214 թ. Գրիգորի որդի Դավիթ իշխանն արձանագրում է, որ ինքը եղել է Զաքարե ամիրսպասալարի զորավարը՝ ավելացնելով. «... տեսի զպայծառութիւն սուրբ ուխտիս Խծկաւնից ես եւ որդիք իմ հարազատք Գրիգոր եւ Գայլ Շէրպարիք, եւ ետու զիմ սեփական զգիւղն, զՎահանառծիշո զկէսն ի սուրբ Սարգիս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց»[445]: Հավանաբար, աչքի է ընկել Խծկոնքի ազատագրման ժամանակ:

XIV դ. Արայի լեռան հարավ-արևմուտքում՝ Եղվարդ կենտրոնով, իշխում էին Զաքարյանների վասալ Ազիզբեկենք: Հովհաննավանքի գավթի հարավարևելյան սյան արևելյան մասում քանդակված է խաչ, որի վերնամասի երկու կողմերում մեկ տողով արձանագրված է.

ԱԶԻԶ ՔԱԶԻՆ[446]:

Գրչագիր

Հնարավոր է՝ Ազիզը լինի Ազիզբեկ Ա-ի՝ Ազիզբեկենց տոհմի հիմնադրի, Եղվարդի տիրոջ հիշատակությունը: Նա եղել է Շահընշահ Բ Զաքարյանի (1291-1320) զորավարներից[447]:

---

[443] **Կ. Ղաֆադարյան,** *Սանահնի վանքը..., էջ 108:*
[444] **Գ. Հովսեփյան,** *Խաղբակյանք..., էջ 9, տողատակ:*
[445] *Վիմական տարեգիր, էջ 56-57:*
[446] **Աշ. Մանուչարյան**, *Նոր վիմագրեր Հովհաննավանքից, էջ 92:*
[447] *Տե՛ս* **Գ. Ցովսէփեան,** *Ազիզբեկենք և նրանց շինարարական գործը, ԲՀԳԻ, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 180:*

Երկրորդ ճանապարհով՝ առևտրով, վաճառականությամբ և վաշխառությամբ երկրի հասարակական-քաղաքական կյանքում վեր բարձրացած մեծահարուստների թվից ամենաերևելին, աներկբայորեն, Տիգրան Հոնենցն էր, ով, անտարակուսորեն, զբաղվում էր Զաքարյանների բանակների ֆինանսական-նյութական մատակարարմամբ: Նրա ահռելի հարստության արտացոլումն է 1215 թ. Անիում իր իսկ կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարական-նվիրատվական ընդարձակ արձանագրությունը, ըստ որի՝ նա վանքին է նվիրաբերել ակնեղենով, մարգարիտներով զարդարված ոսկյա և արծաթյա բազմաթիվ նվիրական, ծիսական և այլ առարկաներ, հոգևորականների համար հիմնել կացարաններ, պարսպապատել մենաստանը, ընծայել կալվածքներ, հողեր, բաղնիքներ, ձիթհաններ, ախոռներ, ջրաղացներ, տներ, մեկական այգի Երևանում, Օշականում, Կոշում, Արուճում, Մրենում և այլն[448]:

Առևտրավաշխառուական խավից բարձրացած ու երկրի կառավարման գործերում եռանդուն մասնակցություն ունենալու դրսևորումներն ակնառու են հատկապես մոնղոլական տիրապետության օրոք: Այդ շրջանում առավելապես աչքի են ընկնում Ումեկյաններն ու Ավետենք, որոնց կանդրադառնանք ավելի ուշ:

[448] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 63:

2. ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Զաքարե և Իվանե եղբայրները Հայաստանի հյուսիսարևելյան տարածքները սելջուկ-թուրքերից ազատագրելուց հետո դրանց վրա հաստատեցին իրենց տերությունը: Ընդունելով վրաց թագավորների գերակայությունը՝ նրանց իշխանությունը, ըստ էության, եղել է անկախ, ներքին ինքնավարությամբ օժտված, ավատական Արևելքին բնորոշ պետական կառուցվածքով: Այլապես նրանք Այրիվանքի անթվակիր արձանագրությունում չէին մեծարվի «թագաւորազնոյն»[449], Հոռոմոսի 1206 թ., Բջնիի 1209 թ., Բագնայրի 1216 թ., Անիի 1210 թ. վիմագրերում՝ «շահանշահ»[450], Անիի Աղջկաբերդի անթվագիր վավերագրում՝ «թագաւոր»[451], Իվանեի կինը՝ Խոշաքը, Շիրակավանի 1228 թ. և Բագնայրի 1231 թ. վկայագրերում՝ «թագուհի»[452], իսկ նրանց «տերութիւնը» Հաղարծնի 1206 թ., Բջնիի 1209 թ. հիշատակություններում չէին անվանի «աշխարհակալ» կամ «յաշխարհակալութեան... մեծ շահանշահաց Զաքարէի եւ Իւանէի...»[453]:

Մենք չենք կարող համաձայնել պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետին, ըստ որի. «Զաքարյանները միահեծան պետություն չկազմեցին, այլ երկու եղբայրներով երկու ճյուղի բաժանված ավագ կամ ազդեցիկ ներկայացուցչի գերիշխանության տակ՝ առաջ բերին հայ իշխանությունների մի ամբողջ ցանց նորանվաճ երկրում: Զաքարյանների անմիջական ստեղծագործությունն էին Վաչուտյանց, Օրբելյանց և Պռոշյանց մեծ իշխանությունները ենթարկված Զաքարյաններից մեկի կամ մյուսի գերիշխանության, նայելով, թե նրանցից որի պետության մասն էին կազմում»[454]:

Եթե մեծավաստակ Գարեգին Հովսեփյանը Հայաստանի XIII դ. սկզբների ողջ պետական կառավարման իրականացումը տեսնում է երկու, ապա Հակոբ Մանանդյանը երեք ճյուղերի միջոցով՝ ավելացնելով նաև Զաքարյաններին արյունակից Գագի Վահրամյանների

---

[449] ***Հ. Շահխաթունյանց,*** *Բ, էջ 284:*
[450] *Վիմական տարեգիր, էջ 47, 50: Դիվան, պր. I, էջ 55:*
[451] *Դիվան, պր. I, էջ 57,*
[452] *Վիմական տարեգիր, էջ 71, 74:*
[453] *Դիվան, պր. VI, էջ 24, Վիմական տարեգիր, էջ 50:*
[454] ***Գ. Հովսեփյան,*** *Խաղբակյանք..., էջ 7:*

անունը[455]: Հակոբ Մանանդյանին համակարծիք է նաև անվանի միջնադարագետ Լևոն Բաբայանը[456]:

Սույն տեսակետը վավերացված է նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության III հատորում[457]:

Այլ է վկայում վիմական բնագրերի ժամանակագրական քննությունը, որով պարզորոշ երևում է ոչ թե երեք ճյուղերի միջև մասնատված, այլ լրիվ միասնական հայկական պետություն՝ ղեկավարումն իրականացված Զաքարյան տոհմի ավագ ներկայացուցիչների կողմից՝ ժառանգական իրավունքով, սկզբում Զաքարեի և Իվանեի, հետո վերջինիս, այնուհետև Շահնշահի, ապա Ավագի մասնակցությամբ:

Իսկ երեք ճյուղերին պատկանող տիրույթները նրանց ժառանգական «սեփական հայրենիքն էր», ինչպես Ամբերդը Վաչուտյաններինը, Վայոց ձորի մի մասը՝ Խաղբակյաններինը, Սյունիքը՝ Օրբելյաններինը, Վերին Խաչենը՝ Վախտանգյան-Սակայաններինը, ապա Դոփյաններինը, բուն Խաչենը՝ մյուս Վախտանգյաններինը և այլն, որտեղ լինելով կենտրոնական իշխանության ներկայացուցիչները, միաժամանակ հանդիսանում էին դրանց լիիրավ տերերը:

Հ. Մանանդյանը գրում է. «Ուշագրավ է, որ Խաղբակի որդի Վասակը, իր կառուցած եկեղեցու արձանագրության[458] մեջ մատնանշում է, որ իրեն պատրոններ են եղել Իվանե աթաբեկը և ամիր սպասալար Զաքարեի որդի Շահնշահը»: Ըստ այսմ, գիտնականը ենթադրում է, որ Խաղբակյանների կալվածքների մի մասը գտնվել է ամիրսպասալար Զաքարեի գերիշխանության տակ գտնվող Այրարատ նահանգի շրջանում [459]: Եթե այստեղ մեջբերենք Ամբերդի անթվագիր արձանագրության «Ի ժամանակս տէրութ լեան՝ Իւանէի և Շահինշահի, ի վերակացութ լ եան՝ գաւառիս Վաչէի...» սկզբնահատվածը[460], ապա կպարզվի այն խնդիրը, որ Վաչուտյանների կալ-

---

[455] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 146:

[456] Տե՛ս **Լ. Բաբայան,** Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը, 13-14-րդ դարերում, էջ 64:

[457] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 541:

[458] Վիմական տարեգիր, էջ 144:

[459] **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, էջ 154-155:

[460] **Ս. Հարությունյան,** Անբերդ, Երևան, 1978, էջ 55-56:

վածքները ոչ թե երկուսի տիրույթներում էին գտնվում, այլ որ Հայաստանի պետական գործերը վարում էին Իվանեն ու Շահնշահը:

Զաքարյան ավագ ներկայացուցիչները, լինելով Հայաստանի տերերը, միաժամանակ հանդիսանում էին Վրաց արքունիքի ՆԳ նախարարը՝ մանդատուրթ-ուխուցեսը, առաջին վեզիրը (նախարարը)՝ մսախուրթ-ուխուցեսը, զորաց գլխավոր հրամանատարը՝ ամիրսպասալարը, խնամակալը՝ աթաբեկը: Վերջին երկու պաշտոններն ունեն արաբա-թուրքա-պարսկական ծագում և ի սկզբանե կիրառվում էին Արևելքի իսլամական երկրներում: Այսպես, օրինակ՝ Անի քաղաքի վերին դարպասների վրա փորագրված արաբերեն արձանագրությունում XI դ. երկրորդ կեսի Շադդադյան գործիչ Ֆախր ադ-Դինը հիշատակվում է ամիրսպասալար կոչումով[461]: Կարսի 1152 թ. արաբերեն վիմագրում Աբու Սաիդ իբն Յուսուֆը նույնպես կոչված է ամիրսպասալար[462]:

Նշենք այն հետաքրքրական հանգամանքը, որ Իվանեն ամիրսպասալար Զաքարեի կենդանության օրոք ոչ մի արձանագրության մեջ չի հիշատակվում աթաբեկ տիտղոսով: Այն ստացել է միայն եղբոր մահից հետո՝ 1211 թվականին: Ի դեպ, Զաքարեի մահվան տարեթվի մասին մեր սկզբնաղբյուրները տալիս են հակասական վկայություններ: Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ 1211[463], Վարդան Արևելցու[464], Անանուն Սեբաստացու[465] և Ստեփանոս Օրբելյանի՝ 1212[466], Ստեփանոս եպիսկոպոսի[467] և Կիրակոս Գանձակեցու՝ 1213[468]: Ուսումնասիրողներից Մ. Զամչյանը համարում է 1211[469], Մ.

---

[461] ***А. Хачатрян,*** *Корпус арабских надписей Армении VIII-XVII вв., Ереван, 1987, էջ 55, (այսուհետև՝ Корпус арабских надписей Армении):*

[462] *Նույն տեղում, էջ 60:*

[463] *Տե՛ս* ***Մխիթար Այրիվանեցի,*** *էջ 65:*

[464] *Տե՛ս* ***Վարդան****, էջ 140:*

[465] *Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 136-137:*

[466] *Տե՛ս* ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 393:*

[467] *Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. Ա, Երևան, 1951, էջ 38:*

[468] *Տե՛ս* ***Կիրակոս Գանձակեցի****, էջ 136:*

[469] *Տե՛ս* ***Մ. Զամչյան,*** *Բ, էջ 185:*

Օրմանյանը[470] և Հ. Մանանդյանը՝ 1212[471], Ս. Երեմյանը[472] և Ա. Գալստյանը՝ 1213 թվականը[473]:

Նույն հակասական տեղեկություններն են նաև վիմական աղբյուրներում: 1215 թ. Այրիվանքի[474], Անիի Տիգրան Հոնենցի և Սարգսի աշտարակի վիմագրերում[475] Զաքարեի կենդանի լինելու հիշատակությունները, անշուշտ, հուշում են, որ դրանց կառուցումն սկսվել է դեռևս նրա տիրապետության օրոք:

Բագարանի մի արձանագրության համաձայն Զաքարեն վախճանվել է 1211 թվականին. «... ՈԿ ... վասն ամիր սպասալար Զաքարէի հոգոյն՝ հաւր Շահնշահի...»[476], քանի որ հոգու համար որևէ բան արվում է մարդու մահից հետո, այլ ոչ թե նրա կենդանության օրոք:

Սակայն Խծկոնքի[477], Հաղբատի[478], Նորատուսի 1211 թ.[479] վիմագրերում նա դեռևս կենդանի է: Ուստի, կարելի է ենթադրել, որ Զաքարե ամիրսպասալարը վախճանվել է 1211 թ. վերջերին[480]:

Զաքարեի մահից հետո, ինչպես գրում է «Թագակիրների պատմականն ու գովասանքը» երկի վրացի պատմիչը, երբ Թամար թագուհին (1184-1213) կամենում է Իվանեին արժանացնել ամիրսպասալարության կոչման, նա իր անձը համեստորեն անարժան համարելով եղբոր պաշտոնում՝ խնդրում է իրեն չնորհել աթաբեկության բարձրագույն պատիվ. «սուլթանների օրենքով աթաբեկը թագավոր-

---

470 Տե՛ս **Մ. Օրմանյան,** Ազգապատում, Ա, էջ 1857:

471 Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, էջ 142:

472 Տե՛ս **Ս. Երեմյան,** Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ, Երևան, 1944, էջ 62:

473 Տե՛ս **Ա. Գալստյան,** Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945, էջ 7:

474 Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 59:

475 Տե՛ս Դիվան, պր. I, էջ 63, 2:

476 **Ն. Սարգիսեան,** Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 203: Հմմտ. **Ղ. Ալիշան,** Այրարատ, 67, Վիմական տարեգիր, էջ 53:

477 Տե՛ս Վիմական տարեգիր, նույն տեղում:

478 Տե՛ս Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 218:

479 Տե՛ս Դիվան, պր. IV, էջ 25:

480 Տե՛ս **Աշ. Մանուչարյան,** Զաքարե ամիրսպասալարի մահվան թվականի ճշգրտումն ըստ Բագարանի արձանագրության, «Շիրակի պատմ.-մշակութ. ժառանգ. նվ. III հանր. գիտ. զեկ. հիմնադրույթներ», Գյումրի, 1998, էջ 33-35:

ների և սուլթանների հայր և դաստիարակ է համարվում»[481]: XIV դ. վրաց Անանուն «Ժամանակագրության» հեղինակը նշում է, որ «...աթաբեկությունը, որը մինչ այդ չկար վրաց արքունիքում, բոլոր իշխաններից առավել գերազանցն էր... և նա արքունիքի վեզիրն էր»[482]: Ըստ մեզ՝ աթաբեկությունը պետք է հասկանալ ոչ միայն տվյալ դեպքում 14-ամյա արքայազն Գեորգի Լաշայի, այլև Զաքարեի որդու՝ Շահնշահի, և ամենակարևորը, աթաբեկը նաև Հայաստանի, հայոց գործերի խնամակալն էր: Համոզված ենք, եթե չլիներ մոնղոլների վերահաս տիրապետությունը, ապա Իվանեն, անշուշտ, Շահնշահին կթագավորեցներ Հայոց վրա, մանավանդ, Խծկոնքի վանքի 1216 թ. արձանագրության մեջ նա կոչվել է «աստուածասէր բարեպաշտ թագաւոր»[483]:

Այս ամենից հետևում է, որ Հայաստանի կառավարման գործերով բացառապես զբաղվել է Իվանեն՝ հետագայում դրանում մասնակից դարձնելով Շահնշահ Սարգսին և Ավագին: Դա են վկայում Հայաստանի տարբեր շրջանների բազմաթիվ արձանագրությունները՝ Թանատի վանքի 1215 թ.[484], Անիի Մխիթարի բուրգի անթվակիր[485], Վարդենիսի տարածաշրջանի Արտանիշ գյուղի 1216 թ. խաչքարի[486], Մարտունու 1220 թ. խաչարձանի[487], Անիի Եղբայրիկի բուրգի 1222 թ.[488], Նորավանքի 1223 թ.[489], Կեչառիսի 1226 թ.[490] և այլն:

Պետական կարևորագույն հարցերը, որպես կանոն, քննարկվել են արքունական դիվանում (իմա՝ պետական խորհուրդ), ռազմական, տնտեսական, հասարակական, վարչական, ֆինանսական, դատական և այլ լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց՝ գործակալների մասնակցությամբ:

---

481 «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» թրգ. Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, Երևան, 1936, էջ 23, նաև՝ ՀԺՊ, III, էջ 545:

482 Նույն տեղում, էջ 50, նաև՝ ՀԺՊ, III, նույն տեղում:

483 **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք..., էջ 6:

484 Տե՛ս Դիվան, պր. III, էջ 246:

485 Տե՛ս Դիվան, պր. I, էջ 4:

486 Տե՛ս Դիվան, պր. IV, էջ 382:

487 Տե՛ս Նույն տեղում, էջ 213-214:

488 Տե՛ս Դիվան, պր. I, էջ 7:

489 Տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսական, էջ 186: Հմմտ. Վիմական տարեգիր, էջ 67:

490 Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու գավթի հյուսիսային պատին կարմրաներկով վավերացված, իրավական բնույթի հինգ տողանոց այս անտիպ վիմագիրը, որն ունի «Տերութիւն Իւանէի եւ երկուց հարազատաց որդեացն իւր Շահնշահա եւ Աւագին» սկզբնամասը, հայտնում է վանքին հարկատու գյուղեր հաստատելու որոշման մասին: Վիմագիրը քաղել ենք՝ **Գ. Գ. Սարգսյան,** Դիվան, պր. ձեռագիր:

Իվանեի խնամակալության շրջանում, ինչպես հայտնի է, հայոց դիվանը գտնվել է Դվին քաղաքում:

Հայրավանքի 1211 թ. արձանագրության մեջ հիշատակված «մեծ սպարապետ»[491] և Նորավանքի 1223 թ. վիմագրի «իշխանաց իշխան»[492] Բուբակն էր Իվանեի իշխանապետության շրջանի գլխավոր գործակալը և «աւագ հէջպացը»[493]: Դա համարվել է Զաքարյաններին արքունիքի բարձրաստիճան պաշտոնը և համապատասխանել վրացական մսախուրթ-ուխուցեսին՝ արքունի վեզիրին: Ինչպես հայտնի է, Վրաստանում այն վարել է Իվանեն մինչև աթաբեկություն ստանալը, այնուհետև՝ Վահրամ Գագեցին[494]:

Ստեփանոս Օրբելյանն իր մեծ պապի մասին 1216 թ. մի դեպքի նկարագրության կապակցությամբ գրում է. «Եւ զի էր նորա (Իվանեի - Ա. Մ.) գործակալ և հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աւագ հէջպաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ ...»[495]:

Լ. Բաբայանը Մատենադարանում պահպանվող Բագնայրի՝ 1243 թվականին գրված ավետարանի հիշատակարանում կարդում է. «Իշխանն պատրոն Խաւռաս որդի ամիր Սարգսին, որ էր եղբայր մաւր Կեսառոսաց Հայոց և Վրաց և Ափխազաց բարեպաշտին և Աստուծով զաւրացելույն մեծին Զաքարէի և Իւանէի... հաւատարիմ ծառայութեանն իւրոյ ընկալեալ զհատուցումս մեծաւ պատուով պատուեցաւ ըստ Վրացն բարբառոյ մսախուրթուխուցես, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորական տեառն իւրոյ»[496]:

Պետք է կարծել, որ Բուբակից հետո, ինչպես ասվել է, գլխավոր գործակալի պաշտոնը ստանձնել է Խորաս Արծրունի Մահկանաբերդեցին:

Հայաստանի փոխարքային՝ խնամակալին կից գործել է քարտուղարություն: Աղջոց Ս. Ստեփանոս եկեղեցու նվիրատվական արձանագրությունը պահպանել է ամիրսպասալար, աթաբեկ Սադուն

---

[491] Դիվան, պր. IV, էջ 69:
[492] Վիմական տարեգիր, էջ 67:
[493] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 353:
[494] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 531:
[495] **Ստեփանոս Օրբելյան,** նույն տեղում:
[496] **Լ. Բաբայան**, նշվ. աշխ., էջ 67:

Արծրունու քարտուղարի անունը. «.. Ես Ղարասլան, քարտուղար աթաբակ Սադունին...»[497]*:*

Գործավարները՝ հեջուբները (արաբ. "حاجب" - «թիկնապահ», «գործավար», «ծառայող»), պետական ծառայության մեջ գտնվելով Զաքարյանների մոտ, հանդիսանում էին նրանց ավատական տիրույթների վերակացուները՝ լայն իրավասություններով: Հոռոմոսի վանահայրերի միջավայրում տեղ գտած կաշառակերության բազմաթիվ դեպքերի խիստ դատապարտումն է ամիրսպասալար Ավագի հեջուբ, Գրիգոր Խաչենեցու 1228 թ. արձանագրությունը[498]*: Աղբյուրներում հիշատակվում են նաև Զաքարեի որդի Շահնշահի հեջուբներ. «քաջ և ընտիր պատերազմող» Զաքարիա Պահլավունին*[499] *և ըստ Բագնայրի 1230 թ. արձանագրության՝ Ճուճայի որդի Քափիկը՝ «...զաւրավար ամիր սպասալար Շահնշահի՝ տեառն իմոյ...»*[500]*: Կարծում ենք՝ ամիրսպասալար, աթաբեկ Սադունի հեջուբ պետք է ենթադրել Մակարավանքի վիմագրում հիշատակվող Դավթին. «Ես՝ Դաւիթ, որդի Տաշրելի, սնեալ ի տան մեծ եւ հզաւր իշխանին՝ աթաբակ Սադունին...»*[501]*, քանի որ վերոհիշյալ Գրիգոր հեջուբը Նոր Գետիկ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրում հայտնում է, որ ինքը. «... առեալ աթաբակի Իւանէի, սնոյց զիս եւ իւր տանն եւ Աւագին...»*[502]*:*

Արձանագրություններից հայտնի է նաև հեջուբ Վահրամը, որը 1230 թ. Հառիճի վանքում ժամատուն է շինել, ջրատար կառուցել[503] *և 1231 թ. Հոռոմոսում եկեղեցիներ վերանորոգել*[504]*: Կարծում ենք՝ պարզ է, թե ինչպիսի իշխանական տներից էին սերում հեջուբները: Ավելացնենք նաև, որ այս Վահրամի դուստրը՝ Խաթունը, կնության էր գնացել Կյուրիկյան թագավորներից սերող, Նոր Բերդի տեր, իշխանաց իշխան Վասակին: Նոր Վարագ վանքի ս. Աստվածածին*

---

[497] **Գ. Հովսեփյան,** *Խաղբակյանք..., էջ 333-334:*

[498] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 42-43:*

[499] **Գ. Հովսեփյան,** *Խաղբակյանք..., էջ 8 (տողատակ), 11:*

[500] **Ղ. Ալիշան,** *Շիրակ, էջ 128:*

[501] *Դիվան, պր. VI, էջ 165:*

[502] *Դիվան, պր. VI, էջ 70: Գհուկ-Բոլորահարի վանքի (Հրազդանի տարածաշրջան) 1240 թ. նորահայտ նվիրատվական արձանագրությունը պահպանել է աթաբեկ Իվանէի սնուցած Տուրքի՝ որդի Սմբատա անունը: Տե՛ս* **Գ. Գ. Սարգսյան,** *Գհուկ-Բոլորահարի վանքը, ՊԲՀ, 1983, № 1, էջ 129: Նաև՝ նույնի՝ Դիվան, պր., ձեռագիր:*

[503] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 146:*

[504] *Տե՛ս նույն տեղում, էջ 147:*

կաթողիկե եկեղեցու պատին նրա հիշատակին հետևյալ բովանդակությամբ արձանագրությունն է փորագրվել. «Ի տաւնի սրբոյ Հռիփսիմեցն: Ե:(5) աւր ժամ լինի Խաթունին Անեցւոյ՝ դստերին մեծին հեջուբ Վահրամա եւ տիկին Նոր Բերդիս»[505]:

Հեջուբները կարող էին կոչվել նաև ամիր հեջուբ, ինչպես, օրինակ՝ Սանահնի անթվակիր վիմագրի «ամիր հեճուպ» Ջաղելը[506]:

Խոշոր քաղաքների, գյուղաքաղաքների կառավարիչներ էին հանդես գալիս ամիրաները՝ քաղաքագլուխները (ամիր՝ արաբ. أمير «իշխան», «իշխանավոր»), որոնց հավանությամբ, օրինակ, բարձրաստիճան հոգևորականները կարող էին եկեղեցիներն ազատել հարկերից, իսկ իրենք կազմակերպում էին հարկահանման գործը, ապահարկման հրամաններ արձակում և այլն:

Որպես Անիի քաղաքագլուխներ հանդես էին գալիս Պահլավունի-Ապիրատյանների շառավիղները: Ըստ արձանագրությունների՝ 1220-1230 թթ. Անիի ամիրան է եղել Երկաթ Պահլավունին: Օշականի ամիրա էր առաջ քաշվել Գեչ անունով մեկը (1288 թ.)[507], որն Աղբուղա և Զազա Զաքարյանների օրոք Անիում դաղմաչի էր (հարկահավաք)[508], նրան այդ պաշտոնում փոխարինել է Գրիգոր Խուցիսի որդի Մխիթարը[509]:

Ամբողջ Վրաստանի մակարդակով ամիրաների ամիրան էր Քուրդ Արծրունի Մահկանաբերդեցին՝ հանդիսանալով միաժամանակ մեչուրչլեթ-ուխուցեսը՝ արքունի գանձապետը[510]: Հաղբատի անթվակիր մի արձանագրությունից կարելի է ենթադրել, որ ամիրաները քաղաքի կառավարումը կատարել են ավագների խորհրդի միջոցով[511]: Իսկ գյուղերում և ավաններում այն իրականացնում էին տանուտերերի օգնությամբ: Շիրակավանի տանուտերեր Խաչուտը և Մխիթարիչը քահանաների հետ կրոնավորներին ազատում են մի շարք հարկերից[512]: Գառնի գյուղաքաղաքի թվով ինը և ավելի մեծ ու փոքր տանուտերերը Սունպեց վանքն ազատում են որոշ հասա-

---

[505] **Գ. Սարգսյան,** Անապատ կամ Նոր Վարագ վանքը և նրա վիմագրությունը, էջ 33:
[506] **Կ. Ղաֆադարյան,** Սանահնի վանքը…, էջ 149:
[507] Տե՛ս **Հ. Շահխաթունյանց**, Բ, էջ 79-80:
[508] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 30:
[509] Տե՛ս նույն տեղում, էջ 28:
[510] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 531:
[511] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 200:
[512] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 247:

բակական տուրքերից[513]: Քաղաքային շուկաներում կշիռների ու չափերի վերահսկողությունը իրականացրել են մուհթասիբները՝ հսկիչները:

Գյուղական շրջաններում հարկահանման գործը կատարել են, ինչպես երևում է արձանագրություններից, ձեռնավորները[514]:

Եթե ամիրաները քաղաքագլուխներն էին, ապա ռայիսները՝ գյուղապետներն էին[515] (արաբ. "رئيس" - «պետ», «գլխավոր»):

1210 թ. Բագնայրի արձանագրությունում հիշատակվում է Օշական գյուղի ռայիսը՝ «Պարսիմո որդի Հասանայ», իսկ 1224 թ. Բագարանի վիմագրում՝ «ռայիս Վարդը»: «Նորատուսի 1211 թ. վավերագրում Դավթի որդի Մխիթար Փեճարենցը հայտնում է, որ ինքը Նորատուս մեծահռչակ գյուղի առաջնորդ է կարգվել Մեծն Իվանեի կամքով»[516]:

Արձանագրությունում հիշատակվում են նաև ստորին պաշտոնյաների անուններ՝ «Էվա», «գզիր», «մուճուր» (մթերագետ) և այլն:

Նշենք նաև, որ քաղաքները, գյուղերն ունեցել են դատական գործառույթ իրականացնող իրավական պաշտոնյաներ՝ դատավորներ: Գառնիի մի խաչքարում հիշատակվում է այդ գյուղաքաղաքի Գագիկ դատավորը[517]:

Ոստիկանական գործառույթը կատարում էին շուրտաները[518] (ծագում է արաբ. "شرطي" - «շուրտի»՝ «ոստիկան» բառից):

Բարձրաստիճան կարևորագույն պաշտոններից էր ավատական տների միացյալ զորքերի սպարապետությունը, որը վստահված էր Խաղբակյան իշխանական տան ներկայացուցիչներին: Երկար տարիներ այն վարել է Պռոշ Խաղբայանը (1223-1284): Թանահատի վանքի 1307 թ. արձանագրությունում հայոց սպարապետ է հիշատակվում Պռոշի որդի Ամիր Հասան Ա-ը (1284-1292)[519]:

Մշտապես ուժեղ կենտրոնական իշխանություն ունենալու ձգտումը պատճառ հանդիսացավ այն իրողության, որ ռազմավարա-

---

[513] *Տե՛ս* ***Հ. Պետրոսյան,*** *Գառնին 9-14-րդ դդ., էջ 100-101:*

[514] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 129: Դիվան, պր. IX, էջ 291:*

[515] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 553:*

[516] ***Հ. Մանանդյան,*** *Քննական տեսություն..., հ. Գ, էջ 171-172, ՀԺՊ, III, նույն տեղում:*

[517] *Տե՛ս* ***Հ. Պետրոսյան,*** *նշվ. աշխ., էջ 115:*

[518] *Տե՛ս Դիվան, պր. III, էջ 234, ներդիր:*

[519] *Տե՛ս* ***Ղ.Ալիշան,*** *Սիսական, էջ 121:*

կան խիստ կարևորություն ունեցող սահմանամերձ շրջաններում վաղ միջնադարյան բդեշխությունների օրինակով Զաքարյանները հաստատեին կողմնակալություններ՝ կողմնապետներ նշանակելով պատերազմական գործողություններում առավել աչքի ընկած զորապետներին: Վերջիններս իրենց վստահված տիրույթներում հանդես էին գալիս իբրև ինքնավար տերեր և կենտրոնի ռազմավարչական լիազոր-ներկայացուցիչներ:

Արձանագրություններից հայտնի են հետևյալ կողմնակալությունները.

1. ***Այրարատի****՝ Վաչուտյաններ, Ամբերդ, անթվակիր՝ «... ի վերակացութեան դաւառիս Վաչէի...»*[520]*, Հովհաննավանք, 1221 թ. «.., ի կողմնակալութեան մերո նահանգի Ամիր Քրդին, որդո Վաչէի»*[521]*:*

Այրարատի կողմնապետությունն ընդգրկում էր Արագածոտն, Շիրակ, Նիգ գավառները՝ մինչև Երասխաձոր[522]*:*

2. Սյունիքի*, սկզբում այն վստահված էր Խաղբակյաններին: Դա է վկայում Արատեսի վանքի 1220 թ. վիմագիրը.* «Ես Վասակ որդի Խաղբակա կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ...»[523]*: Այնուհետև, մոնղոլական տիրապետության շրջանում, երբ Սմբատ Օրբելյանի վարած ճկուն դիվանագիտության շնորհիվ բարձրացավ Օրբելյան տոհմի հեղինակությունը, այդ կարևորագույն պաշտոնը շնորհվեց նրա եղբայր Տարսայիճին: Տաթևի 1274 թ. արձանագրությունը նրան հիշատակում է.* «...կողմնակալ յայսմ նահանգի, որ իշխեցող էի այսմ գաւառաց ի դրանէն Բարգուշատայ մինչեւ ցսահմանն Բջնւոյ...»[524]*, Սիսիանի Դարաբաս գյուղի եկեղեցու վիմագրում Տարսայիճ Օրբելյանն է.* «...կողմնակալ յայսմ նահանգի ...ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ...»[525]*:*

Ըստ Օրբելյանի հետևյալ վկայության. «*Կացուցանեն թագաւորն Լաշայ եւ Աթաբէկն Իւանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս և զմիւս իշխանն զամենաօրհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնին Պռոշայ կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս*»[526]*, ստացվում է մի կողմնապետության երկտարանջատում՝ Սյունիքի և Վայոց ձորի, մի բան, որը*

---

[520] ***Ս. Հարությունյան,*** *Անբերդ, էջ 55-56:*
[521] ***Կ. Ղաֆադարյան,*** *Հովհաննավանքը..., էջ 94:*
[522] *Տե՛ս* ***Զաքարիա Սարկավագ****, հ. Գ, էջ 12:*
[523] *Դիվան, պր. III, էջ 123:*
[524] *Վիմական տարեգիր, էջ 116-117:*
[525] *Դիվան, պր. II, էջ 114:*
[526] ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 397:*

հերքում է Ցաղաց քարի արձանագրությունը՝ հավաստելով, որ Տարսայիճ Օրբելյանը կողմնակալն է և իշխեցողը «ի Բարգուշատա մինչ ցԳառնի»[527], ճիշտ և ճիշտ այն սահմաններով, ինչով Վասակ Խաղբակյանն Արատեսի վանքի վերոհիշյալ վիմագրում:

3. Արցախի, որը սկզբում շնորհվել է Վերին, ապա Ներքին Խաչենի Վախտանգյաններին, այնուհետև՝ Դոփյաններին:

«...Ես՝ Գրիգոր, հեջուբ ամիր սպասալար Աւագին, որդի Սմբատա որդո մեծին Վախտանգա կողմնապետաց աշխարհին Արցախա...»[528] (Գոշավանք), «Թիւն :ՉԺ: (1261) էր...ես Ջալալ Դաւլայս, որդի Վախտանգա, կողմնակալ Արցախայ...» (Գանձասար)[529]: Հասան Դոփյանը վիմագրերից մեկում հիշատակվում է «տեառն Աղուանից»[530]:

Արդյո՞ք Գագի, Տավուշի, Գարդմանի, Տերունականի և «այլոց գաւառաց տէր» Վահրամ Գագեցին եղել է այդ տարածաշրջանի կողմնապետը, թե՞ ոչ, չունենք համապատասխան վիմագրեր: Այդ մասին լռում են նաև մեզ ծանոթ հայկական մատենագրական աղբյուրները: Սակայն, բարեբախտաբար, վրաց պատմիչները, մասնավորապես, «Թամար թագուհու պատմության» հեղինակը վկայում է Վահրամյանների կողմնակալության մասին[531], որին կարելի է կոչել.

4. Ուտիքի, այն ուղղված էր Գանձակի Ելտկուզյան աթաբեկության դեմ, ինչի գործառույթի մի մասը կատարում էր նաև Արցախի կողմնապետությունը: Այդ երկու երկրամասերի միջև կապերն ամրապնդվել էին Զաքարե Վահրամյանի և Խաթուն Դեսումյանի ամուսնությամբ: Վերջինս, ինչպես ասել ենք, հայտնի է Հաղբատի վանքում իր եղբայրների հիշատակին կառուցած Խաթունաշեն եկեղեցու շինարարությամբ[532]:

Կողմնակալները կրում էին «իշխանաց իշխան» տիտղոսը: Նրանցից վասալական կախվածության մեջ էին գտնվում գավառների, գյուղերի իշխանները, տանուտերերը, որոնք զանազան պաշտոններ էին վարում իրենց «պարոնների», «պատրոնների», «տէրերի» տիրույթներում, ընդհուպ մինչև զինվորական ծառայություն:

---

527 Դիվան, պր. III, էջ 149-150:
528 Դիվան, պր. VI, էջ 70:
529 Դիվան, պր. V, էջ 41:
530 Վիմական տարեգիր, էջ 148:
531 Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թրգ. Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, էջ 34:
532 Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 208:

3. ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ XIII-XIV ԴԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռազմական սրընթաց հաջողություններով պատմական թատերաբեմ իջած Զաքարյան նոր տոհմի երիտասարդական ավյունով տոգորված նորաստեղծ Մահկանաբերդի Արծրունիներ, Վաչուտյան, ուժեղացած Վախտանգյան, բարձրացած Պռոշյան, վերազարթնած Օրբելյան իշխանական տների անխուսափելի բարգավաճումն ու հետագա վերելքը չէր կարող կասեցնել անգամ վերահաս մոնղոլական տիրապետությունը, որի արագ հաստատումը պայմանավորված էր նաև թաթարներից հալածվող Խորասանի սուլթան Ջալալ ալ-Դինի՝ Պարսկաստանում և Անդրկովկասում 1225-1232 թթ. կատարած վայրագ ասպատակություններով (վիմագիր հիշատակություններ են պահպանվել Նորատուսում՝ 1226 թ., Անիում՝ 1227 թ., Վարագավանքում՝ 1231 թ., Հաղբատում՝ 1233 թ. և այլուր): Մոնղոլական աշխարհակալության սահմանների ու նվաճված երկրներում վարվող քաղաքականության լավագույն վավերացումն է Ծարա վանքի 1301 թ. արձանագրությունը. «Ի ժամանակին յորում տիրեալ էր ազգն նետողաց բազում աշխարհաց և մինչև յովկիանոս ծովն և Ստամպալն, ի Պոնտոս և մինչև զգետն Եփրատես, տիրելով գոռոզաբար և ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան, զմեծամեծս և զփոքունս ի մահ և ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան...»[533]:

Որքան էլ մոնղոլներն իրենց ծանր իշխանությամբ պատճառ դառնային, որպեսզի մարդիկ նրանց տիրապետության շրջանն արձանագրեին. «.. ի դառն եւ նեղ ժամանակի յազգէն նետողաց, որ բազում գաւառս աւերեաց..» *(Գտչավանք, 1246)*[534], «... որք անհետ կորեն ի ձեռս անաւրինաց եւ սուգ մեծ եւ անմխիթար թողին...» *(Կողես, 1241)*[535], «... ի նեղ եւ ի չար ժամանակիս...» *(Հոռոմոս, 1246)*[536], «... ի նեղ եւ ի դառն ժամանակիս թաթարի...» *(Մարց, 1235)*[537], *միևնույն է, ստիպված պետք է լինեին հաշվի նստել տեղական հոգևոր և աշխարհիկ բարձր ազնվականության հետ,*

---

[533] *Դիվան, պր. V, էջ 224:*
[534] *Նույն տեղում, էջ 183:*
[535] *Դիվան, պր. IX, էջ 443:*
[536] *Վիմական տարեգիր, էջ 90:*
[537] *Դիվան, պր. IX, էջ 417:*

պահպանելու ու վերահաստատելու նրանց ավատական իրավունքները՝ իրենց տիրապետությունը ժողովրդի վրա պահելու ու ամրապնդելու համար:

Մոնղոլները Զաքարյան իշխանապետության տարածքները՝ Այրարատով, Սյունիքով, Արցախով, Գուգարքով, Արևելյան Վրաստանի հետ դարձնելով առանձին վարչական միավոր և այն մտցնելով Կասպից ծովից մինչև Միջագետք կազմավորված կուսակալության կազմի մեջ, գրեթե նույնությամբ թողեցին Հայաստանի ներքին վարչաքաղաքական կառուցվածքը: Այն համարյա անփոփոխ էր նաև իլխանության շրջանում՝ 1256-1344 թթ.:

Երկրի ներքաղաքական կյանքում ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, առաջնայնությունը պատկանում էր Զաքարյան իշխանապետներին՝ աթաբեկ Ավագին ու ամիրսպասալար Շահնշահին: Դա լավագույնս արտացոլված է Դսեղի եկեղեցու գավթի հետևյալ շինարարական վիմագրում. «Ի ժամանակի յորում տիրեց թաթարն չորից ծագաց երկրի յարեւելից մինչեւ յարեւմուտս, եւ յիշխանութեան Հայոց եւ Վրաց երկուց եղբարց ինքնակալաց Աւագին եւ Շահնշահի՝ սկիզբն շինութեան տանս եղեւ ի նեղ եւ դառն ժամանակի»[538]: *Այդ են վկայում նաև Հովհաննավանքի 1243 թ.* «...յիշխանութեան Շահնշահի որդո Զաքարիաի եւ մերո նահանգիս Քրդին որդո Վաչէի...»[539], *Հաղբատի 1245 թ.* «...ի տէրութեան ուխտիս Շահանշահի...»[540], *Ախթալայի 1245 թ.* «Ի թվիս ՈՂԴ կանգնեցաւ սբ տերունականս յարեւշատութիւն Աւագին»[541], *Հոռոմոսի 1246 թ.* «...սպասալարութեան Շահնշահի՝ որդւոյ մեծին Զաքարիայի...»[542], *Մաթոսավանքի 1247 թ.* «... յիշխանութեան Աւագին...»[543], *Դիլիջանի խաչքարի* «..Մանկու խանին *(1251-1259 - Ա. Մ.)* հրամանովն... եւ աշխարհակալ տէրութեան Աւագին...»[544], *Արցախի Մարտակերտի Մեհմանա գյուղի եկեղեցու 1249 թ.* «...ի ժամանակս թաթարին, ի

---

[538] *Նույն տեղում, էջ 382:*
[539] ***Կ. Ղաֆադարյան,*** *Հովհաննավանքը..., էջ 95:*
[540] ***Կ. Ղաֆադարյան,*** *Հաղբատ, էջ 222:*
[541] *Դիվան, պր. IX, էջ 261:*
[542] *Վիմական տարեգիր, էջ 90:*
[543] *Դիվան, պր. VI, էջ 15:*
[544] *Նույն տեղում, էջ 18:*

տիրութեան մեծ խաղաղարար Աւագին...»[545], *Անիի 1251 թ.* «...ժամանակ աթաբակ, ամիրսպասալար Շահնշահի չինեցաւ սուրբ եկեղեցիս»[546], *Անիի Առաքելոց եկեղեցու 1251 թ.* «Թուականին :Զ: Շնորհիւն Այ. եւ հրամանաւ տեառն Կոստանդեայ հայոց կաթողիկոսի *(Կոնստանդին Ա Բարձրբերդցի՝ 1221-1267 - Ա. Մ.)* եւ մեծին ամիրսպասալար Շահնշահի արձանագրեցաւ առաքելական կանոնքս, որ թէ ոք յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երէց առնէ կամ առանց ճշդիւ եւ յոյժ ընտրութեան դատի յԱյ, եւ ընդ նզովաւք լինի յերիս սուրբ ժողովոյն, մասն զՅուդային եւ Կայենին առցէ...»[547], *Այրիվանքի անթվակիր.* «... Ի տէրութեան բարեպաշտ թագադրին վրաց Աւագին եւ Շահնշահի եւ որդւոյ նորա Զաքարիայի...»[548] *վիմագրերի հատվածները: 1250 թ. արու ժառանգ չունեցող Ավագի մահից հետո Հայաստանի կառավարման գործերում ներգրավվում է Շահնշահի որդին՝ Զաքարիան.* «Ի թուիս Հայոց :ԶԶ: (1257), ի տէրութեան մեծին Շահնշահի եւ Զաքարիայի չինեցաւ մեծափառ տունս Աստուծոյ ի տէր Համազասպա» *(Հաղբատ)*[549]:

Այս շրջանում Հայաստանի ներքաղաքական կյանքում երևելի էր Վաչեի որդի Քուրդ Վաչուտյանը: Կիլիկիայի հայոց Հեթում թագավորը (1226-1269), Մոնղոլիա գնալու ճանապարհին, հյուրընկալվել է Արագածոտն գավառի իշխանի, Այրարատ նահանգի կողմնապետի մոտ՝ Վարդենիս գյուղում[550]: Հովհաննավանքի 1250 թ. վիմագրում իշխանը հայտնում է, որ մոնղոլ տիրակալների հետ լավ հարաբերությունների շնորհիվ իրեն հաջողվել է վերստին հաստատել սուրբ ուխտի միաբանությունը. «... ի տէրութեան Շահնշահի որդւոյ մեծին Զաքարիայի, ես Քուրդ՝ որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ՝ դուստր Մարծպանա *(Համազասպյանի - Ա.Մ.)* եւ Մամքանա, խնամաւքն Այ հաճո եղե(ա)լ այլազգի զաւրացն նետողաց,

---

[545] *Դիվան, պր. V, էջ 93:*
[546] *Դիվան, պր. I, էջ 64:*
[547] *Նույն տեղում, էջ 15:*
[548] ***Հ. Շահխաթունյանց,*** *Բ, էջ 285-286: Երկրից հինգ տարով Ավագի բացակայության ժամանակ. նա մեկնել էր Ոսկե Հորդա՝ Բաթու խանի, ապա Կարակորում՝ Մանգու մեծ խանի մոտ, Հայաստանի գործերը և նրա կալվածքները ժամանակավորապես կառավարում էր Շահնշահը (տե՛ս ՀԺՊ, III, էջ 616-617):*
[549] ***Կ. Ղաֆադարյան,*** *Հաղբատ, էջ 217:*
[550] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 616:*

զանձն իմ եղի ի վերա էկեղէցացս Հաց. եւ վասն առ Այ սիրոյն կրկին հաստատեցաք զմիաբանութիւն մեր...»[551]: *Ի դեպ, պատմական Կիլիկիայի Մանազ քաղաքի ավերակներում՝ մի անտաշ քարի վրա ժամանակին Կ. Տեր-Ղազարյանը կարդացել է.* «Ի թու Հաց ՈՀԷ (1228) նորոգեցաւ Տարսոնի ձեռամբ թգ Հաց Հեթումոյ»[552]:

Հայոց թագավորի այցելությունը Մոնղոլիա միջնորդել էր XIII դարի ականավոր քաղաքական գործիչ, խոշոր դիվանագետ Հասան Ջալալ Դոլան: Նա, եթե XIII հարյուրամյակի 20-40-ական թթ. արձանագրություններում, ինչպես վերևում ենք նշել, հիշատակվում է իբրև «Տէր Խոյախան բերդոյ, Խաչենո»[553], *ապա 50-60-ական թթ. արդեն հանդես է գալիս որպես* «...ինքնակալ իշխանաց իշխան... տն Խաչինո...»[554], «կողմնակալ Արցախայ»[555], *և որ ամենահատկանշականն է՝* «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, ինքնակալ Խանբերդի»[556], «թագաւոր Խաւխանաբերդի յոքնասահման նահանգաւք»[557], «թագաւոր»[558], «բարեպաշտ արքա»[559], *ինչն Արցախը՝ Զաքարյանների և Վրաստանի ենթակայությունից հանելու և առանձին թուման դարձնելու վկայությունն է: Ամրապնդելով իր իշխանությունն Արցախում և մեծ հեղինակությունն աշխարհակալությունում՝ նա հոգ է տանում հայրենիքի շենության մասին: Նրա օգնությամբ և անմիջական մասնակցությամբ, թե՛ իր տիրապետության սահմաններում, թե՛ դրանից դուրս ոչ միայն եկեղեցիներ են կառուցվում, այլև մոնղոլական արշավանքներից տուժած, ավերված վանքերի, ուխտատեղիների վերանորոգման աշխատանքներ են կատարվում.* «... թիվն :ՈՂԸ: (1249) էր տէր Խաչինոյ Ջալալ ...տր Եղիա չինեց զսբ Անապատս եւ սմա այլ օծէ, ի սմայ թշնամին կործանած է, որք այլք բարեկամ են սմայ, սա բարեխաւս է նոցա, որք միաբանեն սոցայ

---

551 **Կ. Ղաֆադարյան,** *Հովհաննավանքը..., էջ 103:*
552 **Կ. Տէր-Ղազարեան,** *Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 22:*
553 *Վիմական տարեգիր, էջ 73, 92: Դիվան, պր. V, էջ 79:*
554 *Դիվան, պր. V, էջ 41:*
555 *Նույն տեղում:*
556 *Նույն տեղում, էջ 38:*
557 **Բ. Ուլուբաբյան,** *Գանձասար, Երևան, 1981, էջ 87:*
558 *Դիվան, պր. V, էջ 15:*
559 *Նույն տեղում, էջ 120:*

բարին քո տր առատ խաղաղութիւն կացէ ջանասցէ նոցայ այժմոյս ահայ հանդերձեալսն, որ տաճիկս այլ աւրհնեալ եղիցի միաբան», *(Մարտակերտի շրջան, գյուղ Առաջաձոր, ժայռաբեկոր)*[560], «... Հասան որդի Վախտանագայ, որդւոյ մեծին Հասանայ, տէր Խոյախան բերդոյ Խաչենոյ, եւ ամուսին իմ Մամքան, դուստր Բաղաց Թագաւորին, միաբանեցաք մեծ եւ հռչակաւոր սբ ուխտիս Կեչառուաց եւ.. յաւերման նետողաց բազում դանձիւք նորոգեցաք... Թվին ՈՂԷ (1248)», *(Կեչառիս)*[561]:

1261 թ. հակամոնղոլական ապստամբություն կազմակերպելու մեղադրանքով Արցախի ինքնակալ Հասան Ջալալի ու Հայաստանի կառավարիչ, ամիրսպասալար, աթաբեկ Զաքարե Բ-ի մահապատժից և վերջինիս եղբայր աթաբեկ Իվանե Բ-ի մահից հետո (1263 թ.), ինչպես վիմագրերի հետագա տարեգրությունն է ցույց տալիս, նրանց հարազատներին մոնղոլները թեև իրավունք են վերապահում տնօրինություն անելու սեփական տիրույթներում, սակայն փորձում են նվազեցնել քաղաքական-վարչական դերը՝ պաշտոնների մեջ առաջ քաշելով երկրի մյուս ազդեցիկ տոհմերի աչքի ընկնող ներկայացուցիչներին:

Ջալալ Դոլայի որդու՝ Աթաբեկ Իվանեի մասին Մարտակերտի շրջանի Դաստակերտ գյուղի եկեղեցու 1276 և Գանձասարի վանքի 1271-1282 թթ. վիմագրերը համեստորեն հիշատակում են սոսկ. «տէրութեան Իւանեի»[562], «...իշխանութիւն Աթաբակին...»[563], «...հրամանաւ տեառն Խաչինոն Աթաբակին...»[564], *իսկ Վերին Խաչենի գահերեց իշխան Հասան Դոփյանը Դադի վանքի մի արձանագրությունում հանդես է գալիս որպես* «տեառն Աղուանից»[565], *ինչը նրա տոհմի վեր բարձրացման վկայությունն է:*

Ինչ վերաբերում է Զաքարյան իշխանական տանը, ապա Շահնշահ Ա-ի (մահ. 1261 թ.) մյուս որդի Իվանե Բ-ի զավակները՝ Աղբուղան ու Ավագ Սարգիսը, ինչպես հուշում են Փարպիի[566] *և Ուշիի*

---

[560] *Նույն տեղում, էջ 87-88:*
[561] *Վիմական տարեգիր, էջ 92-93:*
[562] *Դիվան, պր. V, էջ 99:*
[563] *Նույն տեղում, էջ 51-52:*
[564] *Նույն տեղում, էջ 50:*
[565] *Վիմական տարեգիր, էջ 148:*
[566] *Նույն տեղում, էջ 107:*

1264[567], Թալինի 1267[568], Կոշի 1271[569] թվականների արձանագրությունները, լոկ այդ տիրույթների պարոններն էին: Նրանք, չկարողանալով վճարել Անիի հարկերը, ճարահատյալ վաճառում են մայրաքաղաքը: Այդ գործարքն իր արտացոլումն է գտել Անիի 1263 թ. արձանագրությունում, որտեղ որպես քաղաքի պարոններ հիշատակվում են մոնղոլական իշխանության արքունապետ՝ Սահիբ աղ-Դիուան (صاحب الديوان) ալ-Ջուվեյնին, հայ մեծահարուստներ Սահմադինն ու Քարիմադինը. «...չնորհիւն Այ. մեք տաղմաճիքս վասն յերկարկենդանութեան եւ վասն պատրոնաց մերոյ Սահիպ Դիւանին եւ Սահմադինին եւ Քարիմադինին. բարձաք ի յԱնո իրիցանուս զբաժն...»[570]: Վարչապետ ալ-Ջուվեյնին կնության էր առել աթաբեկ Ավագի դուստր Խոշաքին, որը որդու՝ Ամիր Զաքարեի հետ, ըստ Բջնիի անթվակիր[571], Գառնիի 1291 թ.[572] վիմագրերի, պարոնություն էր անում «սեփական Հայրենեց...» տիրույթներում:

Անեցի Ավետենց որդի Սենոպ Սահմադինն իլխանության շրջանի հայ առևտրավաշխառուական խավի ամենանշանավոր դեմքերից էր, խոշոր մեծահարուստ: Փողի ուժով Անիին տիրելուց բացի, ինչպես Մրենի Սահմադինի պալատի 1261 թ. վիմագիրն է ազդարարում, Շահնշահի մյուս որդի Արտաշիրից գնում է «զթագաւորանիստ տեղիս զՄրեն... ի հալալ ընչից իմոց ի վաելումն ինձ եւ որդեաց իմոց...»[573]: Մրենի գնման գործարքի մասին փաստը Սենոպ Սահմադինը կրկնում է նաև տեղի տաճարի 1284 թ. արձանագրությունում, որում հիշատակվում է նրա կին Ուրտուրիտան ևս[574]: Սահմադինը ձեռք բերված գյուղաքաղաքն ազատում է մի շարք հարկերից[575]: Ուշագրավ է, որ Մրենի Մխիթար վարդապետի 1277 թ. վիմագրի սկզբնամասում Սահմադինը հանդես է գալիս ոչ թե

---

[567] Տե՛ս **Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան,** Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, էջ 185-186:

[568] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 110-111:

[569] Տե՛ս **Գ. Կարախանյան,** Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, էջ 251:

[570] Դիվան, պր. I, էջ 24:

[571] **Հ. Շահխաթունյանց,** Բ, էջ 183:

[572] **Հ. Պետրոսյան,** Գառնին 9-14-րդ դարերում, էջ 100:

[573] **И. Орбели**, Надписи Мрена, էջ 41:

[574] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

[575] Տե՛ս նույն տեղում, էջ 38, 39:

մոնղոլ տիրակալների, կամ վրաց թագավորների հիշատակություն-ներից հետո, ինչը բնորոշ է այդ շրջանի հայկական արձա-նագրություններին, այլ հայոց կաթողիկոսի և Կիլիկիայի արքայի հետ միասին. «ԹՎին ՁԻԶ: Ի հայրապետութեան եւ թագաւորութեան հայոց տեառն Յակոբա (Հակոբ Ա Կլայեցի՝ 1268-1286 - Ա. Մ.) եւ Լեւոնի (Լևոն Գ՝ 1271-1289) եւ ի պարոնութեան Սահմադինին վերակառուցեալս զայս խորանն»[576]: Փաստը համազգային, համա-հայկական մտածողության դրսևորման արտացոլում է:

Այս արձանագրության երկրորդ մասից իմանում ենք նաև, որ Սահմադինը և նրա որդիները իշխանական նստավայր-պալատի դարպասների պատրաստման ու Արքայություն կոչվող դրախտային այգու ծաղկեցման համար ջանացել են 10 տարի՝ ծախսելով «ԽՌ (40 հազար) դուկատ դահեկան»[577]:

Սա հսկայական մի գումար է, որը, ինչպես քիչ հետո կտեսնենք, հավասարազոր է Նոր Գետիկ վանքի կամ Գոշավանքի արժեքին:

Սահմադինին էր պատկանում նաև Օշականը, որտեղ «Ի Թուին ՁԼԵ (1286) ... յամի թագաւորութեան Արղուն ղանին[578]...»[579], նա թողել է հացի և դարմանի շարիատը, իսկ նույն վայրի, մի փոքր վաղ՝ 1286 թ. վիմագրի. «...Հրամանաւ պարոն Սահմադինին...»[580], գյուղաքաղաքի ձեռնավորները հանել են քահանաների վրա դրված այգու, բամբակի և ժամհարի տուրքերը:

Երևանի Կաթողիկե եկեղեցու պատին 1264 թ. փորագրված արձա-նագրությունը տեղեկացնում է, որ նա ժառանգական տիրակալի իրավունքով տէր է դարձել նաև այստեղ. «...զԵրեւան գնեցի հողով ու ջրով եւ իրաւունք այս արարի հայրենիք...»[581]:

Քաղաքական-դիվանագիտական կյանքում խաղացած կարևոր դերի վկայությունն է այն հանգամանքը, որ Սահմադինը հանդիսա-

---

[576] Նույն տեղում, էջ 41:

[577] Նույն տեղում, էջ 42:

[578] Արղուն իլխան՝ 1284-1291 թթ., թոռն է մոնղոլ Մանգու մեծ խանի եղբոր՝ Հու-լավուի, որը 1256 թ. Ատրպատական կենտրոնով, Մարաղա, ապա Թավրիզ մայ-րաքաղաքով հիմնադրեց Կասպից ծովից մինչև ներկայիս Իրաք ձգվող մոնղո-լական կուսակալությունը՝ իլխանությունը: Այն գոյատևել է մինչև 1344 թվականը:

[579] Վիմական տարեգիր, էջ 130:

[580] Նույն տեղում, էջ 129:

[581] **Կ.Ղաֆադարյան,** Երևան, միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975, էջ 137:

ցել է Հռոմի Նիկողայոս Դ պապի մոտ 1288 թ. առաքված դեսպանորդն Արղուն խանի՝ մոնղոլա-լատին բանակցություններում[582]:

Օշականի 1288 թ. մեկ ուրիշ և 1295 թ. վիմագրերում գյուղաքաղաքի պարոններ են վկայակոչվում նրա ժառանգները. «Ի թուականի չլէ յառաջնորդութեան տէր Համազասպայ եւ ի պարոնութեանն... եւ իւր որդւոցն Ամիրբէկին եւ Հազարբէկին...»[583], «Ի թուին չխդ թագաւորութեանն... Քեաղաթու ղանին *(Քեյղաթու իլխան՝ 1291-1295 թթ. - Ա. Մ.)* եւ ի հայրապետութեանն տէր Համազասպայ ես Բեսութայս, որդի պարոն Ամիրբէկին, որդոյ պարոն Սահմադինին, թողի զՅաւշակունու զղէսարայ[584] զհարկն զգեղիս եւ զվանորայից»[585]:

Արևելյան Վրաստանի և Հայաստանի ներքաղաքական անցուդարձերում նյութական-դրամական միջոցների շնորհիվ բացառիկ տեղ զբաղեցրած հայ մեծահարուստների թվին էր պատկանում մանազկերտցի վաճառական Ումեկը: Նա Անանուն Սեբաստացու համաձայն՝ վախճանվել է 1266 թվականին[586]: *Վիմական աղբյուրները տեղեկացնում են նրա առաջին կնոջից՝ Թագուհուց ծնված երեք որդիների մասին: Վարդանը, հավանաբար կրտսերը, հոգևորական է եղել: Այդ մասին են վկայում Անիի Կիրակոսի տապանատան 1330 և Մայր տաճարի 1339 թվականների վիմագրերը*[587]: *Միջնեկը՝ Ճարը, Նոր Գետիկ մենաստանի Ս. Աստվածածին եկեղեցում արձանագրել է վանքն իր հոր՝ Ումեկի կողմից 40000 («:ԽՌ:») կարմիր դուկատով (իտալական ոսկով -Ա. Մ.) գնելու մասին*[588]: *Ս. Ավագյանն ու Հ. Ջանփոլադյանը հաստատում են Գ. Հովսեփյանի այն կռահումը, որ Նոր Գետիկ վանքի առուծախն Ումեկի և Զաքարյան Ավագի միջև տեղի է ունեցել 1242-1250 թթ. միջև, այսինքն՝ առաջինի Արևելյան Հայաստան տեղափոխվելուց հետո, երբ 1242 թ. մոնղոլները հայրե-*

---

[582] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 635:*

[583] *Վիմական տարեգիր, էջ 130:*

[584] *Ղեսարն անասնահարկն է (տե՛ս* ***Ս. Հակոբյան,*** *Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, էջ 121):*

[585] *Վիմական տարեգիր, էջ 137: Սահմադինի որդու՝ Ամիրբեկի անունով նվիրատվական արձանագրություն է գտնվել Նեղուցի վանքում (Հրազդանի տարածաշրջան), տե՛ս* ***Գ. Գ. Սարգսյան,*** *Դիվան, պրակի ձեռագիր: Նվիրագրից հառնում է այն իրողությունը, որ Սենոպ Սահմադինն իր զուգակից Ուրտուրիտայից բացի ունեցել է նաև Մամախաթուն անունով երկրորդ կին, որը մայրն էր Ամիրբեկի: Ըստ Հովհաննավանքի մի վիմագրի՝ նա եղել է Ումեկի դուստրը:*

[586] *Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 195:*

[587] *Տե՛ս Դիվան, պր. I, էջ 67 և 39:*

[588] *Տե՛ս Դիվան, պր. VI, էջ 71:*

նի քաղաք Մանազկերտը գրավել ու ավերել են, և մինչև Ավագի մահը՝ 1250 թվականը[589]: Ապա գիտնականները ենթադրում են, որ «Ումեկը ձեռք է բերել վանքն այն սահմաններով, որոնք հաստատվել են Զաքարյանների կողմից՝ **եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձիւք լեռնէ ի լեառն**, ինչպես նաև հետագայում վանքի սեփականությունը դարձած մյուս գյուղերն ու կալվածքները»[590]: «Դահեկան սովորական դրամի փոխարեն իտալական դուկատ հիշատակված է Մրենի և Կեչառիսի 13-րդ դարի վիմագրերում և ըստ Հ. Մանանդյանի, վկայում է հայ վաճառականների առևտրական կապերը Վենետիկի հանրապետության գործարար շրջանների հետ»[591]: «Հողի էժանացման և ոսկու թանկացման գաղտնիքը բացելու համար նշենք, որ այս մի ժամանակ էր, երբ հարկահանների և պարտատերերի երեսից գյուղերը մարդաթափ էին լինում և տեղական ֆեոդալները շահագրգռվում էին գիջել իրենց կալվածքները խոշոր փողատերերին», - նշում է Աշոտ Հովհաննիսյանը Ճարի արձանագրության «Հայրենիքն արժան էր, եւ ոսկին թանգի» խոսքերի առիթով[592]:

Ումեկի ավագ որդի Քարիմադինը հիշատակվում է Նոր Գետիկի 1291 թ. վիմագրում՝ իր զավակների միջոցով. «պարոնուԹեան Իգդիշ խաթունին եւ եղբարց իւրոց ԱրղուԹին եւ Թաղադամուրին՝ որդոց Քարիմադինին որդո մեծին Ումեկին եւ այլ որդո ԽուԹուխին...»[593]: Այս տոհմից վերջինը՝ Արղութը, տիկնոջ՝ Խորիշ խաթունի հետ վկայակոչվում է 1345 թ. արձանագրությունում[594]:

Մեծահարուստ Ումեկը, գնելով ընդարձակ տիրություններ, հավանաբար, սեփական քաղաքական վերելքի ապահովման և իշխանական տիտղոսի ձեռքբերման նկատառումներով երկրորդ անգամ ամուսնացել է հռչակավոր Հասան Ջալալ Դոլայի դստեր հետ:

2010 թ. ամռանը, երբ ԳԱԱ ՀԱԻ վիմագրագիտական արշավախումբը (Աշ. Մանուչարյան, Ս. Ադամյան, Ա. Գափոյան, Տ. Իսահակյան) աշխատում էր Հովհաննավանքում, վանքի պահակ Արիս-

---

589 Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

590 Նույն տեղում, էջ 71:

591 Նույն տեղում, էջ 71-72:

592 **Ա. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, էջ 207: Հմմտ. **Լ. Բաբայան,** Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, էջ 534:

593 Դիվան, պր. VI, էջ 104-105:

594 Տե՛ս նույն տեղում, էջ 107:

տակես Խուդավերդյանը (Պապիկ) համալիրի հնագույն, IV դ. բազիլիկ եկեղեցու հարավային պատի կամարի աջ հատվածում ցույց տվեց տառահետքեր, որոնք նշմարվում էին ծեփի տակից: Արշավախմբի անդամների կողմից մաքրվեց սվաղը և բացվեց հետևյալ արձանագրությունը.

Լուսանկար



Գրչագիր

ՇՆՈՐՀԻՒՆ Քի. ԵՍ՝ ՈՒՄԵԿՍ Ե⌈Խ/ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ⌉Մ ⌊ԱՄԱ⌋ ՏԻԿԻՆ, ՏԻԱՔ ԻՆՁՍ ⌈Ի ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԵԽ/ՍՊԱՍԱԻ⌉ՈՐՔՍ ՎՃՌԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ Դ(4) ⌈ԱԻՐ ԺԱՄ ՊԱՏԱ/ՐԱԳԵԼ⌉ /Ի ՏԱԻ⌈ՆԻ ՔԱ⌉ՌԱՍՆԻՑ :ՈՎ ՁԱՆԷ, Մ⌈ԵՂԱՑՍԷ Ի ՏԷ⌉[595] :

---

[595] ***Աշ. Մանուչարյան,*** *Նոր վիմագրեր Հովհաննավանքից, էջ 89:*

Մամա տիկինը կամ Մամա խաթունը երկու արձանագրություն է թողել Գանձասարում. «Անուամբ Այ. ես Մամախաթուն եւ պատրոն Ծարս միաբանեցաք սբ ուխտիս Գանձասարա եւ սոքա տուին աւագ :Ե: (5) շաբաթ աւր զամէն եկեղեցիքս պատարագ պատրոն Ումեկին, գրեցաւ թվին :ՉԺԷ: (1268)»[596], «...ես՝ նուաստ աղախին Քի. Մամա-խաթունս, դուստր ինքնակալ իշխանաց իշխանին Ջալալ Դաւլա Հասանա՝ տն Խաչինո եւ բարէպաշտ մաւր իմո Մամքանին եւ ամու-սին իմ պարոնին Ումեկին, եկի մեծ յուսով ի սբ ուխտս Գան-ձասարա ես եւ որդի իմ Վախտանգ ... թվիս :ՉԻԹ: (1280) է»[597]:

Վայոց ձորի «Զորաց տաճարում» կա տապանաքար հետևյալ մա-կագրությամբ. «Թվ. :ՉՂԶ: (1347), այս է հանգիստ պարոն Վախ-թանգին՝ որդոյ պարոն Ումէկին»[598]:

Վախտանգի հայտնվելը Վայոց ձորում, Գ. Հովսեփյանի ենթա-դրությամբ, կապված է Ումեկի ավագ որդիների միջև հայրական կալվածքների բաժանման գործում նրա անտեսմամբ, որին ոչինչ չէր մնում, բացառությամբ իր մորաքրոջը՝ Օրբելյանների հզոր իշ-խանական տան հարս, Սյունյաց իշխանուհի Մինա խաթունին ապավինելուց[599]*:*

Սյունիքն իր հզորությանը հասավ Լիպարիտ Օրբելյանի որդի Սմբատի գահերեցության տարիներին՝ 1253-1273: Նրա մասին ամե-նայն դրվատանքով է արտահայտվում հոգեզավակը՝ պատմիչը. «...Սմբատ որ էր հանճարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք աննման, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար. ի դատարանի դիւանին անպարտելի. զի խօսէր լեզուս հինգ՝ հայ և վրացի, ուղուր և փարսի և զմուղալն իսկ»[600]*:*

Սմբատ Օրբելյանը խոշոր քաղաքագետ էր, հմուտ դիվանագետ: Երկու անգամ լինելով Կարակորումում՝ նա կարողացել էր Սյունիքը

---

[596] *Դիվան, պր. V, էջ 50: Ճիշտ է Ծար անձնանունը կարդալ Ճար, քանի որ խոսքն այստեղ, անտարակույս, վերաբերում է Ումեկի Ճար որդուն, որը, հավանաբար, ուղեկցել է իր մայրացուին՝ Գանձասար կատարած ուխտագնացության ժամա-նակ:*

[597] *Նույն տեղում, էջ 41:*

[598] *Դիվան, պր. III, էջ 110:*

[599] *Տե՛ս* ***Գ. Հովսեփյան,*** *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշա-կույթի պատմության, պր. Ա, էջ 10:*

[600] ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 405:*

դարձնել առանձին թուման՝ վարչական միավոր, նահանգի համար ձեռք բերել «ինջու» կարգավիճակ և իր տիրապետության սահմաններն ընդլայնել ի հաշիվ Վայոց ձորի, արևելյան Այրարատի, Գեղարքունիքի որոշ տարածքների[601]: Վիմական աղբյուրներում Սյունիքի տիրակալը մեծարվում է որպես «փառաւոր իշխան» (Արատես, 1270)[602], «Մեծ իշխանաց իշխան» (Վայոց ձոր, Եղեգիս ավան, Օրբելյան գերդաստանի տոհմական դամբանատուն)[603], Նորավանքի Սմբատի դամբարանի ճակատակալի հիշատակությունում և տապանաքարին նա հորջորջվում է «արքա» բարձրակոչ տիտղոսով[604]:

Օրբելյան տոհմի բարձրացումը Սյունիքում և նոր տիրույթների ձեռքբերումը Վայոց ձորում կարծես թե չէր խամրեցնում խաղբակյանների փառքը, որի ականավոր ներկայացուցիչն էր Պռոշը՝ հայոց սպարապետը (1223-1284), մոնղոլական զորքերի կազմում արևելքի մարգարիտը՝ Բաղդադը գրավող հայկազուն իշխանը: Դեռևս ծերունազարդ Պռոշի պաշտոնավարության վերջին տասնամյակում սպարապետությունը վստահվել էր որդուն՝ Ամիր Հասանին. «... Եւ Թաջերի, դուստր Ուքանա, ամուսին Հասանայ՝ սպարապետին հայոց՝ որդոյն Պռոշայ...»[605]: Նա «ի բազում պատերազմունս» քաջի անուն էր ժառանգել, Հուլավուի և Աբաղայի պալատում նվերների ու պատվի արժանացել... Պռոշյան ավատական տան այս ներկայացուցչի ինքնուրույնության և գրված դիրքով պետք է բացատրել և այն, որ ժամանակակիցները նրան վերագրել են «արքա» տիտղոսը[606]:

Կենտրոնական Հայաստանում իշխող դիրք էր գրավում Սադուն Արծրունին: Զաքարյանների դերի նվազումից հետո հայոց մեջ առաջնայնության համար մրցակցությունը Սմբատ Օրբելյանի և Սադունի միջև մոնղոլները լուծում են հօգուտ վերջինիս: Դրանում մեծ է եղել հետագայի իլխան Աբաղայի (1265-1282) դերը:

Միջնադարի անպարտելի ըմբիշ, դամասկոսյան արյունահեղ ճակատամարտի հերոս, Մահկանաբերդի «մեծ իշխանաց իշխան»[607] Սադունը Հաղբատի 1273 թ.[608] վիմագրում հիշատակվում է «ամիրսպա-

---

601 Տե՛ս **Գ. Գրիգորյան,** Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 201:
602 Դիվան, պր. III, էջ 124:
603 Նույն տեղում, էջ 155:
604 Նույն տեղում, էջ 234, 236:
605 **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 121:
606 Տե՛ս ՀԺՊ, III, էջ 635:
607 Դիվան, պր. VI, էջ 211:
608 Դիվան, պր. IX, էջ 180:

սալար, աթաբեկ» բարձրահունչ տիտղոսներով, Իլևանի տարածաշրջանի Առաքելոց վանքի 1273, 1274 և 1276 թթ. արձանագրություններում՝ «աթապակ», «ածասէր աթապակ»[609] կոչումներով:

Սադուն Արծրունու մահից (1284) մեկ տարի հետո այդ բաձրակարգ պատիվները շնորհվում են Սմբատ Օրբելյանի եղբայր Տարսայիճ իշխանին՝ ի հատուցումն Թագուդար Ահմադին (1282-1284) գահընկեց անելու գործում Թագի օրինական ժառանգորդ Արղունին (1284-1291) ցույց տված մեծ օժանդակության: Կոթի գյուղաքաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու 1275 թ. արձանագրությունում[610] որպես գավառի իշխան նշված է Տարսայիճ Օրբելյանը: Իսկ տասը տարի հետո՝ 1285 թ. այժմյան Գեղարքունիքի Արծվանիստ գյուղի սահմանախաչի վիմագրում Տարսայիճի հետ միասին գավառի իշխաններ են հիշվում Լիպարիտ և Ջալալ Օրբելյանները[611]: Աթաբեկություն ստանալուց հետո Տարսայիճի իրավունքները տարածվեցին Տփղիս, Անի, Կարս, իսկ հարավից Երասխի ձախափնյա տարածքը՝ ընդհուպ մինչև Աղավնո գետ[612]: Նրա պատմիչ որդին՝ Ստեփանոս Օրբելյանը, հպարտությամբ նշում է. «...Տարսայիճ..., որ էր այր զօրեղ և պատերազմող և յաջողակ ամենայն գործս, նաև բարեպաշտ և աստուածասէր յոյժ...»[613], ապա շարունակում. «Եւ զի այր ուժեղ և սրտեայ և պատերազմող էր, և հասակաւ ահարկու, յամենայն պատերազմունս, յոր և երթայր, մեծամեծ քաջութիւնս և անպարտելի զօրութիւնս ցուցանէր, ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս և ի Համայ ընդ Մսրացւոյն, և ի Դարբանդ՝ ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ մարտս, վասն որոյ մեծամեծ պարգևօք պատուեալ լինէր յարքայից արքայէ... (Արղունից՝ Ա. Մ.)»[614]: Մատենագրական տեղեկությունների վիմական հաստատումն է Նորավանքի դամբանատանը նրա ամփոփված աճյունի տապանաքարի փորագրությունը. «Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզաւր և մեծ գործակալին, քաջապահ մենամարտին աթաբէկ Տարսայիճին, ի թվ ԼԻՆ՝ :ՁԼԸ: (1289)»[615]:

---

[609] Դիվան, պր. VI, էջ 209, 210, 213:
[610] Տե՛ս Դիվան, պր. IV, էջ 267:
[611] Տե՛ս Նույն տեղում, էջ 126:
[612] Տե՛ս **Գ. Գրիգորյան,** Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 85-86:
[613] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 416:
[614] Նույն տեղում, էջ 423-424:
[615] Դիվան, պր. III, էջ 236:

Ի դեպ, մոնղոլական բանակների կազմում հակառակորդ երկրների դեմ կռված Օրբելյան իշխանազունների հիշատակություններ են պահպանվել վիմագրական աղբյուրներում: Նորավանքի Ս.Կարապետ եկեղեցու գավթի արձանագրությունում կարդում ենք. «... Ես Սմպատ իշխանաց իշխան իմ սրտի յաւժարութ͂բ տուի ի սբ͂ Նախավկայս իմ հայրենեաց զԱզատն իւր սահմանաւքն... վասն փրկութ͂ն հոգո եղբաւրորդոյ իմ *(ավագ եղբայր Էլիկումի - Ա. Մ.)* Բուրթիլին, որ դեռաբոյս եւ նորափթիթ հասակաւ փոխեցաւ առ Քս͂ պատերազմաւ ի դաշտին Սկիւթացոց.. »[616]: *Ազգատոհմում կատարված այդ ողբերգության կապակցությամբ Սիսական պատմիչը հաղորդում է, որ. «...Բուրթէլն գնաց ընդ զօրս Հուլաւուլին (1256-1265 թթ. - Ա. Մ.) ի պատերազմ ընդ Բերքայ դանին ի դաշտն Խազրաց որ այժմ Խփչախք կոչին. և առ մեծ գետովն, զոր Թերգ (Տերեկ), կոչին, սպանանի ի պատերազմին յ710 թուին (1261)»[617]:*

*Նորավանքի Սմբատի դամբարանում Էլիկում Օրբելյանի՝ մարդառյուծի քանդակով շիրմաքարին փորագրված է. «*Թվիս :ՉԽԹ: *(1300)* զգեղեցկատիպն Էլիկում, որդի մեծի Տարսաիճին, որ առոյծաւրէն խրոխտ մռընչէր ընդէմ այլասեռ գնդին: Աղաչեմ յիշել յաղաւթս»[618]:

*Իլխանության ուժեղ ախոյան, Եգիպտոսի թուրք մամլուքների դեմ դարասկզբին տեղի ունեցած մոնղոլական արշավանքին մասնակցել, գերեվարվել և 12 տարվա գերությունից հետո ազատվելով՝ հայրենիք է վերադարձել Տարսայիճի եղբոր թոռ Սմբատ Լիպարիտյանը: Այդ մասին նա արձանագրել է Վայոց ձորի Հերհերի Ս.Աստվածածին եկեղեցում. «...*Ես Սմբատ որդի Լիպարիտի, յազգէ Աւրպէլենց :ԺԲ: տարի Մսր գերի կացի, Այ͂ կամաւքն ազատեցայ... (գրեցաւ) ի թվ͂ հայոց :ՉԿԶ: (1317)»[619]: *Հավանաբար, Սմբատի ժամանակակիցն ու գերության բախտակիցն է ոմն Աբրահամ, որի*

---

[616] *Նույն տեղում, էջ 218, հավելված:*
[617] ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 416:*
[618] *Դիվան, պր. III, էջ 237:*
[619] *Նույն տեղում, էջ 55:*

հիշատակին Հերհերում կանգնեցված է խաչքար. «...ի բարեխաւս Աբրահամայ, որ մնաց ի Մսր...»[620]:

Տեսանելի է, որ մոնղոլներն իրենց արշավանքների ժամանակ մարտական կարգի առաջին գծում դասավորելով հայ երիտասարդներին՝ ջլատում էին հայության, նրան ղեկավարող ազնվականության ուժերը:

Վերադառնալով Տարսայիճ Օրբելյանի լայն գործունեությանը՝ ավելացնենք, որ հեռատես քաղաքագետն իր տիրակալության, հետևապես, Սյունիքի դիրքերն ամրապնդելու նպատակով՝ նպաստում է Տաթևի և Նորավանքի հոգևոր թեմերի միավորմանը, վերահաստատում Սյունյաց մետրոպոլիտությունը՝ 1286 թ. Կիլիկիա եպիսկոպոսական ձեռնադրության ուղարկելով իր արժանավոր որդուն՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանին: Այս մասին արձանագրված է Տաթևի 1295 թ. վիմագրում. «... :ՁԽԴ: զտր Ստեփաննոս մետրապալիտ Սիւնեաց որ է պռաւտաւֆրաւնտէս հաց մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսաիճին...»[621]: Գրեթե նույն բովանդակությունն ունի Նորավանքի 1295 թ. հիշատակագիրը. «...Ես յոքնամեղ և ապիկար Ստեփանոս, որդի իշխանաց իշխանին Տարսաիճին, եպիսկոպոս Սիւնեաց և տեսուչ երկնահանդէտ աթոռոյս Տաթեւո և Նորավանից...»[622], նաև՝ Հերհերի 1297 թ. «... ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի Սիւնեց աթոռակալի...»[623] արձանագրությունը:

Տարսայիճ Օրբելյանը, հավանաբար, ձգտելով բարձրացնել ընկած Հասան-Ջալալյանների դիրքերը և ուժեղ հովանավորության տակ առնել խաչենցիներին, կատարում է ժամանակակիցների կողմից

---

[620] Նույն տեղում, էջ 68: Ի դեպ, պատմագիտական հետաքրքիր հիշատակություն է պարունակում Զարեքդարի վանքում (Մարտակերտի շրջան, գ. Վաղուհաս) քույր ու եղբայր Շահանդուխտի և Սևադայի կանգնեցրած հուշաքարի՝ ցավալիորեն ջարդված թվականով ու եղծված բառահատվածներով արձանագրությունը, որը հայտնում է Խաչենեցի քաջ և հզոր Գրիգոր իշխանի նահատակության մասին այն մեծ պատերազմում, որում «անկաւ ՌՅԿ (1360) տաճիկ» (տե՛ս Դիվան, պր. V, էջ 132): Ըստ Վարդան պատմիչի՝ հիշատակության հեղինակ Սևադան Նփրկերտի պաշարման ու գրավման (1258-1260) հանրահայտ հերոս նահատակն է, որին անդրադարձել է Խաչատուր Կեչառեցին իր ողբում (տե՛ս նույն տեղում):

[621] Դիվան, պր. II, էջ 25: Պրոտոֆրոնտես նշանակում է հայոց կաթողիկոսի փոխարինող բուն Հայաստանում, բոլոր հոգևորականների գլխավորը, որն իրավունք ուներ հայրապետի անունից անգամ եպիսկոպոսական ձեռնադրություններ կատարելու:

[622] Դիվան, պր. III, էջ 215-216:

[623] Նույն տեղում, էջ 69:

քրիստոնեորեն դատապարտելի քայլ՝ դեռևս իր առաջին կին Արուզ խաթունի (պատմիչի մոր) կենդանության օրոք ամուսնանալով Հասան Ջալալի դստեր՝ Մինայի հետ. «... Ես Տարսայիճ իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին եւ ամուսին իմ Մինա խաթուն դուստր մեծին Դաւլին (*Սիսիանի տարածաշրջան, Դարաբաս գյուղի Ս.Աստվածածին եկեղեցի*)[624], «... Այս գիր յիշատակի և արձան անջնջելի Մինա խաթունիս է, դստեր մեծի արքային Ջալալին և ամուսնո մեծազգի իշխանին Տարսաիճի...» *(Նորավանք, 1292 թ.)*[625], «...թագազարմ արքայուհին է Մինա խաթունն, դուստր մեծ կողմակալին Աղուանից՝ Ջալալին...» *(Նորավանք, 1295 թ.)*[626]:

Արդեն Արցախի կողմնապետների՝ Վերին Խաչենի իշխանների հետ դաշինք ստեղծելու մտադրությամբ Տարսայիճն իր դուստր Ասփային կնության է տալիս Հասան Դոփյանի որդի Գրիգորին. «...Ես Ասփայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինախաթունին և ամուսին հսկայազօր իշխանի Գրիգորի, որդոյն մեծ իշխանին Հասանայ քաջի, տն Աղուանից»[627] *(Խաղբավանք)*: «..Ես Ասփե դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին, թագազարմ մօրն իմոյ Մինախաթունին նպաստ եղեալ Քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի»[628] *(Խաղբավանք)*, «...Հասանայ քաջ զաւրականին... և որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցոյ և քահանայից, և ամուսինն իւր բարեհամբաւ Ասփայ դուստր մեծի կոմսի Տարսայիճի, իշխեցողի կողմանցն Սիւնեաց...»[629] *և այլն:*

Նույն ժամանակներում բուն Խաչենում, ինչպես Գանձասարի վանքի վիմագրերն են տեղեկացնում, 1293-1321 թթ. համեստորեն իշխում էր Հասան Ջալալի թոռը՝ Աթաբեկի որդի Ջալալը[630]:

Տարսայիճը դեռ կենդանի էր, երբ աթաբեկության պաշտոնում նրան փոխարինում է Խութլու Բուղա Արծրունին: Ավանի երկլեզվյան ծածկագիր վիմագիրը հայտնում է, որ «Ի թվիս ՉԼԶ (1287) յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին, ես՝ աթաբակ և ամիրսպասալար Խութլուբուղայ, որդի աթաբակ և ամիրսպասալար

---

[624] *Դիվան, պր. II, էջ 114:*
[625] *Դիվան, պր. III, էջ 238:*
[626] *Նույն տեղում, էջ 237:*
[627] *Դիվան, պր. V, էջ 130:*
[628] *Նույն տեղում, էջ 129:*
[629] *Նույն տեղում, էջ 224:*
[630] *Տե՛ս նույն տեղում, էջ 16, 53:*

Սադոնին, թողի զԱւանայ զայգեց չարետն և զՋուլահկերոյն հորակտաւն»[631]:

Խութլու Բուղան որպես աթաբեկ և ամիրսպասալար հիշատակվում է նաև Իջևանի տարածաշրջանի Առաքելոց վանքի 1291 թ. վիմագրում[632]:

Սանահնի վանական համալիրի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում 1996 թ. աշնանը մեր կողմից գրանցվեց հարթ մակերեսով տապանաքար, որը դուրս էր մնացել նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից: Այն հետագայում հրատարակվեց «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի IX պրակում:

Այդ սալատապանի վրա մեկ տողով արձանագրված է հետևյալ ուշագրավ արձանագրությունը.



Գրչագիր

ԴԵՄԵՏՐԵ Թ[ԱԳԱՒՈՐ] Ա ՀՈԳՑՈՂՆ[633]:

Ըստ Հայկազյան բառարանի՝ «Հոգցող» (Հոգացող) բառն ունի նաև «խնամակալ» իմաստը: Խնամակալը միջնադարում պետք է լիներ ոչ միայն մեծատոհմիկ, այլև բարձրաստիճան պաշտոնյա[634]:

Եթե ընդունենք, որ թագավորի հոգցողը, խնամակալը հավասարազոր է աթաբեկին, ուրեմն պետք է կարծել, որ տապանաքարի ներքո շատ նշանավոր անձ է թաղված, ով եղել է ամիրսպասալար ու աթաբեկ: Քանի որ Դեմետրե Ա-ի գահակալության տարիներին

---

[631] **Կ. Ղաֆադարյան,** Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 21:

[632] Տե՛ս Դիվան, պր. VI, էջ 203: Արձանագրության բնագրում պահպանված է միայն թվականի հարյուրավոր Զ տառը: Այն Ս. Ավագյանն ու Հ. Ջանփոլադյանը վերծանել են ՁԽԲ (1293), ինչը մեր կարծիքով ճիշտ չէ և պետք է ընթերցվի ՁԽ (1291), քանի որ այդ թվականին Անիում, ինչպես քիչ հետո կտեսնենք, ամիրսպասալար ու աթաբեկ է հիշատակվում Շահնշահ Բ: Այստեղից էլ ակնբախ է, որ Խութլուբուղայի կառափնումը եղել է 1291 թ., այլ ոչ 1293-1295 թթ., ինչպես կարծում են Ա. Հովհաննիսյանը, Ս. Ավագյանն ու Հ. Ջանփոլադյանը (տե՛ս նույն տեղում, էջ 205):

[633] Դիվան, պր. IX, էջ 70: Նաև՝ **Աշ. Մանուչարյան**, Ո՞ւմ կարող է պատկանել Սանահնի նորահայտ տապանաքարը, «Հին Հայաստանի մշակույթը», XI, Երևան, 1998, էջ 44-45:

[634] Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. II, Երևան, 1981, էջ 114:

(1125-1156) հայ ազնվական տարրը վրաց արքունիքում դեռևս ազդեցիկ չէր, ապա պետք է ենթադրել, որ սալատապանի տակ Դեմետրե Բ Անձնազոհի ժամանակներում (1275-1289/91) Հայաստանի նշանավոր տոհմերից մեկի բավականին հայտնի ներկայացուցիչ է ամփոփված: Նախ, անհրաժեշտ է նկատել, որ հիշյալ ժամանակաշրջանում որպես թագավորի խնամակալ-հոգաբարձու կարող էին հանդես գալ Սադուն Արծրունին (1261-1284), Մխարգրձել Զաքարյանը (1284-1285), Տարսայիճ Օրբելյանը (1285-1287) և Խութլու Բուղա Արծրունին (1287-1291):

Խնդրո շրջանակից Սադուն, Մխարգրձել ու Տարսայիճ իշխանները դուրս են գալիս այն պարզ պատճառով, որ քաջ հայտնի են նրանց գերեզմանների գտնվելու վայրերը. առաջինը՝ Հաղբատում, երկրորդը՝ Քոբայրում, իսկ վերջինը՝ Ամաղուի Նորավանքում: Մնում է Խութլու Բուղա Արծրունու հարցը, մի գործչի, որը գերիշխող դիրք է ունեցել վրաց արքունիքում, թագավորից հետո համարվել երկրորդը, մեծապես ազդել երկրի ներքաղաքական կյանքի վրա, անգամ միջամտել թագադրության խնդիրներին՝ գահընկեց անելով ու գահին բազմեցնելով ցանկալի թեկնածուի: Նրա գերեզմանի տեղը առայժմ մնում է անհայտ: Եթե նրա հայրը՝ Սադուն Արծրունին, թաղվել է Հաղբատավանքում, ապա տրամաբանորեն որդին էլ պետք է այնտեղ ամփոփված լիներ: Տեղին է հիշել Հաղբատի Ս. Նշան եկեղեցու գեղեցկագեմ երիտասարդի պատկերով որմնանկարը՝ «պարոն Խուտլուբուղայ» մակագրությամբ[635]: Կարելի է ենթադրել, որ մոնղոլները Խութլու Բուղային մահվան դատապարտելիս՝ զրկեին նրան նաև սեփական տիրույթներից: Այդ դեպքում մնում էր հուղարկավորության համար ընտրել մոտակա, ոչ պակաս հռչակավոր Սանահնի վանքը: Այստեղ իրավական տեսանկյունից կարող էր դեր ունենալ նաև այն կարևոր հանգամանքը, որ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին և կից գավիթը, որտեղից հեռու չէ Հոգցողի շիրիմը, ըստ Հովհաննես վանական առաջնորդի 1181 թ. արձանագրության՝ «ի Հիմանց» վերակառուցվել են Մահկանաբերդի տոհմի նահապետ Ամիր Քուրդ Աբուլ-Հասան իշխանի օգնությամբ[636]: Իսկ թե ինչու տապանաքարի վրա բացակայում է Խութլուբուղա բառը, ապա մնում է ենթադրել՝ մոնղոլներն այնքան

[635] Դիվան, պր. IX, էջ 137:
[636] Տե՛ս նույն տեղում, էջ 36:

գայրացած են եղել ըմբոստ հայ իշխանի վրա, որ արգելել են հետ-մահու նրա անվամբ գրավոր հիշատակությունն թողնելը:

Խութլու Բուղայի մահապատժից հետո, համաձայն վիմական աղբյուրների հետագա ժամանակագրության, Հայաստանի քաղաքական կյանքում նորից կենտրոնական տեղ են գրավում Զաքարյանները: Տոհմի ավագ ներկայացուցիչ Շահնշահ Բ-ը՝ որդին Իվանեի, թոռը Շահնշահ Ա-ի, ի հակադրություն վերը վկայված Իջևանի արձանագրության, արդեն 1291 թ. Անիի վիմափոր եկեղեցու վկայագրում հանդես է գալիս որպես աթաբեկ և ամիրսպասալար՝ լինելով միաժամանակ քաղաքի պարոնը. «Կամաւն Այ. պարոնութեան աթապակ, ամիրսպասալար Շահինշահի ... թուին :Զխ: (1291)»[637]:

Շահնշահ Բ-ի քաղաքական գործունեության հետ են կապում մոնղոլական ծանր հարկերի հետևանքով տնտեսապես քայքայված, աղքատացած Անիին արտոնյալ կարգավիճակ՝ «խաս ինջու» («հատուկ տիրություն») շնորհելու փաստը՝ Աբու Սաիդ մոնղոլ իլխանի (1316-1335) արքայական վճռով[638]: Սակայն մայրաքաղաքի գլխավոր դարպասին փորագրված ընդարձակ, անթվագիր արձանագրությունը հայտնում է, որ այդ ակտը՝ «Եղեւ մայրաքաղաք Անի խաս ինջու» *կատարվել է այն ժամանակ, երբ այնտեղ տիրություն էին անում՝* «ի տէրութեան քաղաքիս», *պարոններ Գրիգոր աղան և Հովհաննեսը, որոնք քաղաքի դժվարին օրերին անց են կացրել նորոգումներ, վերացրել մի շարք անցահարկեր, իսկ մի մասը՝ նախկին չափին վերադարձրել՝* «յառաջին սահմանս դարձուցին»[639]: *Արձանագրության վավերացման մոտավոր ժամանակը կարելի է որոշել գրվածքի սկզբնամասի.* «յերկարակենդանութեան արքայից արքային ածադիր Փաթշահին և ածիմաստ իշխանաց իշխանին աշխարհաշէն» *անանուն վկայություններով: Փաթշահը (Փադիշահ) իլխան բառի հոմանիշն է: Հայկական վիմական աղբյուրներում մոնղոլ իլխանների տիրապետությունը.* «յաշխարհակալութիւն», «թագաւորութիւն» *բնորոշումներից զատ արտացոլվել է նաև* «փաթշահութիւն» *ձևով: Այդպես է կոչված մոնղոլ տիրակալ Աբաղայի իլխանությունը (1265-1282) Մարտակերտի շրջանի Դաստակերտ գյուղի 1276 թ. վիմագրում[640]: Հակված ենք կարծելու, որ մեր խնդրի պարագայում*

---

[637] *Դիվան, պր. I, էջ 68:*
[638] *Տե՛ս ՀԺՊ, III, էջ 648, նաև՝* ***Լ. Բաբայան,*** *նշվ. աշխ., էջ 356:*
[639] *Դիվան, պր. I, էջ 1:*
[640] *Տե՛ս Դիվան, պր. V, էջ 99:*

այն վերաբերում է Արղուն խանին՝ 1284-1291 թթ: Անիի Առաքելոց եկեղեցու պատին փորագրված է. «Փաթշահին յերկար կենացն Արղուն աղին և Սահիպ դիւանին...»[641]: Իսկ նույն վիմագրի «իշխանաց իշխանին աշխարհաշէն» հիշատակությունը, անշուշտ, պետք է վերագրել Շահնշահ Բ-ին՝ նկատի ունենալով նրա գահերեցությունը Շիրակում և Արագածոտնի մի մասում նախքան ամիրսպասալարության պաշտոնի ստանձնումը և դրանից հետո: «Ի թվիս չիսե (1296) ի պատրոնութեան իշխանաց իշխանին մեծին Շահնշահի և Աղբուղին...»[642] (Ս. Հռիփսիմե վանք):

Բայց «խաս ինջուն» չի փրկում Անին քայքայումից: Դա է վկայում Առաքելոց եկեղեցու գավթում Շահնշահի եղբայր Աղբուղայի թողած արձանագրությունը. «Ելդանին թվին[643] :ՁԾ: (1301) ... Ես Աղբուղէս, որդի Իւանէի, թոռն մեծացն Զաքարիայի եկի յԱնի հրամանաւ Շահնշահի, տեսայ զքաղաքս աղքատացեալ եւ խիստ ի վեր մնացեալ, զի շատ հարկ էր ի վերա դրած, որ ի սկզբանէ չէր եղել, ես :Գ: (3) հարկ ի վեր կալա...»[644]:

Անիին Զաքարյանների վերատիրելու գործում քիչ դեր չի խաղացել այն հանգամանքը, որ, ինչպես վերը նշված եկեղեցու գավթի 1320 թ. արձանագրությունն է հաղորդում, Շահնշահն ամուսնացել էր Խուանդզեի հետ: Նա դուստրն էր Շամս ադ-Դին ալ-Ջուվեյնու, որը, հիշում ենք, ժամանակին գնել էր Անին: «Թվին :ՁԿԹ: (1320)... Ես Խուանդզէս զուգակից աթաբակ Շահնշահի որ յայսմ ամի ել յաշխարհէ եւ տրտմութիւն մեծ եղեւ մեզ եւ աշխարհիս արեւելից, ես ամուսին նորա դուստր Շամշադին Սահիպ դիւանին եւ պարոն Խաւշաքին (աթաբեկ Ավագի դուստրը - Ա.Մ.), թոռն Իւանէ աթաբակին եւ որդիս իմ Զաքարիա...»[645]: Նրանց այս որդի Զաքարիային է հայոց պատմագիտության դասական Ղ. Ալիշանը համարում արձանագրություններում իր իսկական անունով չհիշատակվող, Շահնշահին իբր հաջորդած, ամիրսպասալար Մխարգրձելին[646]:

Մխարգրձելը, նախ, հիշատակվում է Հաղբատի, ըստ Կ. Ղաֆադարյանի՝ ԺԳ դարի, իսկ Կ. Կոստանյանի՝ 1300 թ. վիմագրում, առաջինի վերծանությամբ՝ «Ես Մխարգրձել, որդի Շահնշահի, որդի

---

[641] Դիվան, պր. I, էջ 19:
[642] Վիմական տարեգիր, էջ 138:
[643] Բարեփոխիչ Ղազան իլխանի ժամանակ՝ 1295-1304:
[644] Դիվան, պր. I, էջ 28:
[645] Նույն տեղում, էջ 24:
[646] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Շիրակ, էջ 175, հմմտ. **Ղ. Ալիշան,** Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 447:

մեծին Զաքարի, և ամուսին մեր Վանենի՝ դուստր աթաբակ Սաթու-նին», *իսկ երկրորդի հրատարակմամբ՝ վերջնամասը.* «և ամուսին իմ Աննա, դուստր աթաբէգին Գրիգորայ...»[647], *ապա Սանահնի, նորից առաջինի ընթերցման համաձայն՝ ԺԳ դարի, իսկ երկրորդի՝ չխթ (1300 թ.) արձանագրությունում, որտեղ* «Եւ արդ, ես ամիրսպա-սալար Մխարգրձելս... և թագաւորազն ամուսինն իմ Վանանէ եկինք ուխտ, տուաք Այ եւ Ած ածինս եւ մեր պարոն Աւագին եւ ամուսին Ասփային եւ ամենայն եկեղեցիքս ամեն հարկէ ազատեցաք...», *հատվածի միջնամասը՝ Կ. Ղաֆադարյանն ուղղել է.* «...մեր պապե-րէ զմեծ արձանս փորեցաք և զեկեղեցիք ամեն հարկէ ազատեց-աք...»[648]:

Մխարգրձելն Արուճի արձանագրությունում, որի թվականը Կ. Կոստանյանը, առանց ուշադրություն դարձնելու գործող հայտնի անձանց ժամանակագրությանը, հրատարակել է «չՀդ» (1325 թ.)[649], *հայտնում է իր ով լինելը.* «... ի փաթշահութեանն Արղուն խանին, ի թագաւորութեանն Դեմետրէի եւ ի պարոնութեանն սպասալար Մխարգրձելի՝ եղբաւրն Իւանէի՝ որդւոյ մեծին Շահնշահի...»[650]: *Վիմագիրը ճիշտ է թվագրել Հովհաննես Շահխաթունյանցը՝ «չԼդ» (1285 թ.)*[651]:

Վերևում նշել ենք, որ Արղուն իլխանն իշխել է 1284-1291 թթ.: Իսկ մյուսը՝ վրաց թագավոր Դեմետրե Բ է (1275-1289/91)՝ աթաբեկ Ավագի դուստր Խոշաքի երկրորդ ամուսինը:

Մխարգրձելն Օձունի տաճարի Սմբատի արձանագրությունում հիշատակվում է նույնպես եղբոր՝ Իվանեի հետ, ով պատվի է արժա-նացած «մեծ» տիտղոսով[652]:

Որ Մխարգրձելը Շահնշահ Բ-ի որդի Զաքարիան չէ, այլ Շահն-շահ Ա-ի, հավաստում է նաև Քոբայրի վրացերեն վիմագիրն իր թվականով՝ ընթերցմամբ ու թարգմանությամբ Պարույր Մուրադ-յանի. «Քրոնիկոնի 499 *(+780= 1279 թ.)*...ես Շահնշահ մանդատու-թուխուցեսի որդի անարժան Մխարգրձել և իմ կողակիցը՝ աթաբեկ և

---

[647] **Կ. Ղաֆադարյան,** *Հաղբատ, էջ 171:* **Կ. Կոստանյան,** *Վիմական տարեգիր, էջ 151:*

[648] **Կ. Ղաֆադարյան,** *Սանահնի վանքը..., էջ 125, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 140-141:*

[649] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 182:*

[650] **Կ. Մաթևոսյան,** *Արուճ, էջ 61:*

[651] **Հ. Շահխաթունյանց,** *Բ, էջ 61:*

[652] *Դիվան, պր. IX, էջ 291:*

ամիրսպասալար Սադունի աղջիկ Վանենը, արժանացաք կառուցելու մեր սոյն զանգակատուն-տապանատունը՝ մեծ նեղության մեջ եղած ժամանակ...»[653]:

Այսպիսով, նախքան Տարսայիճ Օրբելյանի՝ հայոց իշխանապետի պաշտոնն ստանձնելն ամիրսպասալարությունը կարճ ժամկետով, ոչ ավելի մեկ տարուց, վարել է Մխարգրձել Զաքարյանը: Կարծում ենք, որ այդ պատիվը նրան շնորհել է Թագուդար իլխանը, որը գահին էր տիրացել 1282 թ. անօրինական ճանապարհով: Իսկ, երբ վերջինս, ընդամենը երկու տարի անց գահընկեց է արվել և մահապատժի ենթարկվել, որոշ ժամանակ հետո Մխարգրձելը պաշտոնազրկվել է՝ իր տեղը Տարսայիճ Օրբելյանին զիջելով: Նրա ամիրսպասալարության ժամանակով պետք է թվագրվի Սանահնի վերոհիշյալ վիմագիրը՝ «չլդ»՝ 1285:

Իշխանապետի պաշտոնում Շահնշահ Բ-ից հետո՝ 1320 թ. հայոց տան մեջ առաջնայնությունն ստանձնել է ոչ թե նրա անչափահաս որդի Զաքարիան, այլ եղբայրները՝ Զազան, ապա՝ Վահրամը: Վերջինս որպես աթաբեկ հիշատակվում է Հոռոմոսի 1336 թ.[654] և Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու 1342 թ[655]. վիմագրերում:

Վահրամ աթաբեկին այդ պաշտոնում փոխարինել է ժամանակի նշանավոր քաղաքական գործիչ և դիվանագետ Բուրթել Օրբելյանը՝ թոռը հռչակավոր Տարսայիճի: Բուրթելը Նորավանքի մի շարք վիմագրերում հանդիսանում է որպես Սյունիքի «իշխանաց իշխան»[656]: Վաղադնի 1315 թ. արձանագրությունում նրա հետ հանդես է գալիս եղբայրը. «... Մեք Բոյրթէլս եւ Պուղտայս, որդիք Էլիկումին որդո Տարսաիճին, եղբաւր Սմբատա, իշխանք տանս Սիսական...»[657]:

Եթե XIV դ. սկզբին, ինչպես հիշատակարաններից մեկն է հուշում. «..ի զօրավարութեան և իշխանութեան գաւառաց յորում եմք՝ Բուրթելի և Ամիր Հասանա (սպարապետի՝ Ա. Մ.)»[658] Օրբելյան և Պռոշյան տոհմերի որոշակի հավասարակշռությունն ակնհայտ է, ապա մոնղոլական արքունիքի նկատմամբ վարած ճկուն քաղաքա-

---

[653] **Պ. Մուրադյան,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 177:
[654] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 165-166:
[655] Տե՛ս Դիվան, պր. I, էջ 44:
[656] Դիվան, պր. III, էջ 223, 240:
[657] Դիվան, պր. II, էջ 100:
[658] Ըստ **Լ. Բաբայանի՝** Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, էջ 366:

կանության շնորհիվ Բուրթել Օրբելյանի հետագա բարձրացման օրոք Պռոշյան իշխանական տունը վասալական կախման մեջ է ընկնում Օրբելյաններից: Դրա վկայությունն է Գլաձորի XIV դարի հիշատակարանը՝ գրված. «Ի թուին Հայոց 783 (1334) ...ի յիշատակութեան և տէրութեան համօրէն գաւառացս մեծ իշխանիս Բուրթելի և որդոց նորին Պեշգենի և Իւանէի, իսկ ի տեղւոյս տէրութեան՝ թոռանց մեծին Պռոշա՝ Ամիր Հասանայ և Զումայի (Ամիր Հասան սպարապետի թոռներն են, Էաչի Պռոշյանի որդիները - Ա. Մ.)[659]:

Խաչատուր Կեչառեցու աշակերտ, գրիչ Բարդադը Եղեգիսում ավարտած իր հիշատակարանում Բուրթելին կոչում է. «արեաց վեհագոյն, իշխանաց իշխեցող, մեծ կոմս և կողմնակալ»[660]: 1341 թ. Բուրթելը նշանակվում է «հիւպատոս և սպարապետ Հայոց» իլխանության մայրաքաղաք Սուլթանիայում. «... ի թագաւորութեան հայոց (նկատի է առնվել Կիլիկիան - Ա. Մ.) ՁՂ (1341), ի յաշխարհակալութեան փոքր Շեխ Հասանի և հիւպատոսութեան և սպարապետութեան հայոց Բիւրթէլին, ի քաղաքն Սուլտանիա»[661]: Բուրթել քաղաքական գործչի վեր բարձրացման վիմական վկայություններն են Նորատուսի 1344 թ. «իշխանին հայոց»[662] և Հերհերի 1345 թ. «մեծ պարոն»[663] հիշատակությունները:

Բուրթել Օրբելյանից հետո Հայաստանի քաղաքական կյանքում վերստին վեր են բարձրանում Զաքարյանները:

Կոչավանքի նորահայտ 1347 թ. կիսաեղծ արձանագրությունում հիշատակվում է «մեծ ամիրսպասալար Զաքարիա», ով տերն էր նաև Արագածոտն գավառի[664]: Նրան պետք է ենթադրել Շահնշահ Բ-ի ու Խուանդզեի այն որդին, որն իբր «մահացել է երիտասարդ հասակում»[665]:

Հայոց վերջին ամիրսպասալարն ու աթաբեկը Շահնշահ Գ Զաքարյանն է: Նա և իր հայր աթաբեկ Զազան հիշատակվում են Բջնիի 1358 թ. զույգ վիմագրերում: Այս երկուսի ազգակցական հարցերում կան տարակարծություններ: Հետազոտողներից ոմանք, հենվելով Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին արտաքուստ

---

[659] *«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 261:*
[660] *Նույն տեղում, էջ 377:*
[661] *Նույն տեղում, էջ 328, 406:*
[662] *Դիվան, պր. IV, էջ 21:*
[663] *Դիվան, պր. III, էջ 56:*
[664] *Մեր դաշտային օրագրից:*
[665] *ՀԺՊ, III, էջ 642:*

փորագրված վիմագրի երկրորդ տողի. «Ես աթապակ Շահինշահի որդի աթաբակ Զազայս» սխալ վերծանության վրա (այն այդպես է հրատարակված Կ. Կոստանյանի «Վիմական տարեգրում»)[666], Զազա աթաբեկին համարել են Շահնշահ Գ-ի որդին[667]: Իսկ վերջինիս հռչակել են Շահնշահ Բ-ի և Խուանդզեի որդի Զաքարիայի որդին, որը «Մելիք Աշրաֆի ասպատակությունների ժամանակ հազիվ կարողանում է Անիից փախչել Բջնի»[668]: Հետազոտողներին թյուրիմացության մեջ է գցել նաև Բջնիի նույն եկեղեցու հյուսիսային պատին ներքուստ փորագրված 11 տողանի արձանագրության թերի հրատարակության. «ողորմութեամբ իմ պարոն Շահանշահի ... ի ժամանակիս բռնակալութեան Մելիք Աշրափին և Հաճի պէկին» հիշատակությունը[669]: Այս երկու վիմագրերը գիտականորեն հրատարակել ու մանրազնին քննության է ենթարկել Ե. Մուշեղյանը[670]: Նորովի ընթերցմամբ պարզվել է, որ Շահնշահ Գ-ը ոչ թե Զազայի հայրն է, այլ որդին[671]: Ինչ վերաբերում է Զազային, ապա նրան պետք է ենթադրել աթաբեկ Վահրամի և ամիրսպասալար Շահնշահ Բ-ի եղբայրը: Այն, որ Զազան Շահնշահ Գ-ի հայրն է, ապացուցվում է Անիի երկու անթվակիր վիմագրերով, որտեղ նա հիշատակվում է եղբոր՝ Աղբուղայի հետ միասին: Այդ երկու արձանագրություններում ապահարկության ձեռնարկներ են կատարվել «վասն պարոն Աղբուղին արեւշատութեան եւ վասն պարոն Զազային հոգոյն»[672]: Սա նշանակում է, որ Աղբուղան ողջ է, իսկ եղբայրը՝ Զազան՝ մահացած: Աղբուղան, ըստ վիմական աղբյուրների, գործել է XIV դ. 20-30-ական թթ.: Աթաբեկ Վահրամը Հոռոմոսի 1336 թ. վիմագրի իր կենդանի ու մահացած եղբայրների շարքում, ի թիվս այլոց, հիշատակում է նաև Աղբուղային ու Զազային[673]:

Ինչ վերաբերում է Բջնիի վերոհիշյալ զույգ վիմագրերին, ապա դրանք օտարների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարի արտա-

---

[666] *Վիմական տարեգիր, էջ 169-170, հմմտ.* ***Ղ. Ալիշան****, Այրարատ, էջ 273:*
[667] ***Լ. Բաբայան,*** *նշվ. աշխ., էջ 360, հմմտ. ՀԺՊ, III, էջ 542:*
[668] *ՀԺՊ, III, նույն տեղում:*
[669] *Վիմական տարեգիր, նույն տեղում:*
[670] *Տե՛ս* ***Ե. Մուշեղյան,*** *Բջնիի 1358 թ. արձանագրության մասին, ՏՀԳ, Երևան, 1956, № 7, էջ 98: Տե՛ս նաև «Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ», հ. 5, Երևան, 1959, էջ 273, 276 -277 (ռուսերեն):*
[671] *«Ես աթաբակ Շահինշահ, որդի աթաբակ Զազային» (տե՛ս* ***Ե. Մուշեղյան,*** *նույն տեղում, նաև՝* ***Գ. Գ. Սարգսյան****, Դիվան, պրակի ձեռագիր):*
[672] *Դիվան, պր. I, էջ 28, 30:*
[673] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 165:*

ցոլումն են: Աշրաֆ ալ-Զորանին (1344-1357), Ատրպատականում ժամանակավորապես վերացնելով մոնղոլ իլխանների տիրապետությունը և իրեն ***մալիք՝*** *թագավոր հռչակելով, ասպատակում և ամայացնում է Կենտրոնական Հայաստանը: Այս ժամանակներում պետք է ենթադրել Կիրակոս վարդապետի նահատակությունը.* «Այս է հանգիստ Կիրակոս վարդապետին, որ նահատակեցաւ յանաւրինաց: ՁՂԷ: (1348)»[674]:

Մելիք Աշրաֆի զորավար Հաջի բեկի հրոսակները գրավել ու հիմնահատակ ավերել էին նաև Զաքարյանների Բջնի ամրոցը: Այդ մասին են տեղեկացնում 1358 թ. զույգ վիմագրերը: Աթաբեկ Զազայի որդի աթաբեկ Շահնշահը. « ի զարմէ երկուց հարազատաց եւ յաղթողաց ամիրսպասալար Զաքարիայի և աթաբակ Իւանէի...», *հայտնում է, որ Մելիք Աշրաֆն իր գահակալության ժամանակ խլել էր իրենց հայրենի Բջնի քաղաքը, հպատակներին գերի վերցրել՝* «զիր ճորտերին եսէր կացուցել», *իսկ Հաջի բեկը՝* «զքաղաքս ի հիմանց քակեց», *շատ անվանի մարդկանց սրի քաշել և եկեղեցիները քարուքանդ արել, քրիստոնյաներին անխնա կոտորելով՝ քաղաքի չորս բոլորը անբնակ դարձրել: Ապավինելով Աստծուն և ազատագրված գյուղացի, զորապետ (*«սալահր ի Մուլահրէս*)*[675] *Ամիրզեին*[676] *հեծելազորի գլուխ կարգելով՝ Շահնշահ Գ ազատագրում է Բջնի քաղաքը, վերանորոգում եկեղեցիները, վերականգնում վանքի վիճակն իր նախկին սահմաններով, ունեցվածքով և դրանք ազատում հարկերից:*

Վիմական աղբյուրները հաղորդում են, որ ատրպատականցիներին դիմադրություն են ցույց տվել նաև Սյունիքում: Թերևս այդ է վկայում Կեչուտի տապանագիրը. «Այս է հանգիստ պարոն ԹաղմուԹին, որ նահատակեցաւ ի պատերազմի, որ էր զաւրեղ եւ տղայ. Թվ :ՁՂԵ: *(1346)*»[677]:

---

[674] *Դիվան, պր. I, էջ 67:*

[675] *Պարսկերեն այս բառերի ստուգաբանությունը տե՛ս* ***Ե. Մուշեղյան,*** *նշվ. աշխ., նույն տեղում:*

[676] *Վիմագրագետ Գ. Գ. Սարգսյանը չտկել է վեցերորդ տողում հիշատակված «Ամիրզե» անձնանունը, որը նախորդ ուսումնասիրողները վերծանել են «Միրզե»՝ չնկատելով բառասկզբի եռատառ (Ա) փակագրի Ա-ի ստորին փոքր ստեղը: Ճիշտ է, այս վիմագրում ստեղը հողմնահարված է, բայց այն պարզորոշ երևում է զույգ բնագրերի Ամիրզեի հիշատակությունում (տե՛ս* ***Գ. Գ. Սարգսյան,*** *Դիվան, պրակի ձեռագիր):*

[677] *Դիվան, պր. III, էջ 21:*

Զնայած Զոբանյանների դուրս վտարելուն և ավատական իրավունքների պահպանմանը, մոնղոլական երկարատև տիրապետությունը՝ ծանր հարկահանությամբ, հայ ազնվականության նկատմամբ իլխանների նենգ քաղաքականությամբ, որը բնորոշվում է մի տոհմի բարձրացմամբ մյուսին իջեցնելու, մշտական հակադրության մեջ պահելու սկզբունքով, այնպես էին ջլատել հայերի ուժերը, ցաք ու ցրիվ արել նրանց, որ XIV դարի երկրորդ կեսի հայոց գլխավոր իշխանները՝ Շահնշահ Գ Բջնեցին ու Վաչուտյան Թեոդորոս Զրքին Ամբերդեցին Այրարատում, Բուրթել Օրբելյանի որդիները Սյունիքում, Զեսար Օրբելյանի սերունդներն ու Պռոշյանները Վայոց ձորում, Իվանե Բ Հասան-Ջալալյանը Խաչենում, Հասան և Վահրամ Դոփյանները Ծարում, չէին կարող համախմբվել, մի միասնական վահան դառնալ՝ դիմակայելու Լանկ-Թամուրի ահասարսուռ ասպատակությունները, դիմագրավելու թուրքմենական անապատների քոչվորների սև ու սպիտակ ոչխարապահ ցեղախմբերի արշավանքները:

Այսպիսով, ամփոփելով հավելենք, որ վիմագրերը հնարավորություն են ընձեռում կազմելու հայոց իշխանապետների՝ ամիրսպասալարների ու աթաբեկների ժամանակագրությունը.

1. 1187-1211 թթ.՝ ամիրսպասալար Զաքարե Ա Զաքարյան
2. 1211-1227 թթ.՝ աթաբեկ Իվանե Զաքարյան
3. 1212-1251 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Շահնշահ Ա Զաքարյան
4. 1213-1250 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Ավագ Զաքարյան[678]
5. 1250-1261 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Զաքարե Բ Զաքարյան
6. 1261-1263 թթ.՝ աթաբեկ Իվանե Բ Զաքարյան
7. 1263-1284 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Սադուն Արծրունի
8. 1284-1285 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Մխարգրձել Զաքարյան

---

[678] Մոնղոլները Հայաստանի կառավարման գործերը հանձնեցին Ավագին, այնուհետև Շահնշահին, հետո վերստին Ավագին, որի մահից հետո (1250) «...ետուն զիշխանութիւն նորա Զաքարէի որդւոյն Շահնշահի, զի Աւագ որդի ոչ ուներ» (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 321)[356]:

9. 1285-1287 թթ.՝ աթաբեկ Տարսայիճ Օրբելյան
10. 1287-1291 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Խաթլու Բուղա Արծրունի
11. 1291-1320 թթ.՝ ամիրսպասալար, աթաբեկ Շահնշահ Բ Զաքարյան
12. 1320-1335 թթ՝ աթաբեկ Զազա Զաքարյան՝ եղբայր Շահնշահ Բ-ի
13. 1335-1342 թթ.՝ աթաբեկ Վահրամ Զաքարյան՝ եղբայր Շահնշահ Բ-ի
14. 1342-1345 թթ.՝ Հայոց իշխան, սպարապետ Բուրթել Օրբելյան
15. 1345-1350 թթ.՝ ամիրսպասալար Զաքարե Գ Զաքարյան՝ որդի Շահնշահ Բ-ի
16. 1350-ական թթ.՝ աթաբեկ Շահնշահ Գ Զաքարյան՝ որդի Զա-զայի[679]:

[679] Մենք լրացուցիչ նյութերի հիման վրա որոշ փոփոխություններ ենք կատարել նախկինում մեր կողմից հրատարակված ցանկի մեջ (տե՛ս **Աշ. Մանուչարյան**, Հայոց իշխանապետերի ժամանակագրությունն ըստ 13-14-րդ դդ. վիմագրերի, ԲԵՀ, 1995, № 2, էջ 62-65):

ԳԼՈՒԽ Գ

ՕՏԱՐՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

1. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄՆ ԱՆԻԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Տարբեր ժամանակներում այլազգիների դեպի Հայաստան անընդհատ կատարած արշավանքների ծանր հետևանքները, տիրապետության արհավիրքները վիմական բնագրերում, քան այլուր, ավելի տեղին են արտահայտվում, թեև դրանցում, ի տարբերություն մատենագրական աղբյուրների, երբեմն բացակայում է պատմական իրադարձությունների ամբողջական, որոշ դեպքերում՝ մանրամասն նկարագիրը, սակայն բազմաթիվ հուշարձանային կոթողների արձանագրություններում, տապանագրերում և այլ վավերագրերում պահպանված, հակիրճ, բայց տրամաբանական եզրակացություններ պահանջող կարևորագույն հաղորդագրություններում առկա են մարտերում հերոսաբար ընկած ռազմիկների հիշատակություններ, զավթիչների ասիական վայրագությունների մասին տեղեկություններ, եկվորների ներքին քաղաքականության, ծանր հարկերի ու հյուծիչ տուրքերի հետևանքով քայքայված տնտեսական իրավիճակ, դրա հետ կապված ազգակիցների դրությունը թեթևացնելու համար հայ իշխանավորների վավերացրած հարկադրական ապահարկության իրավական վճիռներ, մեր ժողովրդի դյուցազնական պայքարի, հայկական փառապանծ զորքերի ուժերով քաղաքների, բերդերի, ամրոցների, ամբողջ երկրամասերի ազատագրման մշանջենական վկայություններ և շատ ուրիշ երևույթներ, առանց որոնց թերևս թերի կթվար հայոց միջնադարյան պատմությունը:

Երկու տասնամյակը հագիվ բոլորած բյուզանդական տիրապետությունն անգամ տեղ է գտել հայկական վիմական աղբյուրներում: Արևելքի երբեմնի հզոր երկիրը, 1045 թ. վերածվելով բյուզանդական պրովինցիայի, հետայդու կառավարվում էր կատեպան-կառավարիչների միջոցով: Անիի Մայր տաճարում հայերեն լեզվով

թողած արձանագրությունում Առոն Մագիստրոսը[680] հայտնում է, որ ինքը բարերար Աստծո ողորմությամբ ու ցանկությամբ. «...մեծարեալ ի մեծափառ թագաւորութեանցն ի գեղ զարդու և ի տիս մանդուլթեան իմո, եկի յարեւելս[681] ի գեղեցկաշէն բերդս յԱնի, բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրութեամբ, եւ ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորդաբուխ ի մեջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց: Բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն[682] վասն պախտից տանց[683] քաղաքիս և թաստակին[684], զոր տաին ամ յամէ չափ ութից լտերց[685], այլ եւ ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, զոր տայր մութասիբն[686] զայս ամէն...»[687]:

Դժվար չէ կռահել, որ բյուզանդացիները, նենգությամբ գրավելով Հայաստանը, բնակչությանը փորձում էին սիրաշահել կենսական նշանակություն ունեցող, ամենից առաջ կենցաղային խնդիրների լուծմամբ, այն է՝ ամրոցի ջրամատակարարման խրթին հարցի կարգավորումը, քաղաքացիներին, պաշտոնյաներին պետական-արքունական ծանր հարկերից ազատելը և այլն: Ահարոն կատեպանը հասկանալով, որ կայսրության անվտանգությունն սկսվում է Հայաստանից, մտահոգվում է Անիի ռազմապաշտպանական ամրությունների համակարգի կատարելագործմամբ, մասնավորապես բարձրացնում է. «բաւանդակ զպարիսպ՝ կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղուս ամրութեամբ»:

---

680 Առոնը Անիի կառավարիչ նշանակված Վասպուրականի կատեպան Ահարոն Մագիստրոսն է՝ բուլղարների Վլադիսլավ թագավորի որդին:

681 Բյուզանդացիներն «արևելք» էին կոչում Հայաստանը՝ որպես կայսրության արևելյան պրովինցիա:

682 Բյուզանդիայի Թեոդորա կայսրուհին է, որի գահակալության տարիներով էլ (1054-1056) որոշվում է այս անթվակիր արձանագրության ժամանակը:

683 «Պախտ տանց» բյուզանդական հարկ է, որը վճարվում էր տների համար և գանձվում էր մթերքով, տվյալ դեպքում՝ մեկը ութ լիտրի, իսկ մյուսը՝ երկու լիտրի չափով (տե՛ս **Ս. Պողոսյան,** Գյուղացիների ճորտացումը..., էջ 226): Բնահարկ:

684 «Թաստակը» բնահարկի («պախտ») կամ «չարիատ»-ի 1/4 մասն է (տե՛ս **Հ. Մանանդյան,** Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, էջ 21):

685 Չափի բյուզանդական միավոր, ըստ որի՝ 1 լիտրը հավասար է 72 բյուզանդական ոսկեդրամի, ուրեմն կայսրությանը վճարվող 8 լիտրը կազմում էր 576 ոսկեդրամ (Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Ահարոն Մագիստրոսի արձանագրության (1055-1056) մեջ հիշատակված հարկերի մասին, ՊԲՀ, № 4, 1959, էջ 172):

686 Հարկահավաք պաշտոնյա, եզրույթն ունի արաբական ծագում:

687 Դիվան, պր. I, էջ 38, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 27:

Անիի բյուզանդական կառավարչի պաշտոնում Ահարոն Մագիստրոսին արդեն Կոստանդին Դուկաս կայսեր օրոք (1059-1067) փոխարինում է հայ քաղկեդոնական Բագարատ Վխկացի Բագրատունին: Մայր տաճարում 1058-1060 թթ. փորագրված վճիռ-հրամանագրում Բագարատ Մագիստրոսը կայսր Կոստանդին Դուկասի անունից քաղաքի իր ստորադաս ենթականեր, տանուտերեր Մխիթար Կուրտյանին, Գրիգոր Լապաստակյանին և Սարգիս Արտավազդյանին, որոնք որոշման մեջ հանդես են գալիս բյուզանդական «իպատոս», «սպաթար կանկիտատ» վարչական պաշտոնանվանումներով, կարգադրում է քաղաքացիներին ազատել մի շարք պարհակներից ու հարկերից. «զվեցկէ[688] կոռ[689] եւ զսայլի եւ զկամին եւ զանգարիոն[690] եւ կատապան ով եւ լինի տա սերմ :Ո: (600) մոդ[691] եւ ծախք զընծելոյն զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ, որ չհասնի ի յԱնի ոչ ինչ ոյժ: Եւ գինեւոր անեցի եթէ սայլով եթէ գրաստով բաժն[692] ազատ է եւ անեցի որ իւրենն մորթելիք գնէ բաժն ազատ է, եւ շալակաւոր անեցի բամբէնցաւ բաժին կէսն ազատ է: Եւ ի կապճին տային դահեկանին :Զ: (6) դրամ այս տան :Դ: (4) դրամ, :Բ: (2) ազատ է[693]. եւ մսագործի եթէ պախրէի լինի գլուխ եթէ ոչխարի զկէսն տա կէսն ազատ է եւ ի նստուռ ինկարլէն Ո (600) դրամն ազատ է»[694]:*

---

[688] *«Վեցկի»՝ վեց քարշող անասուններով լծված գութան:*

[689] *«Կոռ»՝ վանքապատկան կամ սեփականատեր իշխանավորի հողում պարտադիր անվճար աշխատանք (տե՛ս ՀԺՊ, III, էջ 230, հմմտ.* ***Ս. Հակոբյան,*** *Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, էջ 111): Արձանագրությունից երևում է, որ կախման մեջ գտնվող շինականները տերերի համար բանում էին իրենց եզներով, գութանով և աշխատանքային այլ միջոցներով:*

[690] *Փոստասուրհանդակային պարհակի պարտավորություն (տե՛ս* ***Ս. Ավագյան,*** *«Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դ. արձանագրության մեջ, էջ 182), նաև կամուրջների, ճանապարհների, քաղաքի պարսպի և այլ ամրությունների շինարարության ու նորոգման պարտադիր պարհակային աշխատանք (տե՛ս ՀԺՊ, III, էջ 264): Վիմական այլ աղբյուրներում «անգարիոն» չի հիշատակվում:*

[691] *600 մոդ սերմացուն հավասար է 7680 կգ և 10239, 6 լ ցորենի (տե՛ս* ***Ռ. Վարդանյան****, Հայաստանի չափերն ու կշիռները (10-15-րդ դդ.), Երևան, 1989, էջ 186):*

[692] *Մաքսային հարկ: Բագարատ Վխկացին անեցիներին ազատել է «բաժից», եթե նրանք սայլով կամ գրաստով գինի էին բերում քաղաք և իրենց համար գնում մորթելիք ապրանք: Իսկ շալակաբեռների համար անեցիները պետք է վճարեին նախկին «բաժ»-ի կեսը (տե՛ս* ***Ռ. Վարդանյան,*** *նույն տեղում):*

[693] *Եթե նախկինում «կապճին» (ցորենի դեզին) տալիս էին 6, ապա հիմա տալու էին 4 դրամ: Ռ. Վարդանյանը պարզել է, որ եթե յուրաքանչյուր կապիճ արժեր մեկ դահեկան ու սկզբում գանձվել է նրա մոտ կեսը, այսինքն՝ մոտ կես կապիճ (=57, 672 կգ), ապա այժմ վերցվելու էր նրա մոտավորապես 3-րդ մասը՝ (38, 444 կգ): Տե՛ս* ***Ռ. Վարդանյան,*** *նշվ. աշխ., էջ 187:*

[694] *Դիվան, պր. I, էջ 37:*

Այս արձանագրության կապակցությամբ հարկ է նշել, որ Հ. Բարթիկյանը բնագրում հիշատակվող տանուտերներին հարկային պաշտոնյաներ է կարծում, քանի որ նա ***տանուտրութիւն*** *բառի մեջ իմաստային նմանություն է տեսնում Առոն Մագիստրոսի արտոնագրով վերացված* ***պախտ տանցի*** *(տնահարկի) հետ, որը նույն բյուզանդական էնիկոնն է*[695]*:*

Ս. Ավագյանը, մերժելով Հ. Բարթիկյանի տեսակետը և ***տանուտրութիւն*** *բառը քաղաքի կառավարման վարչական մարմնի նշանակությամբ հասկանալով, վերլուծել է բնագրի սկզբնամասը, նաև նկատել, որ «Բագրատի արտոնագրում բյուզանդական պետական պարհակները իսպառ չեն վերացվում: Շարունակության մեջ նշում է, որ կատեպանները պարտավորվում են բանակի և վարչակազմի մատակարարման նպատակով կատարվող ցանքսերի համար տրամադրել 600 մոդ սերմացու և հատուցել արտերը հնձելու ծախսերը, մնացած աշխատանքները (գայլն) միայն թողնելով, որպեսզի կոռային կարգով կատարեն Անիի* ***տանուտէրքն իւրեանց տամբ****»*[696]*, այսինքն՝ սեփական ուժերի և միջոցների հաշվին:*

Անդրադառնալով Բագարատ Վխկացու վճռագրի վերջի ապահարկություններին՝ Ռ. Վարդանյանը բացատրում է. «Արձանագրության շարունակության մեջ ասվում է, որ մսագործ անեցին տալու էր պախրեի «գլուխն», այսինքն՝ սահմանված հարկը լրիվ, իսկ ոչխարի համար՝ կեսը»[697]*:*

Անիի բյուզանդական կառավարչի արտոնագիրն ավարտվում է. **եւ ի նստուռ**[698] **ինկարլէն՝ Ո (600) դրամն ազատ է** *անհասկանալի համարվող նախադասությամբ:*

Կարծում ենք, որ «ի նստուռ» ձևը բացառական հոլովն է «նիստ» բառի, որն ունի նաև «թագաւորի կամ իշխանաւորի նստած տեղը, թագաւորանիստ տեղ, իշխանական աթոռ»[699] *իմաստը: Ինչ վերաբերում է հաջորդ՝ «ինկարլէն» բառին, ապա այն պետք է ենթադրել*

---

[695] *Տե՛ս* ***Р. Бартикян,*** *«Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045-1064 гг.), էջ 126:*

[696] ***Ս. Ավագյան,*** *«Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դարի արձանագրության մեջ, էջ 177, 182-183:*

[697] ***Ռ. Վարդանյան,*** *նշվ. աշխ., նույն տեղում:*

[698] *Նախորդ հրատարակիչները «նստուռ» բառը վերծանել են առանց «ւ» տառի, որը պարզորոշ երևում է բնագրի լուսանկարում և գրչագրում (տե՛ս Դիվան, պր. I, նույն տեղում և լուսանկ. տախտ. XIII):*

[699] *Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», հ. III, էջ 463:*

«տիրակալ», «արքա»: Միջին հայերենի բառարանում կա «ինկար» եզրույթի ստուգաբանությունը, որն ըստ հեղինակների՝ հավանաբար ծագում է թուրք hūnkâr-ից («տեր», «տիրակալ», «թագավոր»)[700]: Քանի որ XI դ. կեսին թուրքերենը տարածաշրջանում դեռևս չսպասված ու չտարածված լեզու էր, ուստի ավելի նպատակահարմար ենք գտնում «ինկարլէնի» բացատրությունը բխեցնել «կարլ»=король ձևից, որն ունի հին գերմաներեն ստուգաբանություն և նույնպես համերաշխվում է «արքայի», «թագաւորի» հետ: Հետևապես, «ի նստուս ինկարլէն Ո (600) դրամն ազատ է» պետք է հասկանալ՝ «արքայի (տիրակալի) նստավայրին մուծվող հարկը 600 դրամով նվազեցվում է»: Ըստ Ռ. Վարդանյանի՝ 600 դրամը հավասարազոր է մոտ երկու կիլոգրամ արծաթի[701]: Գիտնականը նկատել է, որ «Բագրատ Վխկացին անեցիներին որոշ զիջումներ անելով, և ըստ էության ինտենսիվացնելով գյուղատնտեսությունը, արհեստագործությունը և առևտուրը պարզ է, որ ավելի շատ եկամուտներ կստանար և դրանով իսկ կապահովեր տեղական միջոցներով ամենից առաջ բանակը, կայսրին և իր կարիքները»[702]:

Ահա, թե ինչպիսի ներքին քաղաքականություն էին իրականացնում Հայաստանում բյուզանդական տիրակալները: Բյուզանդիան, վարելով մեծապետական, ըստ էության, անհեռատես քաղաքականություն, այն է՝ հայկական կենտրոնական թագավորության վերացումը, հայերի զանգվածային վերաբնակեցումը, Հայաստանն իր տիրապետությանը ենթարկելը, փաստորեն փլուզեց այն պատնեշը, որը հուսալիորեն փակում էր արևելքի հեռավոր անապատներից եկող և դեպի բուն Բյուզանդիա շարժվող սելջուկ-թուրքական ռազմատենչ քոչվոր ցեղերի ճանապարհը: Դա մի կույր քաղաքականություն էր, որը հետագայում իր իսկ Բյուզանդիայի կործանման պատճառը հանդիսացավ:

---

700 Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան,** Միջին հայերենի բառարան, հ. I, Երևան, 1987, էջ 286:

701 Տե՛ս **Ռ. Վարդանյան,** նշվ. աշխ., նույն տեղում:

702 Նույն տեղում, էջ 187-188:

2. ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ

Պատմությունից հայտնի է, որ հարևան իսլամական երկրների բանակներում ծառայող վարձկան թուրքերը տակավին XI դարի առաջին կեսին ավարառության նպատակով մերթընդմերթ ասպատակում էին Հայաստանը: Քանի կանգուն էր Բագրատունյաց պետությունը սելջուկ-թուրքերը, հանդիպելով կազմակերպված դիմադրության, ընկրկում էին: Ահա մի այդպիսի բախման ժամանակ, ինչպես արդեն ասել ենք, Արայի ստորոտում գտնվող Սերկևիլ կոչված վայրում. «...Վասակ իշխանաց իշխան... **նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի**...»[703]:

Այս մշտնջենավոր հիշատակի հեղինակ, քաջ սպարապետ Վահրամ Պահլավունին հազիվ թե կարծեր, որ մեկուկես տասնամյակ անց, Դվինի մեծ ճակատամարտից հետո, նույնը կարձանագրեն իր շիրիմին. «Աստ ամփոփի նշխար Վահրամ իշխանաց իշխանի Հայոց մեծաց ի ցեղէ Պահլաւունի, որ **նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի** ի Մարմաշէն ի հայոց թվ[ին] ՆՂԴ (1045)[704]:

Առայսօր մարդկային պատմության մեջ նախադեպը չունեցող թուրքական վայրագությունները իրենց արտացոլումն են գտել նաև հայկական վիմագրերում. «...Յիշատակ...արենաթաւալ Սարգսի, որ յանաւրէն թուրքաց նահատակ եղեւ յանմարդաձայն տեղիս, զոր ընդ ոտիւք դիզաշխարհաւն դրելով զարեգակնանման եղբայրն իմ, զոր գտի ի խորագուն հորի քարաթաղ արարած, մազորտնո արենաթաթախ մարմնոյն ոչ կարի ի ծանել զնա...»[705]: *Անիի այս արձանագրությունը, հավանաբար, փորագրվել է քաղաքը 1064 թ. Ալփ-Ասլանի գրավելուց հետո:*

Կենտրոնական Հայաստանում սելջուկյան տիրապետության շրջանի պատմության վիմագիր հիշատակություններից ամենաշատ տեղեկությունները գտնում ենք արաբական արձանագրություններում: Դրա հիմնական պատճառն այն է, որ դեռևս խալիֆայության օրոք Հայաստանի տարբեր վայրերում հաստատված արաբական

---

[703] ***И. Орбели,*** *Избранные труды, էջ 441-442:*

[704] *Նույն տեղում, էջ 449:*

[705] *Դիվան, պր. I, էջ 70:*

ամիրայությունները, որոնք Բագրատունյաց թագավորության օրոք էական դեր չէին խաղում, Թուրք-սելջուկների երևան գալով՝ սկսել էին աշխուժանալ ու սելջուկյան քաղաքական կյանքում կարևոր դիրք գրավել: Իսկ արաբա-թուրքա-պարսկա-քրդական իսլամական տարրն առավելապես պաշտոնավարում էր արաբերեն լեզվով:

Հայաստանի կենտրոնական մասում որպես սելջուկյան տիրակալներ հանդես են գալիս 1072 թ. Անիում հաստատված Շադդադյանները[706]: Քրդական ծագումով սելջուկյան այս տիրապետողները Անիում և նրա մերձակայքում թողել են բազմաթիվ արձանագրություններ, որոնք արժեքավոր են ընդհանրապես միջնադարյան պատմության առանձին հարցերի լուսաբանման համար: Այս տոհմի թերևս ամենաակնառու ներկայացուցիչ Մանուչեն Անիում կառուցում է մզկիթ՝ արաբերեն լեզվով փորագրել տալով հետևյալ արձանագրությունը. «Ամենագթառատ Աստծո՝ Ալլահի ողորմությամբ հրամայեց կառուցել մզկիթը փառապանծ «ամիր շուջաա ադ-դաուլա» Աբու Շուջաա Մանուչիհը բեն Շաուրը, մեր պարոն, մեծ սուլտան, մեծ շահանշահ, բոլոր ազգերի թագավորների գլխավոր, արաբների ու պարսիկների տեր, արևելքի ու արևմուտքի արքա Աբուլ Ֆաթհա Մելիք-Շահ բեն Ալփ-Ասլանի տերության օրոք»[707]:

Այլ արձանագրություններից տեղեկանում ենք, որ նույն Մանուչեի հրամանով Անիում կանգնեցվել է աշտարակ, իսկ الأمير الإسباسلار *(ալ-ամիր ալ- իսբասալար - Ա. Մ.) Ֆախր ադ-Դին Շադդադ բեն Շաուր բեն Մանուչիհը կառուցել է տալիս քաղաքի վերին դարպասները[708]:*

«Ամիր Մանուչեհը իբն Շավուրի արձանագրությունը հետաքրքիր է այն առումով, որ տալիս է նրա լրիվ տիտղոսը, որն այլ աղբյուրներից հայտնի չէ: Անիի արձանագրությունից երևում է, որ Շադդադյաններն իրենց վասալ էին համարում սելջուկյան սուլթան Մելիքշահին (1072-1090/92): Մանուչեհը (شجاع الدولة) - *(շուջաա ադ-դաուլա, բառացի՝ պետության քաջ - Ա. Մ.) պատվանունը հավանաբար ստացել է սելջուկյան գահին իր ռազմաքաղաքական գոր-*

---

706 Հայտնի է, որ 1064 թ. հայոց մայրաքաղաքը գրավելուց հետո Գանձակի ամիրա Փատլունը (1067-1073) սելջուկ սուլթան Ալփասլանից ստանում է Անին և հանձնում իր փոքր եղբորը՝ Մանուչեին (տե՛ս ՀԺՊ, III, էջ 479):

707 Корпус арабских надписей Армении, էջ 53-54:

708 Տե՛ս նույն տեղում, էջ 58:

ծունեությամբ, մասնավորապես 1064 թ. Անիի գրավմանը՝ Ալփ-Ասլանին օժանդակելու համար»[709]:

Մանուչեի (1073-1118) իշխանության ներքո էին գտնվում ոչ միայն Անին, Շիրակը, այլև՝ Արագածոտն գավառը: Դա են ակնարկում Դաշտադեմի և Կոչի նորահայտ վիմագրերի «պարոնութիւն Մանուչէէ», «յամիրաութեանն Մանուչէէ» հիշատակությունները[710]: Այդ արձանագրությունները ևս մեկ անգամ վկայում են, որ Մանուչեն «իրեն շրջապատեց հայ իշխանական տների մնացորդներով, մանավանդ, որ ինքն էլ մոր կողմից հայ էր»[711], քանի որ նրա պարոնության օրոք Թալինի կողմերում տիրում էին Սերոբ ու Խաչատուր անուններով իշխանավորներ[712]:

Առհասարակ, Հայաստանում սելջուկյան տիրապետության օրոք հայ իշխանական տներից ամենաառաջնակարգ դիրքերը, թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր առումներով զբաղեցնում էին Ապիրատյան-Պահլավունիները: Նրանց հրամանատարության տակ գտնվող «հայկական զորամասերը Անիի Շադդադյանների ռազմական հենարանն էին»[713]:

Վերը հիշատակված ամիր Մանուչեհր իբն Շաուրի և արաբական այլ արձանագրություններից հառնում է այն ուշագրավ փաստը, որ միջնադարյան Արևելքի իրականության մեջ ամիրսպասալար պատվանունի առաջին կրողները եղել են Անիի Շադդադյանները. «մասնավորապես Ֆախր ադ-Դին Շադդադ իբն Մանուչեհրը»[714]: Սա այն նույն Շադդադն է, որին Անիի քրիստոնյա բնակիչները՝ հայերը, 1155 թ. ապստամբելով, տապալեցին և փոխարենը ամիրա հաստատեցին նրա եղբայր Փալտունին, սակայն 1161 թ. անեցիները սրա դեմ նույնպես ըմբոստացան՝ արտաքսելով քաղաքից[715]:

Թուրք-սելջուկյան տիրապետության ժամանակների արաբական արձանագրությունները նույնպես վկայում են, որ Թալինի տարա-

---

[709] Նույն տեղում, էջ 168-169:

[710] Մեր դաշտային օրագրից:

[711] ՀԺՊ, III, էջ 471:

[712] Մեր դաշտային օրագրից: Տե՛ս նաև՝ **Ռ.Գասպարյան**, Նորահայտ արձանագրություն Ս. Քրիստափոր վանքից, «Էջմիածին», 2008, ԺԱ, էջ 92:

[713] ՀԺՊ, III, էջ 479:

[714] Корпус арабских надписей Армении, էջ 170:

[715] Տե՛ս **Հ. Մարգարյան,** Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 98: Հմմտ. տե՛ս Корпус арабских надписей Армении, էջ 170:

ծաշրջանը գտնվելիս է եղել Շադդադյանների անմիջական իշխանու-թյան ներքո: Այսպես, օրինակ՝ Դաշտադեմի ամրոցի 1174 թ. արա-բերեն ելնդավոր վիմագիրը հիշատակում է շրջակա ամրությունների կառուցող, մեծ ամիրսպասալար Ադուդ ադ-Դին բեն Մահմուդ բեն Շաուրին[716]:

Նույն Շադդադյանները մինչև Անիում հաստատվելը տիրում էին Գանձակում: Ամիր Աբու-Սուար Շաուրը քաղաքի պղնձե դարպաս-ներին թողել է արաբերեն փորագրություն, որից երևում է, որ նա, չնայած ընդունում է Տուղրիլ սուլթանի (1036-1063) գերագահու-թյունը, սակայն ինքնիշխան է[717]:

Ամբերդ գավառը ենթարկվում էր Դվինի ամիրայությանը: Որպես Կարսի տիրակալներ հիշատակվում են Աբու Սաիդ Արսլան իբն Յու-սուֆը՝ 1152 թ., իշխանուհի Մասուդա ադ-Դունյան՝ 1153 թ., Քա-րամ ադ-Դին թագավորը՝ 1153-1154[718]: Կարինում իշխում էր թագա-վոր, ըստ արձանագրության՝ նաև գիտնական, Աբուլ Ֆաթհ Մու-համմադը՝ 1179-1180[719]: Նախիջևանի քաղաքապետն էր՝ ռաիս, խոջա Ռուքն ադ-Դինը՝ 1162 թ.[720]: Խլաթում կառավարիչն էր Աբու Աբդուլլահ Հուսայն իբն Ալի իբն Աբու Տալիբ ալ-Իսֆահանին[721]:

Արաբական արձանագրություններից քաղված օրինակներում տեսնում ենք, որ ողջ կենտրոնական Հայաստանը բաժանված էր սելջուկյան տարբեր կուսակալությունների միջև:

Միանգամայն այլ էր վիճակը Հայաստանի ծայրամասերում՝ Սա-սունում, Գուգարքում, Սյունիքում, Արցախում, որտեղ հայ ժողո-վուրդը, ունենալով հմուտ ու խելամիտ առաջնորդներ, միմյանց զո-րավիգ կանգնելով՝ դեռևս հերոսաբար դիմակայում էր թուրք-սելջուկներին: Այդ պայքարի շնորհիվ նահանգային որոշ թագավո-րություններ երկար ժամանակ կարողացան պահպանել իրենց անկա-խությունը: Դավիթ Անհողինի մահից հետո Տաշիր-Զորագետի գահը ժառանգած նրա Կյուրիկե որդին (1048-1089) հիշատակի է

---

716 Տե՛ս Корпус арабских надписей Армении, էջ 46:
717 Տե՛ս նույն տեղում, էջ 80:
718 Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:
719 Տե՛ս նույն տեղում, էջ 82:
720 Տե՛ս նույն տեղում, էջ 141:
721 Տե՛ս նույն տեղում, էջ 119:

արժանացել Լոռու մարզի Վարդաբլուր գյուղի մոտի ամրոցի 1050 թ.[722]*, Սանահնի 1061 թ.*[723] *և այլ վիմագրերում:*

Սանահնի «Ի ՇԺԲ (1063) թուին հայոց, ի հայրապետութեանն տեառն Դէոսկորոսի, թագաւորութեանն Կիւրիկէի եւ Սմբատայ, ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս եւ զեկեղեցիս...»[724]*, արձանագրությունից պարզվում է, որ Կյուրիկե Ա-ը միաժամանակ իշխել է եղբոր՝ Սմբատի հետ, պետական գործերին մասնակից դարձնելով քրոջը՝ Հրանուշին: Սմբատ թագավորը 1083 թ. նվիրագիր է թողել Հաղբատում, որտեղ եկեղեցի է կառուցել*[725]*: Հաղարծնի վանքի արքայական դամբարանում գտնվող* «Սմբատ թագաւոր» *տապանագիրը*[726] *ենթադրել է տալիս, որ ներկայիս Իջևանի տարածաշրջանն ընդգրկող տարածքները կազմել են Կյուրիկյան Սմբատ թագավորի ժառանգական տիրույթները: Կյուրիկե Ա-ի մահվան թվականը հայտնի չէ: Հաղբատի ՇԼԸ (1089)* «Ես տէր Սարգիս, առաջնորդ Հաղբատայ, կանգնեցի զնշանս տէրունական զէն հաւատացելոց եւ պաշտպան թագաւորաց մերոց Կիւրիկէի, Սմբատայ եւ Դաւթի զարմի սոցա»[727] *արձանագրությունից տեսնում ենք, որ նա այդ թվականին տակավին կենդանի էր: «Նրանից սկսած դինաստիայի անդամները թաղվում են Հաղբատում»*[728]*: Դավիթ Բ-ը (1089-1145), որը նախնյաց օրինակով կառավարման մեջ ներգրավել էր եղբորը՝ Աբասին (1089-1145). «12-րդ դ. առաջին կեսին, նեղվելով թուրք-սելջուկների հաճախակի ներխուժումներից, լքում են հայրենիքը: Ըստ էության, դա թագավորության վերջնական անկումն էր: Դավիթը հաստատվում է Մածնաբերդում, իսկ Աբասը՝ Տավուշում, որը 1145 թ. կորցնելուց հետո, գնում է եղբոր մոտ»*[729]*: Դավթից հետո Մածնաբերդի իշխանությունը ժառանգում է որդին՝ Կյուրիկեն Բ (1145-1185): Նա Քոբայրի, Սանահնի, Հաղբատի արձանագրություններում հիշատակվում է իր դուստրերի միջոցով:*

---

[722] *Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 436: Արձանագրությունում հիշատակվում է նաև Աշոտ մարծպան, որը Մամիկոնյան-Համազասպյան տոհմի ներկայացուցիչ է:*

[723] *Տե՛ս* **Կ. Ղաֆադարյան,** *Սանահնի վանքը..., էջ 147-148:*

[724] *Նույն տեղում, էջ 187: Դիոսկորոսը հայրապետ է կոչվել նաև երբեմն հայոց կաթողիկոս լինելու պատճառով: Տե՛ս* **Կ. Ղաֆադարյան,** *նույն տեղում:*

[725] *Տե՛ս* **Կ. Ղաֆադարյան,** *Հաղբատ, էջ 150:*

[726] *Դիվան, պր. VI, էջ 59:*

[727] *Վիմական տարեգիր, էջ 25:*

[728] **Կ. Ղաֆադարյան,** *Հաղբատ, էջ 263:*

[729] *ՀԺՊ, III, էջ 473-474:*

Կյուրիկյան վերջին շառավիղ, Նոր Բերդի փոքր իշխանության տեր Վասակը XIII դարի առաջին կեսին Զաքարյան իշխանապետության գործուն դեմքերից էր:

Հայ ժողովրդի գոյամարտը հատկապես ակնհայտ է Հայաստանի արևելյան շրջաններում: Այստեղ ընդհանուր թշնամի սելջուկ-թուրքերի դեմ միաբանված պայքարելու անհրաժեշտությունն Արցախ-Սյունիք դաշինքի ստեղծման հիմք է դառնում: Կենտրոնացված հայկական պետականության անկումից հետո առանձին նահանգներ կամ թագավորություններ միայնակ ի զորու չէին դիմակայելու օրեցօր հզորացող թշնամուն: Այս իրողությունն էր, որ Սյունյաց Գրիգոր Ա թագավորին (1051-1072) և Փառիսոս-Աղվանքի թագավորազն Սևադային (XI դ. կես) ստիպեց համախմբելու իրենց ուժերն ընդհանուր թշնամու դեմ՝ դրանով իսկ հիմք դնելով Սյունիք-Արցախ դաշինքին[730]*: Այն ամրապնդվում է Գրիգորի և Շահանդուխտի ամուսնությամբ:*

Սյունյաց Շահանդուխտ Բ թագուհին հայտնի է իր բարեպաշտությամբ և եկեղեցաշինությամբ: Նա Սյունյաց հոգևոր կենտրոն Վահանավանքում կառուցում է եկեղեցիներ. «... Ես Շահանդուխտ դուստր Սեւադաի Աղվանից արքաի և ամուսին Գրիգորոյ՝ որդւոյ Աշոտկայ ի նեղութեան ժամանակիս մերում բազում և ծանր աշխատութեամբ ես և սիրելի քոյր իմ Կատա շինեցաք զեկեղեցիքս զսբ Հարութիւն և սբ Սիոն... ի յիշատակ յաւիտենից Գրիգորոյ...»[731]*: Շահանդուխտը մինչ այդ ավարտին է հասցնում կրկնահարկ դամբարան-եկեղեցին՝ վիմագրելով.* «Ի: Շլե: (1086) թվականիս ես Շահանդուխտ դուստր Սեւադայի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի որդի Աշոտկա, վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ ըստ մարմնո, ես և քոյրս իմ Կատայս շինեցաք զսբ Աստուածածինս փոխարեն գթոց նորա...»[732]*: Այս հիշատակագրությունից հայտնի է, որ Գրիգորն ու Շահանդուխտը ժառանգ չեն ունեցել, և ինչպես պատմիչն է նշում. «...ածեն յԱղվանից զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդխտոյ թագաւորազն մանուկ,*

---

[730] *Տե՛ս* ***Տ. Սահակյան,*** *Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, էջ 226:*

[731] ***Գ. Գրիգորյան,*** *Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, № 2, էջ 156: Նաև՝* ***Գ. Գրիգորյան,*** *Վահանավանք, էջ 63:*

[732] *Դիվան, պր. II, էջ 138:*

յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ՝ հանճարեղ և իմաստուն...»[733]*: Ինչպես տեսնում ենք, այս դեպքերից շուրջ 200 տարի հետո ապրած Ստեփանոս Օրբելյանը վկայում է, թե Սենեքերիմին բերում են Աղվանքից: Մինչդեռ Շահանդուխտի եկեղեցու մուտքի մոտ կանգնեցված կոթողի վրա առկա է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հետևյալ հիշատակությունը.* «...Նեղեալ ի տաճկաց եկա և հանգեայ աստուածասէր թագուհեայ Շահանդխտին և Կատային շինած եկեղեցոյս գաւթիս...»[734]*:*

Վահանավանքի 1966-1970 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի արձանագրություն՝ «Յիշեայ Քրիստոս զՍեւադա և զիւր կենակիցն»[735] *փորագրությամբ: Գ.Գրիգորյանը ենթադրում է, որ դա Սենեքերիմի հայր Սևադան է*[736]*: Այս վանքի 1970-1978 թթ. պեղումների արդյունքում գտնվում է տապանաքար՝* «Սոփի Աղուանից թագուհի, զոքանչ Գրիգոր թագաւորի՝ որդո Աշոտկա, մայր Շահանդխտո: Թվականին :ՇԼ: (1081)» *արձանագրությամբ*[737]*: Արդ, եթե Աղվանից կաթողիկոսը, թագավորն ու թագուհին և շատ ուրիշ արցախցի իշխաններ* «ի նեղութեան ժամանակիս», «նեղեալ ի տաճկաց» *եկել էին Սյունյաց լեռնաշխարհում իրենց հարազատին ապավինելու, ապա ինչո՞ւ նրանց հետ չպետք է գար նաև «թագաւորազն մանուկ» Սենեքերիմը: Հիշենք հենց իր՝ պատմիչի այն վկայությունը, թե Վահանավանքում թաղված են «բազում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»*[738]*: Դա են հիմնավորում հայտնաբերված բազմաթիվ արձանագրությունները*[739]*: Ուրեմն, Սենեքերիմին ոչ թե բերել են Աղվանքից, այլ նա վաղուց իր ծնողների ու մյուսների հետ եկել էր Կապան: Դժվար չէ ենթադրել, որ Աղվանից իշխանավորները հետապնդվում էին Գանձակում հաստատվող*

---

[733] ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 318:*

[734] *Դիվան, պր. II, էջ 139:*

[735] ***Գ. Գրիգորյան,*** *Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 92: Նաև՝* ***Գ. Գրիգորյան,*** *Վահանավանք, էջ 49:*

[736] *Տե՛ս նույն տեղում:*

[737] ***Գ. Գրիգորյան,*** *Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 162: Նաև՝* ***Գ. Գրիգորյան,*** *Վահանավանք, էջ 59:*

[738] ***Ստեփանոս Օրբելյան,*** *էջ 240:*

[739] *Տե՛ս Դիվան, պրակ II-ում ամփոփված և Գ. Գրիգորյանի հայտնաբերած արձանագրությունները՝ զետեղված վերը՝ տողատակում, նշված նրա հոդվածներում և «Վահանավանք» գրքում:*

թուրք-սելջուկներից, որոնք աստիճանաբար բռնազավթում էին Արցախը:

Սյունյաց Սենեքերիմ թագավորը (1072/84-1094/96) Տաթևի նվիրատվական արձանագրություններից մեկում իրեն ներկայացնում է հայոց թագավոր և ավելացնում, որ «կացեալ ի Սիսական ու Բաղաց աշխարհիս»[740]: Ապա Տաթևի վանքին է նվիրաբերում «արեան գինք գաւառացս ի Ծղուկ նահանգի զԱրիտն աւան»-ը[741]: Սյունյաց մեծ իշխան Հասանը Գանձակի Ֆաղլուն (Փատլուն) ամիրայից ազատում է «զԿովսական գաւառը»[742] և վճռում նվիրատվություններ կատարել վանքին[743]: Սենեքերիմը հաստատում է իր զորապետի վճիռը, «որ ի Տաճկաց թափեալ էր իւր արեամբն»[744]: Սենեքերիմի մահից հետո Սյունյաց թագավորությունը, անկում ապրելով, հետզհետե կուլ էր գնում սելջուկներին:

Գիտենք, որ Սիսական նախավերջին թագավոր Գրիգոր Բ-ը (1096-1166)՝ Սենեքերիմի որդին, գահաժառանգ չունենալու պատճառով և, իհարկե, ինչպես ներքևում կտեսնենք, սելջուկյան տիրապետությունից հերոսաբար ազատագրվող Արցախի օգնությանն ապավինելու համար, «ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաքարեցեացն. և ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն. և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ»[745]:

Հայտնի է, որ Գրիգորն ու նրա եղբայր Սմբատը 1166 թ. մահանում են: 1170 թ. սելջուկները պաշարում են Բաղաբերդը: Հասանն իր ընտանիքի հետ գիշերով հեռանում է հարազատ Խաչեն, և Բաղաբերդի անկումով վերանում է Սյունյաց 200-ամյա թագավորությունը: Այնուհետև պատմական աղբյուրներն այս Հասանի մասին լռում են: Սակայն «որտեղ լռում են պատմագիրները, այնտեղ աղաղակել են սկսում վեմերը»[746]:

Հասանի մասին տեղեկություններ են պահպանվել Արցախ-Խաչենի վիմագրերում: Առաջին հայացքից թվում է, թե դա այն Հասանն է, որը Խաչենի հոգևոր կենտրոն Գանձասարի վանքում խաչքար է կանգնեցրել՝ արձանագրելով. «Թիւն :ՈԼ: (1181) էր, ես Հասան,

---

740 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 322:
741 Նույն տեղում, էջ 325:
742 Հարևան հանրապետության Զանգելանի շրջանը մինչև 1993 թ. կեսերը:
743 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 326:
744 Նույն տեղում, էջ 327:
745 Նույն տեղում, էջ 337:
746 **Թ. Ավդալբեկյան,** Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ, Երևան, 1927, էջ 34:

որդի Վախտանգա կանգնեցի զխաչս ի տապանի դստեր իմո Խաթունին և մաւր իւր թագուհո դստեր թագավորին Բաղաց»[747]: *Նույն վայրում մեկ այլ խաչքարի վրա կարդացվում է.* «Թիւն :ՈԻԳ: (1174) էր Վախտանգ տր Խաչինո յերիտասարդ հասակի փոխեցաւ ի Քս: Ես՝ Նրջիս դուստր Հասանա, թոռն Աբասա թագաւորին, և կանգնեցի զխաչս...»[748]: *1216 թ. Վախտանգի մյուս որդին խաչքար է կանգնեցրել՝ վիմագրելով.* «...Սմբատ..., եղբէր արքէին Հասանայ...»[749]: *Վկայակոչված արձանագրություններից հետևում է, որ Հասան Խաչենեցին պետք է Սյունյաց վերջին թագավորը լինի, քանի որ գործունեության ժամանակը նույնն է, կինը Բաղաց թագավորի դուստրն է, իսկ ինքն էլ հիշատակվում է որպես արքա: Սակայն դա այդպես չէ, քանի որ Հասան Խաչենեցու թոռն է XIII դարի հայ իրականության խոշորագույն գործիչ,* «ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի»[750] *Հասան Ջալա Դոլան, որի կին Մամքանը, ըստ որոշ արձանագրությունների՝ Բաղաց թագավորի դուստրն է*[751]*, իսկ համաձայն այլ վիմագրերի՝ թոռը*[752]*: Գանձասարին մոտակա Հավապտուկում կա մի արձանագրություն*[753]*, որում XII դ. կեսերի Խաչենի իշխանավորներ են հիշատակվում Հասանը (որդի Վախտանգա) ու Մամքանը: Իհարկե, կարելի է արձանագրության թվականը՝ :ՈԺԲ: (1163), կարծել :ՈՁԲ: (1233)*[754] *և ստանալ Հասան Ջալալ ու Մամքան, սակայն հիշատակությունում գործող մյուս անձինք՝ հոգևոր հայրեր Յոհանը, Գրիգորը և Գեորգը, հանդես են գալիս նաև վանքի XII դ. կեսերի ուրիշ վիմական աղբյուրներում ևս*[755]*: Այստեղից հետևում է, որ Հասան Վախտանգյանը Խաչենում իշխել է 1163 թվականից կամ դրանից առաջ: Նրա դուստր Նրջիսը պետք է հասուն տարիքում լիներ, որպեսզի խաչքար կանգնեցներ իր պապ Վախտանգի հիշատակին, ինչը և արել է վերջինս մահվանից շատ ուշ՝ 1174 թվին: Հասան Խաչենեցու*

---

[747] *Դիվան, պր. V, էջ 67:*
[748] *Նույն տեղում, էջ 69:*
[749] *Նույն տեղում, էջ 84: Ըստ* ***Բ. Ուլուբաբյանի*** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում (էջ 174)՝ Հասան Ջալալ Դոլան է, սակայն չենք կարծում, որ նա այդքան երիտասարդ հասակում արքա կոչվեր:*
[750] *Դիվան, պր. V, էջ 38:*
[751] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 92, 93, 96:*
[752] *Տե՛ս Դիվան, պր. V, էջ 41, 80:*
[753] *Տե՛ս նույն տեղում, էջ 33:*
[754] *Տե՛ս Վիմական տարեգիր. էջ 76-77:*
[755] *Տե՛ս Դիվան, պր. V, էջ 33, 34:*

կինը՝ Մամքան թագուհին, հնարավոր է՝ դուստրն է Բաղքի Սենեքերիմ թագավորի[756]: Բ. Ուլուբաբյանը դա բացառում է՝ պատճառ դարձնելով ժամանակահատվածի մեծությունն ու Սենեքերիմի և Խաչենի իշխանների տոհմակցական-ազգակցական խանգարիչ կապը, հետո իրավացիորեն նկատում, որ այն մի քանի սերունդ հեռացել էր և, նույնիսկ կրոնական ամենախիստ օրենքով անգամ նրանց խնամիությունը չէր կարող արգելվել[757]: Բայց չպետք է մոռանալ, որ ոչ թե այս Վախտանգյաններն էին անմիջապես տոհմակից նրան, այլ Հաթերքի Վախտանգյան-Սակոյանները՝ Գրիգոր-Համամի անմիջական սերունդները: Ինչ վերաբերում է ժամանակահատվածի մեծությանը, ապա ինչո՞ւ Սենեքերիմի երկարակյաց որդիներ Գրիգորն ու Սմբատը կգործեին մինչև 1166 թ., իսկ նրանց քույրը՝ ոչ: Հասանը Սմբատի արձանագրությունում[758], հավանաբար, արքա է կոչվում սելջուկների դեմ ունեցած իր ռազմական հաջողությունների, ուժեղ ու կայուն իշխանության, ինչպես նաև մայրական կողմով Կյուրիկյան Աբաս Բագրատունու թոռը լինելու և Բաղքի թագավոր Սենեքերիմի դստեր հետ ունեցած ամուսնական կապի պատճառով:

Այս Հասան Վախտանգյան Խաչենեցու ժամանակակիցն է Վերին Խաչենի գահերեց իշխան Հասան Կրոնավորյալ Հաթերքեցի Վախտանգյան-Սակոյանը, որը, ինչպես արդեն նշել ենք, ըստ Դաղի վանքի 1182 թ. խաչքարի արձանագրության՝ շատ տարիներ պատերազմել է թշնամիների դեմ և Աստծո օգնությամբ հաղթել նրանց[759]:

Ի դեպ, ինչպես Բ. Ուլուբաբյանն է նշում ու անհավանական համարում, Ղ. Ալիշանը, հանձին այս Հասան Հաթերքեցու, տեսնում է Բաղաց վերջին թագավորին՝ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած հայտնի խոսքերում, Հասանից հետո փակագծերում ավելացնելով (որդի Վախտանգայ Սակռեանց), ինչպես նաև «ի Գեռաքարեցեացն» փոխելով, դարձնելով «ի Գետաքարեցեացն»[760]: Միգուցե Ղ. Ալիշանը չի՞ սխալվում, այլ միայն չփոթո՞ւմ է: Այդ դեպքում հնարավո՞ր է, որ սխալվեր Ստեփանոս Օրբելյանը՝ ավելի քան 100

---

[756] Ստեփանոս Օրբելյանը հայտնում է, որ Սենեքերիմն ուներ երեք որդի ու մի դուստր՝ առանց նշելու վերջինիս անունը (Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 319):

[757] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** նշվ. աշխ., էջ 137-139:

[758] Տե՛ս Դիվան, պր. V, էջ 84:

[759] Տե՛ս նույն տեղում, էջ 198:

[760] **Բ. Ուլուբաբյան,** նշվ. աշխ., էջ 26: **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 16: Հայտնի է, որ Հասան Հաթերքեցու կինը Մաման է՝ Կյուրիկե Բ Բագրատունու (1145-1185) դուստրը:

տարի հետո շարադրելով Բաղաց թագավորության վախճանի պատմության անցքերը: Հովհաննավանքի արձանագրություններից մեկում հիշատակվում է. «Ի թ. ՈԻԷ (1178) ... Շուշիկ՝ դուստր Գրիգորո թագաւորին Բաղաց,[761] *հալածեալ ի մերմէ գաւառէ եկի յաշխարհս Հայոց ի վանս Յոհանու, յորում զկատարումն և զթաղումն առի մարբ իմով»*[762]*: Վախտանգ Սակռի որդին՝ Դաղիվանքի հոգևոր առաջնորդ տեր Գրիգորեսը «ԹՎին ՈԼԹ» (1190) խաչքար է կանգնեցրել մոր՝ Շուշիկի հիշատակին*[763]*: Վախտանգի և Շուշանի (Շուշիկի) որդիների շարքում արձանագրություններում հանդիպում ենք Սմբատ*[764] *և Գրիգորիկ*[765] *անունների: Արդյո՞ք պատահականություն է սա: Հնարավո՞ր է, որ Սյունյաց պատմիչը Վախտանգ-Շուշան ընդունելի կապը չփոթած լինի Հասան-Կատայով: Բայց այս դեպքում չեն համընկնում Վախտանգ Սակռի և Բաղաբերդի անկման ժամանակները: Ուրեմն, քանի որ ընդունում ենք Ստեփանոս Օրբելյանի տեղեկության հավաստիությունը՝ հենվելով «Պատմութիւն տանն Սիսական»*[766] *երկի մոսկովյան և թիֆլիսյան հրատարակությունների վրա, ապա ինչպես մեծավաստակ հայագետ Գարեգին Հովսեփյանն է ենթադրել*[767]*, Հասան թագավորին, համաձայն պատմիչի հաղորդման, պետք է փնտրել Գեռաքարում՝ Խաղբակյան իշխանական տոհմի նստոց-բնակավայրում: Հասանն իրենց հոգևոր կենտրոն Հավապտուկում մի գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել՝ վիմագրելով. «:ՈԼԳ: (1184) Ես Հասան, որդի Խաղբակայ,*[768] կանգնեցի զխաչերս ի վերա տապանի...»[769]*: Թե ո՞ւմ տապանի վրա է կանգնեցված հեծյալի պատկերաքանդակով խաչքարը, հայտնի չէ:*

Այնուամենայնիվ, կարելի է կարծել, որ Խաղբակի որդի Հասանն է Սյունյաց վերջին թագավորը, հավանաբար, որի թոռն է Մամքանը՝ Հասան Ջալալ Դոլայի կինը[770]*: Այն արձանագրություն-*

---

[761] Գ. Գրիգորյանը Կատայից բացի, այս Շուշիկին համարում է Գրիգոր Բ-ի դուստրը, որի մասին չի հիշատակել Ստեփանոս Օրբելյանը (տե՛ս **Գ. Գրիգորյան,** Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 40):
[762] **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը..., էջ 77:
[763] Դիվան, պր. V, էջ 41, 213:
[764] Տե՛ս նույն տեղում, էջ 202:
[765] Տե՛ս նույն տեղում, էջ 213:
[766] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն տանն Սիսական, Մ., 1861:
[767] Տե՛ս **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք..., էջ 16:
[768] Նույն տեղում:
[769] Դիվան, պր. V, էջ 34:
[770] Մամքանի ծագումն անհայտ է (տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 209-211):

ներում, որտեղ Մամքանն իրեն հիշատակում է «դուստր Բաղաց թագավորին», ըստ երևույթին, ընդգծում է իր անմիջական կապը Սյունյաց թագավորական ընտանիքի հետ:

Հասանի եղբայրն է Զաքարյանների բանակի նշանավոր զորապետ Վասակ Խաղբակյանը՝ սելջուկ-թուրքերից Վայոց ձորի և Սյունյաց մի շարք այլ տարածքների անմիջական ազատագրողը, կողմնապետը «Ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ»[771]: Արդյոք նա իր երեք որդիներով՝ «արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց»[772], չէ՞ր եկել Սյունիք՝ վրեժխնդիր լինելու և տեր կանգնելու իր եղբոր՝ Բաղաց վերջին թագավորի կորսված տիրույթներին:

Պատմության մեջ ինչպես ամեն մի կայսրության, այնպես էլ սելջուկ-թուրքական տիրապետության կազմի մեջ մտնող տարբեր ամիրայությունների միջև գոյություն ունեցող հակամարտությունները հանգեցրին տերության թուլացմանը՝ առաջ բերելով ինքնուրույն, փաստացի անկախ իշխանությունների: Դա խիստ նպաստեց, մասնավորապես, Վրաստանի բարձրացմանը. «Ի դառն ժամանակս երկպառակութեանց, ծագելոց ի մէջ սելջուկեան թաթարաց՝ Դաւիթ արքայ Վրաց (Դավիթ Շինարարը՝ 1089-1125- Ա. Մ.) պատեհ ժամս գտեալ տիրեաց Հիւսիսային կամ Վերին կոչեցեալ Հայաստանի»[773]:

Վրաստանի՝ հյուսիսային Հայաստանի գրավումը սելջուկներից իր արտացոլումն է գտել նաև հայկական արձանագրություններում: Այսպես. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի՝ թագաւորին յաղթողի, որդոյ Գէորգա՝ որդւոյ Բագրատայ[774]... որ տիրեաց գաւառի ... եղեւ խնամող Հաղբատայ եւ Սանահնի... զՀաղբատա եղբայրութեանն ազատեաց, գրով և վճռով... ճշմարիտ հաւատացելոց հաստատեցի մեծի թագաւորին... նոցա աթոռ... թուին ՇՀ (1121)»[775]:

---

[771] *Դիվան, պր. III, էջ 123:*

[772] ***Կիրակոս Գանձակեցի**, էջ 205:*

[773] ***Ռ. Երզնեկեանց**, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղարշապատ, 1886, էջ 110:*

[774] *Վրաց Բագարատ Դ (1027-1072) և Գեորգի Բ (1072-1089) թագավորներն են:*

[775] *Դիվան, պր. IX, էջ 130, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 28: Կ. Ղաֆադարյանի կարծիքով. «արձանագրությունը գրված է 1110 թվականին, կամ քիչ հետո, երբ Դավիթ Շինողը թուրքերից խլեց Սամշուլդեն ու Հաղբատը, և այն վերաբերում է վանքի եպիսկոպոսական վիճակի վերահաստատմանը» (**Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ 144):*

Հաղբատի մեկ ուրիշ՝ 1180 թ. արձանագրությունն սկսվում է «Յամս Ածազաւր եւ Քսասէր թագաւորին Գեորգայ, որդւոյ թագաւորին Դաւթի...»[776] *խոսքերով: «Ի թագաւորութեան Գէաւրգեա» վկայակոչված է նաև Հաղարծնի 1181 թ. վիմագրում*[777]*:*

Հաղբատի վերոհիշյալ արձանագրությունում Դավիթ Շինարարը ինքնակալ արքա է՝ զերծ օտարների իշխանությունից: Նա իր ռազմավարական ծրագրերն իրականացնելիս, ձգտելով հայերի հետ միացյալ դաշինքի ու Հայաստանում պատվար ունենալու նպատակով, մեծ տեղ էր տալիս սելջուկյան տիրապետության շրջանում հայ հասարակական կյանքի առաջատար ուժին՝ հոգևորականությանը: Դրա համար նա, մասնավորապես, վերականգնեց Հաղբատի, Սանահնի եպիսկոպոսական վիճակները: Դավիթը հաղթող է, որովհետև շատ ու շատ նվաճումների հետ միասին կարճ ժամանակով գրավեց նաև Անին:

Ընդհանրապես, սելջուկյան տիրապետության շրջանում երկրի քաղաքական-հասարակական կյանքում կարևորագույն դեր էր խաղում հայ բարձրաստիճան հոգևորականությունը: Բուն Հայաստանի կաթողիկոս Բարսեղ Ապիրատյան-Պահլավունու (1081-1105, հետագայի Ամենայն հայոց հայրապետ Բարսեղ Ա Անեցի՝ 1105-1113) համառ ջանքերի շնորհիվ հաջողվում է սելջուկներից ետ գնել վանքեր, նորոգել դրանք, հայ եկեղեցին ազատել հարկերից և այլն: Նրա անմիջական հովանավորությամբ կատարվում էին բազմաթիվ հոգևոր և աշխարհիկ բնույթի շինարարական աշխատանքներ: Անիում ի ՈԹ (1160) (ճիշտը՝ ՈԽ - Ա. Մ.) «ի թագաւորութեանն Փատլնոյ, ի հայրապետութեանն տէր Բարսեղի» ոմն Աբրահամ կառուցում է աշտարակ[778]*: Լմբատում ՈԽ՝ 1191 թ. տէր Բարսեղ անունով մեկը գնում է (առնում է)* «զվանքս յանաւրինաց» *և տալիս* «զՑիցքն վանիցս եւ զջուրն, որ իւրն էր ի հնոց խլեալ...»[779] *և այլն:*

---

[776] *Դիվան, պր. IX, էջ 129: Վրաց Գեորգի Գ թագավորն է (1156-1184)՝ Դեմետրե Ա-ի (1123-1150) եղբայրը:*

[777] *Դիվան, պր. VI, էջ 34:*

[778] *Դիվան, պր. I, էջ 2: Փատլունը (Ֆադլունը) Մանուչեի թոռն է: Արձանագրության թվականը վերծանված է սխալ. 1160 թ. կաթողիկոս է եղել Խաչիկ Բ Անեցին (1058-1065): Այն պետք է ընթերցվեր ՈԽ (1191), որպեսզի համընկներ Բարսեղ Անեցու բուն Հայաստանում կաթողիկոսության տարիներին՝ 1081-1105 թթ.: Այդ ՈԽ (1191) թվականին Անիում նրա անունով վիմագիր կա (տե՛ս Դիվան, պր. I, էջ 47):*

[779] *Տե՛ս* ***Հ. Եղիազարյան,*** *Լմբատավանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1960, Բ, էջ 55-56:*

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻՑ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԻ ՈՒՂԻՆԵՐԸ

Քրիստոնյա հարևան Վրաստանի հզորացումն առաջ բերեց այն պատմական անհրաժեշտությունը, ըստ որի հայ իշխանական տների ներկայացուցիչները ձգտեին վրացիների հետ, նախ և առաջ, ռազմական դաշինքի ու համախմբեին իրենց ուժերը՝ սելջուկյան տիրապետությունից հայրենի հողերի ազատագրման ուղղությամբ: Վրաց Բագրատունի թագավորները, մեծ տեղ տալով այդ դաշինքին, իրենց հերթին հայ ականավոր իշխանավորներին վստահում էին պետական կարևորագույն պաշտոններ՝ կառավարման առաջնակարգ գործերի մասնակիցը դարձնելով նրանց: Ահավասիկ դա է արտացոլում դեղատեսիլ Հաղարծնի վանքի Ս.Գրիգոր եկեղեցու գավթում վանական առաջնորդ, նշանավոր վարդապետ ու երաժշտագետ Խաչատուր Տարոնացու արձանագրությունը. «Ի ՈԼԳ (1184) թուիս Հայոց, ի թագաւորութեանն Ափխազաց Գեորգեա, ի հայրապետութեանն Հայոց տն Գրիգորիսի, ես՝ Խաչատուր վարդապետ ու Սուքիաս նորոգեցաք զ սբ Գրիգորս, հրամանաւ թագաւորին եւ իւր մեծամեծ իշխանացն՝ Սարգսի, Ամիր Քրդին, Անտոնի Ճղունտելին, Ելբեկին...»[780], *ինչպես նաև նույն անձանց որոշմամբ հայտնում վանքի հողատիրական իրավունքների վերականգնման մասին: Վրաց արքայի աբխազաց թագավոր արձանագրվելու բացատրությունը տալիս է Մխիթար Այրիվանեցին.* «...Կալաւ և զ Դեմետրէ թագաւորն Վրաց և զբազում վրացոց ձեռսն խաղեաց, ուստի և Ափխազք անուանեցան»[781]:

Հայերեն վիմակերտ հիշատակությունները հենքն են այն եզրակացության, որ սելջուկյան տիրապետության, համենայն դեպս ուշ շրջանում, միայն արցախցիներն էին, որ տեղերում կարողացել էին պահպանել իրենց իշխանությունը: Դա են հիմնավորում Արցախի Մարտակերտի շրջանի Գեռաքար գյուղի Հավապտուկի եկեղեցու «Թիւն :ՈԺԲ: (1163) էր. յիշխանութեն Հասանա, որդո Վախտանգա...»[782], *Գանձասարի վանքի* «Թիւն :ՌԻԳ: (1174) էր Վախտանգ

---

[780] *Դիվան, պր. VI, էջ 37:*
[781] ***Մխիթար Այրիվանեցի,*** *էջ 56:*
[782] *Դիվան, պր. V, էջ 33:*

տր Խաչինո...»[783] և այլ վիմագրեր: Դաղիվանքի 1182 թ. հայտնի խաչքարի արձանագրությունից[784] պարզ է դառնում, թե ինչպիսի միջոցներով էին Առանշահիկների սերունդները կարողանում պահպանել իրենց ինքնիշխանությունն Արցախական աշխարհում, որտեղ շատ պատերազմներ էր մղում արցախցի քաջ իշխան Հասան Հաթերքեցին՝ հաջողությամբ հաղթանակների հասնելով վտանգավոր ախոյան Գանձակի սելջուկյան ամիրայության դեմ:

Այն հայրենանվեր գործը, որի սկիզբը Հայաստանի հյուսիսում դրեցին Զաքարյանները, արևելքում՝ Արցախում, վաղուց սկսել էին Համամ թագավորի, Սահակ Սևադայի քաջարի հետնորդները: Զաքարե ու Իվանե եղբայրներին մնում էր միայն իրենց շուրջը համախմբել լեռնային կռիվներում վաղուց արդեն թրծված արցախյան մարտական ջոկատները:

Վրաց թագավորների ու Սարգիս Զաքարյանի ջանքերով դեռևս XII դարի առաջին կեսին և վերջին քառորդում սելջուկյան տիրապետությունից ազատագրվել էին Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններ:Դրա վկայություններն են հատկապես Սանահնի, Հաղբատի բազմաթիվ արձանագրությունները:

Միացյալ բանակների հաջողությունների նոր փուլը նշանավորվեց Զաքարե Զաքարյանին՝ հայոց և վրաց ամիրսպասալար (սպարապետ) նշանակելով, որը եղբոր՝ Իվանեի հետ անմիջապես ձեռնամուխ եղավ Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու սրբազան գործին: Հետևելով պատերազմական գործողություններում կեսարյան մարտավարությանը՝ Զաքարեն և Իվանեն կարճ ժամանակամիջոցում, մեկը մյուսի ետևից գրավում են Հայաստանի հյուսիս-արևելյան մնացած շրջանները, ազատագրում Սևանի ավազանը, Վարաժնունիքը, Մազազը, Արագածոտնը, Շիրակը, Բասենը, Վանանդը, Ոստան Հայոցը և այլ տարածքներ: Դրա խոսուն վկաներն են այդ տարածաշրջաններում և այլուր սփռված XII դարի վերջերի և XIII դարի սկզբների բազմաթիվ արձանագրությունները, որոնց շնորհիվ կարելի է գծագրել հայկական բանակների հաղթարշավի ուղիները:

Բայց, քանի որ վիմագրերն այդ կարևորագույն իրադարձությունների, հասկանալիորեն, մի փոքր ավելի հետագայի վիմա-

---

[783] Նույն տեղում, էջ 69:

[784] Տե՛ս նույն տեղում, էջ 198:

դրոշմներն են, ապա նպատակահարմար է հետևել պատմիչների ժամանակագրությանը՝ Զաքարյանների ռազմական երթը զուգահեռաբար համեմելով համապատասխան վիմագրական հիշատակություններով:

Հայաստանի վերջնական ազատագրման բեկումնային այս փուլը, ինչն անկանխատեսելիորեն առաջադրում էր Անիի գրավումը՝ սկսվում է Շիրակի ազատագրմամբ, որն ըստ Վարդան Արևելցու՝ տեղի է ունեցել 1191 թվականին[785]: Թվում էր, թե դրանից հետո Զաքարյան բանակները պետք է շարժվեին դեպի գլխավոր նպատակակետը՝ Անի, սակայն եղբայրները հարվածի գլխավոր ուղղությունը դարձնում են դեպի Արագածոտն, որտեղ հարկ էր չեզոքացնել հորիզոնի բոլոր կողմերի վրա հավասարապես իշխող դիրք ունեցող Ամբերդ ամրոցը: Այդ անառիկ բերդն աքցանի մեջ առնելու և թշնամուն մանևրելու հնարավորությունից ու օգնությունից զրկելու համար անհրաժեշտ էր նախ տիրանալ Արագածոտն ու Ամբերդ գավառների դաշտավայրային մասերին: Ահավասիկ, 1191 թ. ազատագրական բանակը գրավում է Փարպի գյուղը: Գլխավոր զորահրամանատարը Փարպիի Ծիրանավոր եկեղեցու (V դ.) արևմտյան կրկնապատին հավերժացրել է հետևյալ արձանագրությունը.



Գրչագիր

[785] Տե՛ս **Վարդան**, էջ 138:

Ի ԹՈՒԻՍ :ՈԽ: (1191) ԵՍ ԶԱՔԱՐԻԱ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ / ԱՒԳՆՈՒԹ ԼԵԱՄԲՅՆ ՔԻ ԱՌԻ ԶԱՇԽԱՐՀՍ Ի ՏԱՃԿԱՑ ԵՒ ԱԶԱՏ ԱՐԱՐԻ / ՓԱՐՊՈ ԻՐԻՑԱՆԻՍ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿ Է :ՈՎ ԽԱՓԱՆԷ, ՅԺԸ (318) - ԻՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ: Ի ԹՎԻՆ Կ՚ԱՏԱՐԵՆ ՎԱՍՆ Շ՝ԱՀԱՆՇԱՀԻ ՈՐԴ/՚Ո ԶԱՔԱՐԻԱ՝Ի :Գ:

(3) ԱԻՐ ԵՒ ՄԵԶ ԿԱՏԱՐԵՆ / ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՉ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ, :Դ: (4) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ / ԼԻՆԻ ՉԱ ՚ՔԱՐԻԱԻՆ՝[786]:

Այս արձանագրության կապակցությամբ Տ. Պետրոսյանցը նշում է, որ հայ-վրացական զորքերի արշավանքն Արարատյան դաշտ 1191 թվականին ունեցել է հետախուզական բնույթ և չնայած շահած ճակատամարտին, Զաքարեն ստիպված է եղել հեռանալ գրավված հողերից կամ, ինչպես վրաց ժամանակագիրն է պատմում, հաղթական և մեծ ավարով լի վերադառնալ Վրաստան: Սրա պատճառն այն էր, որ Զաքարեն թեև շահել էր ճակատամարտը, գրավել Արարատյան դաշտը, բայց չէր տիրացել Ամբերդ անառիկ ամրոցին ու

---

[786] *Տե՛ս* ***Ե. Տեր-Մինասյան****, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, էջ 55, նաև՝* ***Ս. Ավագյան****, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1977, էջ 108, հատված, նաև՝* ***Աշ. Մանուչարյան****, Փարպիի Ծիրանավորի արձանագրությունները, էջ 135, 136: Մխիթար վարդապետ Տեր-Մկրտչյանն արձանագրության թվականը ժամանակին կարդացել էր սխալ՝ ՈԿ (1211), (տե՛ս* ***Մխ. վ. Տէր-Մկրտչեան****, Իմ գործակալութեան ժամանակ հավաքած մի քանի արձանագրութիւններ, «Բանասէր», Պարիս, 1903, էջ 30), ինչ նույն ձևով զետեղվել է Վիմական տարեգրում (էջ 53), որից էլ մենք օգտվելով՝ կարծել ենք, թե զաքարյան բանակները Արագածոտնից են անցել Շիրակ, (տե՛ս* ***Աշ. Մանուչարյան****, Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու Զաքարյանների հաղթարշավի ուղին, ՀՌԱԿ «Պայքար» 1996, թիվ 9-10, էջ 55-58): Արձանագրության թվականն ուղղել է Ե. Տեր-Մինասյանը՝ ՈԽ (1191), բայց զարմանալի է, որ նա, ընթերցելով արձանագրության վեցերորդ տողի վերջի ...ԱՀԻՆՇԱՀՈՐԴ տառաշարքը, այն չի վերականգնել, ինչը մենք վստահաբար վերծանել ենք ՚Շ՝ԱՀԱՆՇԱՀ լ՚Ի՚՝ ՈՐԴ/՚Ո ԶԱՔԱՐԻԱ՝Ի. յոթերորդ տողի սկզբնամասում նշմարվում են ԶԱՔԱՐԻԱ անվան տառահետքերը: Վերականգնման ժամանակ հաշվի ենք առել բնագրի գրչական և վիմագրական մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես, սեռ. հոլովի «Ո» վերջավորությունից հետո «Յ» տառ չավելացնելը և ՇԱՀԱՆՇԱՀ անվան վերջում «ԱՅ»-ի փոխարեն «Ի» գրելը: Մեր համարձակության համար կռվան է հանդիսացել Գ. Հովսեփյանի հետևյալ դիտարկումը. «Վարդան պատմիչ յիշում է, թէ Զաքարիայի որդին Շահընշահ իւր անունն ստացել է «ի պատիւ տէրութեանն Անւոյ», գուցէ եւ Շիրակի գրավման առթիվ, երբ մօտաւորապէս պետք է ծնուած լինի նա. նորա իսկական անունը Սարգիս է» (****Գ. Հովսեփյան****, Խաղբակյանք..., էջ 4):*

չէր կարող ազատագրված հողերը պահել՝ թիկունքում ունենալով թշնամու այդքան հզոր ուժ[787]:

Փարպին գրավելու հետ միաժամանակ Զաքարյան եղբայրներն ազատագրում են նաև Աշտարակ քաղաքը: Այդ մասին իմանում ենք Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու (V դ.) հարավային ներքին պատին՝ մուտքից աջ և ձախ, երկու երեսակալ քարի վրա պահպանված արձանագրության ամբողջական վերականգնումից, որը կատարել է Ս. Սաղումյանը[788]:

---

[787] Տե՛ս **Տ. Պետրոսյանց,** Վաչուտյաններ, էջ 14, 15:

[788] **Ս. Սաղումյան,** Աշտարակ, էջ 143: Թե՛ Փարպիի, թե՛ Աշտարակի Ծիրանավոր եկեղեցիները, ինչպես նաև Աշնակի V դ. բազիլիկան կրկնապատված են կոպտատաշ գորշավուն քարերով, ինչը գրավել է մասնագետների ուշադրությունը: Մասնավորապես, Փարպիի Ծիրանավոր եկեղեցու՝ որձաքարի զանգվածներով կրկնակի պատերով զրահավորվելը և ամրոցի վերածվելը Թ. Թորամանյանը համարում է կատարված X դ.՝ ենթադրելով, որ Բյուրականի վրա արաբների հարձակումը և այդ շրջանում նրանց իրականացրած կոտորածները ստիպել են փարպեցիներին աղոթատեղին իբրև բերդ ամրացնել որպես վերջին ապաստարան (տե՛ս **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 227): Սակայն նորահայտ վիմագրերը, որոնք երևացել են XX դ. երկրորդ կեսին, երբ հարավային պատից թափվել են եկեղեցին զրահապատող կոպտատաշ գորշավուն քարերը, վկայում են, որ աղոթարանն ամրոցի է վերածվել ավելի ուշ: Ըստ Ս. Սաղումյանի՝ «Փարպիի 1191 թ. Զաքարյանների արձանագրությունից ու տեղադրությունից ենթադրելի է, որ բազիլիկան կրկնապատվել է այդ տարվա մոտերքում, իսկ Աշտարակի Ծիրանավորի արտոնագիրը հուշում է, որ կրկնապատը դրել են Զաքարյանները՝ սելջուկների դեմ պայքարի տարիներին՝ պաշտպանական նկատառումներով (տե՛ս **Ս. Սաղումյան,** նշվ. աշխ., էջ 107): Ս. Սաղումյանը միաժամանակ հերքում է կրկնապատերի շուրջ արտահայտված այն կարծիքները, թե դրանք իբր շարվել են եկեղեցու պատերն ամրացնելու նպատակով XIII դ. կամ ավելի վաղ, կամ էլ ուշ միջնադարում՝ XVII-XVIII դարերում (տե՛ս նույն տեղում, էջ 107-108): Ինչ վերաբերում է Աշտարակի Ծիրանավորի արտոնագրին, ապա նրա «Ի ժամանակս Զաքարեի եւ Իւանէի, որդոց Սարգսի, առին զԱշտարակս, յորում ամրացան...» (տե՛ս **Ս. Սաղումյան,** նույն տեղում, էջ 143) հատվածից չի երևում, թե խոսքը վկայակոչվող եկեղեցու մասին է, այլ քաղաքի ընդհանրապես: Չի բացառվում, որ Արագածոտնի վաղ միջնադարյան եկեղեցիների (Փարպիի, Աշտարակի, Աշնակի) կրկնապատերը կանգնեցնողները սելջուկները լինեն ընդդեմ Զաքարյանների հաղթարշավի: Որպես մեր այս տեսակետը հիմնավորող փաստարկ հանդիսանում է Մարմաշենի վանքի 1220-ական թվականների վերջերի ընդարձակ արձանագրության մի վկայություն: Այսպես, Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի հիշատակագրում Շիրակի թեմակալ, Անիի և համայն Հայաստանի հոգևոր առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Ապիրատյան-Պահլավունին հայտնում է, որ Մարմաշենը «աւերեալ էր յանաւրինաց և զվանքս գեղ արարեալ- **զկաթողիկէս բերդանման ամրացուցեալ**...» (տե՛ս արձանագրությունը՝ **И. Орбели**, Избранные труды, էջ 443): Բացի այդ, անհնար է, որ Զաքարյան եղբայրները, նախ, հանդգնեին ձևախեղել քրիստոնեական սրբարանը, երկրորդ, նրանք քաջ գիտակցել են արձանագրությունների կարևորությունը գալիք սերունդների համար և Հայաստանի զանազան վայրերում բազմաթիվ հիշատակագրություններ են թողել իրենց փառահեղ հաղթանակների վերաբերյալ, ուստի, եթե իրենք կանգնեցրած լինեին այդ երկրորդ պատերը, ապա ժամանակ

Տիրանալով Արագածոտնի դաշտավայրային մասերին և Ամբերդ ամրոցը շրջափակման մեջ առնելով՝ Զաքարյան եղբայրներն ի վերջո, 1196 թ., ինչպես Վարդան Արևելցին ու Անանուն Սեբաստացին են հայտնում, վերցնում են այդ անառիկ բերդը[789]:

Արագածոտն գավառի ազատագրման առթիվ Կոշավանքի առաջնորդ Պետրոս Ականատեսը Կոշ գյուղի մատույցներում՝ ներկայիս Երևան-Գյումրի մայրուղու աջ եզրին 1196 թ. խաչքար է կանգնեցնում, որի վրա արձանագրում է, թե ինքը տեսավ Մեծն Սարգսի որդիներ Զաքարեին և Իվանեին ճիշտ այն ձևով ու կերպով, ինչպես 20 և մեկ տարի առաջ տեղի ունեցած իր տեսիլի արարածներն էին, որոնք այն ժամանակ, երբ Հիսուս լուսեղեն ամպով իջավ Արևելքից, նրանք հառան Քրիստոսի խաչից, մաքրեցին հայոց աշխարհը և պայծառացրին Հայաստանյայց եկեղեցիները[790]: Իսկ ներկայիս Արագածոտնի մարզի Անտառուտ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքին ագուցված է Ամբերդ ամրոցի ազատագրման խաչքար-վկայագիրը, որի վրա արձանագրված է. «Ի ՈՒԹ (1200) թուականութիւնս ես Զաքարե ամիրսպասալար հայոց եւ վրաց որդի մեծին Սարգսի առի զանառիկ ամրոցս յԱնբերդոյ յաղախնայծին որդոյն Հաքարու...»[791]: Բերդի նվաճման ժամանակ աչքի է ընկել զորավար Վաչե Վաչուտյանը, իսկ Տեղերի համար մղած մարտերում՝ Հովհաննեսի որդի Ջուման:

Մեծավաստակ հայագետ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը Անտառուտի արձանագրության ՈՒԹ-ն (1200) համարում է ոչ թե բերդի գրավման, այլ խաչքարի կանգնեցման թվականը[792], իսկ Պ. Մուրադյանը ենթադրում է, թե Արագածոտնը նորից անցել է սելջուկներին և վերջնականապես միայն ազատագրվել 1199-1200 թվերին[793]:

կգտնեին՝ նոր շարվածքի վրա հոգատարաբար արտագրել տալու նախնյաց Բագրատունյաց շրջանի պատմական վկայագրերը, որոնք երևացել են կրկնապատերի մասնակի փլուզումների հետևանքով բացված հիմնական, սրբատաշ որմերի վրա:

789 Տե՛ս **Վարդան**, նույն տեղում: Նաև՝ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 136:

790 Տե՛ս **Ա. Շահինյան,** Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, ՊԲՀ, 1968, № 2, էջ 197-198, նաև՝ «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները...», էջ 41: Թվականը վերականգնված է ՈՒԴ (1195):

791 **Ե. Տեր-Մինասյան,** Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, էջ 49: Հմմտ. «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները...», էջ 42:

792 **Գ. Հովսեփյան,** Խաղբակյանք..., էջ 6:

793 **Պ. Մուրադյան,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 106:

Արագածոտն գավառի ազատագրման մասին վավերացված է Կոչի Ս. Ստեփանոս եկեղեցում[794].



Գրչագիր

Ամբերդի հաղթանակով, թվում էր, բացվել է դեպի գլխավոր նշանակետ՝ Անի տանող ճանապարհը: Սակայն Անիի, Ատրպատականի ու Գանձակի ամիրաները, կռահելով հայերի մտադրությունը և փորձելով վտանգազերծել մայրաքաղաքը, համախմբում են իրենց հսկայական ուժերը, նախապատրաստվում վճռական գործողությունների՝ պատերազմական թատերաբեմն անհաշվենկատորեն տեղափոխելով դաշտային Արցախ: Զաքարեն ու Իվանեն, ստիպված լինելով առայժմ կասեցնել դեպի Անի առաջխաղացումը և հայկական զորքերի թիկունքն արևելքից ապահովելու նպատակով, հարվածի գլխավոր ուղղությունը դարձնում են Արցախ: Արագածոտնից ետ բարձրանալով XII դարի վերջին քառորդում ազատագրված Աղստև. «ՈԾ (1201) թուին Հայոց ...ի տէրութեան Իւանէի» *(Դիլիջանի Ջուխտակ վանքի Ս. Աստվածածին եկեղեցի)*[795], «Ի թուին ՈԽԳ (1194) յիշխանութեան Իւանէի *(Հաղարծնի վանքի Կաթողիկե եկեղեցի)*»[796], «Ի թուին ՈԽԶ (1197) ի ժամանակ երկուց եղբարց Զաքարէ եւ Իւանէ» *(Մորո ձորո վանք)*[797], *և շարժվելով նույն ժամանակներում*

---

[794] *Նույն տեղում, էջ 106-107, նաև՝ մեր դաշտային օրագրից:*
[795] *Դիվան, պր. VI, էջ 10:*
[796] *Նույն տեղում, էջ 52-53:*
[797] *Նույն տեղում, էջ 135:*

գրավված Գագով ու Տավուշով՝ հայկական զորքերը մտնում են Արցախ: Շամքորի մոտակայքում ջախջախելով հակառակորդի հիմնական ուժերին և տիրելով Գանձակ, Պարտավ քաղաքներին՝ Զաքարյան եղբայրներն իջնում են մինչև Բելուական, գրավում այն՝ հաղթական վերջակետ դնելով Արցախյան արշավանքին: Հայրենի երկրամասի վերջնական ազատագրման համար է զոհվում Վերին Խաչենի տեր Վախտանգ թագավորազնի անդրանիկ որդին՝ Հասանը. «...վասն քրիստոնէական հաւատոյս...»[798]:

Այնուհետև Արցախից Խաչենի, Ծար-Վայկունքի վրայով հայկական զորամիավորումները հայտնվում են Սոդք գավառում և սկսում Սևանի ավազանին հարավից և արևմուտքից հարող տարածքների ազատագրման գործողությունները: Գեղարքունիքը, Մազազն ու Վարաժնունիքը նվաճելուց հետո, որի խոսուն վկաներն են Նորատուս գյուղի «Ի:ՈԿ: (1211) թվ. *ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքարէի եւ Իւանէի...»*[799] *և Հրազդանի տարածաշրջանի Արզական գյուղին մերձակա եկեղեցու* «Ի թվիս ՈԾ (1201)... ես Զաքարէ սպարապետ աւգնական եղէ եկեղեցոյս ...»[800] *վիմագրերը, հայկական բանակները վերստին վերադառնում են Արագածոտն-Շիրակ և շարժվում դեպի Անի: Զաքարեի գործակալ Տիգրանի՝ Հոռոմոսում թողած* «Ի ՈԾ (1201) թվիս ի տէրութեան երկրիս Զաքարիայի...»[801] *արձանագրությունից ակնբախ է, որ այդ բնակավայրն արդեն ազատագրվել էր: Հոռոմոսի համար մղած մարտերում Տիգրանից բացի աչքի են ընկել հեջուբ Գրիգորը, Սմբատն ու Իշխանը, ինչպես հուշում են արձանագրությունները:*

Այլևս անհապաղելի էր դարձել Անիի գրավումը: Մայրաքաղաքի ազատագրման տարեթվի վերաբերյալ մատենագրական աղբյուրները տալիս են հակասական տեղեկություններ: Կիրակոս Գանձակեցին այն թվագրում է 1192 թ.[802]*, անտեղյակ լինելով Անիի ՈՆԲ (1193) թ. հայերեն վիմագրին, որտեղ Հայաստանի Բարսեղ հայրապետի հետ հիշատակվում է նաև Ամիր Մահսուդի որդի Քեյ-*

---

[798] *Դիվան, պր. V, էջ 199:*

[799] *Դիվան, պր. IV, էջ 25:*

[800] ***Գ. Սարգսյան,*** *Նորահայտ վիմագրեր Հրազդանի շրջանից: Զեկուցումների հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ, ՀԱԻ, 1981, էջ 46:*

[801] *Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 44:*

[802] *Տե՛ս* ***Կիրակոս Գանձակեցի****, էջ 163:*

Սուլթանը[803]*: Ըստ մեզ, ավելի ստույգ թվագրում է Վարդան Արևելցին՝ 1199 թ.*[804]*: Հետաքրքրական է, որ վերը հիշատակված Ամիր Մահմուդի որդի Քեյ-Սուլթանն Անիում թողել է պարսկերեն արձանագրություն՝ 1198/9 թվագրությամբ*[805]*, այսինքն՝ փորագրել է տվել քաղաքի գրավման նախօրյակին: Մեզ հայտնի վիմական աղբյուրները, որոնք ուղղակի կամ անուղղակի անդրադառնում են այդ դեպքի կատարմանը, թվագրվում են ավելի ուշ: Այսպես է, օրինակ, Տիգրան Հոնենցի եկեղեցու 1215 թ. վիմագիրը.* «...յորժամ տիրեց քաղաքիս Անո հզաւր և տիեզերակալ ամիրսպասալար և մանդատուրթուխուցէս Զաքարիայ...» *հիշատակությամբ*[806]*: Հատկանշական է, որ մեծահարուստ Հոնենցը մեկ այլ վիմագրում հետևյալն է հայցում.* «Տէր Ա֊ծ. զաւրացո և բարձրացո ի վերա թշնամեաց խաչին Քրիստոսի ամիրսպասալարն ըզԶաքարիա և զԻւանէ զեղբայր իւր...»[807]*:*

Հավանաբար, մայրաքաղաքի համար մղած կռիվներում է քաջաբար զոհվել Պահլավունյաց շառավիղ Ղարիբը: Դա իմանում ենք նրա եղբայր Սիթիի արձանագրությունից՝ փորագրված 1210 թ. սեփական նախաձեռնությամբ վերանորոգված եկեղեցու պատին[808]*: Տարիներ անց մյուս եղբայրը՝ Գրիգոր եպիսկոպոսը, աթաբեկ Իվանեի և մանդատուրթ-ուխուցէս Շահնշահի հրամանով Մարմաշենի Ս. Կաթողիկե եկեղեցին վերանորոգելուց հետո.* «զի աւերեալ էր յանաւրինաց, գեղեցկագեղ» *զորականի աճյունը տեղափոխում և ամփոփում է տոհմական դամբարանատանը*[809]*: Տիրելով Անիին՝ Զաքարեն, նախ և առաջ, հոգ է տանում ամրապնդելու քաղաքի ռազմապաշտպանական համակարգը.* «Ի թուին ՈԾԵ (1206) ... շինեցաւ դուռնս եւ բրջներս յանուն մանդատորթախուցէս շահանշահ Զաքրէի...»[810], «Ի :ՈԾԷ: (1208) թուին ... ես մանդատորթախուցէս

---

[803] *Տե՛ս* ***Ալ. Մանուչարյան,*** *Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, էջ 214-215:*

[804] *Տե՛ս* ***Վարդան,*** *նույն տեղում:*

[805] *Տե՛ս* ***Լ. Гюзалян,*** *Персидская надпись Кей-султана Шеддади в Ани, «Акад. Н. Я. Марру», М. – Л., 1935, էջ 641:*

[806] *Դիվան, պր. I, էջ 63:*

[807] *Նույն տեղում, էջ 69:*

[808] *Տե՛ս նույն տեղում, էջ 55:*

[809] *Տե՛ս* ***И. Орбели,*** *Избранные труды, էջ 443:*

[810] *Դիվան, պր. I, էջ 7:*

ամիրսպասալար շահնշահ Զաքարիա չինեցի զարձանս և զպարիսպ վասն յիշատակի մեզ և ծնողաց մերոց»[811]:

Ամբանալով Անիում՝ Զաքարեն Բագնայը - Տեկոր ուղղությամբ առաջանում է և, ինչպես ինքն է 1211 թ. արձանագրել Խծկոնից վանքում, «ազատեցի զսուրբ ուխտս զայս իմով արեամբս ի յայլազ-գեաց ...»[812], *ապա՝* «վերստին նորոգեցաք զհնացեալ սբ ուխտս ողորմութեամբ ամիրսպասալար Զաքարէի, որ էառ զԲագարան»[813]:

Իհարկե այս և հետագա դեպքերն արձանագրված են մոտ մեկ տասնամյակ ավելի ուշ: Խծկոնքի և Բագարանի ազատագրական կռիվների մասնակիցներ են, ինչն ակնբախ է արձանագրություններից, վերոհիշյալ Տիգրանը, «Դաւիթ, որդի Շոթո(ռ)կայ»[814], «Դաւիթ, որդի Գրիգորոյ, զաւրավար ամիր սպասալարին Զաքարիայի»[815]:

Արշարունիքը Բագարանով առնելուց հետո Զաքարյանները վերստին մտնում են Արագածոտն, ապա՝ Նիգ և շարժվում Բջնիի ուղղությամբ: 1201 թ. հայկական զորքերը գրավում են Բջնին[816]. «...Յաշխարհակալութեան քաջաց եւ յաղթողաց մեծ շահանշահաց Զաքարէի եւ Իւանէի...»[817]: *Սանահնում մի հոյակերտ խաչքար է կանգնեցված հետևյալ հիշատակությամբ.* «Ի ՈԿԴ (1215) թվիս կանգնեցաւ խաչս յիշատակ Սարգսի, որդոյ Սմբատայ, թոռն Համա-զասպեանց, որ մեռաւ ի պատերազմի, եւ թաղեցաւ ի դուռն Ա.ծ ածնիս»[818]: *Այս հուշակոթողի առիթով Կ. Ղաֆադարյանը գրում է. «Սարգիս Համազասպյանցը եղել է Զաքարե ամիրսպասալարի սիրելի զորավարներից մեկը, որը զոհվել է 1201 թ. հավանաբար Բջնիի ազատագրման ժամանակ և թաղվել է Զաքարյանների տոհմական գերեզմանոցում»*[819]:

1203 թ. ազատագրվում է հայոց երբեմնի մայրաքաղաք Դվինը[820]:

---

[811] *Նույն տեղում, էջ 6:*
[812] *Վիմական տարեգիր, էջ 52-53:*
[813] *Նույն տեղում, էջ 53:*
[814] *Նույն տեղում:*
[815] *Նույն տեղում, էջ 56-57:*
[816] *Տե՛ս* ***Վարդան,*** *նույն տեղում:*
[817] ***Ղ. Ալիշան****, Այրարատ, էջ 272-273:*
[818] ***Կ. Ղաֆադարյան ****, Սանահնի վանքը..., էջ 174:*
[819] *Նույն տեղում:*
[820] *Տե՛ս* ***Վարդան,*** *նույն տեղում:*

Հետաքրքրական է, որ Աշտարակի Ծիրանավորի վերոհիշյալ վիմագրում, ըստ Ս. Սաղումյանի վերականգնման, ներկայացված են Կենտրոնական Հայաստանում Զաքարյանների հաղթարշավի ուղիներն ու ժամանակահատվածները. «...՝առին զերկիրն Շիրակ՝այ եւ առին զԱնբերդ ՝եւ յետ երեք ամի՝ զԱնի՝ եւ յետ երկու ամի՝ զԲջնի ՝եւ յետ երկու ամի՝ զԴուին՝ և ազատեցին զդասս բ՝ազում քահանա՝յիցս ամենայն հարկից...»[821]: Ս. Սաղումյանը կարևորել է այս արձանագրությունը՝ Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու տարեգրության ուսումնասիրության համար: Հայտնի է, որ Զաքարեի և Իվանեի ազատագրական հաղթարշավի ընթացքը մասամբ տարեգրել է Վարդան Արևելցին: Ընդ որում, Ս. Սաղումյանը նկատել է, որ Վարդանը տեղյակ է եղել ինչպես Հաղարծնի, այնպես էլ Աշտարակի Ծիրանավորի արձանագրություններին. «... պատմիչը տալիս է ստույգ տարեթվերը, իսկ Ծիրանավորի միաբանները հետևում են բնակավայրերն ու ամրոցները միմյանցից համեմատությամբ մի քանի տարի հետո ետ նվաճելու ժամանակագրման տարածված ավանդույթին»[822]:

Հիշեցնենք, որ ըստ Վարդան Արևելցու՝ Զաքարյան եղբայրները 1191-ին ազատագրել են Շիրակը, 1196-ին՝ Ամբերդը, 1199-ին՝ Անին, 1201-ին՝ Բջնին, 1203-ին՝ Դվինը, 1206-ին՝ Կարսը և այլն[823]:

Աշտարակի Ծիրանավորի հիշատակությունն ուշագրավ է նաև նրանով, ինչպես այդ շրջանի բազմաթիվ արձանագրություններ ևս, որ արտացոլում են այն իրողությունը, երբ Զաքարյան եղբայրները, ազատագրելով հայկական հողերը, անմիջապես վերացնում էին սելջուկյան ծանր հարկերը: Դա արվում էր, որպեսզի բնակչությանը հնարավորություն տրվեր դուրս գալու աղքատությունից, իսկ երկիրը, բնականաբար, կհաղթահարեր օտար տիրապետության պատճառած տնտեսական խոր ճգնաժամը:

1203 թ. Դվինը վերցնելուց հետո Զաքարյան բանակներն Արագածոտն-Շիրակի վրայով անցնում են Այրարատ նահանգի արևմուտքը, 1204/5 թ. Բասենի վճռական ճակատամարտում ջախջա-

---

[821] ***Ս. Սաղումյան***, *Աշտարակ, էջ 143:*

[822] *Նույն տեղում, էջ 143, 144:*

[823] *Տե՛ս* ***Վարդան,*** *նույն տեղում:*

խում թուրքերին և 1206/7 թ. գրավում Կարսը[824]՝ *այսպիսով ավարտելով Կենտրոնական Հայաստանի ազատագրումը:*

Այրարատում դեռևս առաջին կարևորագույն հաղթությունների վկայությունը Զաքարյանները թողել են Հովհաննավանքում. «Շնորհիւն բարերարին Այ, ի թագաւորութեանն Թամարա, դստեր Մեծին Գէորգա եւ ի թուականութեան Թորգոմեան սեռի :ՈԽԹ: (1200) Մեք, եղբարքս հարազատք՝ Զաքարիա եւ Իւանէ, որդիք մեծին Սարգսի, որդո Աւագ Զաքարիայի, յորժամ ծագեաց լոյս շնորհացն Այ եւ այց արար աշխարհիս Հայոց եւ զաւրացոյց զտկարութիս մեր ի մարտ պատերազմի ընդդեմ թշնամեաց խաչին Քի, եւ ելոյծ զզաւրութի նոցա եւ զվաղնջուց բռնութինն եւ ազատեցաւ երկիրս Արայրատու ի ծանր լծո ծառայութեա նոցա...»[825]:

1207/8 թ. հայկական զինված ուժերն Այրարատի Բագրևանդ գավառով իջնում են Շահարմեններից հզոր Այուբիների տիրապետության տակ անցած Տուրուբերան նահանգը, ազատագրում Մանազկերտը, պաշարում Խլաթը, ապա Արճեշը վերցնելուց հետո Վասպուրականի վրայով շարժվում դեպի Նախիջևան: 1209/10 թ. Ջուղայով անցնելով Արաքս գետը՝ մտնում են Ատրպատականի Ելտկուզյան աթաբեկության տարածքները, նվաճում Մարանդ, Թավրիզ, Արդաբիլ քաղաքները[826] *և նախապատրաստվում կատարելու հաղթական հարվածների վերջին ակորդը, որն է՝ չորս կողմից հայկական զորքերով շրջապատված Սյունյաց լեռնաշխարհի ազատագրումը: Սիսական պատմիչը, թվարկելով Զաքարյանների գրված բոլոր վայրերը, ավելացնում է. «Առին ի 600 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղէն, զԲարկուշատ»*[827]:

Պետք է ենթադրել, որ Սյունիքի ազատագրումն Իվանե Զաքարյանի գլխավոր հրամանատարությամբ (Զաքարեն նոր էր վախճանվել), իրականացվել է չորս ճակատով. արևմտյան՝ Նախիջևանից (հրամանատարն ինքը՝ աթաբեկը), հյուսիսային՝ Գեղարքունիքից (Բուբակ իշխան), հարավային՝ Ատրպատականից (Լիպարիտ Օրբել-

---

[824] Տե՛ս **Վարդան,** նույն տեղում:

[825] **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը..., էջ 76:

[826] Տե՛ս ՀԺՊ, III, էջ 538:

[827] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 392:

յան), արևելյան՝ Արցախից (Վասակ Խաղբակյան): Անկարելի է գերագնահատել հրամանատարներից որևէ մեկի դերն ընդհանուր գործում: Բուբակ իշխանը Նորավանքի եկեղեցու արձանագրությունում հայտնում է, որ ինքը սուրբ ուխտին է ընծայել այն հողերը. «զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց եւ իմ արեամբս թափեալ...»[828]: Սյունյաց ամրոցները, ինչպես իր տեղում նշել ենք, համաձայն պատմիչի հաղորդագրության, գրավել է Լիպարիտ Օրբելյանը[829]: Սակայն, կարծում ենք, որ Վասակ Խաղբակյանը լեռնաշխարհի, հատկապես Վայոց ձորի ազատագրման գործում, համաձայն Արատեսի վանքի. «..առի զամրոցանիս Եղեգեայ Ձորոյս...»[830] վիմագիր հիշատակության, այնուհանդերձ, ունեցել է ամենամեծ ավանդը, այլապես աթաբեկ Իվանեն նրան առանձնահատուկ չէր մեծարի՝ շնորհելով կողմնապետի բարձր պաշտոնն. «Ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ»՝ նույն վկայագրում արձանագրված:

Հատկանշական է, որ Զաքարյանների հաղթանակները՝ հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք, արձանագրված են Գեղարդավանքի հետևյալ վիմագրում. «Կամաւն Այ. այս գիր է աշխարհակալ աթաբակ Իւանէի և արեան հարազատի իւրոյ տիեզերակալին Զաքարիայի՝ որդոցն Աւագ Սարգսի ամիրսպասալարին եւ որդւոյն նորին Աւագին եւ Շահընշահի, որ առաւ ի Կայենով եւ Կայծոնով մինչ ի Բարկուշատ եւ մինչ ի յԱկանա եւ մինչ ի Նախճաւան եւ ան դի մինչ ի Կարս...»[831]: Նկատելի է, որ Զաքարյան եղբայրները, սելջուկներից ազատագրված բնակավայրերի հիշատակությունները դասավորելով խաչաձև, դրա ներքո խորհրդանշել են իրենց փառահեղ հաղթանակների ուղղվածությունն ընդդեմ թշնամեաց խաչին Քի, ինչպես Հովհաննավանքում իրենք են արձանագրել, և որ այդ հաղթությունները տրվել են Քրիստոսի տերունական Ս. Նշանի զորությամբ:

Իսկ Զաքարյանների կարևորագույն նվաճումները հավերժացված են Հաղարծնի վանքում. «...յառաջ զանառիկ դղեակն Անբերդ, եւ զթագաւորանիստ քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, միչք եւ Գաւազանք ի Թաւրէժ, զԿարնոյ քաղաք մինչեւ Խլաթ, զՇաքի

---

828 *Վիմական տարեգիր, էջ 67:*

829 *Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 397:*

830 *Դիվան, պր. III, էջ 123:*

831 ***Գ. Հովսեփյան**, Խաղբակյանք..., էջ 299: «յԱկանա» վերծանված է «Յականա»: Կարծում ենք՝ այն Խաչենի Հաթերք գավառի նույն Ականաբերդն է (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 130):*

եւ զՇրուան, Պարտաւ մինչեւ Բելուական եւ զայլ բազումս իւրեանց սահմանաւք, զոր աւելորդ համարեցաք յիշատակել...»[832]:

Այս հաղթանակների շնորհիվ սելջուկ-թուրքական տիրապետությունից ազատագրվեց Բագրատունյաց Հայաստանից ծավալներով ավելի խոշոր տարածք: Հայաստանը, անշուշտ, իր նոր, անկախ վերածնունդը կապրեր, եթե արևելքից վերահաս թաթար-մոնղոլական հորդաները չկասեցնեին այն:

[832] *Դիվան, պր. VI, էջ 22:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Նշանակությամբ խոշոր, արժեքով անգնահատելի հայկական վիմագրերում արտացոլված է հայ ժողովրդի պատմությունն իր բոլոր հատկանշական կողմերով:

Արձանագրությունները, անկախ ժամանակից ու տեղից, կարելի է դիտարկել ընդհանուրի մեջ՝ առանձնացնելով եզակին: Յուրաքանչյուր վիմագիր աղբյուրի ետևում, ուր արձանագրված է փաստ, իրադարձություն, թաքնված է որևէ երևույթ, իրողություն: Արձանագրությունները, անկախ ժամանակից, արտացոլում են այդ երևույթը, օրինակ՝ տարբեր դարաշրջանների վիմագրերն արտահայտում են միջավատական, ներավատական հակասությունները, պատերազմները, ապահարկությունը և այլն:

Եվ հակառակը, արձանագրությունները կարելի է դիտարկել ժամանակի ու տեղի մեջ՝ եզակիից գնալով դեպի ընդհանուրը:

Որքան էլ որ յուրաքանչյուր արձանագրություն արտահայտի որևէ փաստ, բացահայտի որևիցե երևույթ, միևնույն է, պտտվում է ժամանակի առանցքի շուրջը: IX դ. արձանագրությունների առանցքը հայոց պետականության վերականգնումն է:

Վիմագրերն ունեն անփոխարինելի աղբյուրագիտական արժեք, երբեմն հանդես գալով որպես միակ աղբյուր՝ ճշտում են տարեթվերը, հերքում կամ հաստատում են մատենագիրներին: Նրանց պատմագիտական արժեքը կայանում է նրանում, որ օգնում են երևույթի բացահայտմանը, զարգացմանը, գնահատմանը, ճշգրտում նախկին ուսումնասիրությունները:

Ափկեսի 827 թ. խաչքարը ոչ միայն ցարդ հայտնի IX դ. թվագիր կոթողների մեջ հնագույնն է, այլև արտացոլում է Սյունյաց գահերեցության ներքին հակասությունները, իսկ Վանքի 902 թ. վիմագիրը բացահայտում է Արևիք գավառի գահակալ իշխանին՝ Սմբատին:

Արուճի 867 թ. արձանագրությունը ոչ միայն արտացոլում է ներավատական հակասությունները, այլև հայոց սպարապետի հիշատակության հարցում լրացնում պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցուն ու Թովմա Արծրունուն, օգնում Պահլավունի իշխանական տան ծագման հարցի լուծմանը:

Սևանի 874 թ. և Գառնիի 879 թ. վիմագրերը ճշգրտում են հայոց պետականության վերականգնման տարեթիվը:

Մեծ Մասրիկի 881 թ. հիշատակագիրն արտացոլում է Սյունիք-Արցախ միջավատական հարաբերությունները:

Կեչուտի 886 թ. վկայագիրը Վասակ Իշխանիկի գահ ստանալու հարցում հակասում է Ստեփանոս Օրբելյանի գնահատականին, ժխտում պատմիչի տեղեկությունը:

X դ. վիմական արձանագրությունները Բագրատունյաց թագավորության հզորության առհավատչյաներն են:

Սանահնի վանքին եպիսկոպոսական վիճակ տալու Սմբատ Բ-ի արքունական հրովարտակի. «...թոռն տիեզերակալ և մեծ թագաւորին Սմբատայ...» հիշատակությունը կռվան է հանդիսացել ապացուցելու, որ «տիեզերակալ» պատվանունն առաջին անգամ կրել է նրա համանուն հայրապապ Սմբատ Ա-ը: Դա հաստատում է ժամանակամերձ Շապուհ Բագրատունուն և ժխտում ժամանակով հեռու Վարդան Արևելցուն:

Բացառիկ աղբյուրագիտական արժեք է ներկայացնում Մաղարդա վանքի 966 թվի հիշատակագիրը, որը բացահայտում է Աբաս թագավորի Հովհաննես ավետարանական անունը:

Խաչի ձորի և Թալինի Կաթողիկեի նորահայտ վիմագրերը լույս են սփռում Բագրատունյաց թագավորության արքունական ցարդ անհայտ գործակալությունների վրա:

Գեղարքունյաց երկու վիմագրեր կարևոր նշանակություն ունեն Հավնունի նախարարական տան տեղաշարժի ուսումնասիրության համար: Դրանք նաև Բագրատունի թագավորների հոգու վեհության վկայություններն են, ովքեր ներողամիտ գտնվեցին ժամանակին Սմբատ Ա Տիեզերակալի դեմ դավակցած իշխան Հավնունու սերունդների հանդեպ և նրանց Գեղամա ծովեզերքին տիրույթներ շնորհեցին կորուսյալ հայրենիքի փոխարեն:

Վանեվանի 903 թ. վիմագիրը հայտնում է Բագրատունի ոչ թագազուն իշխանաց իշխանների՝ «տերանց տէր» տիտղոսը կրելու մասին:

Արդեն, ըստ X դարի երկրորդ կեսի արձանագրությունների՝ որպես երկրի բարձրագույն պատիվների արժանացածների, կենտրոնական Հայաստանում տեսնում ենք Պահլավունի իշխաններին:

Սյունիքի, Վասպուրականի, Արցախի գահերեցները՝ գլխավոր իշխանները, որոնք ի սկզբանե այդ նահանգների «իշխանաց իշխաններն» էին, արձանագրություններում սկսում են «թագաւորներ» հորջորջվել, ինչը նրանց կենտրոնախույս նկրտումների արտահայտությունն էր:

Վայոց ձորի Կարմրաշենի 990 թ. խաչքարի հիշատակագրությունը Սյունյաց թագավորության հիմնադիր արքայի ինքնության հարցում հակադրվում է պատմիչի հաղորդածին:

XI դարի առաջին կեսի վիմագրերում առկա է Բագրատունի թագավորների պայքարը հայոց պետության միասնականության համար: Արձանագրություններն արտացոլում են հարկադրական պատժիչ արշավանքների կոշտ և ամուսնական հարաբերությունների միջոցով ծայրամասերը կենտրոնին կապելու մեղմ քաղաքականությունը:

Բագրատունյաց պետականության անկումից հետո բյուզանդական կարճատև, ապա սելջուկյան շուրջ մեկուկես դարյա տիրապետության վկայագրերն են XI դարի երկրորդ կեսի և XII դարի հայերեն վիմագրությունները:

Հայաստանում այդ ժամանակներից պահպանված բազմաթիվ արաբական արձանագրություններում ակնհայտորեն երևում են սելջուկյան տարբեր ամիրայությունների միջև հայոց հայրենիքի բաժան-բաժան արված տարածքները:

Վահանավանքի XI դարի երկրորդ կեսի վիմագրերը երևան են հանում ձևավորված Սյունիք-Արցախ ռազմաքաղաքական դաշինքը, թուրք-սելջուկների դեմ Բաղաց թագավորների գլխավորած գոյապայքարը:

Երկրի տարբեր վայրերում սփռված XIII դարի սկզբների հայաբերտ վիմագիր հիշատակությունները՝ Հայաստանը թուրք-սելջուկներից ազատագրելու մշտնջենական վկայություններն են: Այդ արձանագրությունների շնորհիվ և մատենագրության օգնությամբ հնարավորություն է ընձեռվում հետևելու ռազմական գործողությունների ընթացքին և գծագրելու հայկական բանակների հաղթարշավի ուղիները: Չնայած ռազմական անընդհատ գործողություններին ու կարճատև ինքնուրույնությանը, Զաքարյաններին Հայաստանում հաջողվել էր ստեղծել կուռ իշխանապետություն՝ միջնադարյան Արևելքին հատուկ, ավատական վարչաքաղաքական կառուցվածքով: Համոզված ենք, եթե չլիներ մոնղոլ-թաթարների վերահաս տիրապետությունը, ապա հայերը Զաքարյան ժառանգորդի գլխավորությամբ կհասնեին թագավորության, պետականության վերականգնմանը հայրենիքում: Այդ են վկայում բազմաթիվ վիմագրերը: Բացառված չէ, որ այն, միավորվելով Կիլիկիայի հայկական թագավորության հետ, կլիներ հզոր մի գերտերություն տարածաշրջանում:

Մոնղոլ տիրակալները Հայաստանում, ինչպես նաև մյուս նվաճված երկրներում, ըստ էության, վարելով երկդիմի քաղաքականություն, որը բնորոշվում է մի իշխանական տան հովանավորմամբ ու վեր բարձրացմամբ՝ մյուսին հակադրելու ու նվազեցնելու դրսևորմամբ ու ծանր հարկահանությամբ, նպատակ ունեին ջլատելու հայոց մեծամեծների միասնականությունը:

XII-XIV դդ. հայերեն արձանագրությունները հնարավորություն են տալիս կազմելու հայոց իշխանապետների՝ ամիրսպասալարների ու աթաբեկների տարեգրությունը:

Զնայած Ատրպատականի թուրքերի դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարին, որը Կեչուտի 1346 թ. տապանագիրն ու Բջնիի 1358 թ. զույգ վիմագրերն են վկայում, անհետացման եզրին հայտնված Վաչուտյան ու Զաքարյան իշխանները կենտրոնական Հայաստանում, նվաղած Պռոշյաններն ու Օրբելյանները Սյունիքում, ջլատված Դոփյաններն ու Հասան-Ջալալյաններն Արցախում չէին կարող համախմբվել ու հայրենիքը զերծ պահել ճանապարհին ամեն ինչ ավերող ու մոխրացնող Սամարղանդի կաղ տիրակալի ասպատակություններից, միասնական ճակատ ստեղծել՝ դիմագրավելու թուրքմենական կարա-կոյունլու և ակ-կոյունլու քոչվոր ցեղախմբերի արշավանքներին:

Որքան էլ որ դժնակ լինեին հայ ժողովրդի պատմության հետագա ժամանակաշրջանները, այդուհանդերձ XVII-XVIII դարերում Սյունիքի և Ղարաբաղի մելիքները, որոնց երակներում հոսում էր Օրբելյանների, Պռոշյանների, Դոփյանների, Հասան-Ջալալյանների ազնվազարմ արյունը, կարողացան գլխավորել ազգային-ազատագրական շարժումների նոր փուլն այն տարածաշրջանում, որտեղ մերօրյա հերոսների անձնուրացության արգասիքն ու արյան գինը հանդիսացավ ոչ միայն Արցախի, այլև նրա ու Սյունիքի պատմական տարածքների ազատագրման սրբազան գործը:

Վիմագրագիտությունը զարգացող գիտություն է. ժամանակ առ ժամանակ հայտնաբերվող արձանագրությունները, ապագայում գտնվելիք վիմագրերը, անշուշտ, կգան ճշտելու, լրացնելու IX-XIV դարերի Հայաստանի քաղաքական պատմության շուրջ ըստ վիմական աղբյուրների մեր արծարծած խնդիրները, ժխտելու կամ հաստատելու մեր կողմից առաջ քաշված տեսակետները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գարեգին Ա կաթողիկոս, *Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951:*

«Գրիգոր Մագիստրոսի թղթերը», ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրոպոլ, 1910:

«Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966:

«Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960:

«Դիվան հայ վիմագրության», պրակ III, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967:

«Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1973:

«Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:

«Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977:

«Դիվան հայ վիմագրության», պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց Գ. Գրիգորյան, Երևան, 1996:

«Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի դաշնություն, աշխ. Գ. Գրիգորյանի, Երևան, 1999:

«Դիվան հայ վիմագրության», պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012:

«Դիվան հայ վիմագրության», Կոտայքի մարզ, կազմող Գ. Սարգսյան, ձեռագիր:

«Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870:

«Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Տփղիս, 1917:

«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950:

«Կանոնագիրք հայոց», հ. Ա, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964:

«Կանոնագիրք հայոց», հ. Բ, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1971:

Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:*

«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:

Հովհաննես Դրասխանակերտցի, *Հայոց պատմություն, աշխ. թարգմ. և ծանոթ. Գ. Թոսունյանի, Երևան, 1996:*

«Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. 1, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951:

«Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956:

Մանուչարյան Աշ., *Դաշտային օրագիր:*

«Մատենագիրք Հայոց», հ. Ե, Անթիլիաս, 2005:

Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991:*

«Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860:

Մխիթար Անեցի, *Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879:*

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներած. Վ. Առաքելյանի, Երևան, 1983:*

«Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963:

«Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1910:

«Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921:

«Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումն ի գրոց պատմագրաց», հրատ. Ա. Տէր -Միքէլեանի, Վաղարշապատ, 1893:

«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Պետերբուրգ, 1885:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, *Տիեզերական պատմություն, թարգմ., առաջ. և ծանոթ. Վ.Վարդանյանի, Երևան, 2000:*

«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:

Ստեփանոս Օրբելյան, *Սյունիքի պատմություն, աշխարհաբար փոխադրումը Ա. Աբրահամյանի, Երևան, 1986:*

«Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թրգ. Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Ա, Երևան, 1934:

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թրգ. Լ.Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, Երևան, 1936:

***Хачатрян А.**, Корпус арабских надписей Армении VIII-XVI вв., Ереван, 1987.*

***Орбели И.**, Избранные труды, Ереван, 1963.*

2. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987:*

***Ալիշան Ղ.**, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:*

***Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881:*

***Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890:*

***Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893:*

***Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901:*

***Այվազյան Ար.**, Ագուլիս, Երևան, 1984:*

***Այվազյան Ար.**, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987:*

***Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1977:*

***Ավդալբեկյան Թ.**, Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ, Երևան, 1927:*

***Ատրպետ**, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929:*

***Բաբայան Լ.**, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Երևան, 1964:*

***Բասմաջեան Կ.**, Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931:*

***Բարխուդարեանց Մ. եպս.**, Արցախ, Բաքու, 1895:*

***Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963:*

***Գալստյան Ա.**, Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945:*

Գէորգեանց Մ., Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, Աղէքսանդրոպոլ, 1903:

Գրիգորյան Գ., Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դդ., Երևան, 1973:

Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981:

Գրիգորյան Գ., Վահանավանք, Երևան, 2007:

Գրիգորյան Գ., **Հախվերդյան Ս.**, Սյունիքի պատմություն, Երևան, 2001:

Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955:

Երեմյան Ս., Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ, Երևան, 1944:

Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963:

Երզնկեանց Ռ., Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղարշապատ, 1886:

Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948:

Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967:

Խաչերեան Լ., Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, Լոս-Անճելըս, 1987:

Կարապետ եպիսկոպոս (Տէր-Մկրտչեան), Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914:

Կոգեան Ս., Կամսարականք, Տեարք Շիրակայ և Արշարունեաց, Վիեննա, 1926:

Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966:

«Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984:

«Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. III, Երևան, 1976:

«Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. IV, Երևան, 1972:

«Հայ ժողովրդի պատմություն», խմբ. Մ. Ներսիսյանի, Երևան, 1972:

«Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը», Երևան, 1984:

Հասրաթյան Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, 1987:

Հարությունյան Ս., Անբերդ, Երևան, 1978:

Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957:

Հովհաննիսյան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970:

Ղաֆադարյան Կ., *Հայկական գրերի սկզբնական տեսակները, Երևան, 1939:*

Ղաֆադարյան Կ., *Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945:*

Ղաֆադարյան Կ., *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948:*

Ղաֆադարյան Կ., *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957:*

Ղաֆադարյան Կ., *Հաղբատ, Երևան, 1963:*

Ղաֆադարյան Կ., *Երևան, միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975:*

Ղաֆադարյան Կ., *Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007:*

Մաթևոսյան Կ., *Արուճ, Երևան, 1987:*

Մաթևոսյան Կ., *Մուղնու Ս. Գևորգ վանքը, Երևան, 2000:*

Մաթևոսյան Կ., *Մուղնու Ս. Գևորգ վանքը, Ս. Էջմիածին, 2009:*

Մաթևոսյան Կ., *Անի-Շիրակի պատմության էջեր, Երևան, 2010:*

Մաթևոսյան Ռ., *Տաշիր-Ձորագետ, Երևան, 1982:*

Մաթևոսյան Ռ., *Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990:*

Մանանդյան Հ., *Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930:*

Մանանդյան Հ., *Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:*

Մանանդյան Հ., *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952:*

Մանուչարյան Ալ., *Քննություն Հայաստանի IV-XI դարերի չինարարական վկայագրերի, Երևան, 1977:*

Մարգարյան Հ., *Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980:*

Մնացականյան Ստ., *Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960:*

Մեսրոբ երէց, *Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի, Վենետիկ, 1853:*

Մովսէսեան Ղ., *Լօռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923:*

Մուրադյան Պ., *Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:*

Յովսէփեանց Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:

Շահնազարյան Ա., Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990:

Զամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Բ, Երևան, 1984:

Պետրոսյան Հ., Գառնին 9-14-րդ դդ., Երևան, 1988:

Պետրոսյան Հ., Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008:

Պետրոսյանց Տ., Վաչուտյաններ, Երևան, 2001:

Պողոսյան Ս., Գյուղացիների ճորտացումը ու գյուղացիական շարժումները Հայաստանում 9-13-րդ դդ., Երևան, 1956:

Ջալալեանց Ս. , Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1850:

Սաղումյան Ս., Աշտարակ, Երևան, 1998:

Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

Սարգսյան Լ., Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դարեր), Երևան, 2007:

Սմբատեանց Մ., Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփղիս, 1904:

Ստեփանյան Հ., Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ, Երևան, 1990:

«Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», աշխ. Յովհ. եպս. Շահխաթունեանցի, հ. Բ, Ս. Էջմիածին, 1842:

Վարդանյան Ռ., Հայաստանի չափերն ու կշիռները (10-15-րդ դդ.), Երևան, 1989:

Վարդանյան Վ., Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008:

Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Հայաստանում, Երևան, 1965:

Տէր-Ղազարեան Կ., Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966:

Ուլթմազյան Հ., Սյունիքը 9-10-րդ դդ., Երևան, 1958:

Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:

Ուլուբաբյան Բ., Գանձասար, Երևան, 1981:

Քալանթար Ա., Հայաստան՝ Քարե դարից միջնադար, Երևան, 2007:

Օրմանյան Մ., *Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001:*
Օրմանյան Մ., *Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:*
Օրմանյան Մ., *Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001:*

Аракелян Б., *Гарни, том I, Результаты работы археологической экспедиции института истории АН Арм.ССР, Ереван, 1951.*

Григорян Г., *Очерки истории Сюника (IX-XV вв.), Ереван, 1990.*

Гюзалян Л., *Персидская надпись Кей-султана Шеддади в Ани, «Акад. Н. Я. Марру», М.-Л., 1935.*

Меликсет-Беков Л., *Новооткрытая надпись на Севане от 874 г. Москва-Ленинград, 1939.*

أديب السيد، أرمينية في التاريخ العربي، حلب، ١٩٧٢ .

3. ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐ

Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971:*

Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977:*

Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942:*

Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944:*

Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962:*

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ԳԱ հրատ., հ. 3-րդ, Երևան, 1974:

Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986:*

Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988:*

Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991:*

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001:

«Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երևան, 1944:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Երևան, 1977:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Երևան, 1980:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Երևան, 1986:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. I, Երևան, 1987:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, Երևան, 1979:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Երևան, 1981:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

Баранов Х., Арабско-русский словарь, Москва, 1977.

4. ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ակինեան Ն., Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթմեաց ազգաբանութիւնը, ՀԱ, Վիեննա, 1954, թիվ 1-6:

Ակինեան Ն., Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմութիւն Աղուանից, ՀԱ, Վիեննա, 1957, թիւ 8-10:

Ավագյան Ս., «Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դ. արձանագրության մեջ, ՊԲՀ, 1971, № 2:

Բաբայան Ֆ., Քալանթարյան Ա., Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, ՊԲՀ, 2001, № 2:

Բասմաջեան Կ., Մեր հնութիւնները, «Բանասէր», հ. Դ, ապրիլ, թիւ 4, Պարիս, 1902:

Բարթիկյան Հ., Ահարոն Մագիստրոսի արձանագրության (1055-1056) մեջ հիշատակված հարկերի մասին, ՊԲՀ, 1959, № 4:

Գասպարյան Ռ., Նորահայտ արձանագրություն սուրբ Քրիստափոր վանքից, «Էջմիածին», 2008, ԺԱ:

Գրիգորյան Գ., Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության շուրջը, ՊԲՀ, 1966, № 4:

Գրիգորյան Գ., Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, ԼՀԳ, 1970, № 10:

Գրիգորյան Գ., *Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, № 2:*

Եղիազարյան Հ., *Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1955, Ժ-ԺԲ:*

Եղիազարյան Հ., *Մարմաշենի վանքը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1957, Ե:*

Եղիազարյան Հ., *Լմբատավանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1960, Բ:*

Եղիազարյան Հ., *Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1960, Է:*

Եղիազարյան Հ., *Սաղմոսավանք, «Էջմիածին», 1961, Զ:*

Եղիազարյան Հ., *Ներքին Թալին գյուղի ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմական արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1971, Ը:*

Կարախանյան Գ., *Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, ՊԲՀ, 1977, № 4:*

Կիրակոսյան Գ., *Դոփյան իշխանական տան ծագման հարցի շուրջ, ԼՀԳ, 1985, № 3:*

Հարությունյան Բ., *Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, ԲԵՀ, 1969, № 1:*

Հասրաթյան Մ., *Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը, «Հայկական արվեստ», Երևան, 1984:*

Հովսեփյան Գ., *Ազիզբեկենք և նրանց շինարարական գործը, ԲՀԳԻ, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922:*

Ղազարոսյան Ա., *Սևանա կղզու եկեղեցիները, ԼՀԳ, 1990, № 1:*

Մաթևոսյան Կ., *Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա:*

Մաթևոսյան Կ., *Հավուց թառի վանքը և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, ԲՄ, 17, Երևան, 2008:*

Մանուչարյան Աշ., *Վիմագրագիտական դիտողություն «տիեզերակալ» պատվանունի վերագրման շուրջ, «Շիրակի պատմ. մշակ. ժառանգ. նվիրված I հանրապետական գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ», Գյումրի, 1994:*

Մանուչարյան Աշ., *Բագրատունիների թագավորության հաստատման թվականի վիմագրագիտական ճշգրտում, ԲԵՀ, 1995, № 1:*

Մանուչարյան Աշ., *Հայոց իշխանապետերի ժամանակագրությունն ըստ 13-14-րդ դդ. վիմագրերի, ԲԵՀ, 1995, № 2:*

Մանուչարյան Աշ., *Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագ-րելու Զաքարյանների հաղթարշավի ուղին, ՀՌԱԿ «Պայքար», 1996, թիվ 9-10:*

Մանուչարյան Աշ., *Զաքարե ամիրսպասալարի մահվան թվականի ճշգրտումը ըստ Բագարանի արձանագրության, «Շիրակի պատմ. մշակ. ժառանգ. նվիրված III հանր. գիտաժողովի զեկ. հիմնադրույթ-ներ», Գյումրի, 1998:*

Մանուչարյան Աշ., *Ո՞ւմ կարող է պատկանել Սանահնի նորա-հայտ տապանաքարը, «Հին Հայաստանի մշակույթը», XI, Երևան, 1998:*

Մանուչարյան Աշ., *Նորահայտ հիշատակություն «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ, Աստվածաբանության ֆ-կ, «Տարեգիրք», Բ, 2007:*

Մանուչարյան Աշ., *Հայոց Աբաս թագավորի մկրտական անունը, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-կ, «Հայ աստվածաբան», Բ, 2008:*

Մանուչարյան Աշ., *Երերույքի տաճարի վիմագրերը, «Հին Հա-յաստանի մշակույթը», XIV, Երևան, 2008:*

Մանուչարյան Աշ., *Պահլավունիների ծագումն ու բարձրացումը, ՀԱ, 2011 :*

Մանուչարյան Աշ., *Մուղնին Պռոշյանների իշխանական տիրույթ, «Վէմ», թիվ 1, 2012:*

Մանուչարյան Աշ., *Նոր վիմագրեր Հովհաննավանքից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, գիտ. աշխ., XVI, Գյումրի, 2013:*

Մանուչարյան Աշ., *Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբա-տը Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի, ԲԵՀ, 2014, № 1:*

Մանուչարյան Աշ., *Փարպիի Ծիրանավորի արձանագրություն-ները,«Էջմիածին», 2014, Գ:*

Մելքոնեան Յ., *Նոր արձանագրութիւններ Յաղաց քար վանքից, ՀԱ, Վիեննա, 1996, թիվ 1-12:*

Մարգարյան Հ., *Զաքարյանների ծագումը, ՊԲՀ, Երևան, 1994, թիվ 1-2:*

Մուշեղյան Ե., *Բջնիի 1358 թ. արձանագրության մասին, ՏՀԳ, 1956, № 7, նույնը նաև՝ «Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ», հ. 5, Երևան, 1959:*

Շահինյան Ա., *Կոչի կոթողը և նրա արձանագրությունը, ՊԲՀ, 1968, № 2:*

Շահինյան Ա., *Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII-XIII դդ., ԼՀԳ, 1968, № 3:*

Ոսկեան Հ., *Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, ՀԱ, 1941, թիւ 7-12:*

Ոսկեան Հ., *Նախճաւանի վանքերը, ՀԱ, Վիեննա, 1941, թիվ 7-12, էջ 196:*

Պետրոսյանց Վ., *Գնթունիների նախարարական տոհմը, «Երիտասարդ գիտաշխատող», ԵՊՀ, 1980, № 1:*

Սահակյան Տ., *Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, ՊԲՀ, 1966, № 3:*

Սաղումյան Ս., *Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը, «Էջմիածին», 1977, Ա:*

Սաղումյան Ս., *Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունը Աշտարակում, ԼՀԳ, 1989, № 9:*

Սարգսյան Գ., *Բղենո Նորավանք, «Էջմիածին», 1952, Դ:*

Սարգսյան Գ., *Անապատ կամ Նոր Վարագ վանքը և նրա վիմագրությունը,«Էջմիածին», 1952, ԺԱ-ԺԲ:*

Սարգսյան Գ.Գ., *Նորահայտ վիմագրեր Հրազդանի շրջանից, զեկուցումների հիմնադրույթներ, ԳԱ, ՀԱԻ, 1981:*

Սարգսյան Գ. Գ., *Գհուկ-Բոլորահարի վանքը, ՊԲՀ, 1983, № 1:*

Սարգսյան Գ. Գ., *Թեղենյաց վանքի պեղումները և վիմագրական նորույթներ, զեկուցումների հիմնադրույթներ, ԳԱ, ՀԱԻ, 1987:*

Սարգսյան Գ. Գ., *Գրիգոր-Ապիրատ Հասանյան, հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը», ժողովածու XII, Երևան, 2002:*

Վարդանյան Ռ., *Անիի Մայր տաճարի արձանագրության համաժամանակյա տարեթվերը, ԼՀԳ, 2000, № 1:*

Վարդանյան Վ., *Պահլավունի տոհմի ծագման շուրջ, «Հայոց պատմության հարցեր», 6, Երևան, 2005:*

Տեր-Մինասյան Ե., *Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե:*

Տէր-Մկրտչեան Մխ. վ., *Իմ գործակալութեան ժամանակ հաւաքած մի քանի արձանագրութիւններ, «Բանսէր», Պարիս, 1903:*

Տեր-Ղևոնդյան Ա., *Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, ԼՀԳ, 1979, № 1:*

Քաջբերունի *(բժ. Գաբրիել Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողութիւնք, «Արարատ», 1889:*

Бартикян Г. *«Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045-1064 гг.), ՊԲՀ, 1968, № 1:*

Григорян Г., *Историографическое значение армянских лапидарных надписей Арцаха и Сюника, ԼՀԳ, 1990, № 1:*

Марр Н., *Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1899, Зап-вост. Отд. VIII.*

Орбели И., *Надписи Мрена, «Հայկական հետազոտություններ», պր. Ա, Երևան, 1974:*

Пирузян С., ***Матевосян А., Шахсуварян П***., *Храм Звартноц: Причины и время разрушение, ՊԲՀ, 1984, № 3:*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵՀ	«Բանբեր Երևանի համալսարանի»
ԲՀԳԻ	«Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի»
ԲՄ	«Բանբեր մատենադարանի»
ԼՀԳ	«Լրաբեր հասարակական գիտությունների»
ՀԱ	«Հանդէս ամսօրեայ»
ՇՀՀԿ	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՊԲՀ	«Պատմա-բանասիրական հանդես»
ՏՀԳ	«Տեղեկագիր հասարակական գիտությունների»

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղա իլխան - 143, 150
Աբաս Բագրատունի թագավոր - 28, 36, 37, 39-41, 46-49, 60, 192
Աբաս, Կարսի թագավոր - 72
Աբաս Կյուրիկյան թագավոր- 113, 168, 172, 173
Աբաս, հայր հայոց թագուհու- 92
Աբաս, որդի Գագիկ Ա-ի -69
Աբբասյան- 24
Աբլասադենք - 117
Աբլժամ - 40
Աբլղարիբ - 31, 33, 45, 153
Աբլջահաբ Ապիրատյան -36, 45
Աբրահամ - 52, 145, 146
Աբրահամ, Անիում աշտարակ կառուցող - 176
Աբրահամյան Ա.- 54, 55, 59, 73
Աբրահամյան Հ. (Իվան Աբրամով) - 89
Աբու Աբդուլլահ Հուսայն իբն Ալի իբն Աբու Տալիբ ալ-Իսֆահանի - 167
Աբու Սաիդ Արսլան իբն Յուսուֆ - 123, 167
Աբու Սաիդ իլխան - 150
Աբուլ Սուար Շաուր - 167
Աբուլ Ֆաթհա Մելիք-Շահ բեն Ալփ-Ասլան (տե՛ս Մելիք-շահ սուլթան)
Աբուլ Ֆաթհ Մուհամմադ - 167
Աբուղամրենք - 44
Աբուղամր, որդի Գրիգոր Ապիրատյանի - 113
Աբուղամր, որդի Վահրամ Պահլավունու - 45
Աբուղամր, որդի Վասակ Հոլումի - 45
Աբուղամր Պահլավունի 37-41, 45
Աբումրվան Արծրունի - 86
Աբուսահլ Ավագյան - 58
Ադամյան Ս. - 140
Ադիբ աս-Սեյիդ - 17, 22, 24
Ադոնց Ն. - 31, 34, 42
Ադուդ ադ-Դին բեն Մահմուդ բեն Շաուր - 167
Ազիզ (Ազիզբեկ Ա) -106, 119
Ազիզբեկ Բ Եղվարդեցի - 107
Ազիզբեկենք -119
Ազիզբեկ, հայր Զաքարիայի- 106
Ազքանազյան - 20
Աթաբեկ Իվանե, որդի Հասան Ջալալ Դոլայի - 136, 147
Ալիշան Ղ. - 11, 31, 34-36, 39-43, 47, 48, 54, 76, 78, 107, 127, 129, 143, 151, 154, 173, 186
Ալփ-Ասլան (Ալփասլան)-164 -166
Ախթամարյաններ - 118

Ախունդով Դ. - 8, 63
Ակինյան Ն. - 31, 33, 42, 94
Ահարոն (Առոն) Մագիստրոս - 160-162
Ահմադ Աբուլ-Աբբաս ալ-Մութթամիդ ալլա-Ալլահ բեն Մութաուաքիլ (տե՛ս Մութթամիդ)
Ահմեդ իբն Խալիդ - 16
Աղբուղա Զաքարյան - 96, 128, 136, 151, 154
Աղսարթան Կյուրիկյան - 115
Աղուտ Ուքանյան - 117
Աճառյան Հ. - 34, 37, 38, 41, 43, 78, 79, 86, 88, 101
Ամատունի(ներ) -35, 86, 87
Ամիր Երկաթ Պահլավունի - 113, 128
Ամիր Զաքարե - 137, 151
Ամիր Հասան Ա Պռոշյան - 100, 103-104, 129, 143
Ամիր Հասան Բ Պռոշյան – 103, 104, 153, 154
Ամիր Մահսուդ - 184, 185
Ամիր Սարգիս Արծրունի - 97, 126, 177
Ամիր Քուրդ Արծրունի - 97, 112, 128, 149, 177
Ամիրբեկ, որդի Սահմադինի - 139
Ամիրզե - 156
Այվազյան Ան. - 79
Այվազյան Ար. - 68, 99
Այուբիներ - 188
Անանիա Ա Մոկացի - 28
Անանիա Շիրակացի - 43
Անանուն Սեբաստացի - 123, 139, 182
Անանուն, վրաց ժամանակագիր - 125
Անաստաս - 32
Անձևաց տուն - 35
Անտոն Ճղունտելի - 177
Աշոտ Բագրատունի - 12
Աշոտ Ա Բագրատունի - 12-22, 34, 66-68
Աշոտ Արգինացի (տե՛ս Աշոտ մարզպան)
Աշոտ Բ Երկաթ - 20, 23, 24, 35, 36, 39, 60, 65
Աշոտ Գ Ողորմած - 23, 24, 26, 28, 37, 39-42, 46-48, 60, 79, 85, 90
Աշոտ Մսակեր - 32
Աշոտ, որդի Գագիկ Ա-ի - 29, 69, 92, 93
Աշոտ Համազասպյան-Մամիկոնյան - 168
Աշոտ մարզպան – 40, 41, 45
Աշոտ, որդի Հովհաննես-Սմբատ Թագավորի - 91
Աշոտ, Սյունյաց իշխան - 68, 73, 88
Աշոտիկ, Սյունյաց իշխանաց իշխան - 169, 170
Աշրաֆ ալ-Զոբանի -155, 156
Ապիրատ իշխան - 113
Ապիրատյան(ներ)- 31, 113, 166
Առանշահիկ(ներ)- 56, 65, 109, 178
Առաքել Դավրիժեցի - 105
Առաքելյան Բ. - 13, 20, 51
Առաքելյան Վ. - 63
Ասատուր - 101

Ասողիկ (տե՛ս Ստեփանոս Տարոնեցի)
Ասպետուններ (Բագրատուններ) - 43
Աստվածատուր Հավնունի - 61
Ասփա - 108, 147
Ասփա (կին պարոն Ավագի)- 152
Ավագ Զաքարիա - 188
Ավագ Զաքարյան - 122, 125, 127, 131, 133, 134, 137, 139, 151, 152, 157, 189
Ավագ, որդի Ազիզբեկ Բ-ի - 107
Ավագ, պարոն - 152
Ավագ Սարգիս Զաքարյան - 96, 136
Ավագյան Ս. - 7, 41, 84, 139, 148, 161, 162
Ավդալբեկյան Թ. - 171
Ավետենք - 120, 137
Ավետիսյան Հ. - 163
Ատրներսեհ Առանշահիկ- 62, 63
Ատրներսեհ, վրաց բդեշխ- 66
Ատրպետ - 43
Արզուխաթուն - 112
Արիոս - 74
Արիստակես Լաստիվերտցի - 9, 27, 29, 86, 92, 93
Արիստակես Հռետոր - 47
Արծրունի(ներ)-35, 61, 66, 86
Արղութ, որդի Քարիմադինի - 140
Արղուն իլխան - 138, 144, 147, 151, 152
Արշակ Բ - 87
Արշակունի(ներ)-19,31,32, 38, 44, 61, 79, 81, 84, 86
Արտակ Կամսարյան - 42, 43, 45
Արտակ Պալունի - 42, 43, 45
Արտակյան Պահլավունի - 41
Արտաշիր Զաքարյան - 137
Արուման, որդի Սահակի -54, 55
Արուզ խաթուն, առաջին կին Տարսայիճի - 147
Ափշին - 66, 67

Բ

Բաբայան Լ. -28, 29, 59, 122, 126, 140, 150, 153, 155
Բաբայան Ֆ. - 96, 137
Բաբեկ (Բաբան) - 63
Բաբկեն (տեր Բաբկեն) - 66
Բագարատ Վխկացի -161-163
Բագարատ Դ, վրաց թագավոր - 175
Բագրատունի(ներ) - 4, 6, 7, 11, 12, 19, 21, 23-25, 27, 29-32, 34, 36, 40, 60, 61, 63, 65-67, 69, 70, 72, 80, 81, 83, 84, 86-88, 90, 95, 112-114, 164, 165, 177, 182, 190, 192, 193
Բաթու խան - 134
Բակ Խաղբակյան - 42
Բահրամ- 38
Բաչիր (Բեչիր) - 36
Բասմաջյան Կ.- 41, 46-48, 97
Բասյանք - 66
Բարանով Խ. (ռուս.)- 38
Բարդաղ, գրիչ - 154

Բարդուղիմեոս (Ս. Բարդուղիմեոս)- 48
Բարթիկյան Հ. -29, 84, 160 - 162
Բարխուդարյանց Մ. -62, 110
Բարխուդարյան Ս. - 27, 29, 51, 67, 71, 76
Բարսեղ Ա Անեցի - 176, 184
Բարսեղ (տեր Բարսեղ)- 176
Բարսեղ եպս. Ապիրատյան - 113
Բարսեղյան Հ. - 48, 54, 56, 59, 83, 86, 189
Բեշքեն, որդի Բուրթել Մեծի - 154
Բեշքեն Օրբելյան - 107, 154
Բեսուրթա, թոռ Սահմադինի - 139
Բեր - 36
Բեքրա ղան - 145
Բուբակ - 107-109, 126, 189
Բուղա - 14, 18
Բուղտա (Պուղտա)- 153
Բունիյաթով Զ. - 8
Բուրթել, որդի Էլիկումի - 145, 153
Բուրթել Մեծ Օրբելյան- 153, 154, 157, 158

Գ

Գագիկ Ա Բագրատունի - 23, 27, 29, 40, 60, 69, 70, 76-78, 80, 90, 97
Գագիկ Արծրունի - 48, 61, 66, 86
Գագիկ Բ Բագրատունի - 83, 93, 94
Գագիկ, Գեղարքունիքի գահակալ - 53
Գագիկ, դատավոր - 129
Գագիկ, Դիզակի իշխան - 77
Գագիկ, որդի Գրիգոր Սյունյաց իշխանի - 53
Գագիկ, որդի Սյունյաց Վասակ գահերեցի - 71, 73, 74
Գագիկ, որդի Վասակ իշխանի - 70, 73
Գալստյան Ա. - 124
Գամրիկել - 106, 107
Գայլ Շերբարիք - 119
Գասպարյան Ռ. - 166
Գափոյան Ա. – 140
Գեորգ, հայր սուրբ - 172
Գեորգի Բ, վրաց թագավոր - 117, 175, 177
Գեորգի Գ, վրաց թագավոր- 176, 188
Գեորգի Լաշա - 107, 125, 130
Գեորգի, վրաց թագավոր - 78
Գեչ - 128
Գիորգ (Գևորգ) Պահլավունի - 40
Գյուզալյան Լ. (ռուս.)- 185
Գնթունի(ներ)- 35
Գնունի(ներ) - 35, 43, 87
Գոհար Խաթուն - 103
Գոռ - 37 - 41, 45
Գոռակ - 37
Գրիգոր աղա, Անիի պատրոն - 150
Գրիգոր Ապիրատ - 31, 36, 94
Գրիգոր արքեպս. Ապիրատյան -Պահլավունի -181, 185

Գրիգոր-Արուման (տե՛ս Ա-
րուման)
Գրիգոր Ա, Սյունյաց թագա-
վոր - 169, 170
Գրիգոր Ա Սուփան- 53, 63
Գրիգոր Ատրներսեհյան - 51,
61, 63-66, 173, 178
Գրիգոր Ա Դոփյան - 110, 111
Գրիգոր Բ Դոփյան- 111, 112,
147
Գրիգոր Բ, Սյունյաց թագա-
վոր - 171, 173, 174
Գրիգոր Բ Սուփան-30, 59, 60
Գրիգոր Բ Վկայասեր -45, 84
Գրիգոր Դ Տղա - 177
Գրիգոր-Դերենիկ - 68
Գրիգոր, դաստիարակ Նրջի-
սի - 116
Գրիգոր՝ հայր Դավթի, զորա-
վար Զաքարե ամիրսպասա-
լարի - 186
Գրիգոր Լապաստակյան- 161
Գրիգոր Լուսավորիչ (Ս. Գրիգոր
Լուսավորիչ)- 31, 32, 44, 108
Գրիգոր իշխան, նահատակ-
146
Գրիգոր Խաղբակյան - 99
Գրիգոր Խաչենեցի - 146
Գրիգոր Խուցես - 128
Գրիգոր-Համամ (տե՛ս Գրի-
գոր Ատրներսեհյան)
Գրիգոր Համզե - 45
Գրիգոր, հայոց իշխան - 35
Գրիգոր, հայր սուրբ - 172
Գրիգոր հեջուբ -127, 131, 184
Գրիգոր (Ղարա Գրիգոր, տե՛ս
Գրիգոր Ա Դոփյան)
Գրիգոր Մագիստրոս - 31-33,
36, 37, 41-43, 45, 84, 94
Գրիգոր Մամիկոնյան - 12
Գրիգոր Շոթոռկենց - 119
Գրիգոր, որդի Աբուղամր Ա-
պիրատյանի - 113
Գրիգոր, որդի Հասան Կրո-
նավորյալի (տե՛ս Գրիգոր
Ա Դոփյան)
Գրիգոր, որդի Վախտանգ
Սակռյանի - 110
Գրիգոր, որդի Վահրամ Պահ-
լավունու - 45
Գրիգոր, որդի Վառամա - 34,
35, 45
Գրիգոր Պահլավունի -31, 39,
82
Գրիգոր, Սյունյաց իշխան- 53,
66
Գրիգոր (տեր Գրիգոր), Սյուն-
յաց եպիսկոպոս - 71-73
Գրիգորիկ -75, 76
Գրիգորիկ, որդի Վախտանգի
և Շուշիկի - 174
Գրիգորիս (տեր Գրիգորիս),
առաջնորդ Դաղիվանքի-
109, 110, 174
Գրիգորիս, որդի Հասան Կրո-
նավորյալի - 109
Գրիգորյան Գ. - 40, 50, 55,
63, 67, 73, 79, 89, 102, 107,
118, 143, 144, 169, 170, 174
Գրոտեֆենդ Գ.- 6
Գևորգ Բ Գառնեցի -15, 19,
20, 64, 66
Գևորգ Դ Կոստանդնուպոլ-
սեցի - 46

Գևորգ, հայր Աշոտ մարզպանի - 40, 41
Գևորգ Հավնունի - 61
Գևորգ Մարզպետունի -36, 37, 39, 42, 43, 45
Գևորգ, Սյունյաց իշխան- 73
Գևորգյանց Մ. - 40
Գուրգեն Բագրատունի - 80

Դ

Դավիթ Անհողին-79, 80, 167, 168
Դավիթ Բ Կյուրիկյան - 114, 115, 168
Դավիթ եպիսկոպոս - 53, 54, 57, 73
Դավիթ, զորավար Զաքարե ամիրսպասալարի - 186
Դավիթ (Կեչուտի խաչքարի), - 51, 66
Դավիթ, հայր Մխիթար Փեճարենցի - 129
Դավիթ մարգարե - 114
Դավիթ Շինարար, վրաց թագավոր - 175, 176
Դավիթ, որդի Շոթոռիկի - 119, 186
Դավիթ, որդի Վասակ Ա Կյուրիկյանի - 114
Դավիթ, որդի Տաշրեալի - 127
Դարեհ Ա - 6
Դեմետրե Ա, վրաց թագավոր - 177, 148,
Դեմետրե Բ, վրաց թագավոր - 149, 152
Դեսում Դեսումյան - 118
Դեսումյան(ներ)- 117, 118
Դերենիկ Արծրունի - 15, 86
Դիոսկորոս Սանահնեցի - 168
Դլենյան(ներ) - 117
Դոփ Զաքարյան - 110 -112
Դոփյան(ներ)- 110, 111, 122, 131, 194

Ե

Ելբեկ - 177
Ելտկուզյան(ներ)- 108, 131, 188
Եղիա (տեր Եղիա) - 135
Եղիազարյան Հ. - 28, 32, 34, 44, 77, 98, 100, 176
Երեմյան Ս. - 62, 124
Երզնկյանց Ռ. - 175
Երկաթ, որդի Հովհաննես-Սմբատ թագավորի - 92
Երկաթ Պահլավունի (տե՛ս Ամիր Երկաթ Պահլավունի)

Զ

Զազա Զաքարյան -96, 128, 153-156, 158
Զաքարե Ա ամիրսպասալար - 6, 34, 96-98, 108, 112, 113, 116, 117, 119, 121-127, 133, 134, 151, 152, 156, 157, 178, 180-189
Զաքարե Բ, որդի Շահնշահ Ա-ի - 134, 136, 157
Զաքարե Գ, որդի Շահնշահ Բ-ի - 151-155, 158
Զաքարե Պահլավունի - 113, 127
Զաքարե (իա) Վահրամյան - 96, 117, 131

Զաքարիա Ա Զագեցի -15, 19, 34
Զաքարիա, որդի Ազիզբեկի - 106, 107
Զաքարիա, որդի Վահրամի - 41, 45
Զաքարիա Սարկավագ - 97, 98, 105, 130
Զաքարյան(ներ)- 5, 6, 28, 29, 95-97, 107, 109, 112, 113, 116, 117, 119-123, 126, 127, 129, 132, 133, 135, 136, 140, 143, 150, 151, 154, 156, 169, 175, 177-182, 184, 186-189, 193, 194
Զաքարյան-Վահրամյան (տե՛ս Վահրամյաններ)

Է

Էաչի Պռոշյան - 99, 101-105, 154
Էլիկում Ա (Ալակում) -108, 145
Էլիկում Օրբելյան, որդի Տարսայիճի - 145, 153
Էմին Մ. - 26
Էսուգան - 104, 105

Թ

Թագուդար Ահմադ իլխան - 144, 153
Թագուհի, առաջին կին Ումեկի - 139
Թադևոս (Ս. Թադևոս) - 48
Թաղադամուր, որդի Քարիմադին Ումեկյանի - 140
Թաղիադին Կյուրիկյան - 115
Թաղմութ - 156
Թամար, վրաց թագուհի - 117, 124, 131, 188
Թաջերի, դուստր Ուքանի, կին Ամիր Հասան Ա-ի - 143
Թեոդորա կայսրուհի - 160
Թեոդորոս Զրքին - 98, 157
Թոռնիկ Մամիկոնյան - 45
Թոսունյան Գ. - 20
Թովմա Արծրունի -9, 16, 20, 61, 191
Թորամանյան Թ. - 181

Ի

Իգդիշ խաթուն, դուստր Քարիմադին Ումեկյանի - 140
Իշխան - 184
Իսա իբն Շեյխ - 19, 20
Իսահակյան Տ. - 140
Իսքանդար - 107
Իվանե Ա Զաքարյան - 6, 96-99, 107-110, 112, 113, 116, 117, 121-127, 129, 130, 151, 156, 157, 178, 181-189
Իվանե Բ Զաքարյան-98, 136, 150-152, 157
Իվանե Բ Հասան-Ջալալյան - 157
Իվանե, որդի Բուրթել Մեծի - 154

Լ

Լալայան Ե. – 66
Լանկ-Թամուր - 157
Լեյարդ Հ. - 6
Լեո - 7, 12, 17, 25, 26, 33, 36, 38
Լիկոս - 45

Լիպարիտ Ա Օրբելյան- 107, 108, 130, 142, 147, 188, 189
Լիպարիտ Բ Օրբելյան - 144
Լևոն Գ Հեթումյան - 138

Խ

Խաթուն, դուստր Հասանի - 172
Խաթուն, դուստր Վահրամ հեջուբի - 127, 128
Խաթուն, կին Զաքարե Վահրամյանի - 117, 131
Խաղբակ - 122, 130, 174
Խաղբակյան(ներ) - 32, 36, 99, 101, 103, 105, 108, 110, 113, 118, 119, 121, 122, 125-127, 129, 130, 132, 143, 153, 154, 157, 174, 180, 182, 189, 194
Խաչատրյան Ա. (ռուս.) - 123
Խաչատուր Կեչառեցի -146, 154
Խաչատուր, իշխանավոր- 166
Խաչատուր վարդապետ Տարոնացի - 177
Խաչերյան Լ. - 33, 42
Խաչիկ Ա Արշարունի -28, 47, 48
Խաչիկ Բ Անեցի - 176
Խաչիկյան Լ. - 102
Խաչուտ - 128
Խոշաք, դուստր Ավագ Զաքարյանի - 137, 151, 152
Խոշաք, կին Իվանե աթաբեկի - 121
Խոստրով - 116
Խոսրովանույշ թագուհի - 26, 28, 29
Խորաս Արծրունի- 97, 109, 126
Խորենացի (տե՛ս Մովսես Խորենացի)
Խորիշ խաթուն, կին Արղութ Ումեկյանի - 140
Խորիշահ Զաքարյան, մայր Հասան Ջալալ Դոլայի -112
Խորիշահ Մամիկոնյան, կին Քուրդ Ա Վաչուտյանի- 112, 113, 134
Խուանդ խաթուն - 99
Խուանդգե - 151, 154, 155
Խուդավերդյան Ա. (Պապիկ) - 140
Խութլու Բուղա (Խութլուբուղա) Արծրունի-147-150, 158
Խուշուշ - 69
Խութուխ, որդի Քարիմադին Ումեկյանի - 140

Կ

Կամսարական(ներ)-11,12, 31-33, 35, 43, 44
Կայեն - 74, 134
Կատա, դուստր Գրիգոր Բ-ի - 171, 174
Կատա, քույր Շահանդուխտի - 169, 170
Կատրանիդե Ա թագուհի -13, 20, 51
Կատրանիդե Բ թագուհի - 29, 69, 72, 78, 79
Կարախանյան Գ. - 96, 137
Կարապետ եպս. (Տեր-Մկրտչյան) - 110

Կիրակոս Գանձակեցի - 9, 21, 24, 99, 115, 123, 157, 175, 184
Կիրակոս վարդապետ - 156
Կիրակոսյան Գ. - 110
Կյուրիկե Ա - 167, 168
Կյուրիկե Բ - 109, 114-116, 168, 173
Կյուրիկե Գ - 115
Կյուրիկյան(ներ) - 66, 79, 113, 115, 116, 127, 168, 169
Կոգյան Ս. -143
Կոստանդ կայսր - 33
Կոստանդին Ա Բարձրբերդցի - 134
Կոստանդին Դուկաս - 161
Կոստանդին Ը կայսր - 93
Կոստանյան(ց) Կ. -24, 32, 40, 47, 151, 152, 155
Կրիմսկի Ա. - 64
Կուտկանենք - 118

Հ

Հաբրանց տոհմ (տե՛ս Հաբբենց տոհմ)
Հազարբեկ, որդի Սահմադինի - 139
Հախվերդյան Ս.- 79
Հակոբ Ա Կլայեցի - 138
Հակոբ (տեր Հակոբ), Սյունյաց եպիսկոպոս - 71
Հակոբյան Թ. -15, 48, 54, 56, 59, 71, 77, 78, 83, 86, 189
Հակոբյան Ս.-28, 59, 139, 161
Հակոբյան Վ.- 13, 41, 123
Համազասպ, առաջնորդ Օշականի - 139
Համազասպ եպիսկոպոս -134
Համազասպ Կամսարական-33
Համազասպ Համազասպյան - 115
Համազասպ Մամիկոնյան-33
Համազասպյան-Մամիկոնյաններ - 115, 116
Համամ Ամատունի -86
Համամ Բարեպաշտ Թագավոր (տե՛ս Գրիգոր Ատրներսեհյան)
Համբարձումյան Գ. - 16
Համզե մանուկ - 45
Համլիկ Մամիկոնյան - 116
Հայկ - 63
Հաջի բեկ - 155, 156
Հասան, ամուսին Մամքանի - 172
Հասան Ապիրատյան - 36
Հասան Արծրունի (Մահկանաբերդի) - 97
Հասան Գեռաքարեցի, Սյունյաց Թագավոր-171, 174, 175
Հասան Գնթունի -34, 36, 40, 61
Հասան Դեսումյան- 117
Հասան Դոփյան -110, 111, 113, 136, 147
Հասան Բ Դոփյան - 157
Հասան, զորական - 90, 91
Հասան Կրոնավորյալ Հաթերքեցի -109, 111, 173, 178
Հասան Համազասպյան -115
Հասան, հայր Պարսիմոյի-129
Հասան, որդի Կորի -73
Հասան, որդի Խաղբակի- 174
Հասան, որդի Վախտանգ Խաչենեցու- 111, 112, 171-173, 177

Հասան, որդի Վախտանգ Սակռ-
յանի - 110, 184
Հասան, պապ Ջալալ Դոլայի
- 136
Հասան Ջալալ Դոլա-112, 118,
131, 135, 136, 140, 142,
147, 172, 174
Հասան, Սյունյաց մեծ իշ-
խան - 171
Հասան-Ջալալյան(ներ) - 112,
146, 194
Հասանյան- 31
Հասրաթյան Մ. - 59, 100
Հավնունի, դավադիր իշխան
- 61
Հավնունի(ներ)- 43, 60, 61, 192
Հարբենց տոհմ - 118
Հարությունյան Ա.- 100
Հարությունյան Բ.-70, 74, 76
Հարությունյան Ս. - 81, 122,
130
Հեթում Ա թագավոր-134, 135
Հեթումյան(ներ)- 31, 42
Հերակլ Հավնունի -60, 61
Հիսուս Քրիստոս- 40, 104,
182, 189
Հիսե (տե՛ս Իսա իբն Շեյխ)
Հովասաբ - 104
Հովասաբ (առաջնորդ Հաղ-
բատի) -108
Հովասաբ (առաջնորդ Հայ-
բավանքի) - 108
Հովհան - 172
Հովհաննես (տե՛ս Աբաս թա-
գավոր)
Հովհաննես (Անիի պատրոն)
- 150
Հովհաննես Առանշահիկ - 65
Հովհաննես Ե Դրասխանա-
կերտցի - 9, 19, 20, 23, 35,
36, 39, 42, 191
Հովհաննես եպիսկոպոս- 51,
149
Հովհաննես, հայր Ջումայի -
182
Հովհաննես, որդի Դոփի -111
Հովհաննես-Սմբատ Բագրա-
տունի -27, 29, 41, 83, 92-
94
Հովհաննես վարդապետ Մուղ-
նեցի - 105
Հովհաննիսյան Ա. -23, 140,
148
Հովհաննիսյան Մ. - 59
Հովսեփյան Գ. (Գարեգին Ա
կաթողիկոս)-27, 32, 36, 47,
99, 102-104, 106, 107, 110,
111, 113, 119, 121, 125-127,
139, 142, 174, 180, 182, 189
Հռիփսիմե - 48
Հռիփսիմյանք (Ս.Հռիփսիմ-
յանք) - 128
Հրահատ Կամսարական -11
Հրահատ, որդի Գրիգոր Ա
Սուփանի - 53
Հրահատ, որդի Սահակի, տեր
Գեղարքունիքի -53
Հրահատ, որդի Սահակի, տեր
Կովսականի -50, 52, 54-56
Հրահատ, իշխանաց իշխան,
որդի Սյունյաց Գրիգոր իշ-
խանի - 53, 54, 67
Հրանուշ Կյուրիկյան- 168
Հուդա -74, 82, 92, 134
Հուլավու իլխան- 138, 143, 145

Հուստինիանոս Ա կայսր- 31, 34, 42
Հուստինիանոս Բ կայսր - 11

Ջ

Ջագիկյան(ներ) - 50, 78
Ջորոգետացիք - 66

Ղ

Ղազան իլխան - 151
Ղազարյան Ռ. - 163
Ղազարոսյան Ա. - 15
Ղամբ - 37, 38
Ղարա Գրիգոր (տե՛ս Գրիգոր Ա Դոփյան)
Ղարասլան - 126
Ղարիբ Պահլավունի-113, 184
Ղաֆադարյան Կ. -13, 16, 27, 31, 34, 87, 88, 96, 98, 99, 105, 106, 114, 115, 117, 119, 128, 130, 133-135, 138, 148, 151, 152, 168, 174, 175, 186, 188
Ղուկաս վանահայր - 114

Ճ

Ճար - 139, 142
Ճուճա - 127

Մ

Մաթևոսյան Ա. (ռուս.) -89
Մաթևոսյան Կ. -11, 12, 24, 30, 31, 34, 36, 40, 41, 94, 96, 100, 105, 152
Մաթևոսյան Ռ.- 21, 30, 34, 83, 113
Մալխասյանց Ստ.- 88, 162
Մահևան -73
Մահևանյան(ներ) - 118
Մամա թագուհի - 109, 173
Մամա խաթուն, երկրորդ կին Սահմադինի -139
Մամա տիկին (Մամախաթուն), երկրորդ կին Ումեկի - 141-142
Մամեդովա Ֆ. - 8
Մամիկոնյան(ներ) - 11, 12, 33, 35, 115, 116
Մամքան, դուստր Բաղաց թագավորի, կին Հասան Ջալալ Դոլայի - 136, 142, 172-175
Մամքան թագուհի, դուստր Կյուրիկեի - 116
Մամքան, կին Հասանի - 172
Մամքան, կին Հասան Դոփյանի - 111-113
Մամքան, կին Մարծպան Համազասպյանի - 116, 134
Մամնա, դուստր Սարգիս Համազասպյանի - 117
Մանանդյան Հ. - 28, 29, 84, 87, 88, 97, 121, 122, 124, 129, 140, 160
Մանգու խան - 118, 134, 138
Մանդրուտ - 109
Մանուչար - 100
Մանուչարյան Ալ.- 41, 69, 185
Մանուչարյան Աշ. - 40, 70, 81, 84, 90, 92, 101, 104, 106, 124, 140, 148, 157, 180, 183
Մանուչե - 165, 166, 176
Մաշտոց Ա Եղիվարդեցի - 18
Մառ Ն. - 16
Մասուդա աղ-Դունյա - 167

Մատթեոս Ուռհայեցի - 9, 29, 37, 41, 69, 78, 79, 83, 84, 93
Մարգարյան Հ. - 25 -27, 166
Մարզպետունի(ներ)- 36, 39, 44
Մարիամ (Աբխազաց և Հայոց թագուհի) - 28
Մարիամ իշխանուհի - 15, 18, 30
Մարծպան Համազասպյան - 116, 134
Մարտիրոս եպիսկոպոս - 105
Մելիք-Ադամյան Մ. - 29
Մելիք Աշրաֆ (տե՛ս Աշրաֆ ալ-Զոբանի)
Մելիք-Բախչյան Ստ. - 48, 54, 56, 59, 83, 86, 189
Մելիք-Կարապետյան Մելիք Թանկի - 88, 89
Մելիք-Շահնազարյաններ - 110
Մելիք-Օհանջանյան Կ. - 24
Մելիքշահ սուլթան - 165
Մելիքսեթ-Բեկ Լ.- 15, 124, 131
Մելքոնեան Յ. (Մելքոնյան Հ.) - 78
Մեսրոպ եպիսկոպոս - 26
Մեսրոպ երեց Վայոցձորեցի - 42
Մինա խաթուն, երկրորդ կին Տարսայիճ Օրբելյանի - 142, 147
Մխարգրձել Զաքարյան- 96, 149, 151-153, 157
Մխիթար Այրիվանեցի- 9, 26, 65, 99, 123, 177
Մխիթար Անեցի - 9, 28, 97
Մխիթար Գոշ - 8, 115
Մխիթար Կուրտյան - 161
Մխիթար, որդի Գրիգոր Խուցիսի -128
Մխիթար, վարդապետ Նոր Վարագավանքի - 114
Մխիթար, վարդապետ Մրենի - 137
Մխիթար Փեճարենց, որդի Դավթի - 128
Մխիթարիչ -128
Մնացականյան Ստ. - 51
Մովսես Դասխուրանցի - 9, 33, 62
Մովսես Խորենացի - 43, 48
Մովսես Կաղանկատվացի-33, 63, 64, 66
Մովսիսյան Ղ. - 115
Մութաուաքիլ -14
Մութամիդ - 14, 20
Մուհթադի - 14
Մունթասիր -14
Մուշեղյան Ե. - 155, 156
Մուսթային -14
Մուրադ վարպետ -106
Մուրադյան Պ. - 109, 152, 153, 182
Մուրացան - 36

Յ

Յիսէ (տե՛ս Իսա իբն Շեյխ)
Յոհան (տե՛ս Հովհան)
Յովասաբ (տե՛ս Հովասաբ, առաջնորդ Հայրավանքի)
Յովսէփեանց Գ. (տե՛ս Հովսեփյան Գ.)

Յուդա (տե՛ս Հուդա)
Յուզբաշյան Կ. - 21, 27
Յուստի - 43
Յուստինիանոս Բ (տե՛ս Հուս-տինիանոս Բ)
Յուսուֆ (Յուսուֆ իբն Աբու Սաջ Դևդադ) -23, 24, 26, 30, 34, 35

Ն

Նանա Զաքարյան- 87, 113, 114
Նաջմադին Ուքանյան - 117
Նասր Դոլա - 112
Ներսեհ Կամսարական - 11
Ներսես (առաջնորդ Հայրա-վանքի) - 108
Ներսես Ե Աշտարակեցի - 89
Ներսես Մեծ - 42
Ներսես Շնորհալի -31, 39, 41, 42
Ներսիսյան Մ. -15
Նիկիտ - 19
Նիկողայոս Դ պապ - 138
Նրջիս Զաքարյան - 116
Նրջիս, դուստր Հասանի -172

Շ

Շադդադյան(ներ)- 80, 123, 165-167
Շահանդուխտ Ա, Սյունյաց Թագուհի -71
Շահանդուխտ Բ, Սյունյաց Թագուհի - 169, 170
Շահանդուխտ, քույր Սևադա Նահատակի -146
Շահառունենք - 118
Շահարմեններ - 188
Շահինյան Ա. - 51, 115, 182
Շահխաթունյանց Յ. (Հ.)- 46-48, 110, 121, 128, 134, 137, 152
Շահնազարյան Ա. - 97
Շահնշահ Ա Զաքարյան - 97, 98, 113, 116, 122-125, 127,
133, 134, 136, 137, 150-152, 157, 180, 185, 189
Շահնշահ Բ Զաքարյան- 96, 119, 148, 150-152, 154, 155, 158
Շահնշահ Գ Զաքարյան- 154 -158
Շահսուվարյան Լ. (ռուս.)-89
Շամպոլյոն Ժ. - 6
Շամս ադ-Դին ալ-Ջուվեյնի սահիբ ադ-Դիուան - 137, 151
Շապուհ Ամատունի - 86
Շապուհ Բագրատունի -9, 26, 86, 192
Շապուհ Բագրատունի սպա-ռապետ - 29, 30
Շեյխ Հասան - 154
Շոթոռիկ - 119, 186
Շուշան - 11, 45, 49
Շուշան Թագուհի - 46
Շուշիկ, դուստր Գրիգոր Բ Սյունյաց Թագավորի - 174

Ո

Ոսկյան Հ. – 47, 48
Ովասաբ (տե՛ս Հովասաբ)

Զ

Զամչյան(ց) Մ. -25, 36, 37, 39, 123

Զեսար Օրբելյան - 157
Զոբանյաններ - 157

Պ

Պալունի(ներ) - 32, 42
Պահլավունի(ներ)- 30-33, 35-37, 39, 41-45, 83, 84, 93, 113, 153, 164, 185, 191, 192
Պահլավունի-Ապիրատյան-ներ (տե՛ս Ապիրատյաններ)
Պապաք Պռոշյան- 99
Պարսիմո, որդի Հասանի- 129
Պետրոս Ականատես - 182
Պետրոս Գետադարձ -83, 84, 92
Պետրոսյան Հ.- 52, 56, 128, 129, 137
Պետրոսյան(ց) Տ. (Վ.)- 35, 98, 180, 181
Պողոսյան Ս.- 14, 15, 28, 59, 97, 160
Պռոշ Խաղբակյան- 99, 100, 103-105, 129, 130, 143, 154
Պռոշյաններ (տե՛ս Խաղբակ-յաններ)

Ջ

Ջալալ ադ-Դին - 114-132
Ջալալ Դոլա (տե՛ս Հասան Ջալալ Դոլա)
Ջալալ, որդի Աթաբեկ Հա-սան-Ջալալյանի - 147
Ջալալ Օրբելյան - 144
Ջալալյանց Ս. - 76
Ջաղել հեջուբ - 128
Ջանփոլադյան Հ.- 7, 139, 148
Ջումա, որդի Էաչի Պռոշյանի - 154
Ջումա, որդի Հովհաննեսի- 182

Ռ

Ռաուլինսոն Հ. - 6
Ռոմանոս Գ կայսր - 93
Ռուստամ Օրբելյան - 107
Ռուքն ադ-Դին - 167

Ս

Սադուն Արծրունի -97, 126, 127, 143, 148, 149, 152, 153, 157
Սալահ ադ-Դին ալ-Այուբի- 8
Սակռյաններ - 110
Սահակ, հայր Հրահատի 53-55, 59, 60
Սահակ, հայր Սյունյաց Սմբատ Թագավորի - 66, 71, 72, 74
Սահակ Սևադա - 71, 178
Սահակ Հիզանցի - 106
Սահակ Պարթև - 38, 42, 44
Սահակ (Սյունյաց կարծեցյալ թագավոր) - 79
Սահակյան Տ. -79, 169
Սահիբ Դիվան (տե՛ս Շամս ադ-Դին սահիբ ալ-Ջուվեյ-նի ադ-Դիուան)
Սահլ իբն Սումբատ - 56, 63, 65
Սահմադին Սենոպ - 137-139
Սաղումյան Ս. - 27, 96, 100, 181, 187
Սամուել Անեցի - 9, 26

Սասանյան - 24
Սասնա Արծրունի (Մահկանաբերդի)- 97
Սարգիս - 51
Սարգիս Ա Սևանցի - 62, 69
Սարգիս Արտավազդյան- 161
Սարգիս Զաքարյան - 69, 88, 112, 116, 178, 181, 182, 188, 189
Սարգիս (տեր Սարգիս), Հաղբատի առաջնորդ - 168
Սարգիս Համազասպյան- 115, 117, 186
Սարգիս, նահատակ -164
Սարգիս Վաչուտյան - 98
Սարգիս, որդի Ապիրատի - 113
Սարգիսյան Ն. - 93, 124
Սարգսյան Գ. - 114, 128
Սարգսյան Գ. Գ. - 31, 81, 85, 88, 94, 125-127, 139, 155, 156, 184
Սարգսյան Լ. - 29
Սբուկ ոստիկան - 23
Սեղա Պահլավունի - 41, 45
Սենեքերիմ Դեսումյան - 118
Սենեքերիմ, Սյունյաց թագավոր-72, 73, 169-171, 173
Սենեքերիմ, Վասպուրականի թագավոր - 69
Սերոբ, իշխանավոր - 166
Սիթի - 185
Սիմեոն վանական - 16, 17
Սիմեոն վարդապետ Այրիվանեցի - 107
Սմբատ, Արևիքի գահակալ- 57, 58, 191
Սմբատ Ա Բագրատունի -20, 26, 27, 30, 34, 35, 39, 61, 65-68, 73, 86, 192
Սմբատ Ա Կյուրիկյան - 168
Սմբատ Բ Բագրատունի 24-28, 40, 69, 72, 192
Սմբատ, եղբայր Սյունյաց Գրիգոր Բ թագավորի - 171, 173
Սմբատ Լիպարիտյան - 145
Սմբատ Խաչենեցի - 172
Սմբատ Համազասպյան- 115, 186
Սմբատ, հայր Նաջմադինի - 117
Սմբատ, հայր Տուրքի - 127
Սմբատ (Հոռոմոսում հիշատակված) - 184
Սմբատ Մագիստրոս - 40, 45
Սմբատ Շոթոռկենց - 119
Սմբատ, որդի Աշոտի՝ Սյունյաց իշխանի - 77, 88
Սմբատ, որդի Աշոտիկի՝ Սյունյաց իշխանաց իշխանի - 88
Սմբատ, որդի Վախտանգ Խաչենեցու - 112, 131
Սմբատ, որդի Վախտանգի և Շուշիկի - 174
Սմբատ, Սյունյաց թագավոր, որդի Սահակի - 66, 70-74
Սմբատ, Սյունյաց թագավոր, որդի Վասակի - 66, 70, 71, 73, 76-79
Սմբատ, Սյունյաց գահերեց- 68
Սմբատ, Օձունում հիշատակվող - 152

Սմբատ Ուքանյան - 117
Սմբատ Օրբելյան - 130, 142-145, 153
Սմբատյանց Մ. - 48
Սմիթ Ջ. - 6
Սոկրատ - 11
Սողոմոն, Մեծիրանց եպիսկոպոս - 50, 65
Սողոմոն, Սյունյաց եպիսկոպոս - 53, 57
Սոփի, Աղվանից թագուհի - 170
Սոփի, դուստր Աշոտ Գ-ի- 23, 27
Սոփի, դուստր Դերենիկ Արծրունու, Սյունյաց իշխանուհի - 68
Սոփի, դուստր Տիգրան Անձևացու - 35
Սպրամ - 63
Ստեփանոս, Աղվանից կաթողիկոս - 170
Ստեփանոս եպիսկոպոս - 123
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ-9, 22, 25, 27, 72, 77, 84
Ստեփանոս Օրբելյան- 9, 15, 18, 20-22, 50, 51, 53-55, 57-59, 62, 65-67, 70-74, 78, 79, 102, 107, 123, 126, 130, 142, 144-146, 170, 171, 173, 174, 188, 189, 192
Սուսե - 51
Սուքիաս - 177
Սևադա թագավորազն -169, 170
Սևադա Դեսումյան - 118
Սևադա, եղբայր Շահանդուխտի - 146

Վ

Վախտանգ թագավորազն Սակոյան - 110, 112
Վախտանգ Տանգիկ Խաչենեցի - 111, 112, 131, 136, 172, 177
Վախտանգ, որդի Ումեկի-142
Վախտանգ Սակո- 109, 173, 174
Վախտանգյան(ներ)-111, 122, 131, 132, 173, 184
Վախտանգյան-Սակոյան 65, 122, 173
Վահան Ա Սյունի - 42, 50, 70, 73, 74
Վահան Հավնունի - 61
Վահրամ Բ Վկայասեր (տե՛ս Գրիգոր Բ Վկայասեր)
Վահրամ Բագնայրեցի - 41, 45
Վահրամ Գագեցի - 126, 131
Վահրամ Դոփյան - 157
Վահրամ դուքս (տե՛ս Գրիգոր Բ Վկայասեր)
Վահրամ Զաքարյան- 153, 155, 158
Վահրամ Հեջուբ - 127, 128
Վահրամ (Վառամ) նահապետ - 45
Վահրամ Պահլավունի-31, 35, 39-42, 44, 45, 83, 94, 164
Վահրամ Ուքանյան - 117
Վահրամյան(ներ)- 97, 117, 121, 131
Վանական վարդապետ Տավուշեցի - 115

Վանենի, դուստր Սադուն Արծրունու - 152, 153
Վանենի-Նանա (տե՛ս Նանա Զաքարյան)
Վաչե Ա Վաչուտյան- 34, 97, 98, 122, 130, 133, 134
Վաչե Բ Վաչուտյան- 98, 182
Վաչուտյան(ներ)- 98, 107, 118, 121, 122, 130, 132, 181, 194
Վասակ Ա Կյուրիկյան, որդի Կյուրիկե Բ-ի - 114, 115
Վասակ Ապիրատյան -36, 45
Վասակ Բ Կյուրիկյան, որդի Դավթի -114, 115, 127, 169
Վասակ Գաբուռ - 53
Վասակ դուքս (տե՛ս Վասակ, որդի Գրիգոր Մագիստրոսի)
Վասակ Իշխանիկ -15, 66, 67, 192
Վասակ Խաղբակյան- 99, 122, 130, 131, 175, 188, 189
Վասակ, հայր Սյունյաց Սըմ-բատ թագավորի- 66, 70, 71, 73, 75
Վասակ Հոլում- 41, 45, 82, 83, 90, 164
Վասակ, որդի Գրիգոր Մա-գիստրոսի - 45
Վասակ, Սյունյաց թագավոր- 29, 69, 71-74, 78, 79
Վասակ, Սյունյաց նահա-պետ- 50, 54, 58, 59, 63
Վասիլ Ա կայսր - 19, 21, 22
Վասիլ Բ կայսր - 92, 93
Վարազ, Սյունյաց հազարա-պետ - 88
Վարդ - 129
Վարդան Արևելցի- 9, 13, 19, 21, 28, 40, 78, 79, 115, 123, 146, 179, 180, 182, 185-188, 192
Վարդան Ումեկյան - 139
Վարդանյան Ռ.- 69, 70, 161-163
Վարդանյան Վ. -32, 42, 84
Վեստ Սարգիս - 86, 93, 94
Վլադիսլավ, Բուլղարիայի թագավոր - 160

Տ

Տաշրեկ, հայր Դավթի - 127
Տարսայիճ Օրբելյան -111, 130, 131, 144-147, 149, 153, 158
Տեր-Ղազարյան Կ. - 135
Տեր-Ղևոնդյան Ա.- 12, 24-26
Տեր-Մինասյան Ե.- 41, 96, 180, 182
Տեր-Միքայելյան Ն. - 29
Տեր-Միքելյան Ա. - 26
Տեր-Մկրտչյան Գ. -26
Տեր-Մկրտչյան Կ. - 110
Տեր-Մկրտչյան Մխ. - 180
Տիգրան- Աբլղարիբ - 45
Տիգրան Անձևացի - 35
Տիգրան, գործակալ Զաքարե ամիրսպասալարի - 184, 186
Տիգրան Հոնենց- 5, 120, 124, 185
Տիգրան Մեծ - 37
Տրդատ ճարտարապետ - 25
Տրդատ Մեծ - 43
Տուղրիլ սուլթան - 167
Տուրք, որդի Սմբատի - 127

Ց

Ցողիկ - 79

ՈՒ

Ուլթմազյան Հ. - 50, 53-55, 57, 59, 67, 74
Ուլուբաբյան Բ. - 7, 63-65, 110, 118, 135, 172, 173
Ումեկ - 139-142
Ումեկյան(ներ) - 120
Ուրտուրիտա, առաջին կին Սեռոպ Սահմադինի - 137, 139
Ուքան Ուքանյան - 117, 143
Ուքանյան(ներ)- 116

Փ

Փատլուն (Ֆաղլուն) Շադդադյան - 165, 166, 171, 176
Փավստոս Բուզանդ - 87
Փեհլևի -42
Փիլիպե Ա - 50, 53, 54, 63
Փիլիպե Բ - 50
Փիլոն - 11
Փիրուզյան Ս. (ռուս.) - 89
Փոտ (Փոտիոս)- 13

Քաղ

Քալանթար Ա. - 28, 49
Քալանթարյան Ա. - 96, 137
Քաջբերունի (Հովհաննիսյան Գաբրիել) - 76
Քարամ ադ-Դին - 167
Քարիմադին - 137
Քարիմադին Ումեկյան - 140
Քափիկ - 127
Քեյ- Սուլթան - 185
Քեյդաթու իլխան - 139
Քուպղիդուխտ - 54, 55
Քուրդ Արծրունի (տե՛ս Ամիր Քուրդ Արծրունի)
Քուրդ Ա Վաչուտյան- 98, 112, 113, 130, 133, 134
Քուրդ Բ Վաչուտյան - 98
Քուրդ հազարապետ - 85, 86, 89, 90
Քուրդ Համազասպյան - 115

Օ

Օրբելի Հ. - 11, 23, 24, 28, 32, 35, 44, 84, 101, 113, 137, 164, 181, 185
Օրբելի տոհմ - 107, 108
Օրբելյան(ներ)-102, 107, 108, 118, 121, 122, 130, 132, 142-145, 153, 154, 174, 194
Օրմանյան Մ. - 41, 79, 83, 84, 86, 89, 124

Ֆ

Ֆախր ադ-Դին Շադդադյան - 123, 165, 166
Ֆիրդուսի - 38

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբգավանք - 51
Աբխազիա - 23
Ագարակ - 115
Ագուլիս - 68
Ազատ - 145
Ազիզբեկովի շրջան -51, 77
Ալաշկերտ (Աղաշկերտ)- 26
Ալարեքս գետակ- 115
Ալդարա - 54
Ալ(ղ)եքսանդրոպոլ (տե՛ս Գյումրի)
Ալվանք - 54
Ախթալա- 133
Ախուրյան գետ- 25
Ական -111, 189
Ականաբերդ -189
Աղահեճք - 76,77
Աղավնո գետ- 64, 144
Աղբերիս - 108
Աղորինք - 26
Աղջկաբերդ (Անիում)- 121
Աղջոց վանք - 126
Աղստև - 183
Աղվանք-19, 23, 26, 33, 51, 62-66, 72, 77, 80, 109, 131, 147, 169, 170
Ամաղու - 149
Ամբերդ (Անբերդ) - 97-99, 122, 130, 157, 167, 179, 181-183, 187, 189
Ամբերդաձոր - 41, 96, 180
Ս.Ամենափրկիչ եկ. (Սանահրնում)- 149
Այրարատ - 11, 14, 34-36, 46, 57, 61, 70, 76, 86, 96, 102, 107, 122, 130, 132, 134, 143, 155, 157, 186-188
Այրիվանք - 121, 124, 134
Անապատ վանք (Արցախում)- 135
Անապատ վանք (տե՛ս Նոր Վարագ)
Անդրկովկաս - 132
Անթիլիաս - 27, 32, 33, 135
Անի - 23, 25-27, 32, 37, 40, 41, 59, 69, 70, 72, 78-80, 83-86, 96, 97, 113, 120, 121, 123-125, 128, 132, 134, 136, 139, 144, 148, 151, 153, 155, 159-162, 164-167, 176, 179-181, 183, 184, 189
Անձախիճոր - 86
Անտառուտ - 98, 182
Անտիոք - 45
Աչնակ - 97, 181
Աշտարակ-27, 96, 100, 181, 187
Ապահունիք - 26
Առան - 23
Առաջաձոր - 55, 136
Առաջավոր Ասիա - 44, 95
Ս. Առաքելոց եկ. (Անիում)- 134, 151

Ս. Առաքելոց վանք (Իջևանի տարածաշրջանում)- 144, 148
Առբերան - 26
Առինջ - 108
Ասկերան - 63
Ասորեստան - 6
Աստապատ – 47, 48
Ս. Աստվածածին եկ. (Անտառուտում)- 182
Ս. Աստվածածին եկ. (Բարձրաքաշում)- 116
Ս. Աստվածածին եկ. (Բըջնիում)- 154
Ս. Աստվածածին եկ. (Դարբասում)- 147
Ս. Աստվածածին եկ. (Դիլիջանում)- 183
Ս. Աստվածածին եկ. (Թալինում) - 11, 16
Ս. Աստվածածին եկ. (Կոթիում)- 59, 144
Ս. Աստվածածին եկ. (Հացառատում) - 51
Ս. Աստվածածին եկ. (Հերհերում) -145
Ս. Աստվածածին եկ. (Մաղարդավանքում) - 48
Ս. Աստվածածին եկ. (Մարմաշենում) - 181
Ս. Աստվածածին եկ. (Նոր Գետիկ վանքում)- 8, 127, 139
Ս. Աստվածածին եկ. (Նոր Վարագ վանքում)- 127
Ս. Աստվածածին եկ. (Սանահնում) -148, 152, 186
Ս. Աստվածածին եկ.(Վահանավանքում)- 169
Ս. Աստվածընկալ վանք- 118
Ավան - 96, 147, 148
Ավարայր - 42
Ավետարանոց -64
Ատրպատական -19, 30, 34, 67, 90, 138, 155, 183, 188, 194
Արաբիա - 14, 19
Արագած - 89, 97
Արագածոտն- 11, 35, 96, 100, 130, 134, 151, 154, 166, 178-184, 186, 187
Արամոս - 60
Արայի լեռ - 119, 164
Արատես -99, 130, 131, 143, 189
Արարատյան դաշտ - 180, 181
Արաքս գետ - 46, 48, 61, 77, 97, 144, 188
Արգինա - 40, 41
Արդաբիլ - 188
Արզական - 184
Արիտ - 171
Արծիվ գյուղ - 53
Արծվանիստ - 144
Արճեշ - 188
Արմինիա - 13, 16
Արշարունիք - 11, 12, 43, 186
Արտազ - 86
Արտանիշ - 125
Արտավազա վանք - 87
Արուճ - 11, 30, 33, 34, 62, 89, 96, 120, 152, 191

Արփա ավան- 108, 118
Արփա գետ - 67
Արցախ - 8, 50, 51, 54, 56, 62, 64, 65, 70, 71, 77, 95, 109, 110, 117, 131, 133, 135, 136, 147, 167, 169-171, 177, 178, 182-184, 189, 192-194
Արևելք - 52, 121, 123, 166, 182, 193
Արևիք - 26, 56-59, 107,191
Արևմուտք - 8
Ափկես- 51-53, 55, 56, 58, 191

Բ

Բաբելոն - 6
Բագարան -30, 124, 129, 186
Բագնայր – 40, 41, 97, 113, 121, 126, 127, 129, 186
Բագրևանդ - 12, 188
Բակտրիա - 43
Բահլ- 43
Բաղաբերդ - 78, 171, 174
Բաղդադ - 143
Բաղք (Բաղաց գավառ) - 26, 50, 54, 70, 71, 78, 107, 171-175, 193
Բասեն - 26, 61, 178, 187
Բարգուշատ- 108, 130, 131, 175, 188, 189
Բարձրաքաշ - 116
Բերդաձոր - 62
Բերդկաներեչի - 53, 73
Բելուական -184, 190
Բեհեսթուն - 6
Բղեն - 188
Բյուզանդիա - 18, 19, 21, 32, 61, 69, 84
Բյուրական - 41, 181
Բոլորաբերդ - 99
Բորոտան - 188
Բջնի -35, 96, 121, 130, 137, 154-157, 186, 187, 189, 194
Բռնակոթ - 88

Գ

Գագ -96, 97, 117, 121, 131, 184
Գանձակ -80, 131, 165, 167, 170, 171, 178, 183, 184
Գանձասար - 104, 111, 131, 135, 136, 142, 147, 171, 172, 177
Գառնի - 13, 15, 20, 28, 51, 59, 99, 128-131, 137, 175, 189-191
Գավազանք -189
Գավառ (Արագածոտնում)- 34
Գավառ (Գեղարքունիքում)- 61
Գարդման- 70, 96, 117, 131
Գեղամա երկիր - 8, 63, 70, 110, 192
Գեղայո (Քեղի) - 36
Գեղարդավանք - 189
Գեղարքունիք - 29, 30, 50, 51, 53, 59-63, 96, 100, 102, 104, 107, 108, 143, 144, 184, 188, 192
Գեռաքար - 99, 174, 177
Գլաձոր - 104, 154

Գհուկ-Բոլորահարի վանք- 127
Գյումրի - 32, 40, 91, 124, 182
Գնդեվանք - 68
Գողգոթավանք - 116
Գողթան գավառ - 46
Գոմեր - 119
Գոշավանք - 131, 138
Գորիս - 71, 73
Գտչավանք - 132
Ս. Գրիգոր եկ. (Անիում) - 120
Ս. Գրիգոր եկ. (Բռնակոթում) - 88
Ս. Գրիգոր եկ. (Դափուց վանք) - 60
Ս. Գրիգոր եկ. (Կեչառի-սում) - 125
Ս. Գրիգոր եկ. (Հաղարծ-նում) - 177
Գրիգորիոպոլ - 89
Գուգարք - 70, 79, 84, 133, 160, 163, 167
Ս. Գևորգ եկ. (Մաղարդա-վանքում) - 48
Ս. Գևորգ եկ. (Մուղնի)- 100, 105

Դ

Դաղիվանք - 109, 111, 112, 173, 174, 177
Դամասկոս - 143
Դաշտադեմ-28, 51, 96, 166, 167
Դաստակերտ - 136, 150
Դարաբաս -130, 147
Դարաշամբ (տե՛ս Շամբ)
Դարատափ - 54
Դեբեդ - 115
Դերբենդ - 144
Դիզակ - 77
Դիլիջան - 133
Դոնի Ռոստով - 89
Դսեղ - 96, 115, 116, 133
Դվին- 26, 76, 77, 96, 125, 130, 164, 167, 186, 187

Ե

Եգիպտոս - 6, 8, 14, 84, 106, 144-146
Եղբայրիկի բուրգ - 125
Եղեգիս -50, 59, 77, 107, 143, 154
Եղեգյաց ձոր - 99, 189
Եղեգնաձոր - 51
Եղվարդ - 119
Երազգավորս - 41
Երասխ (տե՛ս Արաքս գետ)
Երասխաձոր - 130
Երերույք – 91, 92
Երնջակ - 26, 48
Երուսաղեմ - 8, 33
Երևան -6, 7, 11-13, 15, 16, 20, 21, 23-25, 27-29, 31, 32, 34, 37, 40-43, 48, 50-52, 54, 56, 59, 64, 71, 76, 77, 79, 84-88, 97-100, 102, 105, 107, 109, 114, 120, 122-124, 135, 138, 148, 155, 161, 163, 169, 171, 180-183
Եփրատ - 132

Զ

Զանգեզուր - 89

Զանգելան - 171
Զորաց տաճար (Վայոց ձոր-ում) - 142
Զվարթնոց - 89

Է

Էջմիածին - 26, 41, 46, 89, 100, 105, 107, 110

Թ

Թալին- 11, 16, 85, 86, 88, 89, 96, 137, 166, 192
Թաղամայրի (Թաղամիր) - 58
Թանատի (Թանահատի) վանք - 125, 129
Թավրիզ - 138, 188, 189
Թեժառույք - 109
Թեղենյաց վանք - 88
Թերեք - 145
Թիֆլիս (տե՛ս Տփխիս)
Թոս - 56, 58

Ի

Իբերիա - 23
Իզմաիլյան - 89
Իմերեթ -76
Իշխանավանք - 104
Իջևան - 7, 118, 144, 148, 150, 168
Իրաք - 138

Լ

Լ. (ռուս. տե՛ս Լենինգրադ, տե՛ս Սանկտ-Պետերբուրգ)
Լամբրոն - 31, 42
Լաչին - 64
Լենինական (տե՛ս Գյումրի)
ԼՂՀ - 21, 63, 77
Լմբատ(ավանք)- 113, 176
Լոռի- 27, 96, 109, 119, 168
Լոս Անճելես (Լոս Անջելոս) - 33

Խ

Խաղարի (Խաղայի) վանք- 111, 147
Խաղտիք - 86
Խանբերդ - 135
Խաչեն - 27, 63, 64, 77, 99, 109, 111, 112, 118, 122, 135, 136, 142, 147, 157, 171-174, 178, 184, 189
Խաչենաբերդ - 109
Խաչի ձոր – 81, 82, 192
Խլաթ -26, 167, 188, 189
Խծկոնք - 93, 119, 124, 125, 186
Խոխանաբերդ - 135
Խոյ -86
Խոյախան բերդ -111, 135, 136
Խոտ - 54
Խորանաշատ - 115
Խորասան-70, 114, 132, 144
Խրամ - 115
Խփչախք (Խազրաց դաշտ) - 145

Ծ

Ծածարդ - 74
Ծաղկոտն - 115
Ծաղկոցաձոր - 25

Ծաղկունյաց - 31
Ծար- 62, 110-112, 132, 157, 184
Ծիրանավոր եկ. (Աշտարակում) - 27, 181, 187
Ծիրանավոր եկ. (Փարպիում) - 90, 179-181
Ծղուկ - 54, 70, 71, 73, 74, 76-78, 107, 171
Ծոբ - 117

Կ

Ս. Կաթողիկե եկ. (Երևանում)- 138
Ս. Կաթողիկե եկ. (Թալինում)- 85, 89, 192
Ս. Կաթողիկե եկ. (Հաղարծնում)- 183
Ս. Կաթողիկե եկ. (Մարմաշենում) - 185
Կայան (Կայեն) – 96, 97, 118, 189
Կայծոն - 189
Կապան - 50, 55, 78, 170
Կաչաղակաբերդ - 64
Կասպից ծով - 133, 138
Կավակերտ - 53
Կատարո վանք - 64
Կարակորում -106, 134, 143
Ս. Կարապետ եկ. (Երնջակում) -48
Ս. Կարապետ (Նորավանքում) - 108, 145
Ս. Կարապետ եկ. (Սևանի թերակղզում)- 15
Կարբի - 98
Կարին- 61, 66, 70, 167, 189
Կարմիր եղցի եկ. (Հաղրութում) -77
Կարմրաշեն (Վայոց ձորում) - 75, 78, 193
Կարմիր քար - 115
Կարս - 72, 123, 144, 167, 187-189
Կարուց - 72
Կաքավաբերդ - 58, 59
Կենտրոնական Հայաստան- 90, 143, 156, 164, 187, 188
Կեչառիս -31, 32, 125, 136, 140
Կեչուտ - 51, 66, 67, 156, 192-194
Կկուաշեն - 115
Կիլիկիա - 106, 134, 135, 138, 146, 154, 193
Կիրակոսի տապանատուն (Անիում)- 139
Կոթի (Գեղարքունիքում)- 59, 144
Կոթի (Նախիջևանում) - 99
Կոթի (Տավուշում) - 97
Կողբ - 30
Կողես - 132
Կոչ - 34, 39, 96, 120, 137, 166, 182, 183
Կոչավանք -154, 182, 183
Կոստանդնուպոլիս-13, 132
Կովսական - 50, 54, 56, 171
Կոտայք- 100, 102, 107, 115
Կոտորոց - 86
Կոտուր գետ - 86
Կուր - 62

Հ

Հաբանդ-50, 54, 71, 78, 107
Հադրութի շրջան - 77
Հաթերք- 109, 110, 112, 173, 189
Հալեպ - 17
Ս. Հակոբ վանք - 65
Հաղարծին - 121, 168, 176, 177, 183, 187, 189
Հաղբատ(ավանք)- 24, 28, 80, 96, 97, 117, 124, 128, 131-134, 143, 149, 151, 152, 168, 175, 176, 178
Համիա - 108
Համս - 144
Հանդաբերդ - 63, 109, 111
Հայաստան- 3, 4, 7-9, 12, 14-21, 23, 26-31, 36, 38, 39, 41-44, 48, 50, 51, 54, 56, 59, 62, 63, 67-70, 76, 79, 83, 84, 86-88, 93, 95-97, 100, 109, 112, 115, 117, 118, 121-125, 132-134, 136, 139, 140, 149, 150, 153-157, 160, 161, 163-165, 167, 169, 176-178, 180-182, 185, 187, 189, 190, 192-194
Հայրավանք - 108, 126
Հայք - 11, 26
Հառիճավանք - 127
Հավապտուկ - 172, 177
Հավնիկ (Ավնիկ) - 61
Հավնունիք - 61
Հավուց թառ - 31
Հավ(ք)ախաղաց - 64, 109
Հարաշակաբերդ - 108
Հարժիք - 73, 74
Ս. Հարություն եկ. (Վահանավանքում) -169
Հարք - 26
Հացառատ - 51
Հերհեր - 118, 145, 146, 154
Հնդկաստան - 38
Հոռոմ - 144
Հոռոմոս(Հոռոմոսի վանք)- 114, 121, 127, 132, 133, 153, 155, 184
Հովհաննավանք- 87, 88, 91, 98, 105-107, 114, 119, 130, 133-135, 139, 140, 174, 188, 189
Հյուսիսային Հայաստան- 95, 115, 116, 166, 175, 178
Ս. Հռիփսիմե վանք (Վաղարշապատում) - 151
Հռոմ - 138
Հրազդան - 87, 109, 127, 139, 184

Ձ

Ձորագետ - 70
Ձորափոր - 96
Ձորք - 78

Ղ

Ղազախ - 97
Ղարաբաղ (տե՛ս Արցախ)
Ղափանի շրջան - 54, 71

Ճ

Ճահուկ- 70, 71, 76, 77, 99

Ճորոխ - 43
Ճվաշ - 448

Մ

Մ. (տե՛ս Մոսկվա)
Մազազ - 108, 178, 184
Մաթոսավանք - 133
Մալև (Վերին) - 56, 58
Մածնաբերդ - 113, 115, 168
Մակարավանք-98, 118, 127
Մահկանաբերդ - 97, 118, 132, 143, 149
Մաղարդավանք - 47, 48, 192
Մաղարդի լեռ - 46
Մաղրեբ (Մարոկկո)- 14
Մաճ - 55
Մայր տաճար (Անիում) - 69, 78, 79, 139, 159-161
Մայրի -59
Մանազ - 135
Մանազկերտ - 139, 188
Մանթաչ - 115
Մարաղա - 138
Մարանդ - 188, 189
Մարմաշեն - 28, 31, 32, 35, 41, 44, 81, 83, 97, 113, 164, 181, 185
Մարտակերտի շրջան - 65, 111, 133, 136, 146, 150, 177
Մարտունի - 100, 125
Մարտունու շրջան (ԼՂՀ) - 77
Մարց - 84, 115, 132
Մաքենյաց վանք - 59
Մեծ Հայք -43, 48, 59, 87, 93, 124
Մեծ Մասրիկ -51, 62, 192
Մեծիրանց (Մեծարանց) - 50, 56, 65, 112
Մեհմանա - 133
Մեղրի - 50, 54, 57-59
Մերձավոր Արևելք -14, 18
Միջագետք - 6, 45, 132
Մխիթարի բուրգ - 125
Մղարդ(թ) - 109, 115
Մյուս Բաղք - 55
Մյուս Հաբանդ - 54
Մոլդովա - 89
Մոնղոլիա -134, 135
Մոսկվա -26, 174, 185
Մորո ձորո վանք - 183
Մսր (տե՛ս Եգիպտոս)
Մրեն- 23, 27, 84, 120, 137, 140
Մուղնի - 100-102, 104-107
Մուրց - 61

Ն

Ս. Նախավկա եկ. (Նորավանքում) - 108
Նախճավան - 11
Նախջավան (Նախիջևան) - 8, 26, 47, 48, 68, 70, 99, 167
Նեղուցի վանք (Հրազդանի ենթաշրջանում) - 139
Ներքին Խաչեն - 111, 131
Նիգ - 35, 39, 91, 97, 118, 130, 186, 188, 189
Ս.Նիկողայոս եկ. (Դոնի Ռոստովում) - 89
Ս. Նշան (Հաղբատում)- 149

Ս. Նշան (Քարկոփի կամ Խոտակերաց վանքում)- 99, 102
Նոր Բերդ- 113, 114, 127, 128, 169
Նոր Գետիկ -8, 127, 138-140
Նոր Նախիջևան - 89
Նոր Վարագ - 114, 127, 128
Նորագյուղ - 99
Նորաշինիկ (Նորաշենիկ) - 54, 55, 108
Նորավանք - 108, 118, 125, 126, 143-147, 149, 153, 189
Նորատուս - 60, 124, 129, 132, 154, 184
Նրբույն բերդ - 118
Նփրկերտ - 146

Շ

Շահապիվան - 41
Շահապունիք - 99, 102
Շաղատ - 78
Շամ (Դամասկոս) - 144
Շամբ - 46, 48
Շամիրամ - 34
Շամքոր - 97, 184
Շաքի - 189
Շիրակ - 11, 12, 14, 32, 40, 41, 43, 57, 70, 81, 83, 96, 97, 113, 124, 127, 130, 151, 166, 178-181, 184, 187
Շիրակավան - 13, 40, 121, 128
Շիրվան (Շրուան) - 190
Շողագ - 111
Շողագավանք - 53
Շուշի - 62

Ո

Ոռնակ - 119
Ոսկե Հորդա - 134
Ոստան Հայոց - 178
Որոտնավանք - 71
Որոտն բերդ - 108, 188

Զ

Զարեգդար - 146

Պ

Պալխար - 43
Պարիս (տե՛ս Փարիզ)
Պարսկաստան - 6, 14, 43, 88, 132
Պարտավ - 26, 41, 76, 184, 190
Պետերբուրգ (տե՛ս Սանկտ-Պետերբուրգ)
Պղնձահանք - 96
Ս. Պողոս-Պետրոս եկ. (Տաթևի վանքում) - 51
Պոնտոս - 132

Ջ

Ջուղա (Հին) - 46, 188
Ջողտ Պռավածառի կամ Բարևաածառի վանք (Մարտունու շրջանում) - 77
Ջուխտակ վանք - 183

Ռ

Ռուսաստան - 89

Ս

Սաղմոսավանք - 90, 98
Սամառա - 17
Սամարղանդ - 194
Սամշուլդե - 175
Սանահին - 26-28, 31, 34, 114-117, 119, 128, 148, 149, 152, 153, 168, 175, 176, 178, 186, 192
Սասուն - 167
Սարգսի աշտարակ - 124
Ս. Սարգիս եկ. (Խծկոնքում)- 93, 119
Ս. Սարգիս եկ. (Տեկորում)- 29
Ս. Սարգիս եկ. (Ուշիում)- 96, 137
Սեբաստիա - 69
Սերկևիլ - 90, 164
Ս. Սիոն եկ. (Վահանավանքում) - 169
Սանկտ-Պետերբուրգ (Ս.Պետերբուրգ) - 22, 28, 185
Սիս - 41
Սիսական -47, 48, 50, 53, 54, 56, 76, 78, 143, 145, 153, 170, 171, 173, 174, 188
Սիսիան - 71, 73, 88, 125, 129, 130, 147
Սմբատաբերդ - 77
Սյունի - 188
Սյունի բերդ - 108
Սյունի վանք - 88
Սյունիք - 8, 14, 15, 30, 41, 50-60, 62, 63, 66-74, 76-79, 88, 95, 96, 99, 102, 107, 108, 118, 119, 122, 130, 133, 142-144, 146, 147, 153, 156, 157, 167, 169, 171, 172, 174, 175, 188, 189, 191-194
Սող(ք)-50, 62, 63, 111, 184
Սվարանց - 73
Ս. Ստեփանոս եկ. (Աղջոց վանքում) - 126
Ս. Ստեփանոս եկ. (Կոշում) - 183
Ս. Ստեփանոս Նախավկա եկ. (Մաղարդավանքում)- 46-48
Ս. Ստեփանոս եկ. (Որոտնավանքում) - 71
Ստամբուլ (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Սրկղունք - 99
Սուլթանիա - 154
Սունպեց վանք - 128
Սուրմառու - 93
Սևան - 13, 15-17, 97, 178, 184, 191
Սևորդյաց գավառ - 118

Վ

Վահանառծիշո - 119
Վահանավանք - 40, 50, 73, 169, 170, 193
Վահրամաբերդ - 83
Վաղադին - 153
Վաղարշապատ-26, 96, 175
Վաղարշավան - 26

Վաղուհաս - 50, 56, 146
Վաճառ - 111
Վայկունիք - 62, 63, 110, 111, 184
Վայոց ձոր- 26, 27, 50, 68, 70, 71, 75-78, 96, 99, 102, 107, 108, 118, 122, 130, 142, 143, 145, 157, 175, 189, 193
Վանանդ - 66, 72, 178
Վանեվան - 29, 30, 192
Վանք - 57, 58, 191
Վարագավանք - 69, 114, 132
Վարաժնունիք - 100, 102, 178, 184
Վասպուրական- 14, 15, 23, 30, 35, 48, 57, 61, 66, 68-70, 86, 114, 160, 188, 192
Վարդաբլուր - 168
Վարդենիկ - 100, 104
Վարդենիս (Արագածոտ-նի)- 134
Վարդենիս (Գեղարքունիքի)- 125
Վենետիկ - 11, 13, 31, 34, 40, 42, 59, 93, 107, 140, 179
Վերին Խաչեն - 109, 110, 112, 122, 131, 136, 147, 173, 184
Վերնաշեն - 99
Վիեննա - 31, 43, 47, 48, 78, 115
Վիրք - 19, 26, 63, 123
Վրաստան - 24, 66, 76, 117, 126, 128, 133, 135, 139, 166, 175, 177, 180
Վրաց դաշտ - 26

Տ

Տաթև - 50, 51, 53-55, 57-59, 65, 66, 71-74, 78, 130, 146, 171
Տայք - 26, 43, 115
Տաշիր-Ջորագետ - 79, 114, 167
Տավուշ - 96, 114, 117, 118, 131, 168, 184
Տարոն - 26, 45
Տարսոն - 135
Տեկոր - 28, 29, 49, 93, 94, 186
Տեղ - 71
Տեղեր - 182
Տերունական - 96, 117, 131
Տիրաշեն - 83
Տրապիզոն - 92, 93
Տումի - 77
Տուրուբերան - 188
Տփխիս - 15, 16, 26, 48, 76, 144, 174

Ց

Ցաղաց քար - 78, 118, 131
Ցիցք - 176
Ցուր -73
Ցուրաբերդ - 73
Ցուրագետ - 73

ՈՒ

Ուխտիս - 70
Ուկրաինա - 89

Ուշի - 96, 136
Ուտիք - 131
Ուրծ 115

Փ

Փայտակարան - 26
Փառականք - 100
Փառիսոս - 27, 71, 77, 80, 97, 109, 169
Փարիզ - 41, 46, 180
Փարիսունք - 26
Փարպի - 90, 96, 136, 179-181
Փոքր Հայք - 69, 93, 124

Քաղաքներ

Քանաքեռ - 108
Քաչունիք - 50, 54-56
Քարկոփի (Խոտակերաց) վանք - 99, 102
Քարվաճառ (Քելբաջար) -62
Քեղի (տե՛ս Գեղայո)
Քոբայր - 149, 152, 168
Քոբայրավանք - 116
Ս. Քրիստափոր եկ. (Դաշտադեմի կամ Ներքին Թալինի)- 28, 166
Քուջերթ - 56, 58

Օ

Օձուն - 152
Օշական - 120, 128, 129, 138, 139:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ Ա.- ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Հայոց պետականության վերականգնման տարեթվի վիմագրագիտական ճշգրտում 11
2. Բագրատունիների տիտղոսները. վիմագրագիտական դիտողություններ 23
3. Արուճի 867 թ. վիմագիրը և պահլավունիների ծագումն ու բարձրացումը 30
4. 966 թ. հիշատակագիրը և հայոց Աբաս թագավորի մկրտական անունը 46
5. Սյունիք-Արցախ իշխանական տների վիմագրագիտական քննություն 50
6. Հայոց պետության միասնականության համար Բագրատունի թագավորների մղած պայքարի արտացոլումը վիմագրերում: Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի 66
7. Բագրատունյաց թագավորության նորահայտ գործակալություններ 81
8. Պետականության անկման մի շարք նախադրյալների արտացոլումը վիմագրերում 90

Գլուխ Բ.- ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Իշխանական նոր տների պատմական ասպարեզ իջնելու նախադրյալները, նրանց ավատական տիրույթներն ըստ վիմական աղբյուրների 95
2. Զաքարյանների իշխանապետության վարչաքաղաքական կառուցվածքի վիմագրագիտական քննություն 121
3. Իշխանական տների վիմագրական արտացոլումը XIII-XIV դդ. Հայաստանի քաղաքական պատմության մեջ 132

Գլուխ Գ.- ՕՏԱՐՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

1. Բյուզանդական տիրապետության արտացոլումն Անիի վիմագրերում.....159
2. Սելջուկ-թուրքական ասպատակությունները, տիրապետությունը, հայ ժողովրդի գոյապայքարը.....164
3. Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու Զաքարյանների հաղթարշավի ուղիները.....177

Վերջաբան.....191

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Սկզբնաղբյուրներ.....195
2. Մենագրություններ, աշխատություններ.....197
3. Բառարաններ, հանրագիտարաններ.....201
4. Հոդվածներ..... 202
Համառոտագրություններ..... 206
Անձնանունների ցանկ..... 207
Տեղանունների ցանկ..... 225

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Գ. ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ

ՎԻՄԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

(IX-XIV ԴԴ.)

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Սարգսյանի, Տ. Լևոնյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագիր՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 70x100 1/16: Տպ. մամուլը՝ 15:
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015